



## Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ  
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

**This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial  
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով  
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

**Share** — copy and redistribute the material in any medium or format

**Adapt** — remix, transform, and build upon the material



39

Lin

✓ 2226



1999



ԱՇԽԱՐՀԱԳՐՈՒԹԻՒՆ

ՀԻՆ ԵՒ ՆՈՐ ՀԱՅԱՍՏԱՆԵԱՅՑ

ԴՊՐԱՏԱՆՑ ՏՂԱՅՈՑ ՀԱՄԱՐ

ԱՇԽԱՏԱՍԻՐԵՑ

Հ. ՄԱՆՈՒԷԼ Վ. ՔԱԶՈՒՆԻ

Ի ՄԻԻԹԱՐԵԱՆ ՈՒԽՏԷՆ

1501



ՎԵՆԵՏԻԿ

ՄԻԻԹԱՐԵԱՆՑ ՏՊԱՐԱՆԸ



ՅԱԲԱԶԱՅ

Կարգադրութիւնք զմարտի 17 յարտաշարս  
 Կարգադրութիւնք զմարտի 18 յարտաշարս  
 Կարգադրութիւնք զմարտի 19 յարտաշարս  
 Կարգադրութիւնք զմարտի 20 յարտաշարս  
 Կարգադրութիւնք զմարտի 21 յարտաշարս  
 Կարգադրութիւնք զմարտի 22 յարտաշարս  
 Կարգադրութիւնք զմարտի 23 յարտաշարս  
 Կարգադրութիւնք զմարտի 24 յարտաշարս  
 Կարգադրութիւնք զմարտի 25 յարտաշարս  
 Կարգադրութիւնք զմարտի 26 յարտաշարս  
 Կարգադրութիւնք զմարտի 27 յարտաշարս  
 Կարգադրութիւնք զմարտի 28 յարտաշարս  
 Կարգադրութիւնք զմարտի 29 յարտաշարս  
 Կարգադրութիւնք զմարտի 30 յարտաշարս  
 Կարգադրութիւնք զմարտի 31 յարտաշարս

42226-Ն

39. 2730

## Յ Ա Ռ Ա Ջ Ա Բ Ա Ն

Ինչ գիտամք որ ասկէ քանի մը տարի առաջ Հայաստանեայց Հնախօսութեան համառօտութիւն մը հրատարակեցինք դպրոցաց մէջ վարժուող տղայոց համար, նոյն վախճանաւ նաև այս երկասիրութիւնս ալ տպագրելու յորդորուցանք: Եւ ինչպէս Հնախօսութեան մէջ ընդհանրապէս մեր բարեյիշատակ Ինճիճեան վարդապետին համանուն ընդարձակ երկասիրութեանը հետուեր ենք, ասանկ ալ նաև Աշխարհագրութեանս մէջ մեզի առաջնորդ բռնեցինք իր Հին և Նոր Հայաստանը, որոնք վաստակասէր հեղինակին բազմամեայ ուսմանցն և հետազօտութեանց արգասիք են: Բայց տեղ տեղ ալ հարկ եղաւ մեզի իրեն քանի մը սխալները ուղղագրել, ձեռուընիս ունենալով նաև այնպիսի երկասիրութիւնք թէ հին

նախնի մատենագրաց , և թէ արդի ազգային և օտար ճանապարհորդաց՝ որոնք Ինճիճեան վարդապետին ժամանակ չկային : — Հին Հայաստանեայց ստորագրութենէն ետքը մասնաւոր տեղեկութիւն մըն ալ հարկաւոր սեպեցինք զնել փոքուն Հայոց գաւառացը վրայ , որոնք երկար ժամանակ Հայոց թագաւորներուն իշխանութեան տակ մնալով և բազմաթիւ ազգայնոց այն կողմանցը բնակութեամբ իրաւամբ մասն սեպուած են Հայաստանեայց :

Չենք տարակուսիր որ մեր այս համառօտ երկասիրութիւնը իր վախճանին պիտի հասնի՝ ազգայնոց սրտին մէջ տղայ հասակէն սկսելով ազգէլ սէր և եռանդ մը այն երկրին վրայ՝ որ մեր ընդհանուր հայրենիքն ըլլալով՝ ամենուս ալ մասնաւոր մտադրութեանն արժանի է . և անով միայն կրնայ ստանալ իր նախնական վայելչութիւնը :

---

# Հ Ի Ն Հ Ա Յ Ա Ս Տ Ա Ն

## ՔԼՈՒԽ Ա.

### Հայաստանի անուներ .

1. Հայք կամ Հայաստան անուան ծագումը : — Հայք կամ Հայաստան անունը մեր Հայկ նահապետին անունէն ելած է , որ Ներքովթայ յաղթելէն ետքը տիրելով այն երկրին , իր անունովը Հայք կոչեց : Այս անուան տեղ երբևմն մեր մատենագիրներն ուրիշ անուններ կը դործածեն , ինչպէս . Յարեքեան կանանց , թորգոմակեան աշխարհ , Արամեան կանանց , Ազրակեան աշխարհ . բայց աւելի սովորական ու դործածականն է Հայոց աշխարհ կամ Հայոց երկիր , Հայաստան աշխարհ կամ Հայաստան երկիր , կամ պարզ Հայաստան ըսելը :

2. Իսկ օտար ազգերէն վրացիք Սովխեր կ'անուանեն Հայաստանի այն մասն որ իրենց իշխանութեան տակ ինկած էր : Միւս

ազգերն ալ չզիտնալով Հայք կամ Հայաստան անունը, Արմենիա կ'ըսէին, Պարսիկը և Ասորիք հոշեցին Արմենի կամ Արմենիկը, Յոյները Արմեն, մեր Արամ նահապետին անուամբն, որ ինչպէս սրատմութենէ զիտենք՝ իր մեծամեծ քաջութիւններովը բոլոր զրացի ազգաց առջև դարմանալի եղաւ: Ետքերը յունաց ու նաև ուրիշ ազգաց մէջ աւելի սովորական դարձաւ Արմենիա անունը. և ինչուան հիմա այս անունը կուտան Եւրոպացիք մեր երկրին: Ուզոյի սուս է յունաց ըսածը թէ Արմէնիոս անունով Յասոնի ընկերներէն մէկը Արգոնաւորաց սլատերազմին ատեն Հայաստան դալով ու շատ չինութիւններ ընելով, երկիրն իր անունովը Արմէնիա կոչած ըլլայ:

3. Եւրոպացի հնախօսաց մէջ Պոչար և Կալմէ այլևայլ կարծիք ունեցան Արմենիա անուան վրայ: Պոչար՝ Նիկողայոս Գամաս կացւոյն խօսքէն, սր կ'ըսէ թէ «Մինաս աշխարհէն վեր կայ մեծ լեռ մը Հայաստանի մէջ Վարիս անունով, ուր շատերը ազատած են կ'ըսեն ջրհեղեղէ», կը հետևեցրնէ, թէ Արմէնիա ելած է երրոյսական ՀարՄինի անունէն, այսինքն լեռան Մինի, որով նախ Արարատ լեռը կը կոչէր կըսէ. այս լեռան անունէն՝ ետքը բոլոր աշխարհն ալ Արմէնիա ըսուեցաւ: Վասն զի ըստ լատինացոց թարգմանութեան Երեմիայի մէջ կը յիշուի Միննի անունով դաւառ մը Հայաստանի մէջ, զոր նոյն կը համարի Պոչարը:

չար՝ Նիկողայոս Գամասկացոյն յիշած Մի-  
նիաս անուան հետ : Այս Միննի գաւառը  
գաղղիացի Սէն Մարգէն աշխարհագիրը կը  
կարծէ թէ Տուրուբերանի մէջ Մանաւա-  
զեան ցեղին երկիրն ըլլայ : Պոչարին կար-  
ծիքը կ'ընդունի ըստ ամենայնի նաև կալմէ,  
որոյ սխալ ըլլալը յայտնի է մեր ազգային  
մատենագիրներէն :

4. Երբայեցիք սուրբ գրոց մէջ մեր երկ-  
րին Սրարաա անունը կու տան . զոր օրի-  
նակ . « Եւ հանգեաւ տասպանն . . ՚ի լերինս  
Սրարաղայ » : Ուր լատին և ասորի թարգ-  
մանութիւնները հոս և ուրիշ տեղ նշանա-  
կութեանը նայելով կը դնեն Սրմէնիա : Աս-  
տուածաշունչ գրոց հեղինակներուն՝ Սրմէ-  
նիա անուամբ զՀայաստան չկոչելուն գըլ-  
խաւոր պատճառն այն է որ իրենց մէջ  
նոյն անուամբ կը կոչուի Սսորւոց երկիրը .  
վասն զի Սսորւոց նախահայրն ալ էր ու-  
րիշ Սրամ մը , Սեմայ որդին . այս բանիս  
համար ուր սուրբ գրոց երբայականին մէջ  
դրուած է « ՚ի միջագետս Սրամայ »<sup>1</sup>, մեր  
թարգմանիչք խմաստին նայելով դրած են ,  
« ՚ի միջագետս Սսորւոց » : Ի սուրբ գիրս  
երբեմն ընդհանուր առմամբ մեր աշխարհն  
իր սահմանակցօքը կը կոչուի Սրևելք ,  
Հրէաստանի Սրևելեան հիւսիսային կող-  
մը իյնալուն համար : Ուստի Մովսէս ալ  
դրախտին տեղն որոշելու համար կ'ըսէ յնդ

<sup>1</sup> Ծիփունգը , ԻԸ . 2 :

արևելքս : Նոյնպէս ջրհեղեղէն ետև երբոր մարդիկ Հայաստանի մէջ շատնալով սկըսան ցրտիլ, կ'ըսէ սուրբ գիրքը . « Եւ 'ի խաղալ նոցա յարևելից » . որ նոյնպէս Հայաստանէն եզաւ, ինչպէս ցուցըցինք Հնախօսութեան մէջ :

5 . Մեր մատենադիրները Արարատ, Այրարատ կամ Արարատեան աշխարհ ըսելով կ'իմանան բուն Արարատ նահանգը, կամ անոր մէջ դաւառ մը . բայց տեղ տեղ, ինչպէս Խորենացոյն ու Յուզանդին մէջ, բոլոր Հայոց երկրին անունովն ալ դորժածաւ կայ :

6 . Խնդիր է թէ արդեօք օտարազգիք մեր Արամ նահապետէն առաջ ինչ անուն կու տային Հայաստանի : — Որովհետև Հայք անունն անձանօթ էր իրենց, ուստի հաւանական կ'երեւի թէ Սկիւթիա և Կովկասայիև երկիր ըսելով կ'իմանային նաև մեր աշխարհն ալ . վասն զի Յունաց հին մատենադիրները ջրհեղեղէն ետև եղած նահապետաց շատերուն տեղերը, դորոնք յայտնի գիտենք թէ Հայաստանի մէջ են, կը դնեն Սկիւթիա և Կովկասական լեռներու մէջ :

7 . Հայաստանի դաւառաց մէջ կան քանի մը կողմանք որ օտար ազգաց անուամբն ալ կը կոչուին . ինչպէս .  
ա . Վրաց անունով երբեմն մեր մատենադիրները կ'անուանեն Հայաստանի հիւսիսային կողմը, մանաւանդ Գուգարք նահանգը . որովհետև երկայն ատեն Վրաց ձեռքն էր այս նահանգը :

բ. Աղոռանից աշխարհ կ'ըսուի շատ տեղ մեր Ուտի նահանգը հինգերորդ դարէն 'ի վեր. Արցախ եւ Փայտակարան նահանգները տասներորդ դարէն ետքը :

գ. Մանուկ ստորոց կ'ըսուէին երբեմն չորրորդ Հայքն ու փոքր Հայոց հարաւային կողմերը, շրջակայ դաւառներով մէկտեղ. նաև Պլինիոս Հայաստանի Մոլիք նահանգը Ասորւոց մէջ կը դնէ :

դ. Ատրեստանեաց կողմն կ'ըսուին Աղճեիք նահանգը, և Կորճէից նահանգին Տմորիք գաւառը :

ե. Շատ տեղ օտարազգի մատենագրաց մէջ Մարաց անունով կոչուած է մեր երկիրը, մանաւանդ անոր սահմանակից կողմերը, ինչպէս են Փայտակարան, Կորդուք, և այլն : Իսկ մեր մատենագիրներուն մէջ շատ տեղ Փայտակարան նահանգը մարաց անունով յիշուած է :

զ. Տեղ տեղ արտաքին պատմիչները Հայաստանը Պարթևաց անունով կը կոչեն, ինչպէս նաև Ափրիկանոս և Կեղրենոս Արարատ լեռը Պարթևաց երկրին մէջ կը դնեն :

է. Խորենացին Պարսից անունով Հայաստանի տասնըհինգ նահանգներէն մէկը Պարսկահայք կ'անուանէ, Պարսից ձեռքն ըլլալուն համար. իսկ օտարազգիք Բերսարմենիս կամ Պարսկահայք կ'անուանեն Հայաստանի այն մասը որ Պարսից բաժին ինկած էր :

ը . Ստրպատական անունով կը կոչուի երբեմն ազգային և արտաքին պատմիչներէն մեր Փայտակարան նահանգը :

### ԳԼՈՒԽ Բ .

Հայաստանի բնական նկարագիրը .

8 . Հին Հայաստանի սահմանը : — Հին Հայաստանի սահմանն է հիւսիսէն Եղեռացոց աշխարհը , և վրաց և Աղուանից աշխարհքներն որ կուր դետով Հայաստանէն կը բաժնուին . արևելքէն՝ Աղուանք , կաղբից ծովը և Ստրպատական . հարաւէն Մարք , Ասորեստան և Տօրոս լեռները՝ որով Հայաստան Միջագետքէն և յԱսորոց կը բաժնուի , արևմուտքէն ալ կապաղով կիսա և փոքր Ասիա :

9 . Հայաստանի տարածութիւնը : — Մեր նախնեացմէ ոչ որ Հայաստանի տարածութեան չափը յիշած է . իսկ արտաքին աշխարհագիրներէն ոմանք այլ և այլ չափ դրուցած են երկայնութեանն և լայնութեանն , որ ստոյգ չերևար . իսկ հիմակուան աշխարհագրաց հաշուին նայելով մեծ և փոքր Հայոց մեծութիւնը մէկտեղ 150,000 քառակուսի մղոնի չափ կ'ըլլայ :

10 . Հին ատեն Հայաստանի կլիմային վրայ յիշատակութիւնք : — Հնուցմէ ճանչ-

ցուեր էր Հայաստանին օղբ ամուռան մէջ  
բարեխառն և երկինքը պայծառ և մարութ-  
անոր համար երբոր Շամիրամ Ասորես-  
տանէն Հայաստան եկաւ, օղոյն բարե-  
խառնութեանն և զեղեցկութեանը շատ հա-  
նելով, ուղեց Վան քաղաքը շինել, որպէս  
զի տարւոյն ամուռան եղանակը դուարձու-  
թեամբ Հայաստանի մէջ անցընէ: Բայց  
ձմեռուան ցուրտը անտանելի է, և ձիւնն  
ալ անսպակաս, որ ինչուան մարդաշափ կը  
բարձրանայ, և անցուորներուն շատ վը-  
տանդներ կը հասցընէ, անոր համար Տա-  
կիտոս հսովմայեցի պատմիչը զժնդակ կա-  
նուանէ Հայաստանի ձմեռը, և Որատիոս  
բանաստեղծը Նարատ լեռը ստատկասառոյց  
կը կոչէ: Սարաբան կը դրուցէ թէ ճամ-  
բորդները ձմեռուան մէջ ճամբայ ընելու  
տանն կ'առնուին հետերնին բարձրկեկ դա-  
ւազան մը, որ զէպ ՚ի վեր կը բռնէին, որ-  
պէս զի եթէ ձեան տակ թաղուելու ըլլան,  
անով կարենան կամ ծակ մը բանալ, կամ  
ուրիշ ճամբորդներու նշան թողուլ որ ազա-  
տեն զիրենք: Բնակիչքն այսպիսի զժնդակ  
ցրափ մը սաստկութենէն պատասպարուելու  
համար միակ հնարք գտած են՝ բլրոց և ձո-  
րերու քով զետնափոր կամ կէս ստորերկ-  
րեայ աներ շինել, որոնց յիշատակութիւնը  
կ'ընէ Յունաց պատմիչ զօրավարը Քսենո-  
փոն, որ Քրիստոսէ դրեթէ 400 տարի ա-  
ռաջ ստոնամանեայ ժամանակ Հայաստա-  
նէն անցաւ: Բարձր Հայոց մէջ ամենէն

աւելի յերկարատե է ձմեռը . վասն զի եօթը ութ ամիս միակերպ ձիւն կու դայ . անկէ վերջը Այրարատայ ու Երևանի կողմերը , և աստիճանաբար 'ի վան , 'ի Կորդիս , և այլն : Աւելի բարեխառն են Գանձակայ կողմանքը , ուր Հայոց թագաւորաց ձմերոցքն էին , յՈւտի և այլն :

### ՅՕԴՈՒԱԾ Ա .

#### Հայաստանի լեռներն .

11 . Հայաստանի երկրին կերպարանքը : — Հայաստան լեռնոտ երկիր է , անոր համար ալ ամէն կողմը միակերպ նոյն արգասաւորութիւնը չունի . բայց կան դաւառներ ալ որ դուրան ըլլալով բարեբեր են , ինչպէս կը վկայեն հին և նոր հեղինակք , մանաւանդ հովիտներուն ու ձորերուն բարեբերութեանը վրայ , որոնք Հայաստանի մէջ խիստ շատ են . անոր համար շատ դաւառներ կան որոնց անունը հովիտ , ձոր , և փար բառերով ւածանցած են . ինչպէս Աղիովիտ , Արգասովիտ , Արճիչահովիտ , Բալահովիտ , Առուենից ձոր , Աղնուաց ձոր , Բերձոր , Կողբովոր , Ծորովոր , Պարտիզացփոր և այլն : — Լեռանց մէջ զլխաւորներն են Արարատեանք կամ Մասիս , Տօրոս , Կովկաս , Կորդուաց լեռինք , և այլ շատ առանձին լեռինք , զոր վերջը կը յիշենք :

Մասիս .

12 . Մասիս լերան անուանը վրայ գիտեցիր : — Մասիս լեռն որ մեր աշխարհին պարծանք մըն է , առած է իր անունը մեր Ամասիա նահապետին անունէն<sup>1</sup> : Ոմանք չգիտնալով զայս՝ սխալմամբ կ'ըսեն թէ Սեմայ Մոսոր թուան անունէն ելած է : Օտարազգիք Մասիս լեռան աւելի Այրարատեան լեռան կ'ըսեն , իսկ մեր մատենագիրներուն մէջ խիստ քիչ կը գործածուի Մասիս լեռան տեղ՝ Արարատ անունը : Ուստի սխալ է մեկնիչներէն ու աշխարհագիրներէն ոմանց ըսածը , որ Մասիս լեռան բուն անունը Արարատ կը համարին և այս լեռան անունովն աշխարհն ալ Արարատ ըսուած . վասն զի Արարատ անունը՝ բուն դաշտին անունն էր , որ ետքը չըջակայ դաւառներուն հետ միանալով Հայաստանի տասներհինգ նահանգներէն մէկն եղաւ : Եւ որովհետեւ այս նահանգը Հայոց թագաւորանիստ տեղն էր , զոր խորենացին կաշաւած արքայի կ'անուանէ , անոր համար Հայոց աշխարհը՝ օտար մատենագիրներէն , մանաւանդ սուրբ գրքին մէջ , Արարատ ըսուեցաւ : Ուստի ուր որ սուրբ գիրքն եբրայեցերէնին մէջ լերիւք Արարատայ կ'ըսէ , Արարատ անունը պէտք չէ իբրև լեռան անուն

1 խոր . Պատմ . Հայոց . Ա . 12 :

իմանալ, հապա աշխարհին, իբրև թէ ըսէր  
լերիւք Սյրարատեան աշխարհին այսինքն  
Հայոց: մամ միկար զն մտղմմիցմք բայ  
13. Ազգային և օտար մատենագիրներէն  
Մասիս լեռան արուած այլևայլ անուննե-  
րը: — Օտարագղի մատենագիրները մա-  
նուանդ Ասորիք և Արարացիք Մասիս լե-  
ռը կորդուաց յեառև և իրենց լեզուով քար-  
տու և կամ ճոշտի անուանեցին, Մասիս  
լեռը կորդուաց լեռներուն հետ միացած  
սեպելնուն համար, և անոնց վրայ կարծե-  
ցին նաև Նոյի տապանը: Սորբն Հերոնի-  
մոս Մասիս լեռան Տօրոս անունը կու տայ,  
որ կը ձգուի կ'ըսէ ինչուան Արարատ նա-  
հանգին մէջ, Սարարոնին պտորագրութեա-  
նը հետեւելով, և Նոյի տապանը չէ թէ  
Հայաստանի լեռան վրայ կեցաւ կ'ըսէ, հա-  
պա Տօրոսի բարձր լեռներուն: Իսկ մեր ազ-  
գային մատենագիրներէն, Բուզանդ Սարա-  
րաց յեառև կամ Սարարացեան յեառև կ'ա-  
նուանէ Մասիսը. որ կ'երևի թէ առջի բե-  
րան Սար Սյարատեան ըսուելով այսինքն  
լեռան Արարատեան, ետքերը համառօտե-  
լով ու փոխուելով այսպէս ըսուեր է: Իսկ  
Խորենացին Մասիսը տեղ տեղ լեռան մեծ  
կ'անուանէ, և ազատ մակդիրը կու տայ ա-  
նոր, որ կը յիշուի Գողթան դաւառին եր-  
դոցն մէջ յարում կը յիշատակէր Արտաչէս  
Բին իր Արտաւազդ որդին անիծանելը. նոյն-  
պէս, երբոր կը պատմէ Մարաց գերու-  
թիւնը, զոր մեծն Տիգրան բնակեցուց Մա-  
սիս լեռան չրջակայ դաւառները:

14. Մասիս լեռան ազատ մակդիրը տը-  
րուելուն պատճառը: — Որովհետև Մա-  
րաց գերիներուն մէջ կային նաև Աժգա-  
հակայ տունէն, նոյնպէս և իրեն Անոյշ  
կինն և ուրիշ ազատ ու ազնուական մար-  
դիկ, անոր համար Գողթան դաւառին եր-  
զիչներն անոնց բնակութեան տեղը Ազատ  
անտառնեցին, իբրև ազնուական մարդկանց  
բնակարան, անկէց Մասիս լեռին ալ տը-  
րուեցաւ այս անունը:

15. Մասիս լեռան դիրքը: — Մասիս  
լեռը մեր Արարատեան նահանգին մէջ  
կ'իյնայ, և ասոր ապացոյց է Մաւետաց տուն  
ըտռած դաւառն որ Արարատ նահանգին  
մէջն է: Արտաքին պատմիչներէն ոմանք  
սխալմամբ Փոլիգիայի մէջ կը դնեն Մա-  
սիսը, ոմանք Միջագետաց մէջ, ինչպէս  
Ստրաբոն և Պլինիոս, հոն ալ Մասիոս ա-  
նունով լեռ մը ըլլալուն համար: Ափրիկա-  
նոս կը դնէ Պարթևաց մէջ, սորքն Եպի-  
փան՝ Հայոց ու Կորդուաց մէջ, վասն զի  
կըսէ թէ ջրհեղեղէն ետև Եոյի տապանը  
կեցաւ Արարատայ լեռներուն վրայ որ կ'իյ-  
նայ Հայոց ու Կորդուաց մէջ, Լուսառ լե-  
րին վրայ: Կրնայ կարծուիլ թէ Լուսառ ը-  
սածը մեր լեռնն բառէն ելած ըլլայ, և թէ  
հին ատեն Մասիսին պարզ լեռնն անունն  
կու տային, Հայաստանի ամենէն անուանի  
լեռն ըլլալուն համար:

16. Մասիս լեռը դօտևոր է թէ անդօ-  
տի: — Այս խնդրոյս մէջ պէտք է զանա-

դանել Մասիսը յԱրարատայ, Մասիս լե-  
ռը անգօտի լեռ է և երկու կը բաժնուի մեծ  
և փոքր Մասիս, և տնկուած կեցած է ըն-  
դարձակ դաշտի մը մէջ: Իսկ Արարատեան  
լերինք են զօտևոր լեռներ և շատ տեղ յող-  
նակի կը գործածուին: Այս պատճառաւ է  
որ օտարազգի մատենագիրները, և մեր  
մատենագիրներն ալ, Նոյի տապանը Հայ-  
աստանի այլևայլ տեղերն իջած կ'ըսեն: Ա-  
մանք Արարատեան նահանգին մէջ կը  
դնեն, որ է ստոյգը. այլք՝ ինչպէս Բու-  
ղանդ, Տուրուբերանի Ապահունեաց գա-  
ւառին մէջ, և ուրիշ տեղ՝ Կորդուաց գա-  
ւառին մէջ. Թովմա արժրունի կը դնէ Վաս-  
պուրականի մէջ և այլն: — Այս լերին վը-  
րայօր բնական դիտելիքն տես նոր Հայաս-  
տանի մէջ:

### Տօրոս .

17. Տօրոս լերին անուանը վրայ դիտելիք:  
— Այս լերին անուանը պատճառն որոշ  
չգիտցուիր. կրնայինք ըսել թէ մեր Տարօն  
գաւառին անունէն ելած ըլլայ, որուն մօ-  
տի լեռներն Տօրոս կ'անուանին մեր մատե-  
նագիրներէն. բայց աւելի հաւանական է  
թէ Արամացուոց Դաշր բառէն ելած ըլլայ,  
որ լեռ կը նշանակէ. և ՚ի Յունաց Դաշրոս  
փոխուեր է, որ Յոշ ըսել է, և մեր լեզուին  
մէջ անկէ ետքը սովորութիւն եղեր է տա-  
ռագարձութեամբ Տաշրոս կամ Տօրոս ըսե-

լը, և նաև Յուլըսել թարգմանելով<sup>1</sup>: Հոովմացեցիր Հայաստանի տիրելէն ետև, ուղելով երկրին անունով դրամ հոխել այլաբանելով, դրամին վրայ փորեցին ցու մը վրան մարդ նստած ու երկու եղջիւրներէն բռնած. և անոր չորս կողմը լատիններէն դրած Հայաստան եռաձեւ, Տօրոս լեռը ամբողջ Հայաստանի նշանակութեամբ առնելով, Հայաստանի զլխաւոր լեռներէն մէկն ըլլալուն համար:

18. Տօրոս լեռին զիրքը: — Տօրոս լեռը հին ատենէն ՚ի վեր մեծ դօտևոր լեռներէն մէկն ճանչցուած էր: Ստրաբոն կ'ըսէ թէ կ'անցնի ամբողջ Հայաստանէն, Պարթևաց ու Մարաց երկիրներէն, և հարաւային կողմով Հայաստան ՚ի Միջագետաց կը դատէ. նոյնը կը հաստատէ նաև Խորենացին: Այս լեռին մասն կը դնէ Ստրաբոն նաև կորդուաց լեռները, Նպատ լեռը, և Մծբնայ մօտիկ եղած Միջագետքի Մասիոս լեռը, և այս Տօրոս լեռին հիւսիսային կողմէն կը բխի կ'ըսէ Եփրատ գետն ու հարաւային կողմէն Տիգրիսը: Մեր մատենագիրները Տօրոս լեռն աւելի Հայաստանի հա-

1 Ատանկ Բուզանդ՝ իր Պատմութեան գրոցը մէջ, սրբոյն Դանիէլի վրայ խօսելուն ատենը (Գ. 14). «Եւ յաճախ (գնայր) յակն աղբերն ՚ի ներքոյ սարաբարձր մեհենատեղոյն հերակլայ, որ կայ դէմ յանգլման լեռինն մեծի որում Յուլն ա նուանեալ կարգան», : Մերթ ալ նոյն լեռան Յուլն անունը կու տայ:

բաւային կողմերը կը դնեն, այսինքն Մի-  
 ջազեաաց, Աղձնեաց, Մոկաց աշխարհնե-  
 րուն, և մասնաւոր կերպով Տարօնին մէջ  
 իբրև իրեն սեպհական տեղը: Իսկ Սարա-  
 բուն և Պրոկտալիոս Հայաստանի հիւսիսային  
 արևմտեան կողմէն ալ կը ձգեն ինչո՞ւան  
 զրեթէ կապաղովկիա: Կոթ մաս՝ յոյս . . .  
 մ. գրդ. սոմ. սոմ. յոյս . . . մ. բազա Մ. ա, մնչ  
 զոսածոսայս զմա կոթկաս, ամատումա բմեղմ  
 մլոթ: Եւ նայմ մ՛նչմիւսմց իոց, բմադմյ մլոմ  
 զԳԹ. կոթկաս լերին զրիցը և անուանը  
 վրայ զիտելիք: — կոթկաս կամ կաշկաս  
 լերին անունն ելած է Հայկին կոթկաս եղ-  
 բօրն անունէն, որ այն կողմերը դնաց բը-  
 նակեցաւ: Այս լեռը բուն Հայաստանի  
 լեռներուն կարգը չէ, բայց այն սահման-  
 ներուն մէջ կ'իյնայ, որ մեր աշխարհակալ  
 թաղաւորներն իրենց տէրութիւնը ընդար-  
 ձակեցին, այսինքն Սև ու կասպից ծովե-  
 րուն մէջ վրաց ու Աղուանից հիւսիսային  
 կողմը, որով վիրք և Աղուանք Սարմատիայ-  
 էն կը բաժնուին: կոթկասու լեռներուն  
 մէկ մասը կը սեպուին նաև Գուգարք ու  
 Տայք նահանգներուն հիւսիսային կողմի  
 լեռները՝ Ստորին կոթկաս ըսուելով:  
 մի մասէլդմի մ, զմերով միլսամիս. մի մտմուն  
 մմ բլիլամամ կորդուաց լերիք. զգոթ մասոյ  
 մմլսակորթ

20. Կորդուաց լեռներուն զրիցն և ա-  
 նուանը վրայ զիտելիք: — Կորդուաց լեռնե-  
 րուն անունն ելած է Կորդուք դաւառին ա-

նունէն, որ Կորճէից նահանգին մէջ կ'իյնայ: Կորդուայ լերանց վրայ և անոր շրջահայ քաղաքներն որովհետև Ֆիշրա կոչուած ազգը կը բնակի, ոմանք կարծեցին թէ այս ազգին անուամբը կոչուած ըլլան նաև լերինքը: Բայց այս կարծիքն անտեղի է. որովհետև Քուրդք՝ այնչափ հին ազգ չեն, ու Մարայ և Հայոց խառնուրդք. և իրենց անուանակոչութեանը պատճառը՝ նոյն լերանց քով բնակելնէն ելած է: Յոյն մատենագիրք, որոնց ժամանակ դեռ Քորդաց ազգը չէր ձևացած, իրենց գրոց մէջ Կորդուք կ'անուանեն այս լերինքը: — Կորդուայ լեռները դօտնոր են, որոց Արարացիք Ճոտի կ'ըսեն, և կը ձգուին Կորճէից նահանգէն ինչուան Մոկաց նահանգը, և Տիղրիս գետոյն քովէն ինչուան Միջագետաց մէջ:

Պարխար լերինք: — Պարխար լեռները՝ որոնց մէկ մասին օտարազգիք Բարխատրեան կ'ըսեն, կ'իյնան մեծին Հայոց և բուն անոր Տայք նահանգին արևմտեան հիւսիսային կողմը, և կ'երթան ինչուան փոքր Հայք, և սահմանակից են Կողբիսին:

Մարտիրեան լերիւնք .

22. Մարտիրեան լեռներուն զիրքը : — Մարտիրեան լեռներն որ Մարտակեան ալ կ'ըստինն , ելած են Յարեթին եօթներորդ որդոյն Մոսողին անունէն՝ և կ'իյնան Ասալադովկիոյ , Պոնտոսի , Աողքիսի , Արաց ու Հայոց մէջ , և Հայաստանը անոնցմէ կը բաժնեն :

23. Հայաստանի մէջ յիշուած ուրիշ լեռները կամ լեռնակները : — Հայաստանի մէջ ՚ի նախնեաց յիշեալ լեռներն ասոնք են , այբուբենի կարգով դնելով : — Ականեաց լեռ , Ասսարականի , Աղբակ գաւառին մէջ :

Այո՛ւ յեւ Տարուբերանի Աղիովիտ գաւառին մէջ :

Անտիտաւրոս որ Տաւրոս լերին մէկ գօտին է . կ'իյնայ փոքր Ասիային մէջ , ու առաջին և երկրորդ Հայոց մէջէն անցնելով կ'երթայ ինչուան Շոփաց աշխարհքը :

Առիւծ յեւ , բարձր Հայոց Եկեղեաց գաւառին մէջ :

Այնու յեւ , լատին հնչմամբ Ապու կամ Ապա , ուսկից կը բղխին , կ'ըսէ Ստրաբոն , Երասխ ու Եփրատ գետերը . այսպէս կը դնեն նաև ուրիշ օտարազղի հին աշխարհագիրները . Ստրաբոն այս լեռը Տօրոսին մէկ մասը կը դնէ , և իր խօսքերէն կ'երևի թէ գօտնոր է , և Պինկէօլ լեռները սեպելու է :

Արագած լեռ, որ Հայկայ որդւոյն Արա-  
մանեակին անունովը կոչուած է. և կ'իյնայ  
Այրարատայ Արագածոտն գաւառին մէջ:

Արայի լեռ, Երևանայ մօտերն է, ասոր  
քով Արայ նահապետն բանակած և ընկած  
ըլլալուն՝ իր անունն առաւ. դիմացի լեռն  
ալ Շամիրամայ անուամբը կը կոչուի:

Բարդոզ լեռ, որ վերջերը ըսուեցաւ Թա-  
կայրոս լեռ. կ'իյնայ Արարատայ ճակատք  
գաւառին մէջ Երասխայ հարաւային կողմը:

Գարուայ լեռ, Աղուլիս և Որդվատ քա-  
ղաքներուն մօտ Սիւնեաց մէջ:

Գեղամայ կամ Գեղոյ լեռ, որ Սիւնեաց  
Գեղարքունի գաւառին մէջ կ'իյնայ, անոր  
ծովակին արևմտեան կողմը. Գեղամ նա-  
հապետին անունովը կոչուած է:

Գրգուռ լեռ, որ կ'իյնայ Բաղէշի մօտ Տու-  
րուբերան նահանգին մէջ, և անունն առած  
է Պարսից Վախտանկ զօրավարին Գռէ-  
զուռ որդւոյն անունէն: Այս լեռը Հայաս-  
տանի բարձր լեռներէն մէկը կարծուելուն  
համար, տեղացիք յարմարցուցած են այս  
աւանդութիւնս որ ինչուան հիմա մնացած  
է, իբրև թէ Նոյի տապանը նախ այս լեռն  
եկեր է ըսելով «Գրգուռ առ զիս». լեռն ալ  
պատասխան տուեր է. «Գևա 'ի Մասիս,  
զի բարձր է քան զիս»: Այս լեռան քովն է  
նաև Ներքովրայ լեռը, Ներքովթայ անու-  
նէն, որ մեր Հայկին ձեռքով ինկաւ:

Գիգախայտոս լեռ, որ կ'իյնայ Արցախու  
մէջ, և անունն առած է այս դիպուածէս:

3601

Անդամ մը Հոնաց զօրքը վազելով այն կողմի քրիստոնէից վրայ, որ այն լեռն ապաւիններ էին, սպաննեցին զիրենք, ու ետքն իրենց մարմինը մէկտեղ զիգելով՝ փայտով այրեցին, անկէ լեռան անունը Գիգափայա ըսուեցաւ:

Բնծարխաար լեռ, որ կ'ըսուի նաև Կրայուտողն, կ'իյնայ Ասնայ ծովուն հարաւային կողմը, և ունի երկաթի հանք: Բնծարխաար լեռը՝ Աղճնեաց և Ռչտունեաց երկիրները իրարմէ կը բաժնէ: Երբոր Ռչտունեաց իշխանը Մանածիհը՝ սրբոյն Յակովբայ Մժրնացոյ սարկաւազունքն անիրաւութեամբ ըսպաննել հրամայեց, սուրբ հայրապետն այս լեռին վրայ ելլելով՝ անիծեց բոլոր Ռչտունեաց երկիրը:

Խոյր լեռ, որ Աղճնեաց նահանգը Տարունէն կը բաժնէ ու Սասունի սահմանն է: Ծաղկե կամ Ծաղկաց կամ Ծաղկոց լեռ, կ'իյնայ Այրարատայ Ծաղկոտն դաւառին մէջ. և այսպէս կոչուած է վրան շատ ծաղիկ դտնուելուն համար: Կը կոչուի նաև Ծմակային, ջրաբուխ ու զուարճալի լեռ ըլլալուն համար. կ'ըսուի և Ռսկի, Ռսկեանց քահանաներուն անունովն որ հոն բնակեցան: Մէկ ճիւղն ալ Շահապիփան, ուր շատ որոտոյ կենդանիներ կային: Այս լեռնէն կը բխի Եփրատ գետին մէկ մասը, որ Մուրատ կ'ըսուի հիմայ:

Ծիրակեաց լեռ, Այրարատայ Բասեան դաւառին մէջ:

Կանգարք կամ Մրիկ լեռ, Հայոց ու վրաց սահմանակից, Գուգարք նահանգին մէջ:

Կանգուար լեռներ, Վասպուրականի Անձեաղեաց գաւառին մէջ:

Կղարչք լեռներ, որոց օտարազգիք կ'ըսեն Քօրասուսե, Ինիսքեասե, կամ Հեկիսքեասե լեռներ, և Հայաստանը Վրաստանէն կը զատեն: Գուգարաց և Տայոց մէջն կ'իյնան այս լեռինքը, և իրենցմէ կը բխի Կուր գետոյն մէկ բերանը:

Կոզուխ լեռ, Այրարատայ Կոզուխ գաւառին մէջ:

Կոնեթ, Չորրորդ Հայոց մէջ:

Մաղարբայ լեռ, հին Չուղային մօտ, Մասիս լեռին արևելեան կողմը:

Մասիս լեռ, որ Տօրոս լեռին մէկ մասն է, կ'իյնայ Հայոց Միջազետաց մէջ, Մըծբին քաղաքին հիւսիսային արևմտեան զին:

Մարաք լեռ, կ'իյնայ Աղձնեաց Սասուն գաւառը, և Խոյթ լեռին մէկ մասն է:

Մեծրեոյ լեռ, Տայոց մէջ:

Մշկուռեաց լեռ, որոյ վրայ կային շատ մշկագործ վայրի այծեր, տեղը Մոկաց և Ռչատունեաց մէջ կ'երևայ:

Նարատ լեռ, Այրարատայ Բաղրևանդ գաւառին մէջ: Յոյն աշխարհագիրքը Նարատայ անուամբ կ'իմանան Հայաստանի մէջ Տօրոսի մասը:

Պախք կամ Պարի, բարձր Հայոց Մանանաղի գաւառին մէջ:

Սիմ լեռ, որ կոչուած է Սեմ նահապե-  
տին անունովն որ նախ հոն բնակեցաւ. կ'իյ-  
նայ Աղձնեաց Սասուն գաւառին մէջ Խոյթ  
լերին մօտ: Այս Սիմ լեռը՝ գաւառին անու-  
նովն ետքերը Սասուն ըսուեցաւ:

Մուկաշ կամ Մուկաշեա լեռ, կ'իյնայ Այ-  
րարատայ Բաղրևանդ գաւառը, և Սուրիա-  
սանց անունովը կոչուած է՝ սուրբ վկայից  
հոս բնակելուն համար: Առջի անունն էր  
Զրարաշխ:

Սպերայ լեռ, կ'իյնայ բարձր Հայոց մէջ:

Վարազ լեռ, Այրարատայ Բաղրևանդ  
գաւառին մէջ:

Վարազ լեռ, անուանի վանքերով, կ'իյնայ  
Վասպուրականի Տոսպ գաւառը:

Քարքե կամ Քարքեոյ լեռ, կ'իյնայ Տու-  
րուբերանի Տարօն գաւառին մէջ Տարոս  
լերին մօտիկ, և այլն:

24. Հին ատեն յիշուած Հրաբուխք և Սա-  
սանութիւնք: — Այսչափ լեռանց մէջ հին  
ատեն շատ հրաբուղիսներ եղած ըլլալը՝ հի-  
մայ յայտնի է իրենց թողուցած նշաններու-  
ովը. բայց նախնիք միայն անոնց քանի մը  
մեծ սասանութիւնները յիշելով՝ կ'իմացը-  
նեն անոնց բնութիւնն ալ: Ամենէն ա-  
նուանին է Մասիս լեռը, որ շատ հին ա-  
տեն բռնկած և պատառած ըլլայ կը վկայէ  
նաև Խորենացին. այս լեռը 1840ին ալ  
հրաբխի դօրութեամբ շարժեցաւ, և մա-  
սամբ մը փլաւ և շատ շէնքեր փլուց թէ իր  
ստորոտքն եղածներն և թէ Արարատայ

մէջ: — Անուանի է նախնեաց յիշածնե-  
րուն մէջ Սիւնեաց Վայոց-ձոր դաւառին  
չարժումը 40 օր'ի սկիզբն ը դարու: — Գը-  
նայ շարժն և կործանումը Թ դարուն վերջն .  
— Չորրորդ Հայոց շարժը Ժ դարուն վեր-  
ջերը . — Գանձակայ շարժը և կործանումը  
1140ին . — Երզնկայ շարժերն և կործան-  
մունքը շատ անգամ . — Ներքովթայ լերին  
բռնկիլն և շարժիլը 1141ին . — Սիւնեաց  
մէջ Տաթևոյ կողմերու մեծ շարժը . — Ե-  
րևանայ շարժը 1679ին , և այլն :

### ՅՕԴՈՒՍԾ Բ .

#### Գևորջ Հայաստանի .

25 . Հայաստանի ջրոց առատութիւնը :  
— Հայաստան աշխարհը ջրարբի երկիրնե-  
րէն մէկն է , և մէջէն շատ մեծ գետեր ու  
աղբիւրներ կը բխին , ու աւելի շատ գետեր  
և գետակներ կ'անցնին . ասոնց ամենուն  
գլխաւորներն են դրախտի չորս գետերն ,  
որ են Եփրատ , Տիգրիս , Երասխ , ու Ճո-  
րոխ , որոնց վրայ խօսինք նախ , և ետքը  
ուրիշ գետերուն վրայ :

**Եփրատ.**

26. **Եփրատ գետոյն բխման տեղը:** — Եփրատ կամ Եփրատեա գետը՝ զոր ստորը գիրքը մեծ գետ կ'անուանեն, երկու դատ տեղերէ կը բխի, մէկը Կարնոյ լեռներէն որ կ'իյնայ Հայաստանի հիւսիսային կողմը բարձր Հայոց մէջ. մէկալը Մաղկէոյ կամ Մաղկաց լեռնէն, որ կ'իյնայ Այրարատ նահանգին մէջ: Այս երկրորդ ճիւղը, այսինքն Մաղկէոյ լեռնէն բխածը, կ'ըսուինաւ Արածակի, Արածանի կամ Արծնի գեղին անունովն որոյ քովէն կ'անցնի: Մէկալ ճիւղն ալ երբոր ասոր հետ կը միանայ, կ'ըսուի երբեմն Արածանի, որուն օտարազգիք կ'ըսեն Արասնիա. և երկու ճիւղը մէկտեղ կ'անցնին Բաբելոնի մէջէն, ու կ'երթան կը թափին Պարսից ծոցը:

27. **Եփրատայ յորդութեանը վրայ զիտելիք:** — Կ'ըսէ Սարաբոն թէ ամառուան ատեն Հայաստանի լեռներուն ճիւղերը հալելով, Եփրատ գետը շատ կը բարձրանայ ու Ասորեստանի կողմերը կը կոխէ. այս վնասէն ազատելու համար, Եղիպատոսի Նեղոս գետոյն համար շինած ջրամբարներուն պէս հոն ալ շինած են, ուր կը թողուն Եփրատ գետն երբոր չափէն աւելի բարձրանայ, որպէս զի երկրին վնաս մը չընէ: Գարձեալ կ'ըսէ, թէ Պարսիկք Ա-

սորեստանի կողմերը կամօք սահանքներ շինեցին Եփրատ գետոյն վրայ, որպէս զի թշնամիք չկարենան անկէց նաւարկել: Այն սահանքները մեծն Աղեքսանդր որչափ կըրցաւ քակել տուաւ ու շտկեցուց:

28. Եփրատայ վրայ շինուած կամուրջները: — Եփրատ գետոյն վրայ շատ կամուրջներ շինուած էին հին ատեն, որոց մէջ երևելի են երկրթէ շղթաներով շինած մեծին Աղեքսանդրի կամուրջը, և հսովմայեցոց Պարթեաց զէմ երթալու ատեն շինած կամուրջը:

### Տիգրիս.

29. Տիգրիս գետոյն աղբիւրը և անունը: — Տիգրիս գետոյն անունը հաւանականաբար ելած է մեր տեղ բառէն, սաստիկ երազընթացութեանը համար: Այս գետը կ'ըսուի նաև Գկղար, որոյ մէկ ճիւղը կը բխի Կորդուաց լեռներէն Շատախ գաւառին մօտ, որ կ'ըսուէր հին ատեն Չերսաճար գաւառ, Մոկաց նահանգին մէջ: Ունի ուրիշ ճիւղ մ'ալ, որ կը բխի չորրորդ Հայոց Հաշտեանք գաւառին մէջ Ուրայ գեղէն: Ստրաբոն և Պլինիոս կ'ըսեն թէ Տիգրիս գետը վաղելու ատեն Տարոսի լեռներուն հանդիպելով կ'անցնի լեռան տակէն, ու նորէն դուրս կ'ելլէ 25 մղոն հեռու, Կորդուաց լեռներուն մօտ: Այս երկրորդ անգամ բխելը

Կորդուաց լեռներէն ելած աղբիւրը իմա նալու է :

30. Տիգրիսին յորդութիւնը : — Տիգրիս գետը թէպէտ Նփրատայ ոչնչա շատ չբարձրանար, սակայն անվտանգ նաւարկութիւն կ'ըլլայ : Պարսիկք ինչպէս Նփրատայ վերայ, ասանկ ալ Տիգրիսին սահանքներ շինեցին թշնամիները արգիլելու համար. և մեծն Աղեքսանդր քակել տուաւ : Բայց Պարսիկք վախճալով ծովի կողմի թշնամիներէն, նորէն շինեցին այն սահանքները, որ ինչուան Յուլիանոսի ատեն կային, ու ետքը բոլորովին քակուեցան, որով համարձակ նաւարկելի գետ մը եղաւ :

### Երասխ .

31. Երասխ գետոյն անունը : — Երասխ գետը կոչեցաւ մեր Արմայիս նահապետին թոռանը Արաստին անունովը<sup>1</sup> : Օտարազգի մատենագիրները Արաքսիս կամ Արաս կը կոչեն, իսկ Արաքացիք կրճատելով կ'ըսեն Ռաս կամ Ռոս : Մովսէս մարզարէն այս գետոյն Գեւորն անուն կու տայ, որ երբայեցերէն սաստիկ յորձանքներով վաղող ըսել է, անշուշտ ընթացիցը բռնութեան և սահանացը համար : Գիտնալու է, որ հին ատեն Երասխ անունով ուրիշ գետեր ալ

<sup>1</sup> Խոր. Ե. 12 :

կը կոչուին Պարսից և Պարթևաց երկիրնե-  
րուն մէջ, ինչպէս է Ոքսոսն ալ :

31. Երասխ գետոյն աղբիւրը : — Երասխ  
գետը կը բղխի Հայաստանի բարձր Հայոց  
Մանանաղի գաւառին կողմերը՝ Կարնոյ  
լեռներէն, և կ'երթայ Սյրարատ նահանգը,  
ու Սրցախ և Ուտի նահանգներուն քովէն,  
և Սիւնեաց, Վասպուրականի և Փայտակա-  
րան նահանգներուն մէջէն անցնելով, Կուր  
գետոյն հետ կը խառնուի, և երկուքը մէկ-  
տեղ կը թափին Կասպից ծովը, բոլոր իր  
ընթացքը Հայաստանի մէջ կատարելով :

32. Երասխ գետոյն ընթացքն ու կա-  
մուրջներն : — Երասխ գետը գառ 'ի վայր  
երկրի վրայ երթալով տեղ տեղ սաստիկ շու-  
տով կը վազէ . ու սահանքներ կամ քարա-  
վազներ կ'ընէ, անուանի է Սիւնեաց երկ-  
րին մէջ Երասխայ քարավազը : Հին ատեն  
այս գետոյն վրայ այլևայլ կամուրջներ շի-  
նուած էին, ինչպէս Վաղարշապատու քով  
Մեծամօրի կամուրջը, Արտաշատայ քով  
Տափերև կամուրջը : Այս գետոյն վրայ մեծն  
Աղեքսանդրալ քարաշէն կամուրջ մը շինեց,  
բայց ջուրերուն սաստիկութենէն կործանե-  
ցաւ, նոյնպէս հռովմայեցւոց շինածներն  
ալ, անոր համար կամուրջի չի համբերող  
անուանեցին Երասխը<sup>1</sup> : Հիմայ անուանի  
է Չոպան քեօփրիշիւ ըսուած եօթն կա-

<sup>1</sup> Ինչպէս Վերգիլիոս իր Էնիաիանին մէջ,  
Գիրք Ը :

մարով քարաչէն կամուրջը, որ կ'իյնայ Բա-  
սենոյ Յուստինիանուայուլիս կամ Հասան-  
դալա քաղքին մօտ, ուր չէին կրնար կա-  
մուրջ շինել սրընթացութեանը համար, և  
կ'ըսեն թէ հովիւ մը հնարքը գտաւ շինելու,  
և անոր համար այդ անունն արած է:

33. Երասխայ վրայ շինուած քաղաքներ  
ըր: — Այս գետոյս վրայ շինուած էին ե-  
րևելի քաղաքներ, ինչպէս են Աղաբաշուան,  
Երուանդաշատ, Արտաշատ և Արմաիր,  
որ ամէնքն ալ կ'իյնան Այրարատայ մէջ:  
Երասխայ քով շինուած էր նաև վասպու-  
րականի Նախճաւան քաղաքը:

Ճորոխ

34. Ճորոխ գետոյն անուան ծագումը:  
— Ճորոխ կամ Ծորոխ անունը չ'իշուիր  
սուրբ գրոց և արտաքին մատենագիրներու  
մէջ, և ելած է Ծոր ուղիս բառերէն, ուղիս-  
րէն ծորելուն կամ վազելուն ու սաատիկ  
աճելուն համար, որուն Մովսէս մարգարէ  
լսորհրդածութեամբ գրաւ Փխտե կամ Փի-  
սայե անունը, որ եբրայեցերէն աճիլ, զե-  
ղոշը ըսել է: Արտաքին հեղինակք ասոր  
վոհ կամ փասիս կ'ըսեն,

35. Ճորոխ գետոյն աղբիւրը: — Ճորոխ  
գետը կը բղխի Բարձր Հայոց Սպեր գաւա-  
ռէն, ու անցնելով Խաղտեաց ու Կողքիսին  
մէջէն՝ կը թափի Սեւ ծովը, Լազիկիս գա-  
ւառին մէջ: Ստրաբոն և Պլինիոս կ'աւան-

դեն թէ վրան 120 կամուրջ կար, և մէջը նաւարկութիւն ալ կ'ըլլար: Ճորոխին մօտ կան ոսկւոյ և արծրթի շատ հանքեր, և գետոյն աւազն ալ մանր ոսկւոյ հատիկներով խառն է, մանաւանդ կողքիսի մէջ, ոսկից ելած է Սըղոնաւորդաց ոսկի գեղ ման առաւապիկեալ պատմութիւնը: 55

Գրախտիկ գետերէն գաւառ Հայաստանի ուրիշ գետերը: 56

56. Կուր գետոյն վրայ գիտելիք: — Կուր գետոյն անունը մեծին Կիւրոսի անունովը կոչուած է, վասն զի յոյնք և հռովմայեցիք Կուր գետոյն կիւրաւ կ'ըսեն. իր աղբիւրն է Տայոց Կող գաւառին մէջ, որ հիմայ Քէօլէ կ'ըսուի. անկէ երթալով 'ի Գաղարս՝ մեծին Հայոց հիւսիսային կողմէն կ'անցնի, և կը բաժնէ Հայաստանը վրաստանէն ու Սըղոնաւրէն. ու վրաստանի Կորի և Տիզիս քաղքերներուն քովէն անցնելէն ետեւ, դէպ 'ի հարաւ և արեւելք կ'իջնայ, ու Երասխայ հետ միանալով կը թափի Կասպից ծովը:

57. Հայաստանի մէջ յիշուած ուրիշ մանր գետերը: — Հայաստանի մէջ յիշուած ուրիշ մանր գետերն են

Սգաւ գետ, որ Երասխայ մէկ վտակն է, կ'անցնի Սյրարատ նահանգին հիւսիսային կողմէն, և կը բխի Գեղամայ լեռներէն. կ'ըսուի նաև Գաւնոյ ջուր, Գառնի քաղքին քովէն անցնելուն համար, և կը թափի Ե-

րասխ գետոյն մէջ: Ազատ գետոյն ջուրն աւելի առողջարար է քան թէ Քասաղ և Հրազդան գետերուն ջուրերը:

Ախաշրեան գետ, նոյնպէս Երասխայ մէկ վտակն է, Այրարատ նահանգին Շիրակ գաւառին մէջ. կը բխի Գառնոյ (Արփակէօլ) լճէն, և կ'անցնի Անի քաղքին և Բազարան ամրոցին մէջէն, և կը միանայ Երասխայ հետ Երուանդաշատ քաղքին առջև:

Աղստեոյ գետ, Ուտի նահանգին ծայրը, կը թափի Կուր գետը:

Ապար գետ, որ կը բխի ըստ նախնեաց՝ Պարխար լեռներէն, և կը թափի Սև ծովը, և կը բաժնէ մեծ Հայքը փոքր Հայքէն:

Առևտ գետ, Վասպուրականի մէջ, կը թափի Բղնունեաց ծովը:

Գայլ գետ, որուն Յոյները կ'ըսեն Լիքոս, կ'ելլէ 'ի փոքր Հայոց, և կ'անցնի Բարձր Հայոց Եկեղեաց ու Գարանաղեաց գաւառները, և կը միանայ Եփրատայ հետ: Կայ ուրիշ Գայլ գետ մ'ալ Զորբորդ Հայոց մէջ:

Չազգետ, որ Կորճէից երկրէն կ'անցնի, ասիկայ է Քիւրտիստանի Չապ գետը՝ որուն կըխառնուի Չերպիս, որ հիմա կ'ըսուի մեծ Չապ, և ասոնք 'ի Տիգրիս կը թափին:

Թուխ գետ, որ կ'ելլէ Աղձնեաց նահանգին մէջէն, և կը թափի Բղնունեաց ծովը, և կոչուած է Թուղիս գեղին անունովը:

Լոսինաս գետ, Ուտի նահանգին մէջ:

Կարմիր գետ, որ Երասխայ մէկ վտակն

է, կ'իյնայ Վասպուրահանի ճուաշ գաւառին մէջ:

Հրազդան գետ, որ կ'ելլէ Գեղամայ ծովէն, և կ'անցնի Այրարատ նահանգին մէջ Երևան քաղքին քովէն, և կը միանայ Երասխ գետոյն հետ:

Մանուշեղ գետ, Ծոփք նահանգին մէջ:

Մանանաղի գետ, Եփրատայ մէկ վտակն է, Բարձր Հայոց մէջ:

Մարսեւտ գետ, կը թափի Բղնունեաց ծովը:

Մեծաւօր գետ, Այրարատայ Արագածոտն գաւառին մէջ, և կը բխի Կուաշ գեղին մօտ. ջուրը սև, ծանր և անախորժ է, և ընդունելով իր մէջը Ֆատաղ գետը, կը թափի Երասխ գետոյն մէջ:

Մուրց գետ, Երասխայ մէկ վտակը, Այրարատայ Բայսեան գաւառին մէջ:

Որոտան գետ, կ'անցնի Սիւնեաց Բաղք գաւառին մէջէն, և կը թափի Երասխ:

Ռան գետ, Այրարատայ Արագածոտն գաւառին մէջ Վաղարշապատի մօտերը, և կ'երթայ կը միանայ Ախուրեան գետոյն հետ:

Քաւաղ գետ, Երասխայ մէկ վտակը Վաղարշապատի մօտ, որ կը բխի Արագած լեռնէն, և կ'ըստի նաև կարրոյ ջուր:

ՅՕԴՈՒԱԾ Գ.

38. Լճերու վրայ ընդհանուր զիտելիք :  
— Մեր նախնեաց մէջ սովորութիւն է լճերուն ծովակ անունը տալ, և աւելի մեծնրուն՝ ծով անունը. ինչպէս Բզնունեաց ծով, Գեղամայ ծով, Կասպուտակ ծով, որ Հայաստանի ամենէն մեծ լճերն են. մանր լճեր կամ ծովակներ ալ շատ կան :

39. Բզնունեաց ծովը կոչեցաւ մեր Բագ նաՀապետին անունովը<sup>1</sup> որ առաջ կ'ըսուէր Աղի ծով, ջուրն աղի ըլլալուն համար : Իսկ Բուզանդ կ'անուանէ ծով Ռշտունեաց, Ռըշտունիք գաւառին անունովը որ այս ծովուն քով կ'իյնայ : Վերջի մատենագիրները կ'ըսեն աւելի ծով Վասպուրակակնի, Վասպուրական նաՀանգին անունովը որոյ մէջն է Ռշտունի գաւառը. կ'ըսուի նաև ծով Տուպայ, Տոսք գաւառին անունովը : Այս ծովը կ'ըսուի Հիմա Վակայ կամ Արքամարայ ծով, ուսկից կ'ելէ տառելիս կոչուած պզտիկ ձուկը, և մէջը կան չորս կղզի. Արքամար, Առտեր, Կտուց, Լիմ : Այս ծովուն մօտ եղաւ Հայկայ Բելին հետ ըրած պատերազմը, ու յաղթութիւնը :

1 Խորենացի Ա. 12 :

40. Գեղամայ ծով: — Այս լիճը մեր Գեղամ նահապետին անունովը կոչեցաւ Գեղամայ ծով, որ կ'ըսուի նաև Գեղաքունի լիճ կամ ծով, և կ'իյնայ Սիւնեաց Գեղաքունի գաւառը: Գեղամայ ծովուն մէջն է Սեւան կղզին. որոյ անունովը կ'ըսուի հիմա Սեւանայ լիճ, և ջուրն անոյշ է:

41. Կապուտան ծով: — Այս լիճը որ կ'ըսուի ծով Կապուտան կամ Կապուտակ, մէկ կողմէն կ'իյնայ Կործայք նահանգին մէջ, մէկալ կողմէն Պարսկահայոց, իսկ ուրիշ կողմերը՝ Ատրպատականի մէջ, և չորս զին լեռներով պատած է, որոնցմէ այլևայլ մանր գետեր կ'ընդունի: Այս ծովակին Սարաբոն կ'ըսէ Մանտիանք, որ կապոյտ ըսել է. Սրաբացիք ծով թեղայ կը կոչեն այս լիճը՝ մէջի թեղա կղզւոյն անունովը, որ Հուլաուն թաթարներուն խանը ամուր բերդ շինեց, իր զանձերը պահելու համար, և հիմա աւերակ է: Մաղաքիս արեղայ այս լճին ծով աղի կ'ըսէ, ջուրը աղի ըլլալուն համար. և հիմա կը կոչուի ծով Արսնայ և ծով Գալրիժոռ:

42. Հայաստանի մէջ յիշուած ուրիշ ծովեր: — Ծով Գայրատոյ կամ Գայրատոռոյ Այրարատայ մէջ, մէջէն կ'ելլէ Պալըզ-Հայ կոչուած գետը:

Ծով Կարևոյ, Կարին քաղքին մօտ, անոր հիւսիսային կողմը, որ կ'ըսուի նաև Շաւք կամ Մօր Կարևոյ, ուր շատ ձկներ ու թռչուններ կ'ըլլան:

Պաշակացիս ծովակ, կամ աամկօրէն փա-  
շար, մէջի փաշաթ կղզւոյն անունովը, և  
կիցնայ Տայոց և Այրարատայ մօտերը:

Ծովակ հիւսիսոյ, Այրարատ նահանգին  
հիւսիսային կողմերը, որ հիմա կ'ըսուի փա-  
ռախան, ուսկից կը բխի վտակ մը կուր գե-  
տին:

Ծովակ Յըմբեայ, վասպուրականի մէջ,  
որուն Ստրաբոն կ'ըսէ Որին:

Տգրկածով, Գուգարք կամ Ուտի նա-  
հանգին մէջ:

Այդևոյ ծովակ, Արզն քաղքին քով, և  
այլն:

43. Հայաստանի մէջ յիշուած Մօրք և  
Ճահիճք:—Մեր նախնիք մօր ըսելով կ'իմա-  
նան ճահիճ, այսինքն տղմուտ և եղեգնուտ  
տեղեր, ուր շատ վայրի կենդանիներ կը  
գտնուին: Ասոնց մէջ անուանի է Մեծա-  
մօր կամ Մեծ մօր ըսուածը, որ կ'ըսուի  
նաև ծովակ Մեծամօրի, և կիցնայ Այրա-  
րատ նահանգին մէջ, Արտաշատ քաղքին  
ու Երասխ գետոյն մօտ, որուն հետ նաև  
հաղորդակցութիւն ալ ունի վտակի մը ձեռ-  
քով, որ նոյնպէս Մեծամօր կ'ըսուի: Կը  
յիշուին նաև Տարօնոյ և Շիրակայ մօրերը,  
և այլն:

### ՅՕԴՈՒՍԾ Դ.

Հայաստանի բերքերուն վրայ.

44. Հայաստանի բարերերութիւնը: — Թէպէտ և ընդհանուր Հայաստանի բարերութեանը վրայ յիշատակութիւն մը չկայ հին ատեն, բայց մասնաւոր նահանգներ ու դաւառներն խիստ բարերեր կը վկայուին, ինչպէս է Այրարատ նահանգը ամբողջ, և մանաւանդ անոր Վանանգ և Շիրակ դաւառները. Գուգարք նահանգը, Ռչտունեաց երկիրը, Կարնոյ դաւառը, Տարօնոյ երկիրը, Հաշտեանք դաւառը, և այլն:

45. Հայաստանի մէջ յանուանէ յիշուած բերքերը: — Կը յիշուին 'ի հնուց' ցորեն, հաճար, դարի, վուշ, բամբակ, թուզ, սերկեխ, նուռ, պիստակ, շաղանակ, նուշ, վարունգ, գղթոր, գազպէ<sup>1</sup>, մեղր, ձի-

1 Գազպէն մեղրի պէս նիւթ մի է, շատերը կը կարծեն թէ մանանայի պէս գիշեր ատեն երկընքէն կ'իջնայ. բայց որովհետև ամէն տեղ ու ամէն բուսոց տերեւներուն վրայ չըլլար՝ քննելով իմացան բնաբանք որ նոյն տունկերէ վազած նիւթն է, և ըստ ոմանց մանր մանր որդուկներ են, որ գիշերուան օգոյն հետ բաղադրուելով, կը ձևանայ. վասն զի Գաւ, Կառնի ու Տափափալ ըսուած տունկերուն վրայ կ'իջնայ: Գազը փշտա պղտի

թենի, խաչնդեղ, յամիկ, մուրա, սոսախ, կինամոմոն՝ որուն օտարազգիք կ'ըսեն անուռն, և լոշտակ ըսուած բոյսը՝ որոյ արմատը մարդու ձև ունի, անոր համար մարդատակ ալ կ'ըսուի, և կը գործածուի դեղի մէջ: Անուանի է Հայաստանի գինին, մանաւանդ Գողթն գաւառինը, ու Այրարատ և Ուտի նահանգացը: Անուանի է նաև Հայաստանի ծիրանը, ուսկից Եւրոսրա մտած է, և անոր համար արմեկիացաւ կամ արմեկիկոյ կը կոչուի իրենցմէ: Կ'եղեն Հայաստանէն նաև տեսակ տեսակ խնկեր, ինչպէս են քարախուճկ և սլրադախուճկ ըսուածները:

46. Հայաստանի մէջ յիշուած ընտանի կենդանիները: — Կը յիշուին ՚ի հետց ամէն տեսակ որոյ վայրի կենդանիներ որ կը կոչուին երե, մանաւանդ բարձր Հայոց, Չորրորդ Հայոց, Այրարատ ու Սիւնեաց նահանգներուն մէջ, և յանուանէ կը յիշուին եղջերու, եղն, վարազ, վայրի այծ՝ որոյ մէկ տեսակն է մշկապորտ այծեամն ըսուածը, որ կը գտնուէր Մշկունիք ըսուած

թուփ մի է, ուսկից ելած կը կարծուի Գազպէ անունը: Կաղնին մայր ծառոյն մէկ տեսակն է, իսկ մատուռակը տեսակ մը խոտ է: Գազպէն յունիսի ու յուլիսի մէջ միայն կու գայ Կարնոյ կողմէն ինչուան Մուշի ու Սասունի կողմերը, գոյնն է ճերմակ, համը անուշ մեղրի նման, թանձրու թիւնն ալ սովորաբար մեղրի պէս կ'ըլլայ, զոր կը ժողվեն ու այլևայլ տեղ տանելով կը ծախեն:

լերին վրայ . ցիո՝ այս ինքն վայրի էշ, հա-  
սարակ էշ, ջորի : Ար գտնուէին նաև ամե-  
նայն տեսակ ընտանի կենդանիներ, ինչ-  
պէս ոչխար, այծ, կով, եղն և այլն : Խիստ  
անուանի է Հայաստանի ձին թէ գեղեց-  
կութեան և թէ ուժեղութեան կողմանէ . ա-  
սոր մէկ տեսակն է ևժոյգ<sup>1</sup> ըսուածը, զոր  
թագաւորները և իշխանները կը գործա-  
ծէին, և աւելի յազթանդամ ու գեղեցիկ է, և  
երազութեամբ կը վազէ : Կ'ըսէ Ստրաբոն  
թէ Հայք ամէն տարի 20,000 ձի կու տային  
Պարսից թագաւորին իբրև աուրք : — Պի-  
տանի կենդանեաց և բերոց կարգը դնելու  
է նաև Արդան կարմիր ըսուած մանր միջա-  
տը, որոյ գոյնովը ծիրանի կը ներկեն . ա-  
սոր Տաճկերները կ'ըսեն Չիչէք, առջի բերան  
ծաղիկ կարծուելուն համար, որովհետև ծա-  
ռի տերևներուն վրայ կալած կը գտնուի :

47. Հայաստանի մէջ յիշուած գազան-  
ներն ու թռչունները : — Գազաններու ցե-  
ղէն կը յիշուին առիւծ, ինձ, վաղր, անա-  
լուիթ, ընձուղտ, գայլ, բորենի, և այլն : Իսկ

1 Ե՛ւթոյգ ձիոյն անունը՝ որուն Մարք և Պարսք .  
'Նեւէճ' կ'ըսեն և Յոյնք 'Նիւէ' . ըստ Երոզտոսի,  
Ստրաբոնի և Պլինիոսի ծագած է ընդարձակ խո-  
տաւէտ գաշախ մը անունէն, որ կ'ընար Մարաց  
երկիրը՝ և կ'ըսուէր 'Նիւէ' . յունաց հնչմունքով,  
որ շատ յարմար էր կ'ըսեն ձիեր արածելու : Այս  
տեսակ ձիերուն Տաճկերները Քիւնէյան կ'ըսեն, և  
Հայաստանի մէջ Խնուսի կողմերը շատ կը գրտ-  
նուի :

Թռչնոց ցեղէն ազոաւ , կարաւ , սաղ , բաղ ,  
փոր կամ կարապ , և ուրիշ տեսակ տեսակ  
թռչուններ . մանաւանդ Այրարատայ ,  
Բարձր Հայոց ու Չորրորդ Հայոց մէջ . իսկ  
ձկներու ցեղէն անուանի են տառեխ ձու-  
կը և կարմրախայտը :

48 . Հայաստանի մէջ յիշուած հանքերը :  
— Հայաստանի զետիւնը շատ տեսակ հանքեր  
ունի , յորոց շատը հիմա անգործ մնացած  
են : Իսկ հին ատեն յանուանէ կը յիշուին  
Աղահանքեր , որ հիմայ ալ շատ կան . և ա-  
սոր ապացոյց է Բարձր Հայոց Գարանա-  
ղի , Մանանաղի ըսուած գաւառները , և  
Տուրուբերանի Աղիովիտ գաւառը : Բաց  
յ'ազէն կը յիշուին նաև պաղլեղ , նաթ ,  
կուպր , կաւ հայկեան՝ որ կը գործածուի  
թիւրակէսի մէջ , և գոյնն է կարմրագոյն .  
ասոր օտար ազգք մեր ազգին անունը կու-  
տան : Կը գտնուի Հայաստանի մէջ նաև  
երկաթ , կապար , պղինձ , գառիկ , արծաթ՝  
որ կ'ելէր կապան ըսուած տեղէն Եփրա-  
տայ մօտ , և Բարձր Հայոց Սպեր գաւառէն .  
և ոսկի՝ որ կ'ելէր Այրարատ նահանգին  
ու Աղձնեաց Արզն կամ Արզն գաւառին  
մէջէն :

49 . Հայաստանի մէջ յիշուած գոհարե-  
ղէն քարեր : — Ղազար Փարպեցի առանց  
անունը տալու կը յիշէ Այրարատ նահան-  
գին մէջ շատ տեսակ պատուական քարեր՝  
որոնցմով թագաւորներուն պսակները և  
թագերը կը դարդարէին : Իսկ օտարազգի

մատենագիրներ կը յիշեն այս քարերս ,  
բիւրեղ կամ սառնատեսակ , եղընզնա-  
քար կամ սարդիոն , ամեթիստոս , շա-  
փիւղ , գմբուխտ , ախատ , սև սաթ . քոչիս՝  
չեչաքարի նման , բայց անոր ազնիւ տե-  
սակը , որ մարմարիոնէ արձանները շտկե-  
լու ու գոհարները փայլեցընելու կը գործա-  
ծուէր . Այսէկետաւ որ Հայաստանէն ելլելուն  
համար այսպէս կոչուած է , գոյնն է կանաչ  
երկնագոյն , ու ներկի կը գործածուէր : Ա՛ն-  
րեի թէ Հայաստանէն կ'ելլէր նաև մարմա-  
րիոն , իսկ հասարակ կիճեր և գոյնզգոյն  
հրաքղխի քարեր խիստ շատ են :

Կը պատմէ Գիողոր Սիկիլիացի թէ Շա-  
միրամ Ասորեստանեայց թագուհին Հայ-  
աստանի լեռներէն կտրել տուաւ 150 ոտ-  
նաչափ երկայն ու 25 ոտնաչափ լայն և  
թանձր քար մը , և տարաւ Եփրատայ մէ-  
ջէն Բաբելոն քաղաքը , և հոն հրապարա-  
կին մէջը կանգնել տուաւ իբրև կոթող մը ,  
որ աշխարհիս եօթն հրաշալեաց կարող  
անցաւ :

ԳԼՈՒԽ Գ .

Հայաստանի բազմամարդուքներն ու կտրեկներն սկսեց ընկալիլ ինչպէս ի վրայ .

50. Հայաստանի բազմամարդութեանը վրայ դիտելիք . — Հայաստան հին ատեն բազմամարդ աշխարհքներէն մէկն էր . և մարդիկ ինչո՞ւն փաղէկ նահապետին ատեն՝ հոս նախ շատցան , ու կտրք ասկէց ելան ցրուեցան աշխարհքիս չորս կողմը : Երբոր Հայկ Բարեչունի աշտարակին կործանմանէն ետե իր մարդիկներովը՝ որ 300 հողիէն աւելի էին , Հայաստան դարձաւ , ետեկ եղաւ հոն տեղի բնակչաց թիւը շատ ցրնելու . վասն զի բազմաց Անաարայ դաշտը երթալուն համար՝ Հայաստանի բնակչաց թիւը մեծապէս պակասած էր : Իր յաջորդներուն մէջ առաջին կը համարուի Արամ նահապետը , որ հետոս երկիրներէն Հայաստան մարդիկ բերելով , շատ անբնակ երկիրներ բնակչօք լեցուց : Նոյնպէս շատ բազմամարդացուցին զՀայաստան մեծն Տիգրան , Վաղարշակ Ա , Տիգրան Բ , և Արտաշէս Բ :

51. Հայաստան եղած գաղթականները . — Հայաստանի ժողովրդեան բազմանալուն մէկ պատճառն ալ այլևայլ ժամանակ հոն եկած գաղթականներն են . ինչպէս մեր Սուր

նահապետին ժամանակ Քանանացւոց երկրէն Քանանիդասին առաջնորդութեամբը, Հրաչեայի ժամանակ Հրէից երկրէն Շամբաթայ առաջնորդութեամբը, մեծն Տիգրանայ ժամանակ Մարաց երկրէն՝ որ կոչեցան Վիշապագունք, Արշակ առաջնոյն ժամանակ Բուլղարներէն՝ իրենց Վղընդուր Վոնդին առաջնորդութեամբը, Տիգրան Բ<sup>մ</sup> ժամանակ Կապագովկացւոց երկրէն և Հրէաստանէն, Արտաշէս Բ<sup>ի</sup> քանն Ալանաց երկրէն, Տրդատայ ժամանակ Ճենաց երկրէն՝ Մամզուն իշխանին առաջնորդութեամբը, և այլն: Այս ամէն զաղթականներէն այլևայլ նախարարական ցեղեր եղան, որոց մէջ զլիսաւորներն են Բազրատունեացը և Մամիկոնեանցը:

Յ2. Այս զաղթականներէն զատ Հայաստանի մէջ բնակող օտար ազգերը: — Բայ ի այս զաղթականներէն կը բնակէին հին ատեն ի Հայաստան, նաև հիմայ ալ կը բնակին օտար ազգեր, որ են Քիւրտ, Թիւրքմէն, Քիլտանի և Տաճիկ, և ուրիշ մէկ քանի ցեղեր: Այս ամէն օտարազգի զաղթականներով յայտնի է որ Հայաստանի բնակչաց թիւը շատցաւ: Սակայն եաքերը՝ եկածէն տասնպատիկ աւելի պակսեցաւ:

Յ3. Հայաստանի բազմամարդ քաղաքները: — Թէպէտ և մեր դրոց մէջ որոշ յիշուած չեն թէ որ քաղաքները աւելի բազմամարդ էին, բայց քանի մը պատմական պարագաներէ բազմամարդ քաղաքներու

կարգը կը սեպուին հետևեալք, Վաղարշապատ, Տիգրանակերտ, Վան, Զարեհաւան, Արտաշատ, Զարիշատ, Դուին, Երուանդաշատ, Սնի, Արծն, Գանձակ, Մանազկերտ, Եղնկա, և այլն:

54. Հայաստանի բնակչաց քիչնալուն պատճառները: — Հայաստանի տկարութեան ատեն դադթականով և գերութեամբ շատ մարդ դուրս ելեր է, ինչպէս այլևայլ ատեն 'ի Պարսկաստան, երբեմն գերութեամբ Արտաշիր Սասանեանին, Շապուհ Բ և Յազկերտ Բ Պարսից թագաւորներուն ատեն, որք Հայաստան տակնուվրայ ընելէն դատ, անթիւ գերիներ ալ տարին: Իսկ զադթելով զնացին Պարսից Խոսրով Բ թագաւորին ատեն եօթներորդ դարուն սկիզբը, և մանաւանդ Ա Շահաբասայ ատեն 1600ին, որ շատ Հայեր Ասպահան տարաւ, ու նոր Զուղա ըսուած աւանը բնակեցուց: Ետքէն Պարսկաստանէն անցան ոմանք Հնդկաստան և Պենկալա: Եոյնպէս շատ հողի զնացին գերութեամբ Ասորեստան, Խուժաստան, Սաղաստան և Գամասկոս քաղաքը, տաճկաց ամիրապետներուն և ամիրաներուն ձեռքովը:

55. Յունաց երկիրը զնացած զադթականները: — Հինգերորդ դարուն ատեն մէկ քանի նախարարներ զադթական զնացին Յունաց երկիրը, նոյնպէս նաև ութերորդ դարուն մէջ 12,000 հողի, Արարացուց հարստահարութենէն ազատ մնալու

Համար : Ատեն ատեն զնացին նաև զաղթականներ Բուլղարաց երկիրը, ուր մէկ քանի հողի Հայոց ազգէն թաղաւորաց նըստած են, նոյնպէս Կոստանդնուպոլսոյ մէջ ալ քանի մը հայազգի կայսր նստած են, ինչպէս ենլ եւոն իմաստասէր, Լեւոն իսաւրացին, Չմէկիկ և այլն : —

56. Անի քաղաքէն ելած զաղթականները : — Մետասաներորդ զարուն երբոր Անի քաղաքը Յունաց ձեռքը անցաւ, Բաղրատունեաց թագաւորութիւնը վերջացաւ, և Ալիապան Տուղրիլի յաջորդը վազեց Հայաստանի վրայ ու տակնուվրայ ըրաւ և առաւ Անի քաղաքը Յունաց ձեռքէն, այն ատենները շատ հողի ելան Հայաստանէն ու Անի քաղաքէն, և զնացին Վրաստան, Միջագետք, Կիլիկիա, Եգիպտոս, Յունաստան, Իտալիա, և աւելի Լեհաստանի կողմերը, ուր շատ ազատութիւններ ունեցան Լեհաց տէրութենէն : —

Գարձեալ, 1259ին երբոր Չարմաղան թաթարաց խանը վերջին անգամ առաւ Անի քաղաքը, այն ատեն շատ հողի Անիէն զնացին ճուղայ կամ Զուղա քաղաքը, ու մանք վան, Աժտէրխան, և շատերը անցան Ղրիմ և բնակեցան հոն, մանաւանդ Ղրիմու Քէֆէ կամ Թէոգոսիա քաղաքին մէջ :

Երեք այլեայլ ատեն Հայք զաղթական զնացած են ՚ի Լեհաստան, և բոլոր Լեհաստան զնացող զաղթականներուն թիւը

ումանք 40,000 տուն կը դնեն, ուր հիմա առջինին համեմատութեամբ քիչ մնացած են :

57. Ռուբինեանց տէրութիւնը վերցունելէն ետքը, և անկէ վերջը Հայաստանէն ելած գաղթականները : — Ռուբինեանց տէրութիւնը վերցունելէն ետե շատ մարդիկ անցան Եւրոպայի կողմը, Գաղղիա, Հոլանտա և Իտալիայի այլևայլ քաղաքները, և վենետիկ ուր մետասաներորդ դարուն մէջ ալ գաղթական եկած էր : — Հայաստանի բնակչաց վերջին ցրումը եղաւ 1600ին ատեն, երբ շատ հոգի եկան դնացին Պարսկաստան, Վրաստան, Ռումէլի, Կոստանդնուպոլիս, Չմիւռնիա, Պուղտան, Լեհաստան, և այլն : — Այսչափ գաղթականներէն ու հատուածներէն ետքն հիմայ կամ երկու միլիոն կամ միլիոն ու կէսի չափ Հայաստանի մէջ գեո հայ բնակիչ կը գտնուի :

58. Հայաստանի բնակչաց քիչնալուն զլիաւոր սրտոճատները : — Առաջին և զրլիաւոր սրտոճատն է Հայոց ասդիս անդին գաղթական երթալը, ինչպէս որ վերը յիշեցինք :

Բ. Օտար ազգերէն կրած սաստիկ կոտորածներն ու գերութիւնները . ինչպէս Պարսիկներէն Արաաչրի, Բ. Շապհոյ, Բ. Յազկերաի, Տուրքիւեանց և Շահաբասայատենները, որք Հայաստանի մէջ չարաչար կոտորած ընելէն ետե, անթիւ բազմութիւն ալ գերելով Պարսկաստան անցուցին :

Արարացիներէն կամ Տաճիկներէն՝ Բու-  
ղայի և Յուսիայ ոստիկաններուն ատեն  
եղած զերութիւններն ու կոտորածները .  
Թաթարներէն՝ Չարմաղանի և Ղէնկիթի-  
մուրին ատեն եղածները , որ արիւնլուայ  
ըրաւ , ու զերեց զերփեց Հայաստանը :

Գ . Օտար ազգաց զՀայերը բռնադատե-  
լով իրենց հաւատքը դարձրենելը , ինչպէս  
են Պարսիկք , Հաղարացիք և Յոյնք . որով  
կամաց կամաց իրենց հայրենի լեզուն մոռ-  
նալով հայութիւննին ալ կը մոռնային :

Դ . Օտար ազգերու հետ խառնուիլը , և  
անոնց լեզուն ու հաւատքը ընդունիլը . ինչ-  
պէս հին ատեն Փայտակարան նահանգին  
բնակիչները , ասանկ ալ հիմա Կորճայք ,  
Պարսկահայք , Հեր , Չարեանդ , Աղճնիք ,  
Տուրուբերան , Վասպուրական աշխարհ-  
ներուն մէջի Հայոց մէկ մասը քիւրա ե-  
ղած են , ոմանք քիչ մը քրիստոնէական  
հաւատքի նշան պահելով . իսկ ուրիշները  
Քիւրտերուն պէս մահմէտական են , և ա-  
նոնց պէս աւազակ : Այս պատճառաւ յԵւ-  
րոպա քրիստոնէից երկրի մէջ գտնուողք՝  
անոնց սովորութիւնը , լեզուն և ազգութիւ-  
նը առած խառնուած են . որով Աեհաստան ,  
Դրանսիլվանիա և Իտալիա եկած Հայե-  
րէն՝ հիմա առջի բաղմութեանը համեմա-  
տելով խիստ քիչ կը գտնուին :

ԳԼՈՒԽ Դ .

Հայաստանի աշխարհագրական բաժանումը .

59 . Արամ նահապետին և Մօրիկ կայսեր ըրած բաժանմունքը : — Արամ նահապետը իր տէրութիւնը ինչուան Միջերկրական ծովն ու Սեւ ծովը ընդարձակելով , ու անբնակ տեղերը բնակչօք լեցընելով , նոր առած երկիրները Առաջին , Երկրորդ , Երրորդ ու Չորրորդ Հայք անուանեց , որք չորսը մէկտեղ անուանեցան Փոքր Հայք . այս ինքն Կապադովկիայէն ինչուան Պոնտոսի տէրութիւնը , Կապադովկիան մէկտեղ առնելով անուանեց Առաջին Հայք . Պոնտոսէն ինչուան Մելիտինէի սահմանը՝ Երկրորդ Հայք . Մելիտինէէն ինչուան Ծոփաց երկիրը Երրորդ Հայք . Ծոփաց երկրէն ինչուան ՚ի Նիփրկերտ և Աղձնեաց աշխարհքը՝ անուանեց Չորրորդ Հայք . իսկ բուն տէրութեան ընդարձակ սահմանը անուանեցաւ Մեծ Հայք :

Մեծին Արամայ զրած բաժանմունքը փոխեց Մօրիկ Յունաց կայսրը՝ վեցերորդ դարուն մէջ . և Առաջին Հայքը կոչեց Երկրորդ Հայք , որոյ մէջն է Սերաստիա մարաքաղաքը : Պոնտոսէն ինչուան Մելիտինէի սահմանը որ առաջ Երկրորդ Հայք կ'անուանէր , Մօրիկ անուանեց Երրորդ Հայք .

իսկ Մելիտինէէն ինչուան Ծովաց երկիրը որ առաջ Երրորդ Հայք կ'անուանէր՝ ինքը Առաջին Հայք անուանեց . և Պոնտոսը՝ որոյ մայրաքաղաքն է Տրապիզոն, Մեծ Հայոց մասն սեպեց . Չորրորդ ըսուած Հայքը, որոյ մայրաքաղաք է Նփրկերտ՝ անուանեց Յուստիանոս նիստ . Տայոց կողմը՝ Խորագոյն Հայք, և Գուին քաղքին կողմը Ներքսագոյն Հայք : Գիտնալու բան մըն է որ Յոյնք ետքերը որչափ որ Մեծ Հայքէն երկիր կ'անուին, ամէնքն ալ Չորրորդ Հայոց մասն կը սեպէին, որով նաև Բարձր Հայոց մէկ մասն ալ : — Անկէ առաջ չորրորդ դարուն վերջերը (387ին) Յունաց Արկադէոս կայսրը և Շապուհ Բ Պարսից Թագաւորը Հայաստանը մէջերնին երկու մաս բաժներ էին . Մեծ Հայք՝ Պարսից մասն էր, որուն Յոյնք կ'ըսէին Պարսկահայք . իսկ Փոքր Հայք Յունաց մասն ընկաւ, հանդերձ արևմտեան մասամբ Մեծ Հայոց :

60. Մեծ Հայոց այլևայլ նահանգները : — Մեծ Հայք սասնըհինգ նահանգ<sup>1</sup> կը բաժնուէր որ են Բարձր Հայք, Չորրորդ Հայք, Աղձնիք, Տոչոռքերան, Մոկք, Կորձայք, Պարսկահայք, Վասպուրական, Սիւնիք, Արցախ, Փայտակարան, Ուտի, Գուգարք, Տայք և Արարատ : Այս նահանգները բոլոր

<sup>1</sup> Խորենացին իր աշխարհագրութեանը մէջ նահանգ բառին տեղ Գուգարք, Արարատ, Կորձայք, Սիւնիք, Սպարտակ, Սպարտակ, Սպարտակ կ'ըսէ, և զանոնք այլևայլ գաւառներ կը բաժնէ :

բոլոր 190 դաւառ կը բաժնուին . իսկ Պլի-  
նիոս 120 կը զնէ , և մեր Զենոբ Պլակը 620  
դաւառ , որ կ'երևի թէ սխալ մտած է զը-  
րուածքին մէջ . վասն զի Ս.դուանից ու վը-  
րաց երկիրները ու Փոքր Հայքն ալ մէկտեղ  
առնելով՝ դարձեալ 620 դաւառ շատ կ'ըլլայ :

61 . Մեր մատենագրաց Հայաստանի  
այլևայլ մասերուն սրբորականէն զայտ տը-  
ւած անունները : — Ե . Միջնաշխարհ կամ  
Միջոց աշխարհի ըսելով կ'իմանան Ս.յրա-  
րաա նահանգը :

Բ . Վերնագաւառ կամ Վերին Հայք , Հայ-  
աստանի հիւսիսային կողմերը :

Գ . Խորին Հայք , Վաղարշապատու կողմը .  
Իսկ Յոյները Խորագոյն Հայք ըսելով կ'իմա-  
նային Տայք նահանգին կողմերը :

Դ . Ներքագոյն Հայք , Դուին քաղքին  
կողմերը :

Ե . Ստորին Հայք , կ'երևի թէ Յոյներէն  
կոչուած է իրենց բաժնին հարաւային կող-  
մը :

2 . Միջերկրեայ , Պոնտոս ծովուն և Միջ-  
երկրականին մէջ եղած երկիրը , ուր է  
Փոքր Հայք , նաև մեծին Հայոց արևմտեան  
մէկ մասը :

Ե . Միջագետք , Եփրատ ու Տիգրիս գե-  
տերուն մէջ ինկած Մեծին Հայոց մէկ մա-  
սը , այսինքն Զորրորդ Հայք և Ս.դճնիք :

Ը . Դրոշց աշխարհ , որ կ'իմացուէր Բաղ-  
րատունեաց ատեն Մեծին Հայոց այն մասը  
որ մնացեր էր Հայոց ձեռքը Շիրակ գաւա-  
ռէն դուրս :



## ԳԼՈՒԽ Ե .

### Ա . Բարձր Հայր .

62 . Բարձր Հայոց զիրքն ու սահմանը : — Այս նահանգին զիրքը Հայաստանի ամէն նահանգներէն աւելի բարձր ըլլալուն համար՝ անունն ալ Բարձր Հայր գրուած է, որ այնչափ չ յիշուիր մեր վերջի մատենագիրներուն մէջ, և անոր տեղ Կարնոյ քաղքին և զաւառին անունովը շատ տեղ Կարին կ'անուանի կամ Կարնոյ աշխարհ : Իրեն արևելքէն սահմանն է Այրարատ նահանգը, արևմտքէն Եփրատ գետը և Փոքր Հայք, հիւսիսէն Տայոց աշխարհքը և Կողքիս, հարաւէն Տուրուբերան և Չորրորդ Հայք :

63 . Բարձր Հայոց լեռներն ու գետերը և բերքերը : — Բարձր Հայոց երկիրը ունի շատ լեռներ, ուսկից կը բխեն Եփրատ գետոյն մէկ ճիւղը, Երասխ գետը և Ճորոխ կամ Փասխ գետը : Բաց 'ի այս գետերէն Բարձր Հայոց չորս կողմէն կը բխին ուրիշ սղտի գետեր, աղբիւրներ . ուստի խիստ շատաջուր ըլլալուն համար երկիրն ալ շատ բարեբեր է, թէպէտ և ամէն կողմը հաւասար չէ : Ունի դաշտեր ալ, ինչպէս Կարնոյ և Երզնկայ դաշտերը, և այլն : Ունի շատ տեսակ վայրի կենդանիներ, թռչուններ ու ձկներ, դարձեալ աղի հանքեր ու

ջերմուկներ, և տեսակ տեսակ ծաղիկներ ու բոյսեր :

64. Բարձր Հայոց գաւառները: — Բարձր Հայք ինն գաւառ կը բաժնուէր, որ են Դարսևաղի, Առիւծ, Մեճնշր, Եկեղիք, Մանևաղի, Գերջան, Սպեր, Շատգունք կամ Շաղագունք և Կարիև<sup>1</sup>:

### Ս. Դարսևաղի.

65. Դարսևաղի գաւառին վրայ գիտելիք: — Ս.յս գաւառը սահմանակից է Եկեղեաց գաւառին. երկիրը ծաղկաւէտ ու ջրարբի, և մէջը աղի հանքեր շատ ըլլալուն, անունն ալ դարսևաղի ըսուած է, զոր կազանկատուացին կը կոչէ նաև Աղեաց գաւառ: Ստոր բնակիչները հին ատեն դիւթութեանց ու կախարդութեանց ետևէ շատ կ'ըլլային. և ուղղափառ հաւատքը ընդունեցան Գրիգոր Լուսաւորչի քարոզութեամբը ու մեծամեծ հրաշքներով:

66. Սեպուհ լեռին վրայ գիտելիք: — Ս.յս լեռը Դարսևաղի ու Եկեղեաց գաւառներուն մէջ կ'իյնայ, և կը կոչի նաև Մանևայ այրք, Մանէ կոյսը որ Հռիփսիմեանց ընկերներէն մէկն էր, այս լեռին վրայ այրի

<sup>1</sup> Ս.յս աշխարհագրութեանս մէջ միայն այն գաւառներուն վրայ կը խօսինք, որոց վրայ մասնաւոր տեղեկութիւն մը կայ, և կամ որոց մէջ երևելի քաղաքներ կը գտնուին:

մը մէջ ճգնելուն համար, ուր ետքը սուրբն Գրիգոր Լուսաւորիչ ալ ատեն ատեն կու գար ճգնութիւն կ'ընէր: Այս լերին վրայ դանազան ուխտատեղիներ կային, որոյ մէկն է Բարեկաւ աղբիւրն, որոյ աղի ջուրը Գրիգոր Լուսաւորիչ հրաշքով անուշցուցեր էր. և անոր մօտ Գարակը, ուր հովիւները առանց ճանչնալու թաղեցին Գրիգոր Լուսաւորչի մարմինը: Այս լերին խոռոչներուն ու այրերուն մէջ իններորդ դարուն շատ խստակրօն ճգնաւորներ կային, հիմայ ալ կան քանի մը վանքեր, ինչպէս Աշագ վանքը<sup>1</sup>:

67. Գարանաղեաց դաւառին զլխաւոր տեղերը: — Գարանաղեաց դաւառին մէջ որ հիմայ կ'ըսուի կամախ, կ'իյնայ թորդակ աւանը կամ գեղը՝ Եփրատայ արևել-

1 Վարդան աշխարհագիրը կը պատմէ թէ Տրդատ Թագաւորը Գրիգոր Լուսաւորիչը փնտաւելու համար երբոր Սեպուհ լեռը գնաց, Գրիգոր Լուսաւորիչ շատ մարգարէական խօսքերէն ետեառաւ Տրդատայ հաւհալունի ըսուած թուրը, ու խաչաձև օժէլով օգոյն մէջ կտխեց, ըսելով թէ արիական ազգին այսինքն Փռանկաց կամ Գաղղիացւոց ելլելուն ատեն այս նշանն ալ երկինքը պիտի երևի: Եւ այս նշանը զգալի աչքով Յովհաննէս Եղնկացին կամ Պլուզ վարդապետը երեքտասաներորդ դարուն՝ լերին ծայրը տեսնելով, շինեց Լէրին<sup>+</sup> աճեայն ըսուած Լուսաւորչի շարականը: Այս բանս միայն Վարդան աշխարհագիրը կը պատմէ:

լեան կողմը : Հոս էր Ասորոց Բարչամ կուռքին արձանը փղոսկրէ ու բիւրեղէ շինած և արծրթով պատած : Այս արձանը Միջագետքէն միջին Տիգրանը հոս բերած էր , զոր սուրբն Գրիգոր կործանեց ու մեհեանը եկեղեցի շինեց : Ատեն անցնելէն ետքը Սեպուհ լեռնէն հոս փոխադրեցաւ Գրիգոր Լուսաւորչի մարմինը Փառնուկ ձղնաւորին ձեռքովը : Այս զեղիս մէջ թաղուած են Գրիգոր Լուսաւորչայ որդիքն և թոռներն :

68 . Անի բերդին վրայ գիտելիք : — Պարանաղի դաւառին մէջ կ'իյնայ Անի կամ կաւախ ըստած անուանի ու ամուր բերդը , որոյ շինողը և շինութեան ժամանակը յայտնի չէ : Արտաշէս առաջինին ատենէն սկսեալ հոս կը պահուէր թաղաւորական դանձր տեղւոյն ամրութեանը համար : Հոս կը թաղուէին արչակունի թաղաւորները , անոր համար անունն ալ ըստած է կաւախ որ կմախք բառէն ելած կ'երևնայ : Հոս կը պահուէին մեհենական պատմութիւնները . և հոս էր Արտաշէս առաջինին Յունաստանէն բերած Արամազդայ կամ Գիոսի ոսկեզօծ արձանը , զոր սուրբն Գրիգոր կործանեց , ու մեհեանն ալ եկեղեցի շինեց : Պարսից Շապուհ երկրորդին ատեն ուրացեալն Մերութան այս բերդը մեր նախարարներուն օգնութեամբը առնելով , կործանեց անոր պարիսպը , ու թալլեց մէջը դիզուած թաղաւորական դան-

ձերը, ու հանեց զերեզմաններէն Արշա-  
կունի թագաւորներուն ոսկորները, միայն  
Սանատրուկ թագաւորին զերեզմանը չկըր-  
ցաւ քակել իր ամուր ու հսկայածե շի-  
նուածքին համար :

Բ. Եկեղիք .

69. Եկեղեաց զաւառին վրայ զիտելիք :  
— Եկեղեաց զաւառը որ վերջերը Եզնկա  
ալ ըսուեցաւ, փոքր Հայոց սահմանակից  
է, ու մէջէն կ'անցնին Եփրատ ու Գայլ գե-  
տերը : Այս զաւառը կ'ըսուի նաև Լուսա-  
տրչի գաւառ, հոս Գրիգոր Լուսաւորիչը շար-  
շարուելուն, կամ թէ այս զաւառին Թիլն  
աւանը իրեն կալուածն ըլլալուն համար :  
Պլինիոս այս զաւառը կը կոչէ Անահտակաև  
երկիր, Անահտայ տաճարներով լեցուն ըլ-  
լալուն համար, մանաւանդ Երիզա քաղքին  
փառաւոր տաճարին համար, ուր էր Ա-  
նահտայ ոսկիէ արձանը :

70. Եկեղեաց զաւառին մէջ յիշուած ե-  
րեւելի տեղերը : — Այս զաւառիս մէջ ա-  
նուանի է Երիզա կամ Երեզ ըսուած աւա-  
նը, որ կոչեցաւ նաև Յուսափնիակնուպոլիս,  
և ետքերը ըսուեցաւ Եզնկա, որ Գայլ գե-  
տոյն քով շինուած է : Հոս էր Անահտայ  
անուանի մեհեանը, զոր միջին Տիգրան շի-  
նել տուաւ, և իր հօրը Արտաշէսին Յունաս-  
տանէն բերած Անահտայ ոսկիէ արձանը

Հոս փոխադրել տուաւ, որ առաջ Անի բերդին մէջ դրուած էր: Այս մեհեանը սուրբն Գրիգոր Լուսաւորիչ հրաշքով կործանեց ու անոր տեղը եկեղեցիներ շինեց: Այս քաղաքը որ հին ատեն շատ ծաղկած էր կռապաշտութեամբ, նոյնպէս քրիստոնէութեան ատեն ալ շատ ծաղկեցաւ, եկեղեցիներով և վանքերով, որոց մէջ անուանի է Տիրաշէն, Տիրան թագաւորէն շինուած: — Երբիցա քաղաքը շատ անգամ երկրաշարժով արուեցաւ, որ տասնևվեց անգամէն աւելի կը յիշուին 'ի պատուհաց. 1060ին ատենները առին Պարսիկք Երբիցա քաղաքը, և մէջը շատ Զարդ ընելէն ետև՝ քաղքին մէկ մասին ալ կրակ տուին:

71. Եկեղեաց գաւառին մէջ ուրիշ նշանաւոր տեղուանք: — Թիլն աւանն ալ Երբիցային պէս մեհենաղարդ էր, որոյ մէջ միջին Տիգրան փառաւոր տաճար մը շինելով, Յունաստանէն բերած Աթենասայարձանը կանգնեց: Այս արձանն ալ սուրբն Գրիգոր Լուսաւորիչ կործանեց, ու տաճարին մէջի գանձն ալ եկեղեցւոյ սպասներու գործածեց: Այս քաղքիս եկեղեցիներուն մէջ անուանի էր կաթողիկէն, զոր Մեծն Ներսէս շինեց, ուր և թաղեցաւ. բայց երբոր Տաճկըները արըշտըկեցին այս եկեղեցին, սրբոյն Ներսեսի մարմինն ալ անյայտ եղաւ, և 1273ին նորէն յայտնեցաւ. և Եզնկայի Սարգիս եպիսկոպոսը Տաճկըներէն վախնալով, Եզնկա փոխա-

դրեց մարմինը : Թիլն աւանին մէջ թա-  
զուած էր սուրբն Արիստակէս ալ : — Չրր-  
մէս աւան , որ Տիրան առաջնոյն ատեն ար-  
քայանիստ եղաւ : — Խախ գեղ , ուր Պապ  
սպաննեց թունով զմեծն Ներսէս : — Վա-  
սակերտ , զոր շինեց Արշակ թագաւորին  
Վասակ սպարապետը : — Սեղեմնուս ձոր ,  
ուր նահատակեցաւ և թաղեցաւ Սուրէն  
հայ նախարարին Թէոզորոս որդին իր հօ-  
րը ձեռքովը , քրիստոսական հաւատքը ըն-  
դունելուն համար . ասոր գերեզմանին վը-  
րայ սուրբն Գրիգոր Լուսաւորիչ եկեղեցի  
ու վանք մը շինեց : — Այս գաւառիս մէջ  
անուանի էին նաև Կորկր աւանը և Պարթե-  
նից զղեակը , և այլն :

### Գ . Մանանաղի .

72 . Մանանաղի գաւառին զիրքը և նշա-  
նաւոր տեղուանքը : — Մանանաղի սահ-  
մանակից է Եկեղեցաց ու Կարնոյ գաւառ-  
ներուն . ու անունը առած է մէջէն ազնիւ  
աղ ելլելուն համար : — Այս գաւառիս մէջ  
է անմատչելի քարայր մը , ուր Արշակ Գին  
դանձը յափշտակող երեք նախարարները  
փախան ամրացան : Գլխաւոր տեղերը կը  
յիշուին Սմբատաբերդ , Սմբատ թագաւորին  
շինածը , զոր 1050ին ատենները առին Պար-  
սիկք , ու մէջը ապաւինած մարդիկը թրէ-  
անցուցին : — Շիրնի բերդաքաղաք , Չեր-  
մայ զիւղաքաղաք , Բազմաղբիւր կամ Խաչ

աւան, Թուրայլ աւան, որոյ բնակիչները կ'ըսուէին Թուրայլեցիք, և Տ. դարուն մէջ Թոնդրակեցւոց աղանդը ընդունեցան :

Գ. Գերջան .

73. Գերջան գաւառին մէջ յիշուած երեւելի տեղերը : — Գերջան գաւառը կ'իյնայ Եկեղեաց գաւառին արեւելեան կողմը, և մէջը անուանի է Բագառիւնց կամ Բագայառի՛ն գեղը, ուր կանգնեց միջին Տիգրան Արտաշէս Ան Յունաստանէն բերած Հեփեստոսի արձանը մեհենի մը մէջ, և զիմացն ալ կրակի բազին մը շինեց : Այս մեհեանը Ազաթանգեղոս Միհրական մեհեան կ'անուանէ, Պարսից Միհր աստուծոյն անունովը, որ է արև և կրակ :

Ե. Սպեր .

74. Սպեր գաւառին մէջ յիշուած երեւելի տեղերը : — Սպեր գաւառը որոյ մէջ աղնի ու առատ ոսկւոյ հանք կար, սահմանակից է Խաղտիք նահանգին : Այս գաւառը Արշակունեաց ատեն Բաղրատունեաց ցեղին սեպհական երկիրն էր, և մէջը անուանի էր Սպեր քաղաքը որ ձորոխ գետոյն վրայ շինուած է : — Սմբատաշան բերդը, զոր շինեց քաջն Սմբատ Բիւրատեան Արտաշէս երկրորդին սպարապետը : — Բայրերոյ կամ Բաբերոյ ամուր բերդաքաղա-

քը ճորտիս գետոյն վրայ շինած, որոյ մօտ է վանանաշէն աւանը և վանքը. այս քաղաքը Խաղտեաց նահանգին գլխաւոր քաղաքը կը սեպուէր ետքերը, որ Մեծին Հայոց հնգետասան նահանգներուն մէջ չէ:

## Զ. Կարին.

75. Կարնոյ գաւառին վրայ գիտելիք: — Կարնոյ գաւառը խիստ բարձր երկիր է և բարեբեր, ունի ընդարձակ դաշտ մը ու լիճ մը որ Ծովակ Կարնոյ կ'ըսուի, որոյ մէջ շատ ձկներ կը գտնուին: Կարնոյ լեռներէն կը բխի Եփրատ գետոյն մէկ ճիւղը:

76. Կարնոյ գաւառին մայրաքաղաքը: — Այս գաւառիս մէջ երևելի է Կարին քաղաքը, զոր Յունաց փոքր Թէոդոս կայսրը շինել տուաւ հինգերորդ դարուն սկիզբը իր Անատոլիս զօրավարին ձեռքովը, և իր անունովը կոչեցաւ Թեոդոտոպոլիս: Դիրքն է դաշտին մէջ լեռին ստորոտը, ուսկից շատ աղբիւրներ կը բխին ու հանքային ջուրեր, ուր Անատոլիս զօրավարը ջերմուկներ շինել տուաւ<sup>1</sup>: Այս քաղաքը Թէոդոս ամուր պարիսպներով սլատելէն ետեւ, պարսպին չորս գին խրամներ բացաւ, քաղաքը թըշնամիներէն անառիկ ընելու համար, և ը-

<sup>1</sup> Մեր Վարդան աշխարհագիրը կը զրուցէ թէ Մովսէս Խորենացի ու Դաւիթ Անյաղթ Անատոլիս զօրավարէն վերակացու գրուած էին քաղքին շինութեանը տակն, որ շատ հաւանական չերևար:

րաւ իրենն զօրանիստ քաղաք , թշնամինե-  
րուն ձեռքէն Հայաստանը պահպանելու :  
Այս բերդաքաղաքը Անաստաս և Յուստի-  
նիանոս կայսերք ալ շատ ամրացուցին . վեր-  
ջը 650ին ատենները Տաճկըներուն ձեռքը  
անցնելով կոչեցին Արգիրոս , այսինքն Հո-  
սովմներու երկիր : — Թէպէտև Յոյները ա-  
տեն ատեն առին Տաճկըներուն ձեռքէն  
այս քաղաքը , ու պարիսպն ալ կործանե-  
ցաւ թշնամեաց յարձակմունքներէն , բայց  
նորէն Տաճկաց ձեռքը անցաւ ու պարիսպն  
ալ նորոգեցաւ :

77. Կարնոյ գաւառին ուրիշ երևելի  
տեղերը : — Արձն աւանը , որ շատ վաճա-  
ռաչազ քաղաք էր , որոյ մէջ 800 եկեղեցի  
կար կ'ըսեն : Այս քաղաքը մետասաներորդ  
դարուն՝ Տուղրիլ սուլդանին ատեն Թուր-  
քերն ու Պարսիկները առին , ու մէջը հա-  
րիւր յիսուն հազար հողի ջարդելով , քա-  
ղաքն ալ կործանեցին որ պարիսպ չունէր .  
և Կեղրենոս յոյն մատենագիրը կ'ըսէ թէ  
մէջի բնակիչները իրենց քաջութեանը վը-  
րայ վստահացած , կամաւ պարսպով չէին  
ամրացուցած :

Կարնոյ գաւառին մէջ կ'իյնան նաև Լաւ-  
տիվերտ գեղը Արձն քաղաքին մօտ , ուսկից  
էր Արիստակէս Լաստիվերտցի պատմիչը :  
— Մարագաց գեղը , ուսկից էր Խաղ եպիս-  
կոպոսը մեծին Կերսեսի փոխանորդը : —  
Արծարի գեղ , Հնձոնց գեղ , Խաղտոյ առիձ  
բերդը , և այլն :

ԳԼՈՒԽ Զ.

Բ. Զորրորդ Հայր.

78. Զորրորդ Հայոց վրայ գիտելիք : — Այս նահանգը մեր մատենագրաց մէջ Ծոփք կամ Ծոփաց աշխարհ կը կոչի . երբոր Փոքր Ասիային մէջ Հայոց ձեռքը եղած երկիրները առաջին , երկրորդ , երրորդ Հայք բաժանեցան , այս Ծոփք նահանգն ալ Զորրորդ Հայք ըսուեցաւ :

Այս նահանգը կ'իյնայ Բարձր Հայոց հարաւային դին , և իրեն արեւմտեան կողմէն կ'անցնի Եփրատ գետը՝ որ Մեծ Հայքը Փոքր Հայքէն կը զատէ : Մէջէն կ'անցնի Արածանի գետը՝ որ Ծաղկէոյ լեռնէն կը բղխի , նոյնպէս ասկէ կը բղխի Տիգրիս գետը , ուրով կ'ըլլայ Զորրորդ Հայք Միջագետաց գլուխը : — Իննբորդ դարուն սկիզբը Թէոփիլոս կայսրը արեց ու անապատ դարձուց այս նահանգը : Իսկ Քրիստոսի 995 թուականին սաստիկ երկրաշարժէ բոլորովին աւերակ դարձաւ , ու ինչպէս կը պատմէ Ասողիկ , կործանեցան իրեն Հաշտեանք , Խորձեան , Ծոփք , Բալու և Պաղնատուն գաւառներուն մէջ շատ տեղեր : — Զորրորդ Հայոց մէջ բաց 'ի ուրիշ բերքերէն կը յիշուին 'ի հնուց որսոյ կենդանիներ , ձկներ , թռչուններ , առիւծ . և 'ի հանքաց՝ բիւրեղ :

79. Չորրորդ Հայոց գաւառներն: — Չորրորդ Հայք կը բաժնուի ութ գաւառ, որ են Խորձեակ, Հաշտեակք, Պատկաւտուն, Բարաւուսիտ, Ծոփք, Հակճիք, Գորեք և Գեղիք:

Ա. Խորձեակ.

80. Խորձեակ գաւառին վրայ գիտելիք: — Այս գաւառը լեռնոտ անտառային ու բերդերով ամրացուցած գաւառ մըն է Նփրատ գետոյն մօտ, որ վերջերը կ'ելի ըստեցաւ համանուն քաղքին անունովը: — Կը յիշտին մէջը նաև Մորմրակս գեղը և Արքախ բերդը. ասոր անունով ալ հիմայ գատ վիճակ մը կայ:

Բ. Հաշտեակք.

81. Հաշտեակք գաւառին վրայ գիտելիք: — Հաշտեակք գաւառը սահմանակից է Տարսնոյ. ոնի ձորահովիտ մը՝ որուն մէջ կը բնակէին Հայոց թագաւորներուն այն գաւակները, որոնք որ պիտի չթագաւորէին: Այս սովորութիւնը սկսաւ վաղարշակ Պարթևէն, որ շատ գաւակներ ունենալով, և չուղելով որ ամէնքն ալ իր քովը Մծբին քաղքին մէջ կենան, միայն իր անդրանիկ որդին Արշակը քովը պահեց, ու մէկալնոնք Հաշտեակք գաւառը խաւրեց, ուր ետքերը շատցած և աւելի ընդարձակեցին իրենց սահմանը, Աղիովիտ ու

Առբերանի գաւառներուն մէջ ալ երթալով :

Երկիրը խիստ բարեբեր ու զուարճալի ըլլալուն , թագաւորագուններու բնակարան ընտրեցաւ : Ասոր մէջէն կը բխի Տիգրիս գետը Ուրայ գեղէն : Անուանի է այս գաւառին մէջ կրտսի՞ քաղաքը , որ ընդարձակ ու ամուր բերդ ունի , և շինել տուաւ Յուստինիանոս կայսրը :

#### Գ. Պաղևատուն .

82 . Պաղևատուն գաւառին զլխաւոր տեղերը : — Պաղևատուն գաւառին մէջ կար Պաղիւն անունով բերդ մը , որ թերևս շինողին անունովը կոչուած է , անկէջ գաւառն ալ Պաղևայ տուն , որոյ մէջն էր նաև թըրլ-սրաղտ բերդը : Ա'երևի թէ այս գաւառին մէջ կ'իյնայ Արկնի կամ Արնի և կամ Արդնի ամուր բերդը , հիմա Արզանա , որոյ մօտերը ոսկւոյ հանք կայ , և թղխում ամուր բերդաքաղաքը , որ իրեն սահմանակից երկրովը պզտի գաւառ մըն է , բարեբեր և հարուստ . ԺԱ դարուն Տուղրիլ այս երկրին մեծ մասը այրեց անապատ դարձուց , բնակիչներն ալ գերի տարաւ :

Գ. Բարանովիտ .

83 . Բարահովիտ գաւառին վրայ գիտելիք : — Բարահովիտ գաւառին անունը ելած է Բարու բերդին անունէն , և մէջը ընդարձակ ու բարեբեր հովիտ ըլլալուն համար ըսուեր է Բարահովիտ կամ Բարահովիտ , իբր Բարուայ հովիտ : Բարու բերդաբազարէն գատ ունի Մեծկերտ բերդը և ուրիշ ամուր տեղուանք :

Ե . Ծոփք .

84 . Ծոփաց գաւառին վրայ գիտելիք : — Ծոփք գաւառը երկու մաս կը բաժնուէր , մէկը կ'ըսուէր Ծոփք Շահունեաց , Շահունի ցեղին անունովը որ այս գաւառիս մէջ կը բնակէր . մէկալը Մեծ Ծոփք , որոյ մէջն էր Բնաբեղ բերդը , և Անգղ ամուր բերդը՝ զոր Բուզանդ Անգեղտան գաւառին մէջ կը դնէ՝ որ նոյն է Ծոփք գաւառին հետ , ուր կը բնակէր Անգեղտուն ըսուած երևելի նախարարութիւնը : Այս բերդին մէջ , որ նոյն է Գէգիք գաւառին մէջ յիշուած Անկղ բերդին հետ , կը պահուէին թագաւորական դանձք , և դերեղմանք :

85 . Ծոփաց գաւառին մայրաքաղաքը : — Այս գաւառիս մէջ երևելի է Մարտիրոսաց քաղաքը կամ Նփրկերտ , զոր Մարութա եպիսկոպոսը՝ որ մօր կողմանէ Հայոց

նախարարներու ցեղէն էր, Փոքր Թէոդոս կայսրէն խնդրելով պարսպով ամրացուց, ու մէջը փառաւոր տաճար մը շինեց, ուր զանազան աշխարհներէ սրբոց մասունք հաւաքեց, 280,000ի չափ. այս պատճառաւ քաղքին անունն ալ Մարտիրոսաց քաղաք ըսուեցաւ :

Այս քաղաքս Յուստինիանոս կայսրը աւելի ամրացուց առջի պարսպէն չորս տանաչափ հեռու ուրիշ պարիսպ մ'ալ շինելով, որ հին պարսպին պէս 4 ոտնաչափ թանձր ու 20 ոտնաչափ բարձրութիւն ունէր, և այս երկու պարիսպներուն մէջ տեղը քարով և կրով լեցուց : Այս նորոգութեանս համար քաղքին անունն ալ Յուստինիանոսապոլիս անուանեց, ու բոլոր Ծովաց աշխարհին մայրաքաղաքը ըրաւ : Հուլաուն խանը (1260) առաւ այս քաղաքս և մէջը շատ ջարդ ըրաւ, բայց մասունքներուն ու եկեղեցիներուն մնաս մը չհասցուց. հիմա Մոսֆարդիւն կ'ըսուի այս քաղաքը :

86. Ծովաց ուրիշ յիշուած քաղաքները : — Խոզակ գիւղաքաղաքը, զոր Մատթէոս պատմիչ իր շրջակայ սահմանովը Խոզկայ գառառ կ'անուանէ, և անոր մէջ կը գնէ Չմշկածագ քաղաքը որ Յունաց Չմշկիկ կայսեր անունովը կոչուած է, որ ազգաւ հայ էր Խոզկայ գառառին քաղքէն, և իր անունովը այսպէս կոչուած է. վասն զի քաղքին առջի անունը Յերասպոլիս էր, որ սրբազան քաղաք կը նշանակէ :

Ծովաց զաւառին մէջ կը դնէ Ստրարոն կարկարիտկերտ անունով քաղաք մը , և կ'ըսէ թէ ասիկա էր Ծովաց մայրաքաղաքը , որոյ վրայ ամենեկին յիշատակութիւն մը չկայ մեր մատենագիրներուն մէջ . և թեւ ըստ խարրերդ քաղաքին համար ըսած ըլլայ , ոմանք ալ Տիգրանակերտ կամ Ամիգ քաղաքը կը կարծեն :

## Զ. Հանձիր .

87 . Հանձիթ զաւառին մէջ յիշուած տեղերը : — Հանձիթ զաւառին մէջ երևելի է խարրերդ կամ կարրերդ ամրոցը . Ճապաղաչուշր կամ Ճապղչուշր բերդը , Հարառ քաղաքը , և Էկիլ ամրոցը : Որոնք հիմայ ամէնքն ալ մէյմէկ վիճակի զլիսաւոր քաղաք կամ աւան են :

Խարրերդի մօտիկ կայ Ծովակ մը , որոյ մէջն է Ծովք ըսուած զղեակը , որ երկոտասաներորդ դարուն մէջ քիչ մը ատեն Հայոց կաթողիկոսարան եղաւ : Խարրերդի մօտ է նաև կապան աւանը , ուր արծաթի հանք կայ :

ԳԼՈՒԽ Է .

Գ . Աղձնիք .

88 . Աղձնեաց նահանգին վրայ աշխարհադրական գիտելիք : — Աղձնիք նահանգը կը կոչուի երբեմն Արձն , իր Արձն դաւառին անունովը . կը կոչուի նաև կողմն Ատրեստանի , Ատրեստանի սահմանակից ըլլալուն համար , և կամ Ատրեստանեայց Սենեքերիմ թագաւորին Սանասար որդւոյն հոս բնակելուն ու հոս բազմանալուն համար . և կ'իյնայ Միջագետաց հիւսիսային կողմը Չորրորդ Հայոց սահմանակից :

Մէջէն կ'անցնի Տիգրիս գետը , և ունի թռչի անունով գետ մ' ալ , որ կը թափի Բզնունեաց ծովը : — Բերբերէն կը յիշուին յանուանէ երկաթի ու կապարի առատ հանք , նաւթ , գիտոր , և զեղհուկ թռչունը :

89 . Աղձնեաց վրայ պատմական գիտելիք : — Այս նահանգը թէպէտ և մեր Սկայորդի հայկազուն նահապետը Սանասարի ցեղին տուած էր , բայց ետքէն , ինչպէս որ կը պատմէ թովմա Արծրունի , Արծրունեաց ցեղին անցաւ մեծին Տիգրանայ աւտեն : Վաղարշակ Ա այս նախարարութիւնը բղեջխութիւն ըրաւ , և Տրդատ թագաւորը իր տէրութեան ութը նախագահ իշխանաց մէկը , որոնք 400 իշխաններու

զլուխ էին, և թագաւորին խորհրդակից : Այս բղէջխութիւնը Տրդատայ որդւոյն խոսրով երկրորդին ատեն բաժնուեցաւ 'ի Հայոց' թակուր իշխանին ձեռքովը, ու Պարսից կողմը անցաւ :

90 . Աղձնեաց գաւառներն : — Աղձնիք նահանգը տասն գաւառ կը բաժնուի, որ են Արզն կամ Արձն, Նփրկերտ, Քեղ, Կերիկ, Տատիկ, Ազնուաձոր կամ Ազնուաց ձոր, Խերճերք, Գզեղ, Սալնոյ ձոր կամ Սալուաձոր և Սատուն :

Ա . Արզն : — Բ . Նփրկերտ .

91 . Արզն և Նփրկերտ գաւառներուն վրայ զիտելիք : — Արզն գաւառին անունը ըսուած կայ նաև Արձն, և մէջի զլխաւոր քաղաքն է Արզուն, որոյ անունովը գաւառը Արզն ըսուած է :

Իսկ Նփրկերտ գաւառը խորենացին թէպէտ և այս նահանգին մէջ կը գնէ, բայց նոյն անունով մայրաքաղաքը ազգային ու արտաքին մատենագիրները Չորրորդ Հայոց կամ Շոփաց աշխարհին մէջ կը գնեն, ինչպէս մենք ալ հոն յիշեցինք :

Գ . Սատուն .

92 . Սատուն գաւառին վրայ զիտելիք : — Կ'երևի թէ Սատուն անունը Սանասունի աւրուածն է, որ ելած է Սանասարին անու-

նէն, որ Սիմ' լեռան վրայ բնակեցաւ, երբ-  
որ իր եղբօրը Աղբամբէքին հետ մէկտեղ  
իրենց Սենեքերիմ' հայրը սպաննելէն ետե  
Ասորեստանէն ՚ի Հայաստան փախան, ու  
Աղձնեաց կողմերը բնակեցան: Սասունի  
բնակիչները կը կոչուին երբեմն Տօրոսի  
բնակիչներ, Տօրոսի մէկ գօտին որ է Սիմ'  
լեռը՝ այս գաւառին մէջէն անցնելուն հա-  
մար: Սիմ' լեռին անունը հիմա կը կոչուի  
Սասուն: Այս գաւառին բնակիչները որ  
կ'ըսուին Սանասևանք, լեռնաբնակ ըլլա-  
լուն համար, բնութեամբ կտրիճ և ան-  
արուեստ մարդիկ են, սակայն հիւրասէր և  
զուրիշը պատուող, լեզունին թանձր ու խո-  
չորածայն: Այս գաւառին մէջ անուանի է  
Թառձեան բերդը:

93. Աղձնեաց մէջ յիշուած ուրիշ տե-  
ղեր: — Այս նահանգին մէջ կը յիշուին  
մէկ քանի քաղաքներ ալ, որոնց գաւառը  
յայտնի չեն:

Տիգրանակերտ քաղաք, զոր մեծն Տիգ-  
րան շինեց Քրիստոսէ զրեթէ 560 տարի  
առաջ Տիգրիս գետոյն վրայ, Միջագետաց  
մօտիկ, ասով արտաքին մատենագիրներէն  
չատերը Միջագետաց մէջ կը դնեն այս քա-  
ղաքը: Զորրորդ ու հինգերորդ դարերուն  
մէջ սկսան օտարազգի մատենագիրները  
Ամիդ կոչել այս քաղաքը. ասով մեր մա-  
տենագրաց մէջ ալ նոյն սովորութիւնը մը-  
տաւ երբեմն Տիգրանակերտ ու երբեմն Ա-  
միդ ըսելը: Այս քաղաքը միջին Տիգրան

նորոգեց ու շատ ճոխացուց, և մէջը թաա-  
րոն մը շինեց, և Ապպաղովկիայէն շատ  
զերի բերելով քաղմամարդացուց քաղաքը<sup>1</sup>։  
Մեծին Տիգրանայ ատենէն 'ի վեր երևելի  
եղած և անառիկ սեպուած է Տիգրանա-  
կերտ, որոյ պարիսպները Աոստանդ կայս-  
րը (339ին) նորոգեց և ամրացուց, զորոնք  
ետքէն մեծն թէոզոս ալ նորոգեց։ Երկու  
անգամ այս քաղաքը Պարսիկներէն առ-  
նուեցաւ . մէյմը Շապուհ Բին ատեն, որ  
մեծին Տիգրանայ շինած պարիսպները տեղ  
տեղ կործանելով, մէջէն 40,000 տուն գե-  
րի տարաւ . երկրորդ Աուատ թագաւորին  
Ժամանակ (ՃԱՃին) որ մէջը 80,000 հողի  
չարդեց։

Աղձնեաց նահանգին մէջ կը յիշուին  
նաև Բառաէջ աւանը, Բեղոս գեղը, Սեղմ  
բերդը, Պալի, Կոտում և Կաղբայոյ գեղերը,  
և Աղեսուր ըսուած լեռանց նեղ անցք կամ  
կապան մը։

1 Սորաբոն յոյն աշխարհագիրը կը զրուցէ թէ  
Փոքր Ասիոյ մէջ Յունաց տասուերկու քաղաք-  
ները կործանելով, անոնց բնակիչները բերաւ  
Տիգրանակերտին մէջ բնակեցուց։

## ԳԼՈՒԽ Ը.

### Դ. Տուրուբերան.

ՉԿ. Տուրուբերան նահանգին վրայ գիտելիք: — Տուրուբերան կամ Տարուբերան<sup>1</sup> նահանգը կ'իյնայ Չորրորդ Հայոց արևելեան կողմը: Օղը առողջարար, և երկիրն ալ խիստ բարեբեր է, և մէջը յանուանէ կը յիշուին 'ի նախնեաց' գաղպէ, մեղր, պիստակ, երկաթ և նաւթ: — Այս նահանգին արևելեան կողմը կ'իյնայ Բըղնունեաց ծովը, ուսկից շատ տառելի ձուկ կ'եղէ, զոր կ'ազան ու հետո տեղեր կը տանին: Այս ծովակին մէջ, որ ըստ խորենացւոյ 100 մղոն երկայնութիւն և 60 մղոն լայնութիւն ունի, կան չորս կղզի, Ադրաւար, Առտեր, Կտոշ, Լիւմ:

ՉԾ. Տուրուբերան նահանգին գաւառներն: — Տուրուբերան նահանգը տասնութեց գաւառ կը բաժնուէր, որ են Խոյր, Ապակոշիք, Տարօն, Աշմոշիք կամ Արշամոշիք, Մարդաղի, Դասեւաշորք, Տուարածառարաւի, Դաշառ, Հարք, Վարաժնոշիք, Բզնոշիք, Երիվարք, Աղիովիտ, Ապահոշիք, Կորի, և Խորխոշոշիք:

<sup>1</sup> Աշխարհագրութեան օրինակի մը մէջ Տուրուբերան անուան տեղ գրուած կայ Զուրբերան:

Ա. Խոյր .

96 . Խոյթ զաւառին անուանը վրայ գիտելիք : — Այս զաւառին անուանը երաժ է բնակչաց բարուցը և լեզուներնուն կոչաութենէն , ինչպէս որ կ'ըսէ Թովմա Արծրունի . և Խոյր լեռը որ Տօրոսի մէկ մասն է , այս զաւառին անունովը կոչուած է :

Բ. Տարօն .

97 . Տարօն զաւառին անուան ծագումը : — Խորենացին Ուրմալիոգորոս փիլիսոփային բաժէն առնլով կը պատմէ թէ Նոյի թօններէն մէկը Տարբան անունով երեսուն մանչ զաւակով ու տասնըհինգ աղջիկ զաւակով , և իրեն մարդիկներովը հօրմէն բաժնուելով զնաց բնակեցաւ Նիբատ գետոյն մէկ ճիւղին քով , և իր անունովը բնակած տեղը Տարօն կոչեց . իսկ ուսկից որ իր զակրները իրմէն բաժնուեցան Յրօնք անուանեց :

98 . Տարօնոյ վրայ պատմական գիտելիք : — Այս զաւառը որ Տուրուբերանի մէկալ զաւառներէն ընդարձակ է , ու ետքերը անոր մեծ մասը կը բովանդակէր , առջի բերան Ալկունեաց ցեղին կալուածն էր , բայց երբոր անոնց նահապետը Տրդատայ ատեն ապստամբեցաւ ու Պարսից Շապուհ Թագաւորին հետ միաբանեցաւ , Տրդատ

խոստացաւ իր իշխաններուն՝ որ ով որ Աբլ-  
կունեաց նահապետը բռնէ և իրեն բերէ ,  
անոր երկիրը որդւոց որդի իրեն ժառան-  
գութիւն կը թողու : Այս բանս կատարեց  
Մամգուն՝ Մամիկոնեան ցեղին նահապե-  
տը , և թագաւորական հրովարտակաւ որ-  
դւոց որդի Տարօն գաւառին տիրեց : Տարօ-  
նոյ գաւառին մէջ կը բնակէին նաև Գե-  
մետր ու Գիսանէ իշխանները , իրենց Հնդ-  
կաստանէն բերած գաղթականին հետ մէկ-  
տեղ :

99 . Տարօնոյ երկրին բարեբերութիւնը :  
— Տարօնոյ երկիրը խիստ բարեբեր և  
ջրոտ է , մանաւանդ Իննականեան (Մշու Ս-  
Կարապետ) վանքին կողմերը , օդը առողջ-  
արար և մաքուր : Մէջէն կ'ելլէ գազպէ՝ որ  
մանանայի պէս նիւթ մի է : Տարօն գաւա-  
ռը սահմանակից է Չորրորդ Հայոց Հաշ-  
տեանք գաւառին , և երկուքին մէջ տեղէն  
կ'անցնի Արածանի գետը :

100 . Աշտիշատ քաղաքին վրայ գիտելիք :  
— Տարօնոյ մէջ երևելի էր Աշտիշատ կամ  
Յաշտիշատ քաղաքը , որ ըսել է զոսից քաղաք ,  
մէջի վահեկփահեան ըսուած անուանի ու հա-  
րուստ մեհենին համար , որ Միջին Տիգրա-  
նէն առաջ շինուած էր , բայց Միջին Տիգ-  
րան բոլորովին նորոգեց : Այս մեհեանը  
իրեք գատ մեհեաններ բաժնուած էր . առ-  
ջինն էր վահեկփահեան մեհեան , որոյ անու-  
նով ամբողջ իրեքն ալ մէկտեղ առնելով վա-  
հեկփահեան կ'ըսուէր , որոյ մէջն էր Հերակ-

լեայ պղնձէ ոսկեղօծ արձանը . երկրորդ մեհեանն էր Սնահատայ , երրորդը Աստղըկան կամ Ափրողիտեայ : Աշտիշատ քաղաքը՝ որ գեղ և առան ալ կոչուած է , շինուած է Քարքէ լերին վրայ , Եփրատ գետոյն մօտ , և առաջ Վահունեաց ձեռքն էր , բայց Միջին Տիգրան իրենց նեղանալով Հերակղեայ արձանը Արմաւիրէն հոս փոխադրելնուն համար , առաւ իրենց ձեռքէն , որ ետքը Տարօն դաւառին հետ մէկտեղ անցաւ Մամիկոնեանց ցեղին : Այս քաղաքը ինչպէս կուպաշտութեան ատեն հեթանոսութեան բոյն էր , քրիստոնէութեան ատեն ալ շատ ծաղկեցաւ : Հոս շինեց Քրիզոր Լուսաւորիչ Հայաստանի առջի եկեղեցին , որ և ըսուեցաւ բոլոր Հայաստանի մայր եկեղեցի : Հոս թաղուեցաւ նաև սուրբն Սահակ Պարթև , ու գերեզմանին վրայ փառաւոր ժամ մը շինուեցաւ , քովն ալ կրօնաւորաց վանք մը :

Անուանի է Աշտիշատին քով Մատրափանք մենաստանը , որոյ մէջ Քրիզոր Լուսաւորիչ հրեշտակի յայտնութեամբ մատուռ մը շինելուն ու մէջը Յովհաննու Մըկրրաջի ու Աթանաղինեայ նշխարներէն մաս մը ամփոփելուն համար այսպէս կոչուեցաւ . ուր սովորութիւն կար հին ատեն , կաթողիկոսը թագաւորով ու նախարարներով մէկտեղ տարին եօթն անգամ կը ժողովէին , հանդիսի տօնը կատարելու համար :

101 . Տարօն դաւառին մէջ յիշուած ուրիշ զլխաւոր տեղերը : — Մաշ քաղաք , որոյ մէջ երևելի էր Մաշրք փրկիչ ժամը և իրեն մօտիկ Ղազարոս փակերը , ուր Գրիգոր Առասարիչ հրեշտակի յայտնութեամբ զետեղեց Պետրոս առաքելոյն նշխարը ու Անգրէաս առաքելոյն աջ ձեռքը , զորոնք Հոռմէն դառնալու ատեն Պապէն ու Կոստանդիանոս կայսրէն ընծայ առած էր . անոր համար ետքերը Ղազարոս վանքը կոչեցաւ Մաշրք առաքելայր : Այս քաղաքը Մամիկոնեան ցեղին զլխաւոր քաղաքն էր :

Հացեկաց կամ Հացեաց գեղ , ուսկից էր սուրբն Մեսրօպ կամ Մաշթոց :

Հոռեանս աւան , զոր շինեց Հնդկաստանէն եկած Գեմետրեայու Գիսանեայ իշխաններուն որդւոց մէկն Հոռեան անունով :

Օձ քաղաք , որոյ մուտքը խիստ նեղ ըլլալուն այսպէս կոչուած է :

Գարնար բերդ և Գրգռռ աւան որոց երկուքն ալ Վախտանկ Պարսից սպարապետը շինած է :

Վահանուփա , զոր շինեց Պալուսեան Վահան իշխանը :

Աստղաբերդ կամ Աստեղօտ ամրոց . Եղանց կամ Եղենտ բերդ . Որական բերդ . Թիլ գեղ . Վիշապ քաղաք . Չիւեկերտ քաղաք , որ ետքերը ըսուեցաւ Պորպես . Մահոռ ազարակ բլուր , ուր Գայլ Վահան թըշնամեաց մարմինները թաղեց , և հիմա կ'ըսուի Մահագրակ , և գեղ մի է , և այլն :

102. Գլակայ վանքին վրայ գիտելիք :  
— Այս վանքը Զենոբ Գլակ Ասորւոյն ա-  
նունովը կոչուեցաւ . վասն զի ինքն եղաւ  
առաջին վանահայրը Լուսաւորչէն դրուե-  
լով , և ինքը շինեց լմբնցուց ասոր եկեղե-  
ցին , որոյ հիմը Գրիգոր Լուսաւորիչ գրած  
էր : Գլակայ վանքը կ'ըսուի նաև սոչրք կա-  
րապետի վանք , մէջի եկեղեցին սուրբ Կարա-  
պետի անունով ըլլալուն , ուր և իրեն մա-  
սունքը կը պահուին , անոր համար մեծ ուխ-  
տատեղի էր և է ինչուան հիմայ : Գլակայ  
վանքը կ'ըսուին աւելնակնակն վանք տեղւոյն  
անունովը , ուսկից որ ինը անոյշ ջրի աղ-  
բիւրներ կը բխէին : Առաջուց հոս Քարբէ-  
լերին ոտքը կային Գեմետրեայ ու Գիսա-  
նեայ արձանները ու բաղինները , զորոնք  
սուրբն Գրիգոր կործանեց , ու անոնց տեղ  
սուրբ Կարապետի եկեղեցին հիմնեց , և  
քովը վանքը , ուր 44 կրօնաւոր ժողովեց .  
բայց ետքէն Թողիկ վանահայրը եօթնե-  
րորդ դարուն բազմացուց հոն անապատա-  
կաններուն թիւն որ ինչուան 400 եղան :  
Արդիլաժ էր սուրբ Կարապետի եկեղեցւոյն  
մէջ կանանց մտնելը Գրիգոր Լուսաւորչի  
ատենէն 'ի վեր , նոյնպէս արդիլաժ էր ձիով  
զիմացէն անցնիլը : Այս եկեղեցին երկրա-  
շարժէ կործանեցաւ մի անգամ , բայց Մու-  
շեղ իշխանը նորէն շինել տուաւ Զ դարուն  
վերջերը , ինքն ալ հոն մօտ թաղուեցաւ .  
Թաղուեցան նոյնպէս և Վարդ պատրիկ  
իշխանը , Գայլ Վահան՝ և ուրիշ իշխաններ :

ետև Հայաստան գարձաւ, նախ այս գաւառը բնակեցաւ, որոյ անունը ինքը դրաւ իր նախնեաց յիշատակը պահելու և իմացընելու համար թէ ինքը իր հօրը Թորգոմին երկրին մէջ բնակած է, և ինքն ալ ազգին հայրն պիտի սեպուի: Այս գաւառը ետքէն ժառանգութիւն ընկաւ Հայկայ Մանաւազ որդւոյն, և անկէ Մանաւազեան ցեղին:

Այս գաւառին եկեղեցին ու եպիսկոպոսարանը հիմնեց Գրիգոր Լուսաւորիչ, որոյ եպիսկոպոսները անոր զլխաւոր քաղքին անունովը կը կոչին Մանազկերտոյ և պիսկոպոսք:

107. Հարք գաւառին զլխաւոր քաղաքները: — Հարք գաւառին մէջ երեւի է Մանազկերտ կամ Մածկերտ քաղաք, իբր Մանաւազակերտ, զոր շինեց Հայկայ Մանաւազ որդին, և կ'իյնայ Հարք գաւառին ծայրը Ապահունեաց սահմանակից, Արածանի գետոյն վրայ. անոր համար այս քաղաքը երբեմն Ապահունիք գաւառին մէջ ալ կը դնեն: Այս քաղաքը Հայաստանի երեւի ու ամուր քաղաքներէն մէկն էր, որ առաջուց աւան մի էր, ու ետքը ընդարձակելով և ամրանալով անառիկ քաղաք եղաւ, իրեք ամուր պարիսպներով պատած: Մանազկերտ քաղաքը 1050ին ատենները Տուղրիլ Պարսից թագաւորը երկու ամիս պաշարեց, բայց չկրցաւ առնուլ, ամէն օր երկու անգամ քաղքին հետ կռուելով. ետքէն առաւ Ալիասլան Տուղրիլի եղբայրը,

առանց պահապանի գտնելով, ու մէջը չարաչար կոտորած ըրաւ :

Հարբ գաւառին մէջ երևելի են նաև Հայկաճե գեղը, զոր Հայկ նահապետը շինեց և իր անունովը կոչեց :

Հերեր կամ Հերեան գեղ, ուսկից էր Դաւիթ Անյաղթ :

Մանկանգոս գիւղաքաղաք : Արածունի գեղ՝ որոյ անունովը կոչուած է Եփրատայ մէկ ճիւղը որ կը բղխի Մաղկոտն լեռնէն :

### Ե. Բզնունիք.

108. Բզնունիք գաւառին անուան ծագումը : — Այս գաւառին անունը ելած է Հայկայ Բազ Թոռան անունէն, որ Մանաւաղին որդին էր, և բնակեցաւ Այի ծովուն արևմտեան հիւսիսային կողմը, որոյ անունովը այս ծովն ալ Բզնունեաց ծով կոչեցաւ : Երևելի էր այս գաւառիս եպիսկոպոսարանը զոր Գրիգոր Ղուսաւորիչ հաստատեց :

109. Բզնունեաց գլխաւոր քաղաքները : — Երևելի է այս գաւառիս մէջ Խրաք բազմամարդ ու ամուր քաղաքը, որ զօրաւոր բերդ ունէր, և չորս կողմն ալ պարսպով պատած էր : 1230ին ատենները Մողոլ Թաթարները այս քաղաքիս տիրելով, շատ անբնութեք ըրին, ու ետքը 1350ին Գահմաղ Ղուլի խանը առնելով, բոլորովին կործանեց բերդը : Բայց սուլղան Սիւլէյման կրբոր առաւ քաղաքը, ուրիշ բերդ մը չի-

նել տուաւ առջինէն հետո Բ. զնունեաց ծովուն մօտ :

Արժկէ քաղաք , որ ամուր և անառիկ բերդ ունէր :

Բաղէշ , որ վաճառաշահ քաղաք է :

Երևելի են նաև Հիզան քաղաք , Աղուա-  
նից բերդ , Դաստուան գեղ , Ծղաք գեղ , և այլն :

## Զ . Աղիովիտ .

110 . Աղիովիտ գաւառին վրայ զիտելիք :  
— Առջի բերան այս գաւառը Գնունեաց ձեռքն էր , բայց ետքէն Հաշտեանք գաւառը թագաւորազուններու բնակութեան չբաւելով , այս Աղիովիտ գաւառն ալ Առբերանի գաւառին հետ մէկտեղ անոնց բնակութեան տեղ եղաւ . բայց կ'երևի թէ Աղիովիտ գաւառին մէկ մասը մնաց Գնունեաց ձեռքը :

111 . Աղիովիտ գաւառին զլխաւոր քաղաքները : — Զարիշատ քաղաք , զոր Պարսիկք մեր Արշակ երկրորդին ատեն առնելով մէջէն 10,000 տուն հայ ու 1000 տուն հրեայ գերի տարին ու քաղաքն ալ կործանեցին , բայց ետքէն նորէն շինուեցաւ :

Արձէշ քաղաք , որոյ անունէն ելած է Վասպուրականի Արձիշանովիտ գաւառին անունը : Այս քաղքիս մօտ է Մեծորայ անուանի ուխտը , ուսկից էր թուովմաս Մեծոփեցի պատմիչը . այս վանքին մէջ կը բնակէր ատեն մը Գրիգոր Տաթևացին իր

աշկերտներովը : Թովմաս Մեծովեցին ու  
Վարդան աշխարհագիրը այս քաղաքը ի-  
րեն ընդարձակ սահմանովը մէկտեղ Քաջ-  
բերուշի կամ Արձեշու երկիր կը կոչեն , ուս-  
կից յայտնի է թէ Քաջբերունի ըսուած ցե-  
ղը այս կողմերը կը բնակէր :

Արձեշու մօտ են Մաջարուց , Երիշատ կամ  
Գերիշատ և Աղի գեղերը , և խառաքատոյ  
գեղը , ուր նոյն անունով հոչակաւոր վանք  
մը կայ :

### Է. Ապահունիք .

112 . Ապահունեաց դաւառին վրայ գի-  
տելիք : — Վաղարշակ Ա , Մանաւազեան  
և Բղնունեան ցեղերուն հետ մէկտեղ այս  
Ապահունեաց ցեղն ալ՝ որ կոչուած է երկ-  
րին անունովը՝ նախարարութեանց կարգը  
անցուց , որ հարուստ ցեղեր էին ու Հայ-  
կայ ժամանակէն սկսած : Ապահունեաց ե-  
րևելի տեղերն էին , Խարձատօնք գեղը , Գա-  
լարիս գեղը , որ ետքը կոչեցաւ Ածուղ , որոյ  
մէջ Շապուհ Պարսից թագաւորը մեր Տի-  
րան թագաւորին աչքը տարցուցած երկա-  
թով կուրցընել տուաւ , և երկաթը ամուխի  
վրայ տարցընելուն պատճառաւ , Տիրան  
գեղին անունը Ածուղ կոչել տուաւ :

Մեծնորակի աւանը , որոյ բնակիչները կ'ը-  
սուին մեծնորակեցիք կամ Մեծնորակք , ո-  
րոնք իններորդ դարուն մէջ նորահնար ա-

դանդ մը Հնարեցին , զորս Գրիգոր Մաղխարոս ԺՍ. դարուն վերջուց :

Ը. Խորխոռունիք .

113 : Խորխոռունիք կամ Խոռխոռունիք դաւառին վրայ գիտելիք : — Խորխոռունիք դաւառին և մէջի բնակչաց անունը ելած է Հայկայ Խոռ որդւոյն անունէն : Այս ցեղը ետքը մեծ նախարարութեանց կարգը անցաւ , ու վաղարշակ անկէ իրեն թիկնապահներ ընտրեց , որոց զլիաւորին անունը Մաղխաղ ըլլալուն , անկէց ետքը թագաւորին թիկնապահները Մաղխաղ ըսուեցան , Խորխոռունեաց ցեղն ալ Մաղխաղունիք :

Գ. ՈՒԽ Թ .

Ե . Մ ո կ ք .

114 . Մ ո կ ք նահանգին վրայ գիտելիք : Մ ո կ ք նահանգը կ'իյնայ Ադճնեաց արևելեան կողմը . երկիրը խիստ լեռնոտ է , և կորդուաց լեռները մէջէն կ'անցնին : Կ'ելլէ մէջէն մանրագոր կամ լոշտակ ըսուած տունկը , գահրչակ ըսուած պտուղը , կաքաւ թռչունը , ինծ գազանը , նաև ընտիր էշեր , որոց անունով կոչուած են Իշայր ,

միւս իշայր ու իշոց գաւառները : Վաղարշակ Ա Մոկաց մէջ գատ նախարարութիւն հաստատեց, որ ետքերը Բագրատունեաց Ա Սմբատայ ատեն Վասպուրականի տէրութեան տակ ինկած էր :

145. Մոկաց նահանգին գաւառները : — Ինն գաւառ ունի Մոկաց նահանգը, որ են իշայր, միւս իշայր, իշոց գաւառ, Առունկից օոր, Միջա, առանձնակ Մոկք, Արքայից գաւառ, Արգաստովիտ, և Զերմաձոր : Այս ետքինս կ'անուանի նաև Շատախ, ուսկից կը բղխի Տիգրիս գետոյն մէկ ճիւղը. ասկէց կ'երևայ ամբողջ Տիգրիս գետոյն Շաղ ըսելը :

146. Մոկք նահանգին մէջ յիշուած տեղերը : — Շատ անձանօթ են մեղի Մոկաց նահանգին շէնքերը, վասն զի խիստ քիչ յիշատակութիւն կայ վրանին 'ի գիրս. կը յիշուի Ապարանք գեղը, որոյ մէջ կը պահուէր Քրիստոսի խաչին մեծկակ կտոր մը, զոր Վասիլ ու Կոստանդ կայսերք (985ին) ընծայեցին Ապարանից վանքին Մոկաց Ստեփանոս եպիսկոպոսին, ոսկւով ու արծաթով պատած փառաւոր տապանակի մը մէջ զնկելով, որոյ մէջ ամիսփած էր նաև սպունդին մէկ կտորը, որով Քրիստոս լեզին ճաշակեց. փշեղէն պսակին, բլեռնեբուն, խանձարրոյն, զենջակին ու սուրբ Աստուածածնայ զգեստին մէկ մասը : Այս Ապարանից խաչին պատմութիւնը սուրբն Գրիգոր Նարեկացի տեղն 'ի անդը գրած է Ստեփանոս եպիսկոպոսին խնդրովը :

Զերմածոր զաւառին մէջ կայ Զողայլ  
անունով բերդ մը :

ԳԼՈՒԽ Ժ .

Զ . Կորձայք .

117 . Կորձայք նահանգին վրայ գիտե-  
լիք : — Կորձայք նահանգը կ'իյնայ Մոկայ  
արեւելեան կողմը , Ասորեստանի ու Պարս-  
կահայոց սահմանակից : Շատ անգամ Կոր-  
ձայք նահանգին տեղ կ'ըսուի Կորդուաց աշ-  
խարհ , իր Կորդուք զաւառին անունովը ,  
ուսկից ելած է նաև Կորդուաց լեռներուն  
անունը , որ այս նահանգին մէջէն կ'անց-  
նին : Կ'ելլէ մէջէն զառիկ և շագանակ : Այս  
նահանգին մէջ Տիգրան վերջին՝ որ վա-  
ղարչէն առաջ թագաւորեց , մասնաւոր նա-  
խարարութիւն հաստատեց :

118 . Կորձայք նահանգին զաւառները :  
— Տասնըմէկ զաւառ ունի , որ են Կորդուք ,  
Կորդրիք վերին , Կորդրիք միջին , Կորդրիք  
ներքին , Այտուակք , Այգաւք , Մորդակք ,  
Որսիքակք , Կարաքուկիք , Ճաւուկ , փոքր Ադ-  
րակ :

119 . Կորդուք գաւառին վրայ դիտելիք :  
— Կորդուաց իշխանը Տրդատ թագաւորին  
առեն ութը գահերէց իշխաններէն մէկն  
էր . նոյնպէս նաև տէրութեան չորս հրա-  
մանատարներէն մէկը , արևմտեան կող-  
ման վրայ իշխելով : Այս Կորդուք գաւառը ,  
որով կ'իմացուի նաև ամբողջ Կորճայք նա-  
հանդն ալ , զանազան տէրութեանց ձեռքը  
անցաւ , անոր համար արտաքին մատենա-  
դիրներէն օմանք Կորդուաց աշխարհը Պար-  
թևաց մէջ կը դնեն , օմանք Մարաց մէջ ,  
և օմանք Պարսից : Ետքերը Կորդուք գա-  
ւառին բնակիչները Մարաց հետ խառնուե-  
լով , նոր ազգ մը ձևացան , և հաւանական  
կերելի թէ ֆիւրտ անունը Կորդուք կամ  
Կորդրիք գաւառին անունէն ելած է :

120 . Արտաքին պատմչաց Կորդուաց  
երկրին ու բնակիչներուն համար ըսածը :  
— Քսենոփոն կը զրուցէ թէ Կորդուաց եր-  
կիրը զինեւէտ ու բարեբեր երկիր էր , մէ-  
ջի բնակիչները քաջասիրտ ու վարպետ  
նետ նետող , որոց նետերուն երկայնու-  
թիւնն էր երկու կանգուն , և ազեղներուն  
մեծութիւնը իրեք կանգուն . շատ վարպետ  
էին նաև պարսատիկ նետելու , ուրիշ պա-  
տերազմական զէնքեր և մեքենաներ շինե-  
լու ալ վարպետ էին , ինչպէս կը վկայեն  
ուրիշ պատմիչք ալ Կորճայք նահանգին  
բնակչաց համար :

հնրոյ միջամտելով զձեզոյ հոգի  
ճարտար քարտէք. **Բ. Կորդրիք.** Մարտի 11  
անձամբ զմարտարարսանի զտարար իւրոյ

121. Կորդրիք գաւառին վրայ գիտելիք :  
— Կորդրիք գաւառը Խորենացիէն առաջ  
Տմորիք կ'ըսուէր, Տմորիք բերդին անունն  
վր. բայց ետքերն ալ տեղ տեղ այս երկու  
անուններն զատ զատ կը յիշուին, իբրև  
իրարմէ զատ գաւառներ : Տմորիք գաւառը  
Հայաստանի ամուր գաւառներէն մէկն է  
իր անմատչելի դրիցը համար. և մէջը կը  
յիշուի Այկի աւանը, զոր շինեց Սմբատ  
Բիրատեան Արտաշէս երկրորդին զայեա-  
կը, իր Ալիկա կնոջը անունովը :

122. Կործայք նահանգին մէջ յիշուած  
ուրիշ քաղաքները : — Կը յիշուին Կոր-  
ճէից մէջ նաև Մադաւաա քաղաք, որուն  
հիմա կ'ըսեն Մարմատ, և կ'իյնայ Արմեայ  
ծովակին արևմտեան կողմը Պարսկահայոց  
Հեր գաւառին մօտ, անոր համար երբեմն  
այս գաւառին մէջ ալ կը դրուի :

Արմի քաղաք, Կապուտան ծովակին ա-  
րևմտեան կողմը, որոյ անունովը ծովակը  
կոչուած է նաև Արմեայ ծով : Այս քաղաքիս  
մէջ նահատակեցաւ առաքեալն Յուդա Յա-  
կորեան, որ և Ղերէոս :

Ըռուսրաշա կամ Ռոշալա քաղաք Արմի  
քաղաքին մօտ, ուր վախճանեցաւ և Թաղե-  
ցաւ Միմոն Կանանացի կամ Շմաւոն Նա-  
խանձայոյդ, տասուերկու առաքելոց մէ-  
կը, Թաղէոս առաքելոյն եղբայրը :

Կ'երևի թէ Կորճէից հիւսիսային կողմը կ'իյնայ Ռոտկաց կամ Ռոտոկաց ըսուած պզտի դաւառը Վասպուրականի սահմանակից :

### ԳԼՈՒԽ ԺԱ.

#### Է. Պարսկահայք .

123. Պարսկահայք նահանգին վրայ գիտելիք : — Պարսկահայք նահանգին անունը խիստ քիչ գործածուած է մեր մատենագիրներուն մէջ, և սովորաբար անոր Հեր և Զարեանդ գաւառներուն անունովը կ'իմանան բոլոր Պարսկահայք նահանգը, որ կ'իյնայ Կորճէից արևելեան դին Ստրպատականի քով : Միջին դարու ատեն Յունաց պատմիչները Պարսկահայք ըսելով կ'իմանային Հայաստանի այն մասը որ Պարսից ձեռքն էր. ուստի պէտք չէ շփոթել անոնց ըսածը այս Պարսկահայք նահանգին հետ, որոյ անունը այսպէս կոչուած է Պարսից սահմանակից ըլլալուն, ու մէջը շատ պարսիկ գտնուելուն համար :

Ս.յս նահանգին բերքերուն կողմանէ մասնաւոր կերպով կը յիշուին վայրի էշ ու վայրի այծ և ուրիշ որսոյ կենդանիներ :

124. Պարսկահայք նահանգին դաւառներն : — Ինն դաւառ ունի, որ են. Ս.յի

որ կ'ըսուի նաև Կոռնիձան, Մարի, Թրափի, Ացուերս, Բռնա, Տաւրեր, Զարեհաւան, Զարեանց կամ Զարուանց, և Հեր :

Ա. Բ. Զարուանց և Հեր գաւառ.

125. Զարուանց և Հեր գաւառաց վրայ գիտելիք : — Զարուանց գաւառին անունը ելած է Սեմայ անունէն, որուն արեւելեան աղղերը Զրուան կ'ըսեն, որ բնակեցաւ նախ Սիմ լերին մօտիկ, ետքը անկէց այս գաւառը եկաւ բնակեցաւ : Իսկ Հեր գաւառին մէջ կը յիշուին Հեր կամ Խեր քաղաքը, որոյ անունով կոչուած է այս գաւառը, որ վերջը Խոյ ըսուեցաւ. — Նըշարասի ու Փեռասի և Մաշխագանի գեղերը :

### Գ. Լ. ՈՒԽ Ժ. Բ.

#### Ը. Վասպուրական.

126. Վասպուրական նահանգին վրայ պատմական գիտելիք : — Վասպուրական նահանգը որ Հայաստանի ամէն նահանգներէն մեծ է, Արծրունեաց զեղին բնակութեան տեղն էր : Վաղարշակ այս զեղը նախարարութեանց կարգը անցուց, իր գիմացէն արծիւ կրելու պաշտօնը տալով, անոր համար կ'ըսուէին արծուակիր : Տրդատ

Թագաւորը Վասպուրականի նախարարը իր տէրութեան ութը զլխաւոր իշխաններուն մէկը ըրաւ : Այս նախարարութիւնը Ասորեստանեայց Սենեքերիմ Թագաւորին Ազրամելէք որդիէն ելած է : Իններորդ դարուն շատ ընդարձակեցաւ Վասպուրականի սահմանը Պարսկահայքէն ու Տուրուքերանէն այլևայլ կտորներ առնելով . և տասներորդ դարուն դատ Թագաւորութիւն եղաւ, որ 100 տարիէն աւելի տևեց, և վերջի Սենեքերիմ Թագաւորը ՚ի Թուրքաց նեղութիւն քաշելով, իր տէրութիւնը Յունաց Վասիլ կայսեր տուաւ (1021ին), որոյ մէջ կար կ'ըսեն 72 բերդ, 4400 գեղ, և 10 քաղաք, սահմանակից աշխարհներուն այլ և այլ մասերն ալ մէկտեղ սեպելով, որոց վերայ որ կ'իշխէր . ինչպէս Պարսկահայոց մէջէն Զարեհաւան, Տամբեր, Ըռնա դաւառները . և Աղձնեաց ու Տուրուքերան նահանգներէն Խլաթ, Խողց, Արճէշ, Մանազկերտ, Հիդան քաղաքները, և այլն : Եւ այս ամէն երկիրներուն տեղ առաւ Յունաց երկրին մէջ Սեբաստիա քաղաքը իր շրջակայ սահմանովը մէկտեղ, որ իր տուած երկրին ամենեկին համեմատութիւն չունէր, և հոն գնաց բնակեցաւ 400,000 հոգւով ու 14,000 ձիաւորով, և հետը տանելով իր ամէն հարստութիւնները : Այն ժամանակը 900 վանք կը համրուի Վասպուրական աշխարհին մէջ, որոնցմէ 11ճը մեծամեծ վանքեր էին : Վասպուրական նահանգին այլ-

կայլ զաւառներուն մէջ զատ զատ արբե-  
պիսկոպոսներ ու եպիսկոպոսներ կային ,  
չատերը անկախ իրարմէ :

127. Վասպուրական նահանգին զաւառ-  
ներն : — Երեսունըվեց զաւառ ունէր Վաս-  
պուրական , որ են Ռշտունիք , Տուր , Բո-  
ղունիք , Արձիշահովիտ , Աղովիտ , Կոշղան-  
ովիտ , Արբերանի , Դաւնի , Բոշժունիք , Առ-  
կոյուն , Անձեւացիք , Ատրպատունիք , Ե-  
րուանդունիք , Մարդատուն , Արտազ , Ակե-  
Աղբակ մեծ , Արձախաձոր , Թոռեւաւան ,  
Ճոշաշատ , Կրձունիք , Մեծունիք , Պաշո-  
նիք , Գոշկան , Աղուանդոտ , Պատապարտ-  
նիք , Արտաշէսեան , Արտաւանեան , Բարան ,  
Գաբիբեան , Գազրիկան , Տանկրիայն , Վա-  
րաժկունիք , Գողթն , Եւսիձաւան , Մարանդ :

Ա . Ռշտունիք .

128. Ռշտունիք կամ Ընշտունիք զաւա-  
ռին վրայ զիտելիք : — Ռշտունիք զաւառը  
կ'իցնայ Բղնունեաց ծովուն մօտ , որոյ ա-  
նունովը կ'ըստի նաև Ծով Ռշտունեաց : Ռա-  
չատ անունով իշխանէ մը ծագած է զաւա-  
ռին անունը : Բնակիչքը Միւնեաց երկրէն  
զաղթական եկած կը սեպուին , և Վաղար-  
շակայ ատեն նախարարութեանց կարգը  
անցած : Այս երկիրը խիստ բարեբեր ու  
զուարճալի է , և երկաթի ու կապարի հանք  
ունի : — Ռշտունեաց երկրին մէջն է Բնձա-  
բարս կամ Բնձաքիւար լեռը Աղձնեաց սահ-

մանակից, որոյ վրայէն սուրբն Յակոբ անի-  
ձեց Ռչտունեաց երկիրը : Ետքէն այս լե-  
րին ոտքը սուրբ Յակոբայ անունով եկե-  
ղեցի մը շինուեցաւ , ուր դրած էր սրբոյն  
ձկոյթ մատր , և առին անցնելէն ետե շի-  
նեցաւ քովը նաև փառասոր վանք մը : Այս  
Ընձաքիսար լեռը ետքերը ըսուեցաւ կա-  
պուտողն :

129. Ռչտունեաց զլխաւոր քաղաքները :  
— Ռչտունեաց մէջ երեւի էր Ռոտան ա-  
ւանը Բզնունեաց ծովուն մօտիկ , զոր Գա-  
ղիկ Արծրունի թագաւորը շատ դարգարեց  
ու բերդով ամրցուց :

Մանակերտ , որ Բզնունեաց ծովուն մօ-  
տիկ է . ուսկից Մանաճիհր Ռչտունի՝ սրբ-  
բոյն Յակոբայ Մծրնայ թեմին մէջէն առած  
ղերինները ծովը նետել տուաւ :

Պարծիս կամ Բժիժ գեղը , ուր է թովմաս  
առաքելոյն մարմինը , զոր Հնդկաստանէն  
հոս բերին և վրան վանք շինեցին , որ կը-  
սուէր սուրբ թոռնայի վանք :

Նարեկ գեղը , ուր էր Նարեկայ վանքը  
որ շինեցաւ տասներորդ դարուն մէջ՝ քի փոքր  
Հայոց հալածուած հայ կրօնաւորներուն  
ձեռքովը : Այս վանքէն էր Գրիգոր Նարե-  
կացի :

130. Աղթամար կղզւոյն վրայ գիտելիք :  
— Աղթամար կղզին Բզնունեաց ծովուն  
մէջն էր Ռչտունեաց ձեռքը : Այս կղզւոյն  
մէջ թէպէտ և Բարդաւիրան Ռչտունի մի-  
ջին Տիգրանայ սպարապետը և Գառիթ Սա-

Հատունի ու Թէոզորոս Աշտունին շատ շինութիւններ ըրին, բայց ամենէն աւելի դարդարողը եղաւ Գաղիկ Արծրունեաց առաջին Թագաւորը, որ կզգւոյն չորս կողմը ծովուն յատակը խոշոր քարեր լեցընելով, կզգին ամուր պարսպով պատեց ու մէջը ապահով նաւահանգիստ մը շինեց: Նոյնպէս դեղեցիկ պարտէզներով ու դռարճալի տեղերով զարդարեց կզգւոյն մէջի քաղաքը: Անուանի էր մէջը իր շինած Թագաւորական սրալատը, ու սուրբ խաչին եկեղեցին, զոր տեսակ տեսակ փորուածներով ու պատկերներով զարդարեց: Այս եկեղեցւոյն մէջ կը պահուէր Գրիգոր Լուսաւորչին աթոռը, գօտին, գաւազանը և պատարագին սեղանը զոր իրեն հետ կը սըտարացընէր. հոս կը սահուէր նաև սրբոյն Հռիփսիմէի հողաթափն ու փողպատը, այսինքն լաշակը: Թովմա Արծրունի այս մատենքները Գրիգոր Լուսաւորչին մատնիին հետ Չորոյ փանքին Հռիփսիմեանց եկեղեցւոյն մէջ պահուած կ'ըսէ:

Աղթամար կզգւոյն արքեպիսկոպոսը տասներորդ դարէն անկախ կաթողիկոս եղաւ Էջմիածնի կաթողիկոսէն, որոյ յաջորդութիւնը ինչուան հիմա կը տեսէ:

1451 Վան քաղաքին վրայ գիտելիք: —  
Տոսք գաւառին մէջ երևելի է Վան քաղա-

քը որ աշխարհիս հին քաղաքներէն մէկն է, զոր շինեց Շամիրամ Ասորեստանեայց թագուհին, անոր համար իր անունովը Շամիրամակերտ կամ Շամիրամայ քաղաք ալ կըսուի. այն երկրին օդոյն զեղեցկութեանը ու բարեխառնութեանը հաւնելով, ուղեց թագուհին իրեն ամուսան բնակարան մը շինել, որպէս զի ամէն տարի Նինուէէն հոս գայ ամառը անցընելու համար, և շինեց քաղաքը սեպածև լերին մը ստորոտը, 12,000 գործաւոր ու 600 երևելի ճարտարապետներ աշխատեցընելով, ու մէջը դարդարեց մեծամեծ շէնքերով ու սլալատներով, և պարսպով պատեց. և նոյն լերին գաղաթը շինեց անառիկ ու բոլոր աշխարհիս մէջ անուանի բերդ մը, լերին մէջ փորելով, որոյ պատերուն վրայ չորս կողմը սեպածև զրերով բաներ գրած կան:—Այս քաղաքը որ առջի բերան Շամիրամակերտ կըսուէր, ետքերը վաև ըսուեցաւ, թերևս հայկազուն վան նահապետին անունովը, որ վահէի Հայկազանց վերջի թագաւորին հայրն էր. կամ թէ առջի բերան թերևս առան կըսուէր, ու ետքերը կրճատուելով ըսուեցաւ վաև, ինչպէս որ Շիրակայ աւանը կրճատուելով ըսուած է Շիրակիվան: Վան քաղաքը որ առաջ Ռչտունեաց ձեռքն էր ու ետքը Արծրունեաց ձեռքը անցաւ, կըսուի նաև վաևտոս, գաւառին անունը մէկտեղ խառնելով: Այս քաղաքը վաղարշակ Ա նորոգել տուաւ. հոս Տիգրան

երկրորդին ատեն Բարդափրան Ռչաունի սպարապետը Հրէաստանէն բերած զերիները բնակեցուց, որոնք այնչափ շատցան որ չորրորդ դարուն մէջ Շապուհ երկրորդին ատեն երբոր Պարսիկները այս քաղքին տիրեցին, մէջէն 14,000 տուն Հրեայ Պարսկաստան գերի տարին: Ալէնկթիմուր Թաթարաց խանը 1592ին յարձակեցաւ այս քաղքին վրայ, ու քառասուն օր պաշարելէն, ու իր զօրքերէն շատ հոգի ջարդուելէն ետև, քաղաքացիք սովուն պատճառաւ անձնատուր եղան, և Ալէնկթիմուր հրաման տուաւ աղջիկները ու տղաքը դերի ընել, ու մնացածները պարսպէն վար նետելով սպաննել: — 1648ին ահագին շարժ եղաւ Աննայ կողմերը, և շատ տուներ, եկեղեցիներ, վանքեր կործանեցան, և շատ մարդիկ աւերակներուն տակ թաղուած մեռան:

152. Տոսք գաւառին ուրիշ քաղաքները: — Արախկա քաղաք, վան քաղքին հարաւային զին զոր չինեց Արտաշէս Բ, երբոր Երուանդայ ձեռքէն Պարսկաստան փախչելու ատեն հոս հասաւ: Այս քաղաքը ետքէն Արտաշէս երբոր թագաւորութեան հասաւ, շատ դարդարեց ու բերդով ամրացուց, և իր Սաթինիկ կնոջը աշնանային բնակարան ըրաւ, և անունը դրաւ Արտաւեա, որ կը ստուգարանի Արտաշէսի նկր, ասոր մօտ է Անկղ ըսուած գեղը և վանքը:

Անուանի են Տոսք գաւառին մէջ նաև

Սղգայ պղտի դաւառը և բերդը, Կրիսպակից և Անեռակիան գեղերը, Չորտխակը կամ Չորտխակը մենաատանը որ ետքերը ըսուեցաւ Սալեապատ, ուր սուրբն Գրիգոր Առասարիչ Հռիփսիմեանց վկայարան մը շինեց էր և մէջը դրեր իր վարդապետական գաւազանը, մատնին ու գօտին:

155. Վարագ լերին վրայ դիտելիք: — Վարագայ լեռը կ'իյնայ Վանայ արևելեան դին, ուր Հռիփսիմեանք ատեն մը ճգնեցան, և Վաղարշապատ շիգացած հոն թաղեցին Քրիստոսի սուրբ խաչին մէկ կտորը որ հետերնին բերած էին: Ասիկա եօթներորդ դարուն մէջ Թողիկ ճգնաւորին ազօթքովը դանուեցաւ. որ գեանէն դուրս ելլելով ու Թոչելով եկաւ մտաւ նոյն լերին վրայ շինած եկեղեցւոյն մէջ, զոր ետքը մեծցուցին ու քովն ալ վարագ անունով կրօնաւորաց վանք մը շինեցին, ուր կը թաղուէին, կըսէ Մատթէոս Առհայեցի, Արծրունեաց Թաղաւորները: Այս խաչն է որ կը տօնենք Վարագայ խաչ անուանելով, զոր Սենեքերիմ Վասպուրականի Թաղաւորը (1020ին) երբոր իր Վասպուրական աշխարհը Թողլով Սերաստիա գնաց, տարաւ հետը նաև Վարագայ խաչը, և հոն Սերաստիայի քով Մարքոնեանի վանքը շինեց, և խաչը հոն դրաւ: Բայց ատեն անցնելէն ետև նորէն փոխադրեցաւ Վարագայ լեռը, ուսկից ետքը այլազգեաց ձեռքը անցաւ, որոնք յարձակելով Վարագայ վանքին վը-

րայ՝ կողոպտեցին ամէն հարստութիւնները ու եկեղեցական սպասները, ու խաչն ալ գերի տարին: Այս բանս լսելով վանեցիք շատ ցաւեցան, ու ստակ տալով ազատեցին խաչը այլազգեաց ձեռքէն (1650ին), ու տարին վան քաղաքը, ու ալ չզարձացին վարագայ լեռը:

Գ. Արբերանի.

154. Արբերանի գաւառին վրայ գիտեւիք: — Արբերանի գաւառը կ'ըստի նաև Բերկրացոց գաւառ և Տարբերունի՝ որ անոր մէկ մասը կ'երևի: Երևելի է մէջը Բերկրի քաղաքը վանայ ծովուն արևելեան հիւսիսային կողմը, որուն մօտ է Ամիսկ բերդն. — Երիկառ բերդը, Խոզարներք գեղը, ու Առևատ աւանը:

Գ. Առնոյտն.

155. Առնոյտն գաւառին վրայ գիտեւիք: — Այս գաւառին մէջ թաղուած է, կ'ըսեն, Նոյ նահապետը: Այս գաւառին և կամ Նախճաւան գաւառին մէջ կ'իյնան Տավրատ, Ոսկիտղայ, Դաժգոյնք, Վրանչոռ, նիք կամ Վրնչոռնիք աւանները Երասխ գետոյն հարաւային դին, որոց մէջ մեծն Տիգրան բնակեցուց Աժգահակայ Անոյչ կիներ ու ընտանիքը և ուրիշ շատ գերիներ որ Մարաց երկրէն բերած էր 10,000ի չափ:

Ե. Անձեացիր.

156. Անձեացիր կամ Անձաւացիր դաւառին վրայ դիտելիք : — Այս դաւառին անունը կ'երևի թէ երկրին դիրքէն առնուած է, որ անձաւներով այսինքն քարայրերով, ծործորներով ու փոսերով լեցուն է, և բոլոր դաւառը կարծես թէ ազատանարան է : Վաղարշակ Ա. հոս մասնաւոր նախարարութիւն հաստատեց, որ Բագրատունեաց ժամանակ Արժրունեաց ձեռքը անցած էր :

157. Անձեացեաց երկրին մէջ յիշուած տեղերը : — Անձեացեաց երկրին մէջ կը յիշուին կանգրուար ամուր բերդը, Նորաբերդ ամրոցը, Արձաշակաց դեղը, Գարբեաց քար և Ագռաւաց քար ըսուած տեղերը կանգուարին մօտ Տիգրիս գետոյն մէկ վտակին վրայ, ուր կռապաշտութեան ատեն կախարդաց տեղուանք կային. սուրբ Բարթողիմէոս առաքեալը հոն գալով, ջնջեց դանոնք և Անահտայ կուռքը կործանելով Ագռաւաց քարին տեղը սուրբ Աստուածածնայ պատի եկեղեցի մը շինեց, և հոն դրաւ Յովհաննէս աւետարանչին կիպարիս փայտէ քաշած սուրբ Աստուածածնի պատկերը, զոր առաքեալները իրեն տուած էին. Բարթողիմէոս առաքեալ այս եկեղեցոյն քով շինեց կուսաստան մ'ալ և անուանեց Հոգեաց փակք, և յանձնեց կոյսերուն սուրբ

Աստուածածնի պատկերը : — Վարդան աշխարհազիր Հոգւոյ վանքին մէջն են կըսէ Տրդատ Թագաւորին , Աշխէն տիկնոջը և Խոսրովիզխտոյ գերեզմանները :

## Զ. Երուանդունիք .

138 . Երուանդունիք գաւառին մէջ յիշուած տեղերը : — Երուանդունիք գաւառին մէջ կ'իյնայ Հայոց ձոր ըսուած պղտի գաւառը , որ Հայկ նահապետին անունովը կոչուած է , որոյ մէջն է Հայկաբերդ ըսուած տեղը , զոր մեր Հայկ նահապետը շինեց և Հայք անուանեց , ուր որ Բելայ դէմ ճակատեր էր : Ասոր մօտիկ է Աստուածաշէն գեղը , և Գերեզմանք ըսուած տեղը ուր Հայկ դիէլը սպաննեց :

## Է. Արտազ .

139 . Արտազ գաւառին վրայ գիտելիք : — Այս գաւառը առաջ Շաշարշական կամ Շաշարշան կ'ըսուէր իրեն Շաշարշան<sup>1</sup> գիւղաբաղաբին անունովը , ուր Թագաւորաց ամարանոց կար . բայց ետքէն մեր Արտա-

<sup>1</sup> Այս գիւղաբաղաբը կ'երևի թէ մեր Հայկազուն Շաւարշ նահապետը շինած է , որ Քրիստոսէ 1300 տարիի չափ առաջ կ'իյնայ , և իր անունովը կոչէր է Շաշարշան , որ ետքը կամաց կամաց Շաշարշան փոխուէր է :

էս երկրորդին ատեն Ալանայ երկրին Արտազ գաւառէն հոս գերի գալով, այս գաւառին առջի անունը փոխեցին ու Արտազ դրին: Հոս է Մակու ըսուած գեղը և բերդը, որոյ մօտիկ է Թագէոս առաքելոյն վանքը, ուր նահատակեցաւ ինքը ու Սանդուխտ կոյսը, և հոն թաղուեցան: Այս վանքը ԺԳ դարուն մէջ կործանեցին թշնամիք, բայց ետքը նոյն դարուն մէջ նորէն շինուեցաւ, ուր արքեպիսկոպոս կը նստէր: Արտազ գաւառին մէջ կը յիշուին Եղիևոյ և Ներսէհասարատ գեղերը, Աշարայր գեղը, որոյ քովի գաշտին մէջ եղաւ Վարդանանց պատերազմը ու նահատակութիւնը:

### Ը. Աղբակ մեծ.

140. Աղբակ գաւառին զլխաւոր քաղաքները: — Աղբակ գաւառին մէջ որ շատ անգամ Պարսկահայոց Աղբակ գաւառէն որոշելու համար կ'ըսուի Աղբակ մեծ, երևելի են Հադրանակերտ քաղաքը որ Արծրունեաց ցեղին մայրաքաղաքն էր: — Օսի գեղը, որոյ մէջն է Մուշք խաչ ըսուած վանքը, ուր կը թաղուէին Արծրունեաց իշխանները թագաւորութենէն առաջ: — Արսիքանք գեղ, ուր նահատակեցան Ատովմեանք: — Արևբանոս կամ Արբանոս քաղաք, ուր նահատակեցաւ սուրբն Բարթուղիմէոս առաքեալ Սանատրուկ թագաւորին հրամանաւ:

Թ. Թոռնաւան և Ճուաչոտ .

141 . Թոռնաւան և Ճուաչոտ գաւառներուն մէջ յիշուած տեղերը : — Թոռնաւան գաւառին մէջ կը յիշուի Նկան ըսուած ամուր և անմառաչելի բերդը : Իսկ Ճուաչոտ կամ Ճուաչ գաւառին մէջ կը յիշուի Գետու աւանը , որ խիստ զուարճալի տեղ էր Երասխին մօտ , վայրի կենդանիներով լեցուն , ուր Գաղիկ Ա. Արծրունեաց թագաւորը իրեն զբօսանայ տեղ ու ամարանոց շինեց : — Մասախան աւանը Կարմիր գետոյն վրայ , որ Արծրունեաց ցեղին թագաւորական ձմերոցն էր , ուր Գաղիկ Ա. Արծրունեաց թագաւորը գանազան շէնքեր շինեց : — Երեւելի են նաև Շամիրաւ և Բակար բերդերը :

Ժ. Գողթն .

142 . Գողթն գաւառին վրայ գիտելիք : — Գողթն գաւառը կ'իյնայ Երասխայ քով Սիւնեաց աշխարհին սահմանակից , ուսկից որ գաղթական եկած էին Գողթն գաւառին բնակիչները : Այս գաւառին երկիրը խիստ բարեբեր է , մանաւանդ խաղողի կողմանէ , անոր համար ալ կ'ըսուի Գողթն գիւնեշտ . բնակիչները հանճարեղ ու բանաստեղծ , որոնք նուագարաններով կ'երգէին Հայկազանց քաջութիւնները : — Քրիստոնէու-

Թիւնը մտաւ այս դաւառին մէջ Բարթուղի-  
մէոս առաքելոյն քարոզութեամբը, ուր ին-  
չուան Գրիգոր Լուսաւորչի ատեն տեղ տեղ  
մնացեր էր ծածուկ կերպով . բայց տեղ տեղ  
ալ դեռ հեթանոսութիւն կար, զոր սուրբն  
Մեսրոպ ջնջեց : Այս դաւառիս եկեղեցա-  
կան իշխանութիւնը Սիւնեաց ձեռքն էր, և  
անոնց կը հարատակէին եկեղեցական բա-  
ներու մէջ, անոր համար Ստեփանոս Ար-  
քելեան այս դաւառը Սիւնեաց կը համարի,  
որ վերջերը ութերորդ դարուն անոնց ձեռ-  
քը անցաւ, և անկէց ետե Սիւնեաց դաւառ  
կը համարուէր : Այս դաւառին մէջ իննե-  
րորդ և տասներորդ դարերուն հազարացի  
ամիրայ մը բռնացած կը տիրէր :

145 . Գողթն դաւառին մէջ յիշուած տե-  
ղերը :— Զառա քաղաք, որոյ մօտիկ Արասխ  
գետոյն վրայ կամուրջ մը շինուած էր, ու-  
րոյ պատճառաւ խիստ բանուկ վաճառա-  
կանութիւն ունէր Պարսկաստանի հետ, և  
իրեն վաճառականութեանը համար շատ  
հարուստ ու բազմամարդ քաղաք եղաւ :  
1605ին Շահարաս Պարսից թագաւորը բո-  
լոր քաղաքը այրեց, ու բնակիչները որ  
12,000 տուն կը համրուէին, իրեք օրուան  
մէջ իրենց քաղքէն հանելով անհնարին  
նեղութեամբ Պարսկաստան տանել տուաւ,  
որոնք հոն Ասպահան քաղքին քով ընդար-  
ձակ աւան մը շինեցին, որ ըսուեցաւ Նոր  
Զառա, և առջինին պէս նորէն վաճառա-  
կանութեան հետ եղան :

Երևելի են Գողթն գաւառին մէջ նաև Մարտին քաղաքը, Սրբիատ, Ագուշիս և Վաւանդ գեղերը, Խրաւ և Խոշակունիք աւանները և այլն:

### ԺԱ. Նախնաւան.

144. Նախնաւան կամ Նախնան գաւառին վրայ գիտելիք: — Նախնաւան գաւառը կ'ընայ Մասիս լեռին մօտիկ, Երասխ գետոյն հիւսիսային գին Սիւնեաց սահմանակից, որ ութերորդ դարուն մէջ Սիւնեաց ձեռքը անցած էր Գողթն գաւառին հետ մէկտեղ: Մէջը երևելի է Նախնաւան կամ Նախնաւան քաղաքը, որ եղաւ ըստ աւանդութեան՝ Նոյ նահապետին առջի բնակութիւնը տապանէն ելլելէն ետև, և հոն ալ թաղուած է կ'ըսեն: Այս քաղքին եկեղեցւոյն մէջ այրեցան 704ին կաշմ ոստիկանին ատեն Հայաստանի նախարարներուն շատը իրենց մարդիկներովը մէկտեղ 800 հոգւոյ չափ: Երեքտասաներորդ դարուն առին թաթարները այս քաղաքը և մէջի բնակիչները թրէ անցուցին: Այս քաղքին եպիսկոպոսը մեծ պատիւ ունէր, և կ'ըսուէր Մարդպետական կամ Ոստանի եպիսկոպոս, որոյ անունը կաթողիկոսին անունէն անմիջապէս ետքը կ'ը գրուէր:

Այս գաւառիս մէջ կ'ը յիշուին նաև Հացիւնեաց ու Ճահուկ աւանները, Վարազկերտ և Կոռակք գեղերը, Աստապատ ա-

նուանի գիւղաքաղաքը, որոյ մօտ է Կարմիր  
փակերը և շինուած է Երասխ գետոյն քով :

145. Հացիւնեաց խաչին վրայ գիտելիք :  
— Հերակլ կայսր երբոր Պարսից դէմ պա-  
տերազմի կ'երթար, Հայաստանէն անցնե-  
լու ժամանակ Սիւնեաց Բիւրեղ տիկինը  
զիմացը ելաւ այլևայլ ընծաներով : Կայսրը  
երբոր Պարսից խոսրով թագաւորին յաղ-  
թեց ու Քրիստոսի խաչը գերութենէն ա-  
զատեց, Բիւրեղ տիկինը շատ ընծաներով  
նորէն գնաց կայսրը տեսնելու . և շատ ա-  
զաչանքով առաւ կայսրէն Քրիստոսի խա-  
չէն կտոր մը, ու երբոր իր երկիրը կը դառ-  
նար, ջորին հասնելով Հացիւնեաց դաշտը՝  
որ Սիւնեաց երկրին մօտ է, կանկ առաւ  
ու ալ առաջ չգնաց . և իմանալով Աստու-  
ծոյ կամքը, հոն խաչի ժամ ու վանք մը շի-  
նեց, որ ըսուեցաւ Հացիւնեաց Եղանի փակը,  
և հոն դրաւ Քրիստոսի խաչը :

### ԺԲ. Մարանդ .

146. Մարանդ գաւառին մէջ յիշուած  
տեղերը : — Երևելի է այս գաւառիս մէջ  
Մարանդ քաղաքը, ուր թաղուած է կ'ըսեն  
Նոյեմգար Նոյ նահապետին կինը, անոր  
համար ալ անունը Մարանդ ըսուած է, և  
անկէց բոլոր գաւառի անունը : Այս քաղ-  
քիս մէջ թաղուած են Տուղրիլեանց Պար-  
սից շահերը : — Այս գաւառին մէջ կ'իյնայ  
նաև Բակուշրակերտ անանը :

ՔԼՈՒԽ ԺԳ.

Թ. Սիւնիք կամ Սիւսկան.

147. Սիւնեաց նահանգին անունը: — Այս նահանգը Գեղամ նահապետին Սիւսակ որդւոյն անունովը կոչուած է Սիւնիք, որուն պարսիկները Սիւսկան կ'ըսեն, որ մեր գրոց մէջ ալ կը գործածուի. իսկ բնակիչները կ'ըսուին Սիւնի, և քիչ անգամ Սիւնեցի: — Սիւնեաց աշխարհը կ'իյնայ Այրարատ նահանգին արևելեան կողմը, Արցախու ու Երասխ գետոյն միջոցը: Բերքերուն մէջ կը յիշուի ՚ի հնուց մուրտ և նուռ: Բնակիչները կտրիճ, զօրաւոր, և ուսման խիստ յարմար, որով երևելի և ուսումնական մարդիկ շատ ելած են այս աշխարհին մէջէն:

148. Սիւնեաց աշխարհին վրայ պատմական գիտելիք: — Վաղարշակ այս նահանգին մէջ մեծ նախարարութիւն հաստատեց, թէպէտև իրմէ առաջ ալ կար. ու Հայաստանի արևելեան կողմին կուսակալ գրաւ. իսկ Տրդատ նոյն կուսակալութեան պաշտօնը սրահելով, Սիւնեաց նախարարը իր տէրութեան գլխաւոր ութը իշխաններէն մէկն ըրաւ: Այս աշխարհին բնակիչները երկու ցեղ բաժնուած էին մէկը աւե-

լի պատուաւոր , որոյ իշխանը սովորաբար Մեծ , Գանազրոշի , Գաներեց բառերով մէկալէն կ'որոշուէր , և որ հաւանական կ'երևի թէ վաղարշակայ ատենը հաստատուած էր . իսկ մէկալը կ'ըսուէր Հայկազուն իշխան , որ կը բնակէր Գեղարունի դաւառին մէջ Գեղամայ ծովուն մօտ . և այս ցեղը բուն Միսակէն ելած էր : Առջի զլխաւոր ցեղը Քրիստոսի 970 թուին ատենը դատ թագաւորութիւն ունեցաւ , որ 196 տարի քչեց և Միւնեաց այլեայլ դաւառներուն անունովը կ'ըսուէր Բաղաց և Կապաւնի թագաւորութիւն :

149. Միւնեաց մէջ Քրիստոնէութիւն մտնելը : — Քրիստոնէութիւնը այս երկրիս մէջ նախ մտաւ Բարթողիմէոս առաքելոյն քարոզութեամբը , ետքը Գրիգոր Առասւորչին ձեռքովը , բայց անկէ ետքն ալ գեռտեղ տեղ մնացած էր կռապաշտութիւնը , զոր սուրբն Մեսրոպ բոլորովին ջնջեց : Այս նահանգին եպիսկոպոսը մեծ պատիւ ունէր , որ ետքը մետրապօլիտ եղաւ , երբոր Նախճաւանու Թէոգորոս մետրապօլիտը հպարտացած կ'ուզէր կաթողիկոսին պէս իր ձեռքին տակը եպիսկոպոսներ ունենալ , առին իրմէ մետրապօլիտի պատիւը ու Միւնեաց եպիսկոպոսին տուին , որ իր իշխանութեանը մէջ տասուերկու եպիսկոպոս ունէր , և իրեն առանձին նշանն էր ոսկիէ գունատ մը մրան խաչ , պատուանունն ալ Աստուածապատիւ և հոգևոր տէր , որ շատ ան-

դամ կաթողիկոսին ալ կը տրուի: Խիտանուանի էր եօթներորդ և ութերորդ դարերուն մէջ Միւնեաց վարդապետարանը, որ թէ աստուածարանական և թէ արտաքին զիտութիւնները ծաղկած ըլլալուն համար, Հայաստանի ամէն կողմէն հոն կ'երթային, ուսկից շատ երևելի մարդիկ ելած են:

150. Միւնեաց նահանգին գաւառներն: — Տասուերկու գաւառ կը բաժնուէր Միւնիք, որ են Երևչակ, Ճանուկ, Վայոյ ձոր, Գեղարքունի, Ստոր, Ս. դահեճք, Եղուկք, Հարանկ, Բաղք, Զորք, Սրեխք և Կուսական կամ Կուխական:

#### Ս. Երևչակ.

151. Երնջակ գաւառին անունը և զրխաւոր տեղումները: — Սյու գաւառին անունը ելած է Երնջակ բերդին անունէն, զոր շինեց Երնջիկ անունով կին մը Միւնեաց ցեղէն: Երնջակ գաւառին մէջ որ Գողթն գաւառին սահմանակից է՝ կը յիշուի Սպրակունի անունով գեղ մը, և Սպարան գեղը, ուսկից էր Մխիթար Սպարանցին:

152. Վայոյ ձոր գաւառին անունը և զրխաւոր տեղումները: — Վայոյ ձոր գաւառին անունը որ առջի բերան կ'ըսուէր

Մոդէ կամ Մոդան դաւառ , ծագած է ըստ  
ովանց՝ ցաւալի դիպուածէ մը , որով տասը  
հազար հողիէն աւելի ողջ ողջ գետինն ան-  
ցան ահագին երկրաշարժէ մը որ քառա-  
սուն օր տեւց . բայց հաւանական չէ այս  
աւանդութիւնը : Ա՛րսուի նաև Եղեգից ձոր :  
Մէջը կը յիշուին Հողոցիմ կամ Խողոցիմ  
գեղը , Մոշեւարերդ ամրոցը , Մոդան կամ  
Մոդն օւտանը , ուսկից դաւառին հին անունն  
ալ . Եղեգիս զիւղաքաղաքը , որոյ անունովը  
կ'երևի թէ բոլոր դաւառն ալ Եղեգից ան-  
կոչուած ըլլայ . Հրաշկաբերդ կամ Հրաշկա-  
բերդ որ Հրասեակ անունով մէկը շինած է ,  
որ և կ'ըսուէր նաև Կապոյտք , զոր պէտք չէ  
շփոթել Երասխաձորին Կապոյտ բերդին  
հետ :

155 . Վայոյ ձոր դաւառին երևելի վան-  
քերը : — Նորախանք ըսուած եպիսկոպո-  
սանիատ մենաստանը , որ կ'ըսուի նաև Խո-  
րաձոր անապատ , և կ'իյնայ Հրաշկաբերդին  
մօտ , և է Սիւնեաց երկրին հռչակաւոր  
վանքերէն մէկը , ուր էր Օրբելեան Սիւ-  
նեաց ցեղին գերեզմանատունը : Խոտակե-  
րից վանք որ մշտապաշտօնք կ'ըսուէին .  
Հեղեւեկախանք , Գրաձոր կամ Գայլեձոր որ  
երեքտասաներորդ դարուն մէջ շատ ծաղկե-  
ցաւ . Յախաց քար ըսուած հռչակաւոր վան-  
քը . Թաւեհատի կամ Թաւեհատեաց վանք ,  
որ ութերորդ դարուն մէջ խիստ անուանի  
էր , որոյ կրօնաւորները զիշեր ցորեկ զԱս-  
տուած կը փառաբանէին , անոր համար ալ

կ'ըսուէին մշտապաշտօնք, և չոր հաց ու  
բանջարեղէն միայն կ'ուտէին, իսկ կաթ  
նեղէն ու թան ամենեւին չէին ուտեր:

Ք. Գեղարքունի.

154. Գեղարքունի դաւաձին զլիաւոր  
տեղուանքն: — Գեղարքունի կամ Գեղա-  
քունի դաւառը՝ որոյ անունը ելած է Գե-  
ղամ նահապետին անունէն, կ'իյնի Գեղա-  
մայ ծովուն քով, որ նոյնպէս Գեղամ նա-  
հապետին անունովը կոչուած է. և քովի  
լեռն ալ ըսուած է Գեղ կամ Գեղայոյ լեռուն:  
Մէջը յիշուած անուանի տեղերն են Գառ-  
նի գիւղաքաղաքը, զոր շինեց Գեղամ նա-  
հապետը և իր անունովը Գեղամի կոչեց.  
բայց ետքէն Գառնիկ Գեղամին թուր մէ-  
ջը շատ շինութիւններ ընելով իր անունո-  
վը Գառնի անուանեց: Տրդատ թագաւոր  
ասոր մէջը իր քրոջը Խոսրովի զխտոյն հա-  
մար փառաւոր պալատ մը շինեց, որ 1680ին  
ղեւոնաչարժէ մը կործանեցաւ. ասոր հա-  
մար վերջի մատենագիրները Գառնիին կ'ը-  
սէին Թաղա Տրդատայ:

Գառնի գիւղաքաղաքէն զատ կը յիշուին  
նաև Գեղարքունի դաւառին մէջ Գեղայոյ  
անուանի բերդը, Գեղարքունոյ բերդը, Ե-  
րերուն, Գառնակիր, վաւախաշէն, Կոբ, Ի-  
րառ, Նորատուն կամ Նորատուն գեղերը,  
և այլն:

Գառնիին մօտ է Գեղամայ ծովը որոյ

մէջն է Սեւան կղզին որ ամուր բերդ ունէր, անուանի է այս կղզւոյն սուրբ Յարութեան (եկեղեցին, զոր Գրիգոր Ա ռուսաւորիչ շինեց ՅՕՃին, հոն տեղի կուռքերն ու բաղինները կործանելով, և քովն ալ կրօնաւորաց վանք մը շինեց որ ետքերը շատ անուանի եղաւ, և ինչոտան հիմա կեցած ու շէն է : մտղարմբ — մգմաւորմաւ

155. Գեղարքունի դաւառին երևելի վանքերը : — Գեղարքունի դաւառին մէջ երևելի է Սյրխի վանք որ Հայաստանի հնազոյն վանքերէն մէկն է, և այրի մը մէջ փորուած ըլլալով այսպէս կոչուած է, որ կը կոչուի նաև Գեղարքի վանք կամ Գեղարդա վանք, Քրիստոսի կողը մտած գեղարդը՝ ա տեն մը հոս սրահուելուն համար : — Սղոց վանք, զոր Գրիգոր Ա ռուսաւորիչ շինեց : — Հառուց քառ, որ փառաւոր վանք էր Գառնիին մօտ : — Վանաց վան կամ Վանկան, զոր շինեց Շապուհ Բաղրատունի Հայոց սպարապետը իններորդ դարուն վերջերը : — Շոդազայ վանք, զոր շինեց Սիւնեաց Մարիամ տիկինը իններորդ դարուն մէջ : — Մաքնիս կամ Մաքնեոցք, որոյ կրօնաւորները մարենի այսինքն էդ ոչխարի բուրդէ զգեստներ հագնելուն համար, վանքին անունն ալ ըսուեցաւ Մաքնիս կամ Մաքնեոցք : գմխամաթ, մտղարմբ

գմխամաթ, մտղարմբ  
մտղարմբ, մտղարմբ  
մտղարմբ, մտղարմբ

156. Մտոր և Աղահէճք գաւառներուն մէջ յիշուած տեղերը : — Մտոր կամ Սոթք գաւառին օղը դէշ ու միշտ բոք ըլլալուն համար Մորք ըսուած է : Անուանի են մէջը Մտոր կամ Մորք զիւղաքաղաքը և վասա կաշեկն դեղը : — Ծար անունը, որոյ անունովը Մտոր գաւառը կտրերը Ծարայ երկիր ըսուեցաւ : — Իսկ Աղահէճք գաւառին մէջ կը յիշուի խաւածախ դեղը, խոժոռաքերոյ և քաշարաղ բերդերը, որոց վերջի երկուքին անունովը այս գաւառն ալ կտրերը կոչեցաւ քաշարաղ կամ ֆշտաղք և խոժոռաքերոյ երևելի էր Աղահէճք գաւառին մէջ Ծիծրակոյ վանքը կամ Ծիծառվանքը :

Զ. Ծղուկք.

157. Ծղուկք գաւառին վրայ զիտելիք : — Ծղուկք գաւառը սահմանակից է Նախ ճառանի, և ելած է անունը Ծղուկ գաւառապետին անունէն : Այս գաւառիս մէջն է Շաղառ երևելի զիւղաքաղաքը որ բերդ ալ ունէր, և այս էր Սիւնեաց ցեղին իշխանանիստ տեղը : Այս քաղքիս մէջ կար սրբոյն Ստեփանոսի փառաւոր քարաչէն եկեղեցի մը, որոյ մէջ չորրորդ դարուն վերջերը Անդոկ Սիւնեաց իշխանը թաղել տուաւ անթիւ սրբոյ նշխարներ և ուրիշ

չատ եկեղեցական սպասներ բոլոր Սիւնեաց աշխարհէն ժողովելով, և եկեղեցւոյն վրայ ալ հողարլուր մը շինել տուաւ, որպէս զի Պարսիկները յայս եկեղեցին ալ չաւրին: Ետքը յատեն անցնելէն ետև Սնդովկայ որդւոյն Բարիկ իշխանին անուն զի պուածով մը տեղը յայտնուեցաւ, և Բարիկ իշխանը նորէն փորել տուաւ: Ս. Ս. Շաղատ քաղքին հիմա Շօթօր կ'ըսեն:

158. Թղուկը գաւառին մէջ յիշուած ուրիշ երևելի տեղերը: — Թղուկը գաւառին մէջ երևելի են նաև Աղիտոռ աւանը, Բղևեբերդը, Արտակ գեղը, որոյ զիմացէն կ'անցնի Արտակ ըսուած գետակը, և անոնք ելած է որոտաձայն վաղելէն, ուսկից ելած է նաև գեղին անունը: Արտան գետը իր քովի սահմանովը մէկտեղ իբրև պզտի գաւառ մը կը յիշուի, ուսկից էր Յովհաննէս կախիկ վարդապետը, որ որոտանցի ըսուեցաւ: — Վարակոն գեղը, որոյ մէջ երևելի է համանուն վարդանոս փառքը, զոր շինեց Շահանդուխտ՝ Սիւնեաց Սմբատ Թագաւորին կինը 1001 թուոյն: Ճայլ մ, զմաստ

159. Տաթևու վանքին վրայ զխտելիք: — Ս. Ս. վանքը կ'իյնայ Տաթև գեղին մէջ, և անունը ելած է Եւստաթէոսի անունէն, որ Թաղէոս առաքելոյն աշակերաններէն մէկն էր, որուն շատ անգամ Ստաբե առաքեալ կ'ըսեն, ուսկից կրճատուելով ելած է Տաթև անունը, որ կ'իյնայ Արտան գեղին մօտ: Տաթևու վանքը Թէպէա և առաջուց այն-

չափ պատիւ չունէր, բայց ետքէն շատ պատուեցաւ, Սիւնեաց մետրապօլիտութեան աթոռը հոս փոխադրուելով: Հոս այլևայլ ատեն շատ շինութիւններ եղան, և Յովհաննէս Սիւնեաց եպիսկոպոսը 896ին առ Չի հին եկեղեցին որ խախտած էր, հիմնովին նորէն շինեց շատ փառաւոր, որուն մեծ նաւակատիք եղաւ այլևայլ կողմերէն եպիսկոպոսներ հոն ժողվուելով, նաև Սըմբատ Բագրատունի թաղաւորը, Գաղիկ Ա Սրժբունեաց թաղաւորը և ուրիշ շատ մեծամեծներ: Տասներորդ դարուն մէջ Տաճկըները այս եկեղեցին կործանեցին ու փանքն ալ այրեցին, բայց ետքը նորէն շինուեցաւ:

Է. Բաղք.

160. Բաղք դաւառին վրայ գիտելիք: — Բաղք դաւառին անունը ելած է Բաղակ անունով Սիւնեաց իշխանէ մը, և վերջերը կոչեցաւ Աճեկ կամ Աճական, կամ Քաշունիք և Բարկաշատ: Մէջը անուանի է Բաղարեւոյ անառիկ ամրոցը որ կ'ըստի նաև Կաշոց Բաղաց, Քար Բաղակո, Բաղակ իշխանին անունովը: Այս բերդը Սիւնեաց աշխարհին ամէնէն ամուր բերդն էր, ուր կ'ապաւինէին երկրին բնակիչները պատերազմի ատեն, ուր ամրացաւ նաև Անդոկ Սիւնեաց իշխանը պարսից Շապուհ թաղաւորին ձեռքէն ազատելու համար, որ իրեք

անդամ պատերազմեցաւ այս բերդիս հետ  
և չկրցաւ առնուլ :

161. Բաղք դաւառին մէջ յիշուած ու-  
րիչ տեղերը : — Անուանի են Բաղք գա-  
ւառին մէջ Աճանակ կամ Եճանակ բերդը ,  
Բարկաշատ ամրոցը , Այուքս գեղը , Շեներա  
աւանը , Հարեճոր , Խոտանակ , Նորաշինիկ ,  
Երուանդակերտ , Անդուխարեղ , Բահուրերղ ,  
և այլն : Վանքերու մէջ երևելի են Երիցա-  
վանք ուխտը որ մշտապաշտօնք կ'ըսուին ,  
Վահանոշ ուխտը զոր շինեց Բաղարբերդին  
մօտ Վահան անունով իշխան մը ԳԱՉին  
Սմբատ Բաղրատունի Թագաւորին ատեն ,  
և կոչեց իր անունովը : Այս վանքիս մէջն  
են Սիւնեաց Թագաւորներուն ու Թագու-  
հիներուն և ուրիշ իշխաններուն շատին գե-  
րեզմանները :

Ը. Չորք . . . 061

162. Չորք գաւառին վրայ դիտելիք : —  
Չորք գաւառը կ'ըսուի նաև Կապան , որոյ  
անունովը Սիւնեաց Թագաւորութիւնը կօ-  
չեցաւ նաև Կապանի քաղաքորոշիչն , իր Կա-  
պան ըսուած անառիկ քաղքին համար , որ  
Սիւնեաց Թագաւորանիստ քաղաքն էր և  
ամուր բերդ ունէր : Այս գաւառիս մէջ ե-  
րևելի են Կարաւաքերղ և Գեղի բերդերը :  
Կ'երևի թէ Ետրի ատենները Չորք կամ  
Կապան գաւառին սահմանը աւելի ընդար-  
ձակուած էր , այսինքն Բաղաց և Կուսա-

կանգաւառներուն մեկմասը մէկտեղ ստնը լով: Այս կապան գաւառին հիմա Խաչիան կ'ըսեն:

Թ. Արեւիք.

163. Արեւիք գաւառին մէջ յիշուած տեղերը: — Արեւիք գաւառին մէջ կ'երևի թէ հին ատեն շատ արևապաշտներ կային, և մեծ հանգէսով կը պաշտէին արեւը, ուսկից ելած է այս գաւառին անունը, որոյ մէջ կը յիշուի Գաշտաշէ գեղը, Մեղրի քաղաքը, որոյ անունովը ետքերը գաւառն ալ նոյն պէս Մեղրի կոչեցաւ, և ինչուան հիմա ալ նոյն անունը կը տրուի:

Ե. Կուսակաւ.

164. Կուսական գաւառին վրայ գիտեւիք: — Կուսական կամ Կովսական գաւառը ետքերը Գրնաւ ըսուեցաւ, իր Գրնաւ կամ Գուրնաւ բերդաքաղքին անուամբը: Կը յիշուին այս գաւառիս մէջ Նորաշիւնիկ կամ Նորաշիրեւիք գեղը, Բեխ գեղը, և այլն:

165. Միւնեաց աշխարհին մէջ յիշուած ուրիշ տեղերը: — Միւնեաց աշխարհին մէջ կը յիշուին ուրիշ այլևայլ քաղաքներ և գեղեր, որոց տեղը յայտնի չգիտցուի թէ ո՞ր գաւառին մէջ կ'իյնան. ինչպէս են Ուսն գիւղաքաղաքը, Նակորզան կամ Նորակորզան գիւղաքաղաքը, զոր շինեց Բա-

րիկ Անգովիայ որդին Երասխայ մօտ . Հայ-  
րաբերդ , Կրկերդ , Շրտտտ , Վանանայ և  
Բարտոյ բերդերը , և այլն :

Միւնեաց մէջ կը յիշուին նաև Սիտե ա-  
նուանի մենաստանը , և Տանձախարախ  
վանքը , որոյ կրօնաւորները խարազնա-  
զգեստ էին , և այլն :

### ՓԼՈՒԽ ԺԴ .

#### Ժ . Արցախ .

166 . Արցախ նահանգին վրայ գիտելիք :  
— Արցախ նահանգը կ'իյնայ Միւնեաց ա-  
րևելեան կողմը , և կը կոչի նաև Աղուանից  
աշխարհ , Աղուանից ձեռքը ինկնալուն հա-  
մար Դ դարէն ետև . Առանայ աշխարհ , Առան<sup>ձ</sup>  
անունով մէկը Վաղարշակայ ատեն Աղուա-  
նից երկրին նաև Արցախին առաջին կող-  
մնակալը ըլլալուն համար : Կ'ըսուի դար-  
ձեալ փոքր Սիւնիք , իր Միսական դաւառին  
անունովը , որ բուն Միսական երկրէն այս-

1 Այս Առան անունով խելացի մարդը որ Մի-  
սակեան ցեղէն էր , Վաղարշակ Հայաստանի ա-  
րևելեան հիւսիսային կողմին մեծ կուսակալ գրաւ-  
կուր գետոյն քով : Առանին զաւկըներէն ելած  
են Գարդմանացի , Գարգաւացի , Ուսեացի , Ծօ-  
րէ , կամ Ծոփէացի , որ կը բնակէին Ուսի նահան-  
գին արևելեան կողմը :

ինքն Միւնեսայ նահանգէն որոշելու համար  
Փոքր Միւնիք ըսուած է, վասն զի Գեղա-  
մայ որդին Միսակը տիրած էր նաև Արցա-  
խու երկրին: Նոյնպէս Արցախու Հարանդ  
գաւառը Միւնեսայ Հարանդ գաւառէն որո-  
շելու համար կ'ըսուի Միւս Հարանդ կամ  
Փոքր Հարանդ: Վերջի ատենները Արցա-  
խու նահանգը ըսուեցաւ Խաչկեր կամ Խու-  
չկե, համանուն անուանի բերդին համար:  
Երկիրը անտառներով լեցուն ու բերդերով  
ամրացուցած է, անոր համար աղէկ սպաս-  
տանելու տեղ էր:

167. Արցախ նահանգին գաւառները:  
— Տասուերկու գաւառ, որ են Միւս Հա-  
րանդ, Վսկռակիք կամ Վայկռակիք, Բերձոր,  
Մեծկռակք կամ Մեծկողմակք, Մեծիրակք  
կամ Մեծարակիք, Հարձրակք, Մոշխակք,  
Պիակք, Պարծկակք, Միսական, Բուստի-  
փառնեւ, և Կոչք<sup>1</sup>:

1 Խորենացին աշխարհագրութեանը մէջ Ար-  
ցախու գաւառներուն թիւը տասուերկու կը դնէ,  
բայց կան օրինակներ որոց մէջ անունները տաս-  
նըչորս կը համրուին, Միսականէն ետև Բոսա՛ գա-  
ւառ մ'ալ աւելցընելով, ու Բուսափառնէսը  
իրարմէ զատելով, ու գրելով Բոսափ, Փառնէս:

Ա. Միւս Հարանդ . — Բ. Վակունիք .

168. Միւս Հարանդին մէջ յիշուած տեղերը : — Միւս Հարանդին մէջն է Ամարաս գեղը , ուր թաղեցաւ սուրբն Գրիգորիս Աղուանից կաթողիկոսը : Հալե՛տր աւանը , որոյ մօտ է Զեռա բերդը :

169. Վայկունիք կամ Վակունիք դաւառին վրայ գիտելիք : — Վայկունիք դաւառին անունը ելած է Վայկուն անունով աւագակէ մը , որ միջին Տիգրանայ ատեն եկեր կ'աւրըշտըկէր Արցախ նահանգին երկիրը . և հոն ամուր լերին մը տիրելով , իր անունովը Վայկունիք ըսուեցաւ , անկէց դաւառն ալ ետքէն նոյն անունը առաւ :

170. Արցախու մէջ յիշուած ուրիշ տեղերը : — Արցախու մէջ կը յիշուին ուրիշ տեղեր ալ , որոց գիրքը յայտնի չգիտցուիր թէ ո՞ր դաւառին մէջ կ'իյնան . ինչպէս են Գանձասար վանքը համանուն գեղին մէջ լերին մը վրայ շինած , ուր եղաւ Աղուանից կաթողիկոսարանը Պարտաւ քաղաքին ջրասոյգ ըլլալէն ետեւ : — Խօխանաբերդ ամրոց Գանձասարի գիմաց , Թարախանայ բերդ , Հայրերք , Միրանաքար , Վարդանաշատ բերդերը , Զրիշտիկ ուխտը , Թադէի վանքը , և այլն :

ԳԼՈՒԽ ԺԵ .

ԺԱ . Փայտակարան .

171. Փայտակարան նահանգին վրայ զի տելիք : — Փայտակարան նահանգը տեղ տեղ Աղուանից անունով կը յիշուի , ասոր զործակալը Աղուանից վրայ ալ տիրելուն համար , և ատեն ատեն անոնց ձեռքը ինկնելուն համար : Երբեմն Մարաց և Սորոպատականի անունով ալ կը յիշուի անոնց սահմանակից ըլլալուն , ու ատեն ատեն անոնց հայատակելուն համար : Կ'իյնայ Փայտակարան նահանգը Ուտի նահանգին հարաւային արեւելեան կողմը Երասխ գետոյն քով , և կը ձգուի ինչուան կասալից ծովը . անոր համար ալ շատ տեղ ազգային և օտարազգի մատենագիրներուն մէջ Փայտակարան նահանգը կ'ըսուի կասքք , ուսկից ելած է կասալից ծովուն անունը : Բայց պէտք է զիտնալ որ կասքք կ'ըսուին կասալից ծովուն արեւմտեան կողմը ինկած Փայտակարան նահանգին չրջակայ երկիրներն ալ , Աղուանքէն սկսեալ ինչուան Մարաց երկիրը : Անոր համար ոմանք կասքք կը զնեն Մարաց և Պարթևաց երկրին մէջ . ոմանք կը զնեն այն տեղը ուսկից կուր զետը ծով կը թափի , որ է մեր Փայտակարան նահանգը Աղուանից սահմանակից . ոմանք

ալ կը դնեն Աղուանից մէջ, որով թերևս կ'իմանային մեր Փայտակարան նահանգը :

172. Փայտակարան նահանգին գաւառները : — Փայտակարան նահանգը տասուերկու գաւառ կը բաժնուէր, որ են Հրաքոտակը, Վարդանակերտ, Եօրևիտրակեան բազիւք, Տիւրքաղա, Բաղանտոտ, Առուպիժան, Հաւի, Արշի, Բազաւան, Սպանդարակը, Արւղղապակը և Ալեւան :

Այս նահանգին մէջ խիստ առատ ու ազնիւ բամբակ կ'եղլէ, զարին ալ շատ առատ է ու ինքիրեն կը բուսնի : Մեր մատենագրաց մէջ շատ յիշատակութիւն չկայ աս գաւառին մէջ եղած տեղերուն վրայ, որովհետև շատ անդամ օտար ազգերու ձեռք էր և կամ ինքնաղլուխ . ինչպէս Խորենացոյն ատեն Ատրպատական աշխարհին տակն էր :

173. Փայտակարան նահանգին մէջ յիշուած քաղաքները : — Կը յիշուի Փայտակարան քաղաքը, որոյ տուները, պատուարները, պարիսպները և ուրիշ ամէն շէնքերը մայր փայտէ շինած ըլլալուն, քաղքին անունն ալ Փայտակարան ըսուեցաւ, կըսեն, իբր Փայտեայ ընկերակարան : Այս քաղքին անունով նահանգն ալ նոյնպէս կոչեցաւ :

Վերջի մատենագիրներէն ոմանք, ինչպէս Թովմա Արծրունի, Թովմա Մեծուիցին, Երզնկացին, Վարդան աշխարհագիրը, կըսեն թէ Փայտակարան քաղաքը

վերջերը Տիփսիս ըսուեցաւ . բայց կ'երեւի սխալմունք մը , վասն զի յայտնի է որ շատ հեռու է Տիփսիս Վրաստանի մայրաքաղաքը :

Փայտակարան նահանգին մէջ կը յիշուի նաև Վարդանակերտ քաղաքը Երասխ գետոյն հիւսիսային կողմը , որոյ անունէն ելած է Վարդանակերտ դաւառին անունը , և շինած է Վարդան անունով մէկը . բայց որ Վարդանն է յայտնի չգիտցուիր : — Կը յիշուին դարձեալ Տիգրանակերտ աւանը , որ դատ է Աղձնեաց Տիգրանակերտ քաղաքէն : — Բագու քաղաքն ալ որ ինչուան հիմա կեցած է Կասպից ծովուն քով , թերևս Բագաւան դաւառին մէջ կ'իյնար , որոյ անունէն կ'երեւի թէ հին ատեն մէջը շատ բազին կար :

## ԳԼՈՒԽ ԺԶ .

### ԺԲ . Ուտի .

174 . Ուտի նահանգին վրայ գիտելիք : — Ուտի նահանգը Երասխին հիւսիսային կողմը կ'իյնայ , Կուր գետոյն և Արցախին մէջ տեղը : Բնակիչները Սևորդիք կ'ըսուէին , իրենց Սև նահապետին անունովը : Ուտէացիք Առանի դակին սերունդն են , որ Սխալի ցեղէն էր . բնութեամբ բիրտ և ապրստամբ մարդիկ էին , ինչպէս կ'ըսէ Յով-

հաննէս կաթողիկոս, և միշտ աւազակութեան հետ եզոզ:

Ուտի նահանգը որ սահմանակից է Աղուանից, այլևայլ ժամանակ անոնց ձեռքը անցեր էր, ինչպէս նաև Խորենացւոյն ատեն, անոր համար շատ տեղ Աղուանից անունով կը յիշուի: Երկրին մէկ մասը ընդարձակ դաշտադետին է Աուր գետոյն քով, մէկ մասն ալ անտառներով, անձաւներով լեցուն. բերքերուն մէջ առանձին կերպով կը յիշուի վարնկենի, ձիթենի, աղ, բամբակ, և այլն:

175. Ուտի նահանգին գաւառները: — Ուտի նահանգը ութ գաւառ կը բաժնուի, որ են Արակոտ, Տշի, Ռոտպացկան, Աղուե, Տոչքատակ, Գարդլան, Շիկաշէն կամ Շակաշէն, և Ուտի առանձնակ<sup>1</sup>:

### Ս. Գարդլան.

176. Գարդլան գաւառին վրայ գիտելիք: — Գարդլան Ուտի նահանգին երևելի գաւառն է, որ վերջերը շատ ընդարձակ կը ձգուէր: Ար յիշուին մէջը Գարդլան անունով բերդ մը: — Շակքոր պարսպապատ քաղաքը, զոր 1600ին ատենները Շահա-

<sup>1</sup> Խորենացւոյն աշխարհագրութեան օրինակները գաւառներուն թիւը եօթն կը դնեն, բայց համբելու ատեն ութ կը համրեն Ուտի առանձնակն ալ սեպելով. ինչպէս որ շիտակն ալ այս է:

բաս Պարսից թագաւորը առաւ ու մէջը  
չատ կոտորած ըրաւ : — Միւրաւան քա-  
ղաք , զոր շինեց Պարսից խոսրով թագա-  
ւորին Միհր ազգականը և իր անունովը  
կոչեց : — Երևելի են Գարդման գաւառին  
մէջ նաև Գևտարակս , Տերունակս , Գար-  
ներձ և Երգեվանք բերդերը և այլն : Երգե-  
վանքին զիմացը կ'իյնայ խորանաչատ վան-  
քը , մէջի եկեղեցիներուն շատութեանը հա-  
մար այսպէս ըսուած է , զոր շինեց Վանա-  
կան վարդապետ երեքտասաներորդ գա-  
րուն մէջ , և հոն թաղուեցաւ :

### Բ. Շակաշէն .

177 . Շակաշէն կամ Շիկաշէն գաւառին  
վրայ գիտելիք : — Շակաշէն գաւառին եր-  
կիրը շատ բարեբեր է , ինչպէս որ կը վը-  
կայէ Ստրաբոն ալ , և կ'իյնայ Կուր գետոյն  
եզերքը : Գաւառին անունը ելած է Սակք  
ըսուած ազգէն , որ Սկիւթացոց մէկ ցեղն  
է , և կը բնակէին Մազքթաց երկրին սահ-  
մանները . և յարձակեցան Հայաստանի  
պտղաբեր երկրին վրայ , և իրենց տիրած  
երկիրը անունովն ին Սագասիւնի կոչեցին ,  
որ է մեր Շակաշէն գաւառը : Անկէց վաղե-  
ցին Կապադովկիոյ ու Պոնտոսի կողմերը ,  
ու հոն Պարսից նախարարներէն յազթուե-  
լով Զարդուեցան :

178 . Շակաշէն գաւառին մէջ յիշուած  
տեղերը : — Շակաշէն գաւառին մէջ երևե-

լի է Գանձակ քաղաքը, զոր շինեց Վիլթ  
Փատոցոս անունով մէկը թագաւորական  
հրամանաւ Քրիստոսի 847 թուականին :  
Այս քաղաքը ատեն ատեն Աղուանից ձեռ-  
քը անցնելով՝ անոնց մայրաքաղաքը եղած  
էր : Պարսիկները 1088ին պատերազմով  
տիրեցին քաղքին, և մէջը շատ աւեր և կո-  
տորած ըրին : Նոյնպէս 1255ին տիրեցին  
թաթարները, ու քաղաքը կողոպտելով  
մեծ մասը կործանեցին, բայց ետքէն նո-  
րէն նորոգեցաւ, և ինչուան հիմայ այն կող-  
մերուն գլխաւոր քաղաքն սեպուած է : Հոս  
ծնաւ Մխիթար Գոշ վարդապետը երկո-  
տասաներորդ դարուն կէսին, և իր աշա-  
կերտը կիրակոս պատմիչ :

Շակաշէն գաւառին մէջ երևելի է նաև  
Չարեք բերդը որ Գանձակին մօտերը կ'ըլ-  
նայ :

Գ. Ուտի առանձնակ .

179 . Ուտի առանձնակին երևելի տեղե-  
րը :— Այս գաւառիս մէջ՝ որ Գարգարացոց  
նախարարութեան ձեռքն էր, երևելի էր  
Պարտաշ քաղաքը, զոր շինեց, կ'ըսեն, մեր  
Հայկ նահապետին Բարտոս եղբայրը, որ  
այն կողմերը գնաց բնակեցաւ, և քաղքին  
անունն ալ իր անունովը Պարտաւ կոչեց :  
Ոմանք կ'ըսեն թէ մեծն Աղեքսանդր շի-  
նած է, բայց կ'երևի թէ նորոգած ու ամբը-  
ցուցած է, չէ թէ նոր շինած : — Նոյնպէս

նորոգութիւն պէտք է իմանալ Աղուանից պատմչին ըսածն ալ, որ կը դնէ թէ Պարսից Պերոզ թագաւորին հրամանաւը շինեց Վաչէ Աղուանից թագաւորը այս քաղաքս, և անուանեց Պերոզապատ, որ ետքը Պարտաւ ըսուեցաւ, և Աղուանից թագաւորանիստ մայրաքաղաքը եղաւ. նոյնպէս նաև կաթողիկոսարաններն Չորայ քաղքէն հոս փոխադրեցաւ, ուր կը յիշուի վեցերորդ դարէն սկսեալ ինչուտն երկոտասաներորդ դարը :

Ուտի առանձնակին մէջ կը յիշուի կաղանկատուաց գեղն ալ, ուսկից էր Մովսէս որ Աղուանից պատմութիւնը գրեց :

180. Ուտի նահանգին մէջ յիշուած տրիշ տեղերը : — Խաղիւսայ քաղաքը, որ շինուած էր Լուինաս գետոյն քով, և առաջ Հայոց, ետքը Աղուանից թագաւորական ձմերոցը եղաւ : Կը յիշուին նաև Մածևաբերդ ամրոցը, Լոյտուտ, Առևկան, Տուս, Գուտական, Գիս կամ Գիտ գեղերը, և այլն : Ուտի նահանգին հիսփսային ծայրը կ'իյնայ Հևարակերտ կամ Հուևակերտ հին ամուրբերդն ալ Աղուանից սահմանակից, որ տեղ տեղ Աղուանից մէջ կը դրուի. բայց ինչպէս որ ըսինք, Ուտի նահանգին քաղաքները չատ անգամ Աղուանից անունով կը յիշուին, անոնց իշխանութեան տակն ըլլալնուն համար :

## ԳԼՈՒԽ ԺԷ .

### ԺԳ . Գուգարք .

181 . Գուգարք նահանգին վրայ գիտե-  
լիք : — Գուգարք նահանգին մեծ մասը ժա-  
ռանդեց Գուշար , որ Շարայի դաւիթներուն  
մէկն էր , այսինքն Մթին լեռնէն ինչուան  
Հնարակերտ ամրոցը . և թերևս իր անու-  
նովը աշխարհն ալ Գուշարք ըսուելու տեղ  
Գուգարք ըսուեր է : Վաղարշակ հոս մեծ  
բզեչխութիւն հաստատեց Գուգարացուց ա-  
նունով , որպէս զի Հայաստանի հիւսիսային  
կողմը կովկասային աւաղակող ազգերէն  
պահեն : Այս նահանգին գանազան մասե-  
րը այլևայլ ժամանակ Վրաց ձեռքը անցան  
հին ատենէն ՚ի վեր , մանաւանդ հիւսիսային  
կողմը . իսկ չորրորդ դարուն , ինչպէս կը  
վկայէ Խորենացին , բոլոր Վրաց ձեռքն  
էր , անոր համար մէջի բզեչխն ալ երբեմն  
բղեչի Գուգարացուց և երբեմն բղեչի վրաց  
կըսուէր :

Երկիրը լեռնոտ է , բայց բարեբեր . բեր-  
քերուն մէջ մասնաւոր կը յիշուին հաճար ,  
սերկեկի , տօսախ , և ազնիւ բամբակ :  
Ստրաբոն յոյն աշխարհագիրն ալ շատ կը  
զովէ Գուգարք նահանգին պտղաբերու-  
թիւնը , և կըսէ թէ մէջէն առատ ձէթ  
կ'ելլէ :

182. Գուգարք նահանգին գաւառներն :  
— Գուգարք ինն գաւառ ունէր, որ են  
Չորոխոր կամ Չոր, Ծորոխոր կամ Ծոր,  
Կողբոխոր կամ Կողբ, Տաշիր, Թռեղք, Կան-  
գարք, Արտանան, Չաշախք և Կղարք :

Ա. Չորոխոր .

183. Չորոխոր գաւառին մէջ յիշուած  
տեղերը : — Չորոխոր գաւառին մէջ, որ  
կ'ըսուի նաև Չորախոր, Չորոց փոր կամ  
սոսկ Չոր, կը յիշուի Կայկան անառիկ բեր-  
դը, զոր շինեց ԺԳ գարուն սկիզբը բլրոյ մը  
վրայ Յովհաննէս արքեպիսկոպոսը Չաքա-  
րէի և Իւանէի քեռորդին, Հաղբատու և  
Սանահնի վանքերուն մօտ, Հաղբատայ  
վանքին ապահովութեանը համար : Ար յի-  
շուին նաև Մանկանաքերդը, Կայծուն բերդը,  
Արքունաչէն, Համարի և Վաշիս գեղերը,  
և Տգրկածով գեղ՝ համանուն մերձակայ ծո-  
վակին անունովը կոչուած, որ Գեաիկ վան-  
քին մօտ կ'իյնայ :

Այս գաւառիս մէջ երևելի են Խնատի  
վանքը, և Գևորիկ հռչակաւոր վանքը Աղս-  
տեոյ գետոյն քով, որ գետնաշարժէ մը կոր-  
ծանեցաւ, և ետքը Մխիթար Գոշ՝ Վրաց  
Իւանէ և Չաքարէ իշխաններուն օգնու-  
թեամբը նորէն շինել տուաւ Տանձուտ ը-  
սուած ձորոյն մէջ, և ինքն ալ հոս թա-  
ղուեցաւ :

184. Հաղբատ և Սանահնի վանքերուն

վրայ զիտելիք : — Այս երկու հռչակաւոր վանքերը որ մէկմէկու զիմաց շինուած են համանուն զեղերուն մէջ, կ'իյնան Լոռի քաղքին արևելեան կողմը, և մօտերը Սևորգեաց երկրին որ է Ուտի աշխարհը : Սանահին վանքը աւելի հին է, և բնակիչները կ'ըսեն թէ Գրիգոր Լուսաւորչէն հիմնարկած է, որոյ եկեղեցին կը կոչուի սուրբ Աստուածածնի անուամբ, ուր թաղուած են Գուրգեն՝ Աշոտ Ողորմածին որդին, և ուրիշ երևելի մարգիկ : Այս երկու վանքերուն մէջն ալ այլևայլ նորոգութիւններ ըրաւ 960ին Խոսրովանոյշ Թագուհին Աշոտ Ողորմածին կինը . նոյնպէս մետասաներորդ դարուն Կորիկէ կամ Կիւրիկէ թագաւորը այլևայլ շինութիւններ ըրաւ, և Հաղբատայ մէջ առանձին եպիսկոպոս զնել տուաւ : Հաղբատու վանքը մայրաքաղաք կ'ըսուէր, ինչպէս նաև Հայաստանի ուրիշ մեծամեծ վանքերն ալ, ուր որ մետրապոլիտ կը նստէր մայրաքաղաք կ'ըսուէին : Հաղբատու վանքին եկեղեցին որ կը կոչուի յանուն սուրբ Նշանի, շինեց Աշոտ Ողորմածին Խոսրովանոյշ կինը 968ին : Հաղբատու ու Սանահնի վանքերուն մէջ 500 կրօնաւոր կային, ոմանք քուրճ կը հաղնէին իրենց պարեգօտին տակէն, մէջքերնին չուան, ոտքերնին բոպիկ, ու զիշեր ցորեկ սաղմոսերգութեամբ կ'անցընէին, մանաւանդ Սանահնի կրօնաւորները :

Բ. Տաշիր

185. Տաշիր գաւառին մէջ յիշուած տեղերը : — Տաշիր գաւառին մէջ որ սահմանակից է Այրարատայ Աշոցք գաւառին , կը յիշուի Լոռի քաղաքը զոր շինեց Դաւիթ Անհողին ԺԱ. դարուն , որոյ որդին Կորիկէ կամ Կիրիկէ Բագրատունեաց ցեղէն կը թագաւորէր այս քաղաքիս մէջ , և իրեն ցեղէն մէկ քանի թագաւորներ ալ յաջորդեցին : Հիմայ այս քաղաքը աւերակ է : Շաւշոյրի բերդաքաղաքը որ Հայկայ Քարթլուս եղբայրը շինեց և անունը դրաւ Օրբէր , որ ետքը Շաւշոյրի կամ Շաւշոյրի ըսուեցաւ , որ ըսել է վրաց լեզուով երեք նետ . հոս եղաւ Օրբէլեանց ցեղին սկզբնաւորութիւնը :

Տաշիր գաւառին մէջ կ'իյնան նաև Խորխոռուկի կամ Խոշոռուկ աւանը , Խոռակերտ բերդաքաղաքը , Բագրակերտ կամ Բագրուկի անառիկ բերդը բլրոյ մը վրայ շինած Հայոց Բազ նահապետէն . Աղասու կամ Աղասու աւանը . Օճուն գեղը Լոռիի մօտ , ուսկից էր Յովհաննէս Խմաստասէր Օճնեցին . Մոմիսի բերդաքաղաքը , վարդաքաղաք և Կարդակ գեղերը , և այլն :

Տաշիր գաւառին հիմա կ'ըսեն Բաւրաշի օոր :

Տաշիր գաւառին մէջը կ'իյնայ նաև Քոպար կամ Քոբայր անտանի վանքը , և Հոռուայր ուր վասիդ անունով իշխան մը որ ութե-

որոգ դարուն մէջ կայսրէն զեսպան խըր-  
կուեր էր Հայաստան, տաննըհինգ տարի  
ճգնութիւն ըրաւ, անոր համար իր անու-  
նով բնակած այրն ալ Հռոմայր ըսուեցաւ :

Այս իշխանը հետը բերած էր Հռոմոց երկ-  
րէն Քրիստոսի խաչափայտին կտոր մը,  
որ ըսուեցաւ Հռոմայրի արքայ Նշան, որով  
չատ հրաչք կ'ըլլային : Նոյն անգը խաչը  
Հռոմայրի անունով փանք մը շինեց Չա-  
քարիա սպարապարը 1188ին :

186. Սրտահան և Չաւախք զաւառներ  
Րուն մրայ գիտելիք : — Սրտահան զաւա-  
ռին մէջ երևելի են Սրտահան և Ծուկոյ  
գիւղաքաղաքները, զորոնք շինեց Յաւա-  
խոս Մցխեթոսին որդին : — Իսկ Չա-  
ւախք զաւառին մէջ որոյ անունը ելած է  
Մցխեթոսին Յաւախոս որդւոյն անունէն,  
կը յիշուին Սկոտորի գեղը, ուսկից էր կի-  
րին Արայ կաթողիկոսը :

Ախալ բաղար, որ Արայ լեզուով ըսել է  
Նար բաղար, շատ բաղմամարդ ու ծանկած  
բաղար էր, երբ 1065ին Սլիփաղան սաս-  
տիկ սլատերազմով առաւ, ու մէջը սոսկա-  
լի Չարդ ընելով թարլեց բաղբին հարստու-  
թիւնը ու շատ մարդ գերի տարաւ :

Կը յիշուին նաև Դիլեկե և Խոզգալիք գե-  
ղերը :

187. Գուգարք նահանգին մէջ յիշուած

ուրիշ տեղերը : — Գուգարք նահանգին մէջ կ'իյնան , Գմանիք կամ Գառնանիք քաղաքը , Գագ անուանի բերդը , որոյ ծայրը սուրբն Մեսրոպ եկեղեցի մը շինեց և մէջը խաչ մը տնկեց որ կ'անուանէր սրբոյն Սարգսի անունովը , ուսկից շատ հրաշքներ կ'ըլլային : Խոնակ կամ Խոռնակ հին բերդաքաղաքը Կուր գետոյն քով Գուգարք նահանգին ծայրը , գոր շինեց Քարթլաւո Հայկայ եղբայրը , որ Հունարակերտին մօտ էր , կամ Թէ նոյն իսկ Պղնձահակք աւանը , Յուրտաւ քաղաքը , և այլն :

## Գ Լ ՈՒ Խ Ժ Ը .

### Ժ Գ . Տայք .

188 . Տայք նահանգին վրայ դիտելիք : — Տայք նահանգը կ'իյնայ Գուգարաց արեւմտեան կողմը . երկիրը անտառային լեռնոտ և պտղաբեր է . բերքերուն մէջ առանձին կը յիշուին աղտոր (սօմազ) , Թուզ , նուռ , սերկեխ , նուշ և այլն : Տայք նահանգին մէջ պատսպարելու համար ամուր տեղեր շատ կան , և երկիրը բերդերով լեցուն է , անոր համար Խորենացին բերդերով և ամրոցներով շինած է կ'ըսէ Տայք նահանգը : Երկայն ատեն Վրաց ձեռքն ընկաւ այս նահանգը , նաև ինչուան վեշտասաներորդ

դարուն ատենները , որուն 1580ին Տաճկը-  
ները տիրեցին :

189 . Տայք նահանգին գաւառները : —  
Տայք ինն գաւառ ունէր . որ են կոդ , Բեր-  
դաց փոք , Պարտիզաց փոք , Ճակատք կամ  
Ճակք , Բոշխա , Ոքադէ , Ազորդ , Կասիոք և  
Ասեաց փոք :

190 . Տայք նահանգին մէջ յիշուած տե-  
ղերը : — Արահեղ գեղ՝ ուսկից էր Գիւտ  
կաթողիկոս , Զեւակս և Վարդաշէն գեղերը ,  
Երախանի բերդը , Թոշխարս կամ Թոշարս  
անառիկ բերդը ճորտիս գետոյն վրայ շի-  
նած . Ոշխտիք բերդաքաղաքը , որ է Օլթի .  
և Հառաձիչ քաղաքն . Մամրոռան աւանը  
որ հիմայ Նառիման կ'ըստի . Իշխանաց գե-  
ղը , որոյ մօտիկ է Սաւցիսէ , որ վրացերէն  
ըսել է Իրեք բերդ , և շինեց Վրաց երկրին  
մէջ մեր Սմբատ Բիրատեան Արտաշէս Բին  
սպարապետը հիւսիսային ազգերուն ու  
Վրաց յաղթելով , ու մէջը պահապան զօրք  
դրաւ : — Տայոց մասն կ'երևայ Ախլցիսա ,  
զոր Վրացիք շինած են , և կ'ըսեն իրենք  
Ախալցիսէ , որ ըսել է Նոր բերդ :

Տայոց նահանգին մէջ կ'իյնայ Խտորջուր  
ըսուած երկիրն ալ , որ Համամաշէնէն օ-  
րուան մը ճամբայ հեռու է :

ԳԼՈՒԽ ԺԹ.

ԺԵ. Այրարատ.

191. Այրարատ նահանգին անունը — Այս հռչակաւոր նահանգին անունը ելած է Արայ Հայկազն նահապետին անունէն, որ նախ գրուեցաւ այն դաշտին վրայ ուր Արայ Շամիրամայ հետ պատերազմելով ընկաւ մեռաւ, և ետքը դաշտին անունէն բոլոր նահանգն ալ Այրարատ կամ Այրարատ ըսուեցաւ: Այս աշխարհը Հայաստանի մէկալ նահանգներուն մէջ տեղը իյնալուն համար, Միջոց աշխարհի և Միջնաշխարհ կը կոչի, որ Յունաց և Հռովմայեցոց այնչափ ծանօթ է: Իրենց սահմանէն հետոս ըլլալուն համար:

192. Երկրին բարեբերութիւնը: — Երկիրը խիստ բարեբեր է և սլարարտ. ամենայն տեսակ բոյս, արմտիք, և հոտաւետ ծաղիկներ ու պտուղներ կը բուսցընէ, անոր համար ամենաբոյս, ամենալի և ամենազիւտ ածականներով և ուրիշ ասոնց նմաններով մեր մատենագիրները կը գովեն այս նահանգը: Կը գանձի մէջը ոսկիի, արծրթի, պղնձի և պատուական քարերու հանքեր, որդան կարմիր ըսուած ճճին՝ որ կը ծնանի բոյսերու տերեւներուն վրայ, ուսկից

ազնիւ ծիրանեղոյն կարմիր ներկ կ'ըլլայ :  
Կենդանիներէն կը գտնուի ջիւռ , վայրի այծ ,  
եղջերու , վարաղ , կաքաւ , սալամբ , կա-  
րապ , սաղ , և ուրիշ տեսակ տեսակ ընտա-  
նի և որսի կենդանիներ և թռչուններ : Մէ-  
ջէն կ'անցնի Երասխ գետը և ուրիշ մանր  
գետակներ . ունի ընդարձակ դաշտեր և

193 . Այրարատ նահանգին վրայ պատ-  
մական գիտելիք : — Ինչպէս որ հին ստան  
հայկազուն նահապետաց և թագաւորաց  
ընակարան էր այս նահանգը , որով Սուրբ  
Գիրք Այրարատ կ'անուանէին զՀայաս-  
տան , այսպէս ալ Արշակունեաց ստան ,  
ուր միայն թագաւորը կը բնակէր իր մէկ  
որդու վր մէկական , որ իրեն կը յաջորդէր :  
անոր համար այս Այրարատ նահանգը կա-  
րուած քաղաքաց կ'ըսուէր , ուր Արշակու-  
նեաց ստան հինգ թագաւորանիստ քաղաք-  
ներ շինուած են :

194 . Այրարատ նահանգին գաւառնե-  
րը : — Խորենացի քսան գաւառ կը բաժ-  
նուի կ'ըսէ Այրարատ , ու սասնուիք կը  
դնէ , որ են Բասեան , Գարեղեանք , Աքե-  
ղեանք , Վանեռուիք կամ Հառուիք , Արշա-  
րուիք , Բագրեանք , Ծաղկոտն , Եիրակ , Վա-  
նանք , Արագածոտն , Ճակատք , Մասեաց-  
ոտն , Կոգովիտ , Աշոցք , Նիգ , Կոտայք ,  
Մագազ , Վարաժնուիք , Ոստանն Գրեւայ  
միւնչև ցՇարուր : Ոմանք այս վերջին գաւառ

որ երկու կը բաժնեն այսպէս. Ռատանն և Դղւնայ քաղաքն միևեկ, ցՇարուր, որով կ'ըլլայ քսան դաւառ, ոմանք ալ Շարուրը զատ դաւառ կը գնեն:

**Ա. Բասւսան.**

195. Բասեան դաւառին վրայ զիտելիք: — Բասեան դաւառը առաջ աւելի ընդարձակ էր. մէջէն կ'անցնի Երասխ գետը, որ երկու մաս կը բաժնէ զդաւառը. մէկ մասը կ'ըսուի Անխայտ և վերին Բասւսան, վառելու փայտ ամենեկին չունենալուն համար, իսկ մէկայ մասը Ստորին Բասւսան: Երբոր Արշակ Աին առնն Բուլղարի կողմէն Հայաստան գաղթական եկաւ վ զնդոր վնդայ առաջնորդութեամբը, Արշակ բնակեցուց զիրենք Անխայտ և վերին Բասեան ըսուած տեղը, որ իրենց վունդ առաջնորդին անունովը կոչեցաւ վանանդ, և անկէ ետքը զատ զաւառ եղաւ:

Երկիրը դուր ըլլալով շատ պտղաբեր է:

196. Բասեան դաւառին մէջ յիշուած տեղերը: — Որդորոշ գեղ, ուսկից ելած է Որդունի ցեղին անունը, նախ հոս բնակելուն համար: — Դու գեղ Որդորու գեղին մօտ, և շինուած է Արծարսդրերք ըսուած դաշտին մէջ, ուր շատ աղբիւրներ կը բխին, երկուքն ալ Կարնոյ սահմանին մօտ են: Վաղարշապատ գոր շինեց վաղարշ թագաւորը, Այրարատոյ ձմերոցը երթալու ա-

տեն, հոն տեղը ճամբուն վրայ մայրը զին-  
քը ծնանելուն համար, որ կ'իյնայ Մուրց  
գետոյն Երասխայ հետ խառնուելու տեղը :  
Այս քաղաքը Թուրքերը կործանեցին որ  
հիմա աւերակ է, և քովը սլզաի գեղ մը կայ  
Քեօիքիւ քեօյի ըսուած :

Պրոկոպիոս Բասեան զաւառին մէջ կը  
յիչէ Ղևոնդապոլիս անունով քաղաք մը, որ  
կտրքը Յուստինիանոս կայսեր անունովը ը-  
սուեր է Յուստինիանոսապոլիս, որ նոյն կ'ե-  
րևի հիմակուան Հասանդաշա քաղքին հետ,  
որ ամուր բերդ ունի և չորս կողմը պարսպով  
պատած է : Այս քաղքիս մօտ է եօթն կա-  
մարով շինած քարաշէն անուանի կամուր-  
ջը Երասխ գետոյն վրայ, որոյ հիմը կա-  
ւանդեն թէ հայ հովիւ մը ձգելուն համար  
Զօպակ քեօիքիւսիւ ըսուած է :

Անուանի են Բասեան զաւառին մէջ Աշ-  
կաւի կամ Օկուի բաղամամարդ աւանը Հա-  
սանդաշայի մօտ Միրանեաց լեռան ստո-  
րտար շինած : — Մժևկերտ աւանը, Բողբերդ  
ամրոց, Աշևիկ անառիկ բերդ, Վաղաւեր,  
Գուճաճոր, Այվար և Սաչքորա գեղերը :

Բ. Գաբեղեանք. — Գ. Աբեղեանք.

197. Գաբեղեանք և Աբեղեանք զաւառ-  
ները : — Այս զաւառներուն անունը ելած  
է նոյն ցեղերուն առաջին նախարարներուն  
անունէն, որ կ'ըսուէին Գաբաղ և Աբեղ,

ուսկից ելան Գաբրէլէն և Արթէլէն նախարարութիւնները : յարմար ըստ ինչի որ Գաբրէլեանք հաւատին մէջ կը յիշուի Վիշապաճոր ըսուած տեղը , ուր շատ օճեր և վիշապներ կային , և ետքերը ըսուեցաւ Գազանաճակք և թարրոյ վանք՝ սուրբն թաթուր ճգնաւորը հոն բնակելուն համար :

Գ . Արշարունիք .

198 . Արշարունիք դաւաճը : — Այս դաւաճը Այրարատայ երևելի և ծաղկած դաւաճներէն մէկն է , որ սուջի բերան կ'ըսուէր Երասխաճոր , և ետքը Արշարունիք կամ սարականին անունովը Արշարունիք կոչեցաւ , որուն տուաւ Տրդատ Երասխաճոր դաւաճը : Ատեն անցնելէն ետև Արշակ Բ կամնարական ցեղը բոլոր ջարդել տուաւ , ու երկիրը տէրութեան զրաւեց . բայց ետքէն Արշարի որդւոյն Սպանդարատին ձեռքովը՝ որ վասիեր էր այս կոտորածէն , նորէն բազմացաւ Արշարունեաց ցեղը , որ եօթներորդ դարուն մէջ շատ ծաղկած էր գիտութեան կողմանէ , և երևելի էր Արշարունեաց վարդապետարանը : Աթերորդ դարուն վերջերը Բագրատունիք զնեցին այս դաւաճը կամնարական ցեղէն զնելով : Արշարունիք դաւաճին եկեղեցական իշխանութիւնը առաջ Բագրևանդայ հետ մէկ էր ինչուան Մովսէս Խորենացւոյն ասուն ,

բայր երբոր խորենացին մեռաւ, Արշարու-  
նեաց մէջ ալ զատ եպիսկոպոս նստաւ :

199. Արշարունեաց մէջ յիշուած երևելի  
քաղաքները : — Երուանդաշատ քաղաք ,  
գոր շինեց Երուանդ Բ. և կրսուի նաև Ե-  
րուանդաքար , քարածայր գիրքին համար ,  
և չորս դին սկստած են Երասխ և Ախու-  
րեան գետերը : Երուանդ գիրքին ամրու-  
թեանը վրայ գոհ չըլլալով , բլրոյն չորս  
կողմը սարսալով սկստեց , և վրան ալ բերդ  
մը շինեց : Բլրոյն վարէն ինչուան բերդին  
դուռը երկըթէ երկու ճամբայ շինեց , մէկը  
ցորեկուան համար , մէկալը ծածոկ որո-  
գայթներով շինած գիշերուան համար , որ-  
պէս զի թէ որ մէկը թագաւորը գաւելու  
համար գիշեր ատեն անկէ վեր ելլէ , որո-  
գայթի մէջ բռնուի : Բաց ասկէ բլրոյն ծայ-  
րէն ինչուան յատակը ջրոյն երևսին հաւա-  
սար այլևայլ տեղ ծակել տուաւ քարեր կըտ-  
րելով , և անով դէպ ՚ի վեր ջուր բերել ար-  
ւաւ քաղքին մէջ , որով պաշարման ատեն  
ալ բնակիչները ջրոյ նեղութիւն չէին քա-  
չեր : Երուանդ այս քաղքին շինութիւնը  
լմընցընելէն ետև , Արմաիրէն արքունիքը  
հոս փոխեց , քաղքին հրեայ բնակիչներու  
վը մէկտեղ : Բայց իրեն մահուանէն ետև  
Արտաշէս Բ. արքունիքը Երուանդաշատ  
քաղքէն Արտաշատ փոխեց Հրեաներովը  
ու քաղքին ամէն զարգերովը մէկտեղ : Այս  
Երուանդաշատ քաղաքը Արշակ երկրոր-  
դին ատեն Պարսիկք բոլորովին կործանե-

ցին, ու մէջէն 20,000 տուն հայ ու 30,000 տուն հրեայ դերի տարին, ինչպէս որ կը պատմէ Բուզանդ, որ քիչ մը չափազանց կ'երևի, մանաւանդ որ Արտաշէս Բ. Երուանդաշատէն Հրէից մեծ մասը Արտաշատ տարաւ: — Երուանդաշատ քաղաքը հիմա աւերակ է և կ'ըսուի Գարս գալէ:

Երուանդաշատ քաղաք, զոր նոյնպէս Երուանդ երկրորդ շինեց, գեղեցիկ ու զըւարճալի հովտի մը մէջ, պարտէզներով ու ծաղկոցներով զարդարած, Ախուրեան գետոյն մէկալ կողմը Երուանդաշատին դիմաց: Այս քաղաքը Արտաշէս երկրորդէն Մարտէտ կոչեցաւ. վասն զի Արտաշէս երբոր զօրքով եկաւ այս քաղքին քով, հրամայեց իր զօրքերուն մէկ բերնով պռուալ մար ամառ, որ ըսել է Մարր եկաւ. որովհետեւ Երուանդ զԱրտաշէսը ու անոր Արմբատ զօրավարը ծաղրելու համար Մար (Վիրտ) անունը կու տար անոնց:

Բագարան քաղաք, զոր նոյնպէս Երուանդ երկրորդ շինեց Ախուրեան գետոյն վրան, և Երուանդաշատին նման էր, բայց աւելի պզտիկ: Երուանդ մէջը շատ կուատուններ շինեց, և Արմաւիրէն բոլոր կուռքերը հոս բերաւ, անոր համար ալ քաղքին անունը Բագարան կոչեցաւ, այսինքն Բագինեկոտ տեղ կամ կուռքերու քաղաք, որ ունէր նաև ամուր բերդ. հոս իր Երուանդ եղբայրը բըրմապետ դրաւ: — Բագրատունեաց առջի թագաւորներուն ատեն հոս էր արքունիքն և թագաւորաց գերեզմանատունը:

Արտագերս բերդ , որ Հայաստանի ամուր բերդերէն մէկն է , զոր Արշակ Բ հիմնովին նորոգեց . բայց նոյն Արշակ երկրորդին ատեն Շապուհ Պարսից թագաւորին զօրքերը տիրեցին բերդին մէջի բնակչաց անձնատուր ըլլալովը , ուր Փառանձեմ Արշակայ կինը ապաւինած էր իր ամէն զանձերովը մէկտեղ , զոր պարսիկք ինը օր շարունակ կրեցին :

Կապոյտ բերդ , որ շատ ամուր և անառիկ էր , Վարդան աշխարհազիրը նոյն կը սեպէ Արտագերս բերդին հետ :

Երուանդափան , Ախուրեան գետոյն քով Երուանդաշատէն 40 մղոնի չափ հեռու , ուր Արտաշէս Բ յաղթեց Երուանդին ու հալածեց զինքը , և իր բանակին տեղը անուանեց Մարաց մարգ , վասն զի Մարաց և Պարսից զօրքերով պատերազմեցաւ Երուանդայ հետ :

Ծնկոյց անտառ , զոր Երուանդ Բ տնկեց Երասխայ մօտ և չորս կողմը պատ քաջեց , և մէջը տեսակ տեսակ որսոյ կենդանիներով լեցուց , ինչպէս են եղջերու , եղն , վայրի այծ , վարազ , վայրի էշ , և այլն :

Այս քաղաքներէն դատ կը յիշուին Արշարունեաց գաւառին մէջ Կաղզուան քաղաքը Գաբեղեանք գաւառին սահմանակից : Զարեհանի և Կալոց գեղերը , Շիրխան գեղը՝ ուր Աբաս Կարուց թագաւորը տասներորդ դարուն մէջ կրօնաւորաց վանք մը շինեց :

200. Արշարունիք գաւառին մէջ յիշուած երեւելի վանքերը : — Կապրջաձոր վանք , զոր շինեցին տասներորդ դարուն մէջ Յունաց երկրէն հալածուած հայ կրօնաւորները , և մէջը կային 300ի չափ միաբանք սրբոյն Բարսղի սահմանադրութեամբը : — Կապրոտաքար վանք , որ շինուեցաւ տասներորդ դարուն մէջ , և կ'իյնայ Կապոյտ բերդին մօտ : — Վարդիկ հայր ըսուած ուխտը կամ վանքը , որ կօթներորդ դարուն և երկրքտասաներորդ դարուն անուանի վարդապետարան էր , և կ'իյնայ Կաղզուան քաղքին մօտ : Այս վանքին մէջ կը սրահուէր Գևտարգել նշանը : — Սահկա Քրիստոսի խաչափայտին մէկ մեծ կտորն էր , զոր ստորն Սեղբեսարոս Հռոմայ հայրապետը և Կոստանդիանոս Թագաւորը Գրիգոր Լուսաւորչին ու Տրդատ Թագաւորին տուին : Կը գրուցուի թէ Գրիգոր Լուսարիչ այս խաչով խաչակնքելով հիւսիսային ազգերուն բանակը , խորտակեց զիրենք , և թէ մեծն Ներսէս հետը տարաւ իր աստորուած կզզին , և թէ Պետրոս Գետազարձ այս խաչով գետոյն ջուրը խաչակընքելով արդիւնց ջրոյն ընթացքը , անոր համար ըսուեցաւ Գևտարգել նշան : 1590ին ատենները երբոր Վէնկթիմուրին զօրքերը Հայաստան տակն ու վրայ կ'ընէին , Վարդիկ հայր ըսուած վանքէն երկու կրօնաւոր վախնալով որ չըլլայ թէ գետարգել նշանը թշնամեաց ձեռքը անցնի , առին վանքէն

ու տարին ծածուկ տեղ մը սղահեցին , և իրենք ետ դառնալու ատեն թշնամիներէն սպաննուեցան , որով անյայտացաւ անկէց ետքը խաչին տեղը : Ժամոճայա՞ մշտնապէս զոյս ցնադարկն ժայշ ժՅՈՇ միլլայի զՅՅն մ . զի  
Ե. Բագրեանդ . իրսցում . միտ  
մնայաւ արքայութիւն զո , ցնաի դարստարարար

201 . Բագրեանդ դաւառ : — Բագրեանդ դաւառը հիմա կ'ըսուի Սըաշկերտ վաղարշակերտ քաղքին անունովը : Երեւելի է մէջը Նպատ լեռը , որոյ քովն է Չիրաւ դաշտը , որ եղաւ Պապայ ատեն Յունաց օգնութեամբը Հայոց Մեհրութանայ դէմը : Բա՞ անուանի սպատերազմը , որոյ ատեն մեծն Ներսէս Նպատ լեռին վրայ ելած բազկատարած կ'աղօթէր , ինչուան որ Պարսիկք չարաչար յաղթուեցան , և թաղաւորեց Պապ :

202 . Բագրեանդ դաւառին երեւելի քաղաքները : — վաղարշակերտ բերդաքաղաքը , զոր շինեց վաղարշ թաղաւորը Սուկաէտ կամ Զրարաչխ լեռան ստորոտը , զուարճալի ու ջրաբովս տեղ :

Բագրեան մեծ ատենը , որ կ'ըսուի նաև Բագրեաց աշակ և Բագրեան ու պարթևաց լեզուով Գիցաշակ , շինուած էր Նպատ լեռին վրայ , որոյ ոտքէն կ'անցնի Նփրաւ դետը : Հեթանոսութեան ատեն այս աւանին մէջ երեւելի էր Մաժան քրմապետին դերեզմանը , որ վերջին Տիգրանայ եղբայրն էր , և Տիգրան վրան բազին մը շինեց և հիւրըն-

կալութեան իջևան մը, որպէս զի անցնող դարձողները զոհերէն վայելեն: Մեծն վազարչ Տիգրանայ որդին հոս մեծ տօն հաստատեց տարւոյն սկիզբը նաւասարդին առջի օրը: Բազմին էր Սրանադդայ վանատրի անունով, որ էր նաև հիւրընկալութեան աստուած: Իսկ տօնը կը կատարուէր նոր տարւոյն և նոր պատուհներուն համար, և կ'ըսուէր ամանորաբեր տօն:

Չարեհաւան քաղաքը, որ կ'ըսուի նաև Չարեհիւան, շինուած էր Բազուանի մօտ Ծաղկոտն գաւառին սահմանակից: Այս քաղաքը Շապուհ Բ Պարսից թագաւորը մեր Սրչակ Բին ատեն առաւ ու հիմանց կործանեց ու մէջէն 5000 տուն հայ և 8000 տուն հրեայ դերի տարաւ, բայց ետքէն նորէն նորոգուեցաւ այս քաղաքը:

Բաց ասոնցմէ երևելի են Բազրեանդ գաւառին մէջ վարդանակերտ տաւնը Երասխայ մօտ, Աշտարակք, Արաւան, Արծակ, Բերդկոշն, Եղեգեակ, Տիրաւիձ, Չրաւ դեղերը, և Բրուր դեղը՝ ուր վախճանեցաւ սուրբն Սահակ Հայրապետ և մարմինը Տարօն գաւառին Աշտիշատ դեղը թաղեցին:

## Գ. Ծաղկոտն.

203. Ծաղկոտն գաւառը: — Ծաղկոտն կամ Ծաղկէոտն և կամ Ծաղկոտ գաւառը կ'իջնայ Ծաղկէ լեռին քովը Բազրեանդ գաւառին սահմանակից: Օղը աղէկ ու զո-

վացուցիչ ըլլալուն համար, ամարանոցներ խիստ շատ կային հոս, ուր գիւղաղնացութեան կ'երթային: Այս գաւառին մէջն է Շահապիխան լեռը որոյ կենդանիներով լեցուն, ուր թաղաւորազունք ստէպ որսի կ'ելլէին. հոս էր Արշակունեաց ատեն զօրաց կայանը կամ բանակետղը, ուր կը բնակէր թաղաւորը Բաղուան գեղին ամանորարեր ասոնին ատեն:

Ծագկոտան գաւառին մէջ երեւելի էին Անգղ գիւղաքաղաքը ամուր բերդով, կատանքն գեղը, և այլն:

### Է. Ը. Երասի:

204. Երասի գաւառին վրայ գիտելիք: — Այս գաւառին անունը ելած է Շարայէն որ Արմայիս նահապետին որդին էր, և խիստ շատակեր և բազմածին ըլլալուն համար հայրը զինքը հոս խաւրեց, որ կ'իյնայ Երասխայ հիւսիսակողմը Ախուրեան գետին երկու դին, երկիրը խիստ բարեբեր և շատաջուր ըլլալուն համար: Այս գաւառը ետքերը, ըստ մասին, Չորոյ գետ կոչուած է:

Այս գաւառը մեծին Տրդատայ ատենէն 'ի վեր կամսարականաց ձեռքն էր, զոր թէպէտ և Արշակ Բ յափշտակեց, բայց ետքը նորէն անոնց ձեռքը անցաւ: Սակայն ութերորդ դարուն մէջ Սմբատ Բագրատունի իշխանին Աշոտ և Շապուհ որդիքը շատ զանձով զնեցին Արշարունեաց գաւառին հետ

մէկտեղ կամնարականաց ցեղէն և անկէց  
ետքը Ֆազրատունեաց ձևւքը մնաց :  
205. Շիրակ գաւառին երևելի քաղաք-  
ները : — Անի հռչակաւոր քաղաք , որ ա-  
ռաջ Արշակունեաց ատեն պղտի բերդ մի  
էր , և ետքը Աշոտ Գ Ողորմած ցած պա-  
րըստով մը պատեց , և իրեն որդին Արմ-  
բատ Բ աշխարհակալ թագաւորը (980ին)  
չատ ընդարձակեց , ու չորս կողմը ուրիշ  
ահագին պարսպով մը պատեց , ու հաս-  
ցուց ինչուան Ախուրեան գետը , որով առ-  
ջի Անին եղաւ միջնաբերդ : Անկէց ետքը  
սկսաւ քաղաքը շատ ծաղկիլ և հարըստա-  
նալ , ու բնակչաց թիւն ալ խիտ շատցաւ ,  
որ հաւանականաբար միլիոնը կ'անցնէր :  
Մէջը հազար ու մէկ եկեղեցի կար կ'ըսէին ,  
անոնց բազմութիւնը ցուցընելով , որոց  
մէջ անուանի էր կարողիկէն , զոր մեծն  
Սմբատ սկսաւ շինել , բայց մահը վրայ հաս-  
նելով չկրցաւ լմնցընել , ու ետքը Գագիկ  
Աին կատրամիդէ բարեպաշտ թագուհին  
լմրնցուց : Այս կաթողիկէին մէջ անուա-  
նի էր մեծագին արծըթէ խաչը մարդու հա-  
սակաւ , որ գմբէթին վրայ տնկուած էր ,  
բիւրեղէ մեծ հազուադիտ ջահը՝ տասուեր-  
կու լիտր ծանրութեամբ , զոր Սմբատ Հնդ-  
կաստանէն բերել տուած էր , և այս եր-  
կուքն Անի քաղքին Ալիապլանէն առնուե-  
լու ատեն զինուոր մը գետինը ձգեց ու խոր-  
տակեց : Անուանի էր Անի քաղքին մէջ  
նաև Գագիկ Աին շինած Գրիգոր Լուսա-

տորչի եկեղեցին, ու Ապղղարիայ մարտաջախ-  
տին (1036ին) շինած սուրբ Փրկիչը: — Այս  
քաղաքը Բագրատունեաց ատեն թագաու-  
րանիստ ու կաթողիկոսանիստ քաղաք էր,  
գոր Յովհաննէս թագաւորը կոտակա Յու-  
նաց կայսեր թողուց, և Փաղիկ Բին ա-  
տեն 1046ին Յոյները տիրեցին, բռնու-  
թեամբ թագաւորը իր տէրութենէն հրա-  
ժարեցընելով: — Ալփապլան առաւ քա-  
ղաքս Յունաց ձեռքէն ու մէջը շատ կոտո-  
րած և աւեր ըրաւ. իրիք անգամ տիրեցին  
նաև Վիրք այս քաղքին. բայց վերջը Չար-  
մաղան Թաթարներուն խանը 1240ին չա-  
րաչար տրեց. ուստի հիմա այլևայլ յար-  
ձակումներէ ու երկրաչարժներէ բոլոր ան-  
րնակ մնացած է, որոյ տեքակաները յայտ-  
նի կը ցուցընեն իր առջի մեծութիւնը և  
փառաւորութիւնը, որ աշխարհիս երևելի  
քաղաքներէն մէկը եղաւ:

Երազգասորք գիւղաքաղաք, որ ետքը ը-  
ստեցաւ Շիրակաշան ու ռամկօրէն Շիրակ-  
փան Անիին մօտ Ախուրեան գետոյն քով:  
Այս քաղքիս մէջ շատ նորոգութիւն ըրաւ  
Սմբատ Ա, ու սուրբ Փրկիչ կամ Ամենա-  
փրկիչ անունով փառաւոր եկեղեցի մը շի-  
նեց (897ին) ու աթոռն ալ հոս փոխադրեց,  
որ կը թագաւորէին առջի Բագրատունի  
թագաւորները ինչուան Սմբատ Բ, որ Ա-  
նոյ մէջ շատ նորոգութիւններ ընելով ա-  
թոռն ալ հոն փոխադրեց:

Մրեն գիւղաքաղաք Ախուրեան գետոյն

մօտ, զիրքին կողմանէ շատ զուարճալի է և այգիներով լեցուն, անոր համար Բագրատունեաց ատեն թագաւորներու և մեծամեծներու ամարանոց եղած էր: Անուանի էր մէջի կաթողիկէն, զոր շիներ էր Դաւիթ Սահառունի եօթներորդ դարուն մէջ:

Խծկաւեր կամ Խծկօեր գեղ, ուր է սրբոյն Սարգսի ուխտը, զոր շինեց Վեստն Սարգիս մետասաներորդ դարուն մէջ, քովէքով հինգ եկեղեցիներ, որոնք ինչուան հիմա ամբողջ կեցան են, և գեղն ալ կ'ըստի Պէշ քիլիսէ:

Արգիևա գիւղաքաղաք, ուր Բագրատունեաց ժամանակ քիչ մը ատեն կաթողիկոսները նստեցան: Անուանի է մէջի կաթողիկէն զոր շինեց Խաչիկ կաթողիկոսը տասներորդ դարուն մէջ, Տրդատ ճարտարապետին ձեռքովը:

Ծառաքար բերդաքաղաք, որ առաջ վանք էր և ետքը Վեստն Սարգիս պարսպով պատեց և բերդ ըրա:

206. Նիրակայ մէջ յիշուած երևելի վանքերը: — Հռոմոսի կամ Հռոմոց հրուշակաւոր վանքը, զոր շինեց Յովհաննէս անունով մէկը տասներորդ դարուն մէջ Աբաս թագաւորին ատեն, ուր նոյն ժամանակը եկան բնակեցան Յունաց երկրէն հալածանքով փախած հայ կրօնաւորները, և իրենց անունովը ըսուեցաւ Հռոմոսի վանք. որոնք ամէն անցնող դարձողները կ'ընդունէին ու կը կերակրէին և կը հանգչեցընէին

իրենց վանքը : Այս վանքը հիմա խօշափանք կ'ըսուի , քովի խօշուն ըսուած աշտարակներուն անուանովը . և անուանի է մէջի սուրբ Յովնանեն ըսուած եկեղեցին , զոր շինեց Յովհաննէս Բագրատունի թագաւորը 1050ին , որոյ մօտ է սրբոյն Գէորգայ եկեղեցին , զոր շինեց Գաղիկ Ա , և մէջը թաղուած են Բագրատունի թագաւորներէն ոմանք , որոցմէ Աշոտ թագաւորին զերեզմանը զեռ ինչուան հիմա կեցած է :

Բագնայր վանք Անուոյ մօտ , անոր արևմըտեան կողմը , զոր շինեց Սմբատ Մագիստրոս (1010) . անուանի է մէջի սուրբ Աստուածածնի փառաւոր եկեղեցին :

Անուանի են նաև Մարտաշէն , Կաւրջաձոր , Հարիձայ վանքերը և Գպրեվանք՝ զոր Յունաց երկրէն փախած կրօնաւորները աւելի ընդարձակեցին , անոր համար մատենադիրներէն ոմանք այս վանքին շինութիւնը անոնց կուտան :

### Ը. Վանանդ .

207 . Վանանդ դաւառին վրայ գիտելիք : — Այս դաւառին անունը ելած է Վունդ Բուլղարին անունէն , որ Արշակունեաց Ա Արշակին ատեն կովկասային լեռներուն կողմերէն գաղթական եկաւ , ու բնակեցաւ այս դաւառին մէջ , որ առաջուց Անփայտ ու Վերիե Բասեաւ կ'ըսուէր : Երկիրը խիստ պտղաբեր է և բերրի . բնակիչները կովկաս

սու կողմերէն եկած ըլլալուն համար աւազակաբարոյ մարդիկ էին : Տասներորդ դարուն, այսինքն 960ին, Կարս քաղքին մէջ զատ թագաւորութիւն ունեցան, որ կ'ըսուէր Կարուզ քագաշորաբիւն, որ քիչ ատեն աւեց, և ետեւէ ետե իրեք թագաւոր նստան Բագրատունեաց ցեղէն, այսինքն Մուշեղ, տիեզերակալ Սմբատ Բին հօրեղբայրը, Աբաս՝ Մուշեղին որդին, որ երկրին մէջէն աւազակութիւնը վերցուց, և Վազիկ որ վերջին թագաւորը եղաւ :

208. Վանանդ զաւառին երևելի քաղաքները : — Կարս կամ Կարուզ քաղաք, Ախուրեան գետոյն մէկ ճիւղին վրայ շինած, որ ամուր բերդ ունի կրկին պարսպով պատած, և ատեն մը շատ հարուստ ու վաճառաչահ քաղաք էր, որոյ միջնաբերդէն ինչուան գետոյն եզերքը գետնափոր ճամբայ կար, որ հիմա արուած է : Երևելի է մէջը Աբաս թագաւորին տասներորդ դարուն մէջ շինած կաթուղիէն, որ է մայր եկեղեցին : Պարսիկները 1050ին Քրիստոսի յայտնութեան տօնին օրը վազեցին յանկարծակի այս քաղքին վրայ, և ժողովուրդը անպարաստ ուրախութեան մէջ գտնելով տիրեցին քաղքին, և մեծ ջարդ և աւեր ըրին մէջը, որով քաղաքացւոց ուրախութեան տօնը ողբ ու վայնասուն դարձաւ : Այս աւերածէն ետե Վազիկ Աբասեան թագաւորը որ հոն կը թագաւորէր, նորոգեց ու ամրացուց քաղաքը, բայց վերջը 1064ին ա-

տեն միտքը դնելով որ թշնամեաց ձեռքէն հանգստութիւն պիտի չգտնէ, իր տէրութիւնը ու կարս քաղաքը Վանանդ դաւառով մէկտեղ Յունաց կոստանդին Տուկիժ կայսեր տուաւ. ու անոնց տեղ Փոքր Հայքին մէջ առաւ Ծամնգաւ բերդը, Սմատիա, կոմանա ու Լարիսսա քաղաքները, և որքիչ 100 գեղ, իբրև իրեն կալուած, ու թողլով իր թագաւորութիւնը ելաւ զնաց բնակելու փոքր Հայոց կողմերը: Այս կարս քաղաքը 1240ին առաւ Չարմաղան թաթարաց խանը, ու մէջը անհնարին Չարզըրաւ: Կոյնպէս 1594ին առաւ Լէնկթիմուր խանը, ու բնակիչներուն շատը թրէանցոց:

Կարս քաղաքէն դատ երևելի են Վանանդ գաւառին մէջ Չարիչատ քաղաքը, որ Աղիովիտ գաւառին Չարիչատէն տարբեր է: — Դրաշպետ գեղը, Ռամսու գեղը՝ ուսկից էր Գիւտ կաթուղիկոսը, Իջաւանից գեղը՝ ուսկից էր սուրբն Ահոնդ երէց, և այլն:

Թ. Արագածոտն.

209. Արագածոտն գաւառը և մէջի երևելի քաղաքները: — Այս գաւառը որ շատ ջրարբի և պտղաբեր է, կ'իյնայ Արագած լեռին ստորոտը, և երկիրը Սմատունի նախարարութեան ձեռքն էր, անոր համար այս գաւառին եպիսկոպոսը կ'ըստի Սմատունեաց եպիսկոպոս:

Անուանի է մէջը Աշական կամ Օշական գեղը կամ բերդը, ուր թաղուած է սուրբն Մեսրոպ կամ Մաշտոց, և կ'իյնայ Վաղարշապատին մօտ: Այս գեղը Խոսրով Գ թագաւորը Վահան Ամատունիին տուաւ իրեն քաջութիւններուն փոխարէն. որոյ մէջ ծնաւ Յունաց Մօրիկ կայսրը՝ որ ազգաւ հայ էր, և ինչպէս որ կ'ըսէ Ասողիկ, կայսր ըլլալէն ետքն ալ միշտ կը հոգար իր Օշական գեղը:

Աղցք գեղ, ուր թաղեցին Անի կամ Կամախ բերդէն հանած թագաւորներուն ոսկորները:

Եղիվարդ գեղ, ուսկից էր Մովսէս Բ կաթողիկոսը, որ Հայոց առմարը նորոգեց:

Աշեակ աւանը, որ արքունի ձմերոց էր, և հիմա պզտի գեղ մի է:

Փարպի գեղ, ուսկից էր Ղազար պատմիչը, որ կը կոչուի Փարպեցի:

Երևելի են նաև Աշտարակ գեղը, Այուձ աւանը, Կարբի և Անքերդ գեղերը որ իբրև պզտի գաւառ կը յիշուին, Թուշիկ գեղը, Կոռաշ աւանը և այլն:

210. Արագածոտն գաւառին երևելի վանքերը: — Մուրթ Գրիգոր ըստած վանքը, որ մայրաքաղաք կ'անուանէր: Յոնակնոռ վանք կամ Յոնակավանք կամ Սիւղի վանք, ուր էր Քրիստոսի վարչամակը և աջ ձեռքին գամը, և սրբոյն Ստեփանոսի նախավկային աջ ձեռքը, և կ'իյնայ Կարբիին մօտ. Հրեշտակաբնակ ըստած անապատը,

ուր կար Քրիստոսի կենաց փայտին մէկ մեծ մասը, որ շատ հրաշքներ կ'ընէր օձէն զարնուողներուն, անոր համար կ'ըսուէր Յձահայած տալը նշան: Սաղմուախանք, և սրբոյն Գեորգայ վանքը 'ի Մուղնի:

### Ժ. Ճակատք.

211. Ճակատք գաւառ: — Այս գաւառին մէջ անուանի է Կողբ գիւղաքաղաքը, ուսկից էր Եզնիկ Կողբացի, և ունի աղահանքեր: Հոս Աշոտ սպարապետը Սմբատ Աին ատեն փառաւոր եկեղեցի մը շինեց: — Սոռմարի կամ Սոչրք Մարտի բերդաքաղաքը, զոր 1390ին ատենները առաւ Լէնկթիմուր և հիմնովին կործանեց:

### ԺԱ. Մասեացոտն.

212. Մասեացոտն գաւառ: — Մասեացոտն գաւառին մէջ որ Մասիս լեռին ստորոտը կ'իյնայ, կը յիշուի Ռշդեաց գեղը կամ բերդը, և Ակոռի մեծ գեղը, ուր Նոյ նահապետ նախ այգի տնկեց: Այս գեղը 1840ին Մասիս լեռին հրաբուխը բռնկելովը, անկէ ընկած քարերուն և մոխիրներուն տակ ծածկուեցաւ մէջի բնակիչներովը:

ՃԲ . Կոդովիտ .

213 . Կոդովիտ կամ Կոդայովիտ գաւառ :  
— Կոդովիտ կամ Կոդ գաւառը կ'իյնայ Մա-  
սիս լեռին կոնակը , և սահմանակից է  
Ծաղկոտն գաւառին : Այս գաւառը Բա-  
գրատունեաց ձեռքն էր , ուսկից ետքը ի-  
րենց արքունիքը Արշարունեաց երկիրը փո-  
խադրեցին , ստըկով նոյն երկիրը Կամսա-  
րական ցեղէն գնելով :

214 . Կոդովիտ գաւառին երևելի տեղե-  
րը : — Բազարան գեղը , զոր շինեց Սմբատ  
Բիրատեան Սրտաշէս Բին դայեակը ու  
սպարապետը , և Արշարունեաց Բազարան  
քաղքէն բերած գերիները հոս բնակեցը-  
նելուն համար գեղին անունն ալ Բազարան  
դրաւ :

Արշակաւան , զոր շինեց Արշակ Բ , և մէ-  
ջի բնակիչները շատցընելու համար հրա-  
ման հանեց որ ամէն չարագործ մարդիկ որ  
հոն ապաւինին՝ ազատին . ասով շուտ մը  
լեցուեցաւ քաղաքը ամէն տեսակ չարա-  
գործ մարդիկներով . բայց ետքէն մեծին  
Ներսեսի անէծքովը փոխադրական հիւան-  
դութիւն մը եկաւ , որով շատ հոգի մեռան .  
և նախարարներն ալ քաղքին վրայ ելլելով  
20,000 տուն բնակիչ ջարդեցին իրեք օ-  
րուան մէջ , և քաղաքն ալ կործանեցին , և  
միայն պղտի տղաքը խալըսեցին : Այս կո-  
տորածը լսելով մեծն Ներսէս , շուտ մը հա-

սաւ հոն տեղը ու տղաքը առաւ նախարարաց ձեռքէն , ու որթի ճիւղէ հիւսած կողովներու մէջ գնել տալով , խաւրեց մօտակայ գեղ մը , որ ետքը մեծնալով Որբք Ըսուեցաւ այս դիպուածին համար :

Դարոյնք կամ Դարօնք անառիկ բերդը , որ թաղուած են Բաղրատունեաց իշխաններէն շատը , և հիմա կ'ըսուի Պայեգիտ :

Երեւի են նաև Արծափ բերդը և Սարրափ գեղը :

### ԺԳ. Նիգ .

215 . Նիգ գաւառին մէջ յիշուած տեղերը : — Բջնի բերդաքաղաքը , ուսկից էր Գրիգոր Մազիատրոս , և շինուած է Հուրաստան գետակին քով , որ կ'ըսուի հիմա Բջնոյ գետ : — Փառածնակերտ և Եղիպատրոշ գեղեր :

Վանքերուն մէջ Երեւի են Թեղննիս վանքը , Մայրոց կամ Մայրոյ վանք , որոյ անունը Եզր կաթողիկոսը փոխելով Մայրոյ գով դրաւ , Յոհան աղանդապետը հոն բնակելուն համար , ուսկից ինքն ալ ըսուեցաւ Յոհան Մայրազումեցի : Այս գաւառին մէջ կ'իյնայ կեչառոշ կամ կեչառոշաց հռչակաւոր վանքը , զոր շինեց Ապիրատ անունով իշխան մը ԺԱ. դարուն մէջ , ուսկից էր Խաչատուր կեչառուեցին : Այս վանքը հիմա արուած է :

ԺԴ. Կոտայք.

216. Կոտայք գաւառին մէջ յիշուած անդերը: — Երևան քաղաքը, որ շինուած է Հրազդան գետոյն քով ու ամուր սլարս պով սլատած: 1670ին սաստիկ դետնաչարժէ մը մէջը 8000 հողի մեռան ու շատ չէն քեր կործանեցան: Այս երկրաչարժին ժամանակ կործանեցաւ նաև Գառնի գիւղաքաղաքը:

Արաւօնը կամ Արաւօն գեղ, որ կաթողիկոսարանին սեպհական կալուած էր, ուր Գառնի Ա. կաթողիկոսը փառաւոր եկեղեցի մը շինեց, և կաթողիկոսարանն ալ Գրունէն հոս փոխադրեց:

Չագ գեղ, ուր է Չագալանք ըսուած մեծնաստանը, և այլն:

ԺԵ. Վարաժնունիք.

217. Վարաժնունիք գաւառին վրայ գիտելիք: — Այս գաւառը կ'իյնայ Հրազդան գետոյն քով, և անունը ելած է Գեղամայ ցեղէն Վարժ անունով մարդէ մը, զոր Արտաշէս Ա. իր որդւոյն միջին Տիգրանին վարպետ դրաւ որ որսորդութիւն ու նետաձողութիւն սորվեցընէ. անոր անունէն ազգն ալ երկիրն ալ Վարաժնունիք ըսուեցան: Վարաժնունիք գաւառին մէջ կ'իյնայ Նետիս գիղը որ Հրազդան գետոյն վրայ շինուած

է. Յամաքարերդ և Ռևտամոյ գեղերը, և այլն: Վարամնունիք դաւառը հիմա կ'ըսուի Ծաղկունիք, Ծաղկունք գեղին անունէն որ այս դաւառին մէջ կ'իյնայ:

ԺԶ. Ռուսակն Դրենայ միևչև ցՇարուք.

218. Դրենայ դաւառին մէջ յիշուած տեղերը: — Դրենայ դաւառին մէջ որ կը ճըգուի ինչուան Շարուք դաշտը, երևելի է Դուին կամ Դալին քաղաքը որ սրարսկերէն բոլոր կը նշանակէ, որոյ մէջ թագաւորական արքունիք ըլլալուն համար կ'ըսուի Պարսից բառով ռուսակն Դուին: Մեր մատենագիրները երբեմն առանց Դուին քաղքին անունը տալու, Ռուսակ միայն կ'ըսեն, ու Դուին քաղաքը կ'իմանան, ուր կը նշատէին վերջի ատենները մարդպանները ու Հաղարացուոց ամիրաները: Այս քաղաքը շինուած է Մեծամօր վտակին քով, որոյ մէջ Խոսրով Բ չորրորդ դարուն թագաւորական սալատ շինեց ու շատ նորոգութիւններ ըրաւ, կամ թէ ինչպէս ոմանք կը կարծեն, հիմնովին ինքը շինեց, և իր արքունիքը Արտաշատէն օդոյն գէշութեանը պատճառաւ հոս փոխադրեց, որ Արտաշատու դիմացը կ'իյնայ անոր հիւսիսային դին, բայց դիրքը ցած ըլլալուն համար՝ օղը աղէկ է ու տաք: Հինգերորդ դարուն մէջ Դուին քաղաքը Վարդանանց ատեն նորոգուեցաւ, ու ամուր սրարսպով ամրա-

ցաւ , ու կաթողիկոսարանն ալ հոն փոխա-  
դրեցաւ : Այս քաղաքը ութերորդ և իննե-  
րորդ դարերուն մէջ շատ ծաղկեցաւ վա-  
ճառականութեամբ , ու մէջի բնակիչնե-  
րուն թիւն ալ շատցաւ : Եկեղեցիներուն  
մէջ անուանի էր Սուրբ Գրիգոր , զոր փայ-  
տէ շինեց մեծն Վարդան : Բայց ետքէն վե-  
ցերորդ դարուն Սմբատ Բագրատունի մարզ-  
պանը բոլոր քարէ շինեց : Այս քաղաքը  
առին Հաղարայիք 640ին , ու մէջը 12,000  
հողի ջարդելով 55,000 հողի գերի տարին :  
Անկէց ետքը այլևայլ այլազգի ամիրանե-  
րուն ձեռքն անցաւ : Երկու անգամ սաս-  
տիկ երկրաշարժէ կործանեցաւ Գուին ու  
մէջը շատ հողի ալ մեռան : Երկրորդ ան-  
գամուն եղած երկրաշարժը , որ իններորդ  
դարուն վերջերը եղաւ Ա Սմբատ Թագաւո-  
ւորին ատեն , առջինէն շատ աւելի սոսկա-  
լի էր . կործանեցան քաղքին պարիսպնե-  
րը , տուներուն մեծ մասը , ու 70,000 հողի  
մեռան : Նոյնպէս ուրիշ երկրաշարժէ մը  
բոլորովին կործանեցաւ այս քաղաքը , և  
հիմա դաշտի մէջ աւերակ կեցած է :

Գուին քաղքին մօտերը խոսրով Բ եր-  
կու անտառ տնկել տուաւ , ու չորս կողմը  
պատ քաշելով մէջը տեսակ տեսակ վայրի  
կենդանիներով ու դադաններով լեցուց որ-  
սոյ համար : Առջինը կը սկսի Գառնիէն ին-  
չուան Գուին քաղաքը , Ազատ գետոյն քով ,  
և անունը դրաւ Տաճար մայրի : Երկրորդը  
առջինին հարաւային կողմը , և երկուքին

մէջ տեղը անցնելու ճամբայ մը կար . այս երկրորդ անատախն մէջ շինեց պալատ մը , և անունը դրաւ Խորտախկերտ :

219. Այրարատ նահանգին մէջ յիշուած ուրիշ քաղաքները : — Այրարատայ մէջ կը յիշուին ուրիշ շատ քաղաքներ ալ , որոնց մասնաւոր դաւառ չի նշանակուիր . այսպէս են

Արտաշատ քաղաք , որ օտար ազգաց մէջ խիստ համբաւաւոր է , կ'իյնայ Գուին քաղաքին մօտերը , և շինուած է բլրոյ մը վրայ , ուր Մեծամօր վտակը Երասխայ հետ կը խառնուի , և քաղաքը իբրև Թերակղզի մը կը ձևանայ . ունէր ամուր բերդ , որոյ մէջն էր Խոր վիրապը , ուր կը նետէին չարագործները : Այս Խոր վիրապին մէջ Գրիգոր Լուսաւորիչ տասներչորս տարի ողջ մնաց : Արտաշատ քաղաքը ունէր կամուրջ մը որ կ'ըսուէր Տափերակաւ կամ Տափերև , Երասխ գետոյն վրայ շինուած : Խորենացին այս քաղաքին շինութիւնը Բ Արտաշէսին կուտայ , Քրիստոսէ ետքը առաջին դարուն վերջերը . և կ'ըսէ թէ իր անունով Արտաշատ կոչեց , ու Երուանդաշատէն Հրէից գերիներովը մէկտեղ Թագաւորական ակթուր և բոլոր կուռքերը հոս փոխադրեց , և քաղաքին մէջ փառաւոր Անահտայ տաճար մըն ալ շինեց : Բայց Արտաշէսին ըրածը կ'երևի թէ հիմնովին նորոգութիւն կամ երկրորդ անգամ շինել պիտի ըլլայ . վասն զի իրմէ առաջ յոյն և լատին մատենագիրները ինչ-

պէս են Ստրաբոն, Պլուտարքոս և Տակիտոս կը յիշեն այս քաղաքը նոյն անունով . և կ'ըսեն թէ Աննիբաղ մեծն Անտիոքոսին հետ մէկտեղ Հռոմայեցւոցմէ յաղթուելէն ետև փախաւ զնաց Հայաստան , և հոն ցըցուց այս քաղքին դիրքը , և ինքը եղաւ զործազիր , և անուեն ալ դրաւ Արտաշատ նոյն ատենուան Հայոց Արտաշաս թագաւորին անունովը : Մեծին Անտիոքոսի ատեն վերցուած էր Հայկազանց տէրութիւնը , և կ'իշխէր այն ատեն Սելեկացւոց կողմէն Արտաշաս անունով կուսակալ մը . ուստի Արտաշատ քաղքին շինութիւնն ալ օտարազդի մատենագիրներուն ըսածին նայելով կ'իյնայ Քրիստոսէ 188 տարի առաջ : Բայց այս բանիս վրայ ամենեկին յիշատակութիւն չկայ մեր մատենագիրներուն մէջ , և ոչ Աննիբաղայ Հայաստան փախչելուն վրայ : Այս թագաւորանիստ քաղաքը Հռոմայեցւոց մատենագիրներուն խօսքին նայելով , Քրիստոսէ 58 տարի ետքը կորբուլոն Հռոմայեցւոց զօրավարը Տիրիթ թագաւորին հետ պատերազմելու ատեն առաւ , ու չկըրնայով պահել , կրակ տուաւ ու այրեց : Բայց ետքէն Տիրիթ թագաւորը որ վերին Հայոց վրայ կը թագաւորէր , երբոր Հռոմ զնաց ու Ներոն կայսրէն նորէն թագաւոր պսակուեցաւ վերին Հայոց վրայ , կայսրը հրաման տուաւ որ իր ծախքովը նորէն շինէ : Տիրիթ Հայաստան զառնալու ատեն , հետը շատ ճարտարապետներ առաւ , ու քա-

գարը նորոգելով, անունն ալ Ներոն կայսեր անունովը Ներոնիա կոչեց:

Արտաշատ քաղաքը մեր Արշակ Բին ատեն Պարսից թագաւորին զօրքերը հիմնադատակ կործանեցին և այրեցին և սպարիսպները փլցուցին, ու մէջէն 9000 տուն հրեայ ու 40,000 տուն հայ գերի տարին: Բայց ետքէն նորէն շինուեցաւ, և եղաւ իբրև զիւզաքաղաք մը, ուր հինգերորդ դարուն մէջ Վարդանանց ատեն ազգային ժողովք եղաւ: Յայտնի չգիտցուիր թէ վերջի անբումը երբ եղաւ. հիմա բոլորովին աներակ է, և հազիւ տեղը յայտնի է, և կը ցուցնեն միայն խոր Վիրապին տեղը:

Արտաշատէն դուրս ճամբու վրայ շինած էր Երազմոյն ըսուած տեղը կամ Երազացոյց մեհեանը: Այս մեհեանը Արտաշատայ մէջի մեհեանէն զատ է, զոր նոյնպէս Արտաշէս Բ շինել տուաւ, և մէջը գրաւ Ապոլոնի արձանը. ետքէն սուրբն Գրիգոր կործանեց տաճարովը մէկտեղ:

220. Արմաւիր քաղքին վրայ գիտելիք: — Այս քաղաքը Հայաստանի հին քաղաքներէն մէկն է, և կ'երևի թէ Արագածոտն դաւառին մէջ կ'իյնայ, զոր շինեց Հայկայ թոռը Արմայիս նահապետը Երասխայ քով, անոր հիւսիսային զին բլրոյ մը վրայ. և իր ատենէն սկսեալ բոլոր Հայկական ժամանակ ասիկայ էր թագաւորանիստ քաղաքը: Նոյնպէս նաև Արշակունեաց ատեն ինչուան Երուանդ Բին ժամա-

նակ . թէպէտ և երբեմն ուրիշ քաղաքնե-  
րու մէջ ալ նստան , ինչպէս Վաղարշակ Ա.  
Մծբնայ մէջ , Աբղար Եղեւիոյ մէջ , և այլն :  
Գեղամայ որդին Հարմա զանազան նորո-  
զութիւններ ըրաւ Արմաիրի մէջ , ու ա-  
մուր պարսպով ամրացուց . Վաղարշակ Ա.  
այս քաղքին մէջ մասնաւոր մեհեան մը շի-  
նեց , ուր արևու և լուսնի և իրեն նախնեացը  
արձանները կանգնեց : Նոյնպէս Տիգրան  
Բ փառաւոր մեհեան մը շինեց , և տնկեց  
մէջը Ապողոնի և Արտեմեայ արձաննե-  
րը , զորոնք իր հայրը փոքր Ասիայէն բե-  
րած էր , և բնակեցուց քաղքին մէջ Հրէաս-  
տանէն բերած գերիներուն կէսը , կէսն ալ  
Վաղարշապատ քաղքին մէջ բնակեցընե-  
լով : — Երբոր Երուանդ թագաւորը շինեց  
Երուանդաշատ քաղաքը , արքունիքը Ար-  
մաիրէն հոն փոխադրեց , քաղքին ամէն  
գեղեցկութիւնն ալ մէկտեղ տանելով . վասն  
զի Երասխ գետը Արմաիրէն հեռացած ըլ-  
լալուն համար , քաղքին օդը ապականած  
էր , և բնակիչները ջրոյ նեղութիւն կը քա-  
շէին : — Արմաիր քաղաքը հիմա աներակ  
է , և տեղը դրեթէ անյայտ :

221 . Վաղարշապատ քաղքին վրայ զի-  
տելիք : — Վաղարշապատ քաղաքը Օչակա-  
նայ մօտ է , ուսկից Վահան Ամատունին կը  
տեսնէր Վաղարշապատ քաղքին կաթողի-  
կէն : Այս քաղաքը Հայաստանի անուանի  
թագաւորանիստ քաղաքներէն մէկն էր , որ  
օտար ազգաց մէջ ամենեին անձանօթ է :

Առջի բերան կըսուէր Արտիմէյ քաղաք ,  
իրր Արտեմիսեայ քաղաք , որ շինուած էր  
Շրէշ բլրոյն վրայ , և հիմնարկութեան ժա-  
մանակը յայտնի չէ : Ետքը ըսուեցաւ վարդ-  
գևոսի առակ , Երուանդ Սակաւակեաց Հայ-  
կազնոյն Վարդգէս քեռառնը անունովը ,  
որ ընդարձակեց այս քաղաքը Քրիստոսէ  
իրր 550 տարի առաջ . ուր միջին Տիգրան  
Հրէաստանէն բերած Հրէից շատը բնակե-  
ցուց , և այն սլաւոճառաւ վաճառականու-  
թիւնն ալ ծաղկեցաւ , և եղաւ գիւղաքա-  
ղաք : Բայց երբոր Վաղարշ Թագաւորը  
պարսպով պատեց , անունն ալ Վաղարշա-  
պատ դրաւ , որ կըսուէր նաև Նոր քաղաք և  
Քաղաքոչաչա՝ դաշտի մէջ շինուած ըլլա-  
լուն համար . որ Թագաւորական ձմերոցնե-  
րէն մէկն էր , և կը ձգուէր Քասաղ գետէն  
ինչուան Մեծամօր գետը , որոյ վրայ կա-  
մուրջ շինուած էր քաղքին դիմաց : Վա-  
ղարշապատայ չորս կողմը խրամ փորած  
էր անառիկ ըլլալու համար , և ունէր նաև  
միջնաբերդ : Եկեղեցիներուն մէջ անուանի  
է կաթուղիկէն , որոյ տեղը հրեշտակի տե-  
սիւքով յայտնեցաւ Պրիգոր Առասաւորչին .  
այս եկեղեցին՝ որուն քով կայ նաև վանք  
մը , Հայաստանի անուանի և հին եկեղեցի-  
ներէն մէկն է , զոր Վահան Մամիկոնեան  
զօրավարը հիմնովին նորոգեց , և ետքերը  
ըսուեցաւ Էջմիածին , Պրիգոր Առասաւորչին  
տեսիլքէն . կոչուեցաւ նաև Շողակաք , եկե-  
ղեցւոյ տեղոյն վրայ երևցած սիւնաձև լու-

սոյն համար: Աւստի եկեղեցւոյ տօնը զոր  
կը տօնենք վերափոխման առջի օրը կամ  
նաւակատեաց օրը Շողակար անունով, այս  
եկեղեցւոյն տօնն է, իբրև ասոր հիմնար-  
կութեանը պատճառաւ Աստուծոյ շնորհա-  
կալ ըլլալու համար հաստատուած: Անուա-  
նի էր նաև սրբոյն Գրիգորի Լուսաւոր-  
չի եկեղեցին, զոր շինեց Ներսէս Գ. Շի-  
նողը, ուր ամփոփեցան Լուսաւորչայ ոս-  
կորները Թորդանէն հոս բերելով: — Այս  
քաղաքը Արշակ Բին ատեն առին Պարսից  
Շապուհ թագաւորին զօրքերը ու կործանե-  
ցին, ու 19,000 տուն բնակիչ զերի տարին.  
հիմա զեղ դարձած է:

222. Հռիփսիմեանց և Գայիանեանց վը-  
կայարաններուն վրայ դիտելիք: — Վա-  
ղարչապատէն դուրս հիւսիսային արևե-  
լեան կողմը շինուած է Հռիփսիմեանց վը-  
կայարանը, ուր Հռիփսիմէ իր երեսունուեր-  
կու ընկերներովը նահատակեցաւ: Այս ե-  
կեղեցին Պարսից Շապուհ թագաւորը կոր-  
ծանել տուաւ, զոր սուրբն Սահակ նորէն  
շինեց, ու ետքը կոմիտաս կաթողիկոս ա-  
ւելի մեծցուց ու զարդարեց: Իսկ Գայիա-  
նեանց վկայարանը կ'իյնայ քաղքին հա-  
րաւային դին, ուր Գայիանէ երկու ընկեր-  
ներովը նահատակեցաւ, զոր ետքը Նզր կա-  
թողիկոսը ընդարձակեց ու զարդարեց: Այս  
երկու վկայարաններն ալ շինեց Գրիգոր  
Լուսաւորիչ Տրդատ թագաւորին և բոլոր  
ժողովրդեան հետ մէկտեղ:

223. Յայ ՚ի վերոյիշեալ քաղաքներէն Արարատ նահանգին մէջ ուրիշ յիշուած տեղերը: — Կը յիշուին

Դրասխանակերտ կամ Դրսնանակերտ մեծ աւանը, զոր շինեց Արտաշէս Ա թագաւորը, և տէրութեան ձմերոցներէն մէկն էր, ոսկից էր Յովհան կաթողիկոս սրատափշը, և Շիրակ դաւառին մօտերը կ'իյնայ:

Յոյակերտ և Փառախոտ աւանները, զորոնք շինեց Ամասիա նահապետը, և մէջը բնակեցուց իր Փառոսի և Յոլակ որդիքը, որոց անունով մէկը Փառախոտ, մէկալը Յոյակերտ ըսուեցաւ. ասոնք Մասիս լեռին մօտ են:

Տատևօք կամ Տատևանք աւանը Գայրատուայ ծովակին քովերը: — Կաշակերտ և Հոռունոց մարգ ըսուած աւանները, որ կաթողիկոսարանին կալուածներն էին: — Զողկերտ աւանը, Բնչիև կամ Արդևանս գեղը, և այլն:

ՄԵԾ ՀԱՅՔԻՆ ԳՈՒՐՍ ԵՂԱԾ

## ՀԱՅՈՑ ԵՐԿԻՐՆԵՐ

ԳԼՈՒԽ Ի.

ՓՈՔՐ ՀԱՅՔ

Պատմական տեղեկութիւնք.

224. Փոքր Հայոց վրայ դիտելիք : —  
Հայաստան հին ատեն երկու մեծ մաս կը  
բաժնուէր. Մեծ Հայք՝ որուն վրայ խօսե-  
ցանք, և Փոքր Հայք, զոր մեր նախնիք ի-  
րենց քաջութեամբը միացուցին Մեծ Հայոց :  
Արամ քաջ ու հայրենասէր նահապետը  
Հայաստանի արեւմտեան կողմէն տիրեց ին-  
չուան Կապադովկիա, և Մաթակ անունով  
իր ազգականներէն մէկը 10,000 զօրքով  
հոն կուսակալ թողուց, հրաման տալով որ  
տեղացիք հայերէն խօսին. և տիրած եր-  
կիրները բնակչով լեցընելէն ետեւ, իրեք  
մաս բաժնեց. Կապադովկիայէն ինչուան  
Պոնտոսի կողմը Առաջին Հայք անուանեց,  
Պոնտոսէն ինչուան Մելիտինէ քաղաքը

Երկրորդ Հայք, ու անկէց ինչուան Յովիաց աշխարհը Երրորդ Հայք, և Յովիաց աշխարհը Չորրորդ Հայք՝ որ ետքէն Մեծ Հայոց տասներհինգ նահանգներէն մէկը համարուեցաւ :

Այս բաժանմունքը այնչափ ծանօթ չէր Յունաց, և սովորաբար Մեծ Հայքէն որոշելու համար երեքին մէկէն Փոքր Հայք կ'ըսէին, ուսկից ետքերը կապագովկիան ու Պոնտոսի մէկ մասը Հայոց ձեռքէն ելլելով՝ դատ թագաւորութիւն եղաւ, որով Փոքր Հայոց սահմանն ալ սղտիկցաւ : Չորրորդ դարուն վերջերը մեր Արշակ Գ. թագաւորին ժամանակ, Յունաց Արկադէոս կայսրը ու Պարսից Շապուհ թագաւորը Հայաստանը երկու բաժնեցին. և անկէ ետքը մէկ մասը Յունաց մէկալ մասը Պարսից ձեռքն ինկաւ. և Յոյնք Պարսից ձեռքը եղած մասին՝ որ Հայաստանի արևելեան կողմը կ'իյնար Այրարատ նահանգն ալ մէկտեղ առնելով, և իրենց մասէն շատ աւելի ընդարձակ էր, ընդհանուր անուամբ Պարսկահայք կ'ըսէին. իսկ իրենց մասը Մեծ Հայք կ'անուանէին, որ էր Հայաստանի արևմտեան կողմը Միջագետքէն սկսեալ ինչուան Տարոն գաւառը, Չորրորդ Հայք ու բարձր Հայք նահանգները և բոլոր Փոքր Հայք մէկտեղ առնելով :

225. Յունաց կառավարութիւնը իրենց մասին մէջ : — Հայաստանի մասը Յունաց տրուելէն ետև՝ նախ Արշակ Գ. թագաւորեց

Եկեղեցաց գաւառին Երրիզա քաղքին մէջ :  
Բայց երբոր ինքը մեռաւ , Արկաղէոս կայս-  
րը յոյն կոմս մը դրաւ , քիչ ատենէն եր-  
կիրը յանձնեց Խոսրով Գևն որ կը թագա-  
ւորէր Պարսից մասին վրայ Դուին քաղ-  
քին մէջ , իրմէն տուրք միայն առնելով :

Երբոր Արկաղէոս կայսրը մեռաւ ու ա-  
նոր տեղը յաջորդեց Թէոդոս փոքր , թէ-  
պէտ և մեր Վառաչապուհ թագաւորին հետ  
բարեկամութեամբ էր , որ Խոսրով Գևն յա-  
ջորդած էր , սակայն իրեն մասը անոր  
չյանձնեց , հապա իր կողմանէ գործակալ-  
ներ դրաւ , որ կը սուէին կիւրապադատ և  
կոմս , և անկէ ետքը ինչուան վերջը Փոքր  
Հայք 'ի մեծ Հայոց զատուելով Յունաց իշ-  
խաններով կը կառավարուէր : Եւ այն տե-  
ղի Հայերը թէպէտ և Յունաց ձեռքին տակ  
աւելի հանգիստ էին քան թէ Պարսից ձեռ-  
քին տակ եղած Հայերը , բայց կամաց կա-  
մաց Յունաց հետ խառնուելով շատը իրենց  
ազգութիւնն ալ կորուսին :

Փոքր Հայոց լեռներն ու գետերը .

226 . Փոքր Հայոց գլխաւոր լեռները : —  
Փոքր Հայոց երկիրը ընդհանրապէս լեռ-  
նոտ է , բայց մեծ Հայոց պէս բարեբեր :  
Գլխաւոր լեռներն են Տօրոս , որ Փոքր  
Հայքն ու կապաղովկիան Արլիկիայէն կը  
զատեն : Տօրոսին մէկ գօտին է Անտիոս-  
յոսար , որ Փոքր Հայքը երկու մաս կը բաժնէ :

Բայ 'ի այս լեռներէն կը յիշուին 'ի նախ-  
նեաց կանգոռնակ կամ կոնկոնատ լեռը՝ որ  
Տօրոսի մէկ մասն է, ու կ'իյնայ Գերմանիկ  
քաղքին կամ Մարաշու մօտ, անոր հիւսի-  
սային զին :

Արգեոս լեռ, կեսարիոյ քով առաջին  
Հայոց մէջ :

Սևառ լեռ, որուն յոյները Մաշրու կ'ը-  
սէին հողը սև ըլլալուն համար, որ կ'երևի  
թէ հրաբուխէ եղած է, ու կ'իյնայ Կիլի-  
կիայի հիւսիսային ծայրը, և Տօրոսին մէկ  
մասն է : Երկոտասաներորդ դարուն մէջ  
այս Սեառ լերին վրայ Հայոց, Յունաց ու  
Ասորոց շատ վանքեր կային :

Սրբոյն Բարսի լեռ, որ կ'ըսուի նաև Եր-  
կորեակ, երկու ճիւղ բաժնուած ըլլալուն հա-  
մար . կ'իյնի կեսարիա քաղքին հիւսիսայ-  
ին կողմը, որոյ վրայ է սրբոյն Բարսղի  
կեսարացոյն այրն ու անապատը : Այս  
լեռը հիմա կ'ըսուի Ալի սաղ :

227. Փոքր Հայոց գլխաւոր գետերը : —  
Ալիս գետ, որ Մեծ Հայոց սահմաններէն  
գալով և Սեբաստիոյ քովէն անցնելով կ'եր-  
թայ Սև ծովը կը թափի, Կապադովկիայի  
ու Պոնտոսի տէրութեան մէջէն անցնելով,  
ու այլևայլ գետակներ առնելով : Այս գե-  
տոյն ջուրը քիչ մը կարմիր ըլլալուն՝ Տաճ-  
կըները կ'ըսեն Գրգրի յրմազ, և համն ալ  
քիչ մը աղոտ է, աղի հանքերուն մէջէն  
անցնելուն համար :

Մեղոս կամ Մեղու գետ՝ որուն Տաճկը-

ները հիմա Գարսա առ կ'ըսեն, որ նոյն յունական բառին թարգմանութիւնն է, և կը բխի Կեսարիա քաղքին մօտ, ու կ'երթայ Եփրատ գետոյն հետ կը միանայ Մելիտանէ քաղքին քով:

Իրիս կամ Ռիս գետ, որ երկու մեծ ճիւղ կը բաժնուի. մէկը կը բխի Սերաստիա քաղքին հիւսիսային կողմէն, մէկալը Աստղիկ (ԵՐԼՄԱՐԳ) լեռնէն՝ որ Պարխար լեռնէրուն մէկ մասն է: Առջի ճիւղը կ'ըսուի Լիգոս կամ Գայլ գետ. իսկ մէկալ ճիւղն է բուն Իրիս գետը, և երկուքն ալ մէկտեղ միանալով կը թափին Սև ծովը. հիմայ Եկշիլ լըմագ կը կոչուի:

### Առաջին Հայք.

228. Առաջին Հայոց սահմանը: — Առաջին Հայք կ'իյնայ Երկրորդ Հայոց քով, Կապադովկիոյ ու Պոնտոսի տէրութեան մէջ, Կապադովկիային մէկ մասն ալ մէկտեղ առնլով: Սակայն ինչպէս Առաջին Հայոց սահմանը, ասանկ ալ նաև Երկրորդ ու Երրորդ Հայոց սահմաններն ալ միշտ հաստատուն չմնացին, հապա այլևայլ ատեն շատ փոփոխութիւններ առին, մէկը մէկալին հետ խառնուելով:

229. Առաջին Հայոց գլխաւոր քաղաքները: — Առաջին Հայոց գլխաւոր քաղաքն է Կեսարիա, որ Քրիստոսէ գրեթէ 2000 տարի առաջ շինուեցաւ Արդէոս լե-

րին ստորոտը : Այս քաղաքս շինեց Մշակ հայ կուսակալը , զոր մեր Արամ նահապետը Կապաղովկիայի մէջ կողմնապահ թողուցեր էր , և իր անունով քաղաքը Մշակ անուանեց . բայց տեղացիք չկրնալով հընչել , Մաժաք ըսին : Ատեն անցնելէն ետե մեծին Միհրդատայ որդին փոքր Միհրդատ , մեր միջին Տիգրանայ քեռորդին , Քրիստոսէ 40 տարիի չափ առաջ , Հռոմայեցոց Յուլիոս Կեսարէն իշխանութիւն առնելով Մաժաք քաղաքը ընդարձակեց ու փառատոր շէնքերով զարդարեց ու պարսպով պատեց , և Յուլիոս Կեսարին անունովը Կեսարիա<sup>1</sup> անուանեց , որ կ'ըստի նաև մեր մատենագրաց մէջ Կեսարոս քաղաք կամ Կեսար . ու անկէց ետքը վերցուեցաւ Հայոց իշխանութիւնը այս քաղքէն , ու քիչ ատենէն նաև բոլոր Կապաղովկիայէն :

Վաղերիոս կայսեր ատեն Շապուհ Պարսից թագաւորը տիրեց այս քաղքիս , ուր դրեթէ 400,000 բնակիչ կար այն ատեն , և մէջը շատ աւեր ու կոտորած ըրաւ ու շատ ալ դերի տարաւ : Այս քաղաքս հին ատեն ծաղկած քաղաքներէն մէկն էր , և Հայոց կաթողիկոսները ինչուան մեծին Ներսէսի ատեն հոս տեղի արքեպիսկոպոսէն կ'օ-

<sup>1</sup> Ոմանք կ'ըսեն թէ Տիգրիոս կայսրը այն կողմերուն տիրելով Օգոստոս Կեսարին անունովը Կեսարիա կոչեր է . ոմանք ալ ուրիշ կերպով կը պատմեն :

ծուէին Գրիգոր Լուսաւորչէն սկսեալ : Այս քաղքէն շատ երևելի մարդիկ ելան Յունաց ձեռքը անցնելէն ետև , յորոյ մէկն է սուրբն Քարսեղ :

Կեսարիա քաղքին արևմտեան կողմը կ'իյնայ Կիզիատրա ամուր ու անառիկ բերդը , ուր մուտ Յունաց ձեռքովը 1079ին Գաղիկի թագրատունեաց վերջին թագաւորը : Թորոս Ա. Կիլիկիոյ իշխանը ( 1112ին ) տիրեց այս բերդին , ու Գաղիկ թագաւորին մահուանը վրէժը առաւ զինքը սպաննողները չարաչար սպաննելով . և անկէ ետքը այս բերդս ինչուան 1310ին ատենները Հայոց ձեռքն էր :

Կիզիատրայի մօտ է Սրժիաս դաշտը :

250. Առաջին Հայոց կամ Կապադովկիայի <sup>1</sup> մէջ յիշուած ուրիշ քաղաքները : — Եշդոկիա , Սեբաստիոյ արևմտեան կողմը Իրիս գետոյն մօտ , որոյ վրայ հինգ կամարով քարաշէն կամուրջ կայ շինած քաղքին զխմացը : Ունի ամուր բերդ բարձր ա-

1 Մենք հոս ուղեցինք ու ջանացինք մեր Արամ նահապետին բաժանմանը հետեւելով , այն երկիրներն ալ որ ետքէն Պոնտոսի ու Կապադովկիայի մասն սեպուեցան , գնել Փոքր Հայոց մէջ . թէպէտ և այն աւելի քաղքերն երէն ոմանք՝ վերջէն շինուած ըլլան , և հիմակուան օտարազգի աշխարհագիրները մեր բռնած ոճը չբանեցրնեն , որոնք Փոքր Հայոց արևելեան կողմի քաղքերն երուն շատը հին Կապադովկիոյ մէջ , ու հիւսիսային կողմինները Պոնտոսի տէրութեան մէջ կը գնեն :

պատածի վրայ շինուած որ հիմա քայքայ-  
ած է :

Պիզու քաղաք , զոր Յունաց Մոնոմախոս  
կայսրը 1045ին իրեն շրջակայ սահմաննե-  
րովը մէկտեղ Բաղրատունեաց վերջի Ղա-  
ղիկ թաղաւորին տուաւ Անի քաղքին տեղ :  
Այս քաղաքս թերևս հիմակուան Պիզուսի  
դեղն է որ Եւզոկիա քաղքին մօտերը կ'իյ-  
նայ :

Նազիանգ , կեսարիա քաղքին մօտ արև-  
մտեան կողմը , ուսկից էր Գրիգոր Նազիան-  
դացին և իրեն որդին Գրիգոր Աստուածա-  
բանը :

Նեոկեսարիա բերդաքաղաք , Եւզոկիա  
քաղքին արևելեան հիւսիսային կողմը կ'իյ-  
նայ գետոյն քովի :

Նիկոպոլիս , Եւզոկիային արևելեան կող-  
մը զոր Պոմպէոս շինեց . ունի ամուր բերդ ,  
և քովէն կ'անցնի կերաւնոս գետը : Հոս  
Միհրդատ Պոմպէոսէն յաղթուեցաւ :

Նիսսա կամ Նիսսա , կեսարիա քաղքին  
մօտերը , ուր Բարսղի կեսարացւոյն եղ-  
բայրը սուրբն Գրիգոր 370ին եպիսկոպոս  
եղաւ , անոր համար ալ ըսուեցաւ Գրիգոր  
Նիսսացի : Այս քաղաքս կ'երևի թէ կ'ըսուի  
երբեմն նաև Նեոկեսարիա , որ վերը յիշած  
Նէոկեսարիա քաղքէն տարբեր է , և որ  
կ'ըսուի նաև Նեոկեսարիա Պոնտոսի :

Կոմանա քաղաք , որ շինուած է իրիս  
գետոյն վրայ . ուր մեռաւ և թաղուեցաւ  
Յովհան Ոսկերեբան հայրապետը , բայց

կեցած է, և ծուռ զիրքով ըլլալուն համար  
Ծռռ կամուրջ կ'ըսուի :

1060ին երբոր Սեբաստիայի մէջ Ատովմ՝  
Սենեքերիմայ որդին կը թագաւորէր, Տաղ-  
րիլ Պարսից թագաւորին զօրքերը յարձա-  
կեցան Սեբաստիայի վրայ, ու բնակիչնե-  
րէն շատը թրէ անցընելէն, ու քաղաքը ա-  
ւար ընելէն ու մնացած բնակիչները գերե-  
լէն ետև, բոլոր քաղքին կրակ տուին, ու  
որոյ մէջ 100 փառաւոր եկեղեցի կար : Ա-  
տովմ թագաւորն ալ փախաւ Կոստան-  
դնուպոլիս գնաց :

Բայց քիչ ատենէն ետև դառնալով, նո-  
րողեց քաղաքը որ առջինին պէս դարդա-  
րուեցաւ : Սակայն Աէնկիթիմաւր թաթա-  
րաց խանը 1403ին առնելով այս քաղաքս,  
մէջը սոսկալի ջարդ ըրաւ, ու քաղաքացի-  
ներէն 4000 հոգի ողջ ողջ գեաինը թաղել  
տուաւ, ուր նոյն ատեն 120,000 բնակիչ  
կը համրուէր, և հիմնայատակ ըրաւ քա-  
ռասուն մանկանց փառաւոր եկեղեցին,  
որ 40 գմբէթ ունէր, և ուր իրենց սուրբ  
նշխարքը ամփոփուած էին :

232. Երկրորդ Հայոց ուրիշ գլխաւոր  
քաղաքները : — Սեբաստիոյ մօտ են Լա-  
ռիւսա և Աշարս քաղաքները, զորոնք Սե-  
բաստիա քաղքին հետ մէկտեղ վասիլ  
կայսրը Սենեքերիմ թագաւորին տուաւ :

Տիւրիկե կամ Տիպրիկե ամուր բերդաքա-  
ղաք, Սեբաստիոյ արևելեան կողմը, որ  
միջին դարու ատեն շատ անուանի էր : Տիւ-

րիկէ քաղքին քովն է կատարուս բերողը , որ հիմա աւերակ է :

Տարանտա քաղաք , ունի ամուր բերդ բլրոյ վրայ , և կ'իյնայ Տիւրիկէին հարաւային կողմը :

Այն կամ Այնայ քաղաք , զոր Արծրունեաց Սենեքերիմ թագաւորին հետ Սեբաստիա եկած իշխանները շինեցին Ճ.Ա. դարուն մէջ լեռնակի մը վրայ Եփրատ գետոյն մօտ , որոյ վրայ քաղքին դիմացը կամուրջ մը ձգած է : Քաղքին անունը ելած է Այն ըստած վտակին անունէն որ քաղքին մէջէն կ'անցնի : Այնայ քաղքին մօտ է Նարեկայ վանքը , զոր Վաստուրականի Նարեկ վանքին միաբանները շինեցին , անոր համար անունն ալ Նարեկ գրին , որոնք Սենեքերիմ թագաւորին հետ մէկտեղ թողլով իրենց երկիրը , եկեր էին այս կողմերս բնակելու , Վրիդոր Նարեկացւոյն մարմինն ալ հետերնին բերելով , զոր այս վանքին մէջ թաղեցին :

Այնայ քաղքին մօտ են Չիմուռա և Արարկեր քաղաքները Եփրատ գետոյն քով : Արարկեր քաղաքը Յունաց Վասիլ կայսրը Սեբաստիա քաղքին հետ մէկտեղ տուաւ Սենեքերիմ թագաւորին , որոյ իշխանները շատ մեծցուցին ու մէջը նորոգութիւններ բրին , իբրև թէ նորէն շինած ըլլային :

Արօրակ քաղաք , որ Յունաց փոքր թէոզոս կայսեր ատենը շինուեցաւ ու զօրանիտ քաղաք եղաւ , և կ'իյնայ Երզնկա

քաղքին մօտ Աղշար դաշտին մէջ: Այս քաղաքս հիմա գեղմի է, և կ'ըստի Ածպտեր:

Աղշար քաղաք, որ ըսել է Մպխասկ քաղաք, կ'իյնայ Աղշար օվայ կամ Աղշարադատ ըսուած բարեբեր ու զուարճալի դաշտին մէջ, որուն սամկօրէն կ'ըսեն Ախշար կամ Աշխար դաշտ:

Երրորդ Հայք.

255. Երրորդ Հայոց սահմանը և զխաւոր քաղաքը: — Երրորդ Հայոց սահմանն է արևելքէն Եփրատ գետը. արևմուտքէն Կասպագոլկիան, հիւսիսէն Երկրորդ Հայք, հարաւէն Կիլիկիան ու Եփրատացոց աշխարհը: Մայրաքաղաքն է Մեյիտիկե կամ Մերոիկե կամ Մերտեկի, որ անուանի հարուստ ու բազմամարդ քաղաք էր, Շամիրամէն շինուած, ըստ ոմանց, և Տրայիանոս կայսրէն նորոգուած 116ին ատենները, որ կ'իյնայ Եփրատ գետոյն արևմտեան կողմը, անկէց երկու մղոն հեռու Մելաս գետոյն Եփրատին հետ խառնուելու տեղին մօտ: Այս քաղքիս մէջ 572ին ատեն ահագին պատերազմ եղաւ Պարսից Խոսրով Թազաւորին ու Յուստինիանոս կայսեր հետ: 1060ին ատենները առին Պարսիկներն ու Թուրքերը այս քաղաքս, ու մէջը մեծ ջարդ ընելով քաղաքն ալ զրեթէ ՚ի հիմանց կործանեցին, և պարիսպները փլուցին, որ հիմա տւերակ են: Այս քաղքիս

Տաճկըները կ'ըսեն Մալարիա, որ հիմա  
անջի փառքէն շատ ինկած է:

234. Երրորդ Հայոց ուրիշ երևելի քա-  
ղաքները:—Սամուտիա, որ ետքերը ըսուե-  
ցաւ Սամուսատ և Սամսատ<sup>1</sup>, հին երևելի  
քաղաք է Եփրատ գետոյն քով բարձր տեղ  
շինած: Սուրբն Մեսրոպ այս քաղքին մէջ  
Քրիստոսի 406 թուականին կարգաւորեց  
Հայոց զիրը, իրեն օգնական առնելով Հուս-  
փանոս անունով իմաստուն ու ճարտար  
մարդը՝ որ ազգաւ յոյն էր:

Քեստն քաղաք, Գերմանիկ քաղքին կամ  
Մարաշին հիւսիսային կողմը լեռներու մէջ  
շինուած: Մետասաներորդ դարուն Ռուբէն  
առաջնոյն ատեն, հոս կը նստէր Գող Վա-  
սիկ անունով հայ դորաւոր իշխան մը, որ  
անդադար յարձակմունք ընելով Տաճկընե-  
րուն շատ նեղութիւն կու տար, ու մեծա-  
մեծ յաղթութիւններ կ'ընէր, և ուրիշ ազ-  
գաց երկիրներուն կը տիրէր, անոր համար  
Գող ըսուեցաւ: Այս Քեսուն քաղաքը  
1141ին Թաթարները առին ու կրակ տուին  
այրեցին, և մէջի բնակիչները ցրուեցան և  
ուրիշ տեղեր դացին: Քեսուն քաղքին մօ-  
տերն է Կարակիւ վանքը Շուղր անապատին  
մէջ, ուր մեռաւ և թաղուեցաւ Գրիգոր Վը-  
կայասէրը 1103ին:

Բարձրբերդ, զօրաւոր և ամուր բերդ է,

<sup>1</sup> «Նստէր 'ի քաղաքին որ կոչէր Սամուսատ,  
զոր ասեն 'ի հինան շինեալ Սամսոնի», Լատ. . 25:

Տօրսս լեռներուն վրայ շինած բարձր դիր-  
քով, անոր համար ալ անունը Բարձրերդ  
ըստած է, որ առաջ Յունաց ձեռքն էր,  
բայց ետքէն (1080) Ռուբէն Ա առաւ ա-  
նոնցմէ : Բարձրերդին մօտերը կ'իյնայ  
Մոլեան վանքը :

Հասանելու էր քաղաք, որոյ շխտակն է  
Հրանիմանուէր, որ ըսել է արաբացւոց լե-  
զուովը Մանուէրի բերդ : 1108ին Տաթար  
Պարսից Թաղաւորը Գող Վասիլին վրայ  
երթալու ատեն, այս քաղքիս քովի բնա-  
կիչներէն շատ դերի ըրաւ, որք հունձի հա-  
մար մօտակայ դաշտերը ցրուեր էին :

Ռապան, ամուր բերդաքաղաք Եփրատայ  
մօտ, որ նոյնպէս Գող Վասիլին ձեռքն էր,  
բայց 1116ին Եղեւսիոյ Պաղտին Կոմսին  
ձեռքը անցաւ :

Ուրի քաղաք, ուր Յուլիանոսի հալածա-  
նայ ատեն (360) նահատակեցաւ ու թա-  
ղեցաւ սուրբն Ստեփանոս Ուլնեցի, որ Կո-  
կիսոն քաղքին հայ իշխաններէն մէկն էր :

Երրորդ Հայոց մէջ երևելի են նաև Պե-  
նեանի կամ Պենեատիս քաղաք, որ ամուր  
բերդ ունի. Վարդանի աւան, Փարզման  
բերդաքաղաք, Թոշրեր քաղաք որ ատեն  
մը Գող Վասիլին ձեռքն էր և պատերազ-  
մով առեր էր ըստինացւոց ձեռքէն Ուրեմե  
քաղքին հետ մէկտեղ : Կոկիսոն քաղաք  
Մելաս դետոյն քով, Կանչի աւանաբերդը  
Եփրատ գետոյն մօտ. Շահապ բերդը, և  
այլն :

255. Չահան գաւառին վրայ գիտելիք : — Չահան գաւառը Երրորդ Հայոց հարաւային կողմը կ'իյնայ , Եւսկից կը բղխի Պիւսամոս գետը որ վերջերը Չահուն կամ Չահան ըսուեցաւ , և հիմա ճիւղակ կ'ըսուի , որ կ'անցնի Կիլիկիային մէջէն և կը թափի Միջերկրական ծովը : Չահան գաւառին մէջ երևելի է Հոնի քաղաքը Մելլա գետոյն հարաւային կողմը , որ 1075ին առանձին կաթողիկոս նստաւ 20 տարիի չափ : Այս գաւառին մէջ կը յիշուին նաև Աշոտի աւան , Ապրասրա որ է Ալպոսդան , և Ախար աւանները :

### ԳԼՈՒԽ ԻԱ .

#### Միջագետք Հայոց .

256. Հայոց Միջագետքին վրայ գիտելիք : — Միջագետքայ վերին մասը 'ի սկզբանէ հետէ Հայոց ձեռքը ըլլալուն կ'ըսուէր Միջագետք Հայոց , որ Աղծնիք նահանգին սահմանակից է , և կ'իյնայ Եփրատ ու Տիգրիս գետերուն մէջ . երկիրը բարեբեր և օղը առողջարար : Ինչուան Երուանդ Բէատեն Հայոց ձեռքն էր այս երկիրս , անկէ վերջը Հռովմայեցոց անցաւ :

257. Հայոց Միջագետքին երևելի քաղաքները : — Մծրին քաղաք , որ հին ա-

տեն շատ անուանի էր, և կրկին ամուր պարիսպներով ամրացած, ուր հաստատեց վազարչակ Ա. իր ակտորը, և իրմէ ետև ինչո՞ւն Արզար թագաւորին ստեն Քրիստոսէ Աւատրի ետքը, Մծրին քաղաքն էր Հայոց թագաւորանիստ քաղաքը: Այս քաղաքս ետքերը երկրաշարժէ մը կործանելուն պատճառաւ, Արզար թագաւորին քեւորդին Սանատրուկ թագաւորը փլուց ու նորէն շինեց, առջինէն շատ աւելի փառաւոր, ու չորս կողմն ալ կրկին պատուարով պատեց, և իր արձանն ալ հրապարակին մէջ տնկեց ձեռքը գրամ տուած՝ իմացընելով որ քաղքին շինութեանը համար բոլոր իր գանձը հատաւ, ու ակտուն ալ Եղեսիայէն հոն փոխադրեց Քրիստոսի 55 թաւտկանին: Այս քաղաքիս նպիակագոսն էր Յակոր Մծրնայ Հայրապետը Քրիզոր Լուսաւորչին հօրաքեւորդին, որոյ համար քաղքին մէջ փառաւոր եկեղեցի մը շինուած էր, ու մարմինն ալ հոն ամփոփած, բայց ետքէն ուրիշ անդ փոխադրեցաւ: Հիմա այս քաղաքս աւերակ է, ու հապի մէկ քանի շէնք կ'երևի մէջը, որոց մէկն է նաև սրբոյն Յակորայ եկեղեցին, կէս մը գետինը թաղուած:

258. Եղեսիա քաղքին վրայ գլխակիք: — Եղեսիա քաղաքը որ կ'ըսուի նաև Արհայ, մեղի կ'երևի թէ սուրբ գրքին մէջ յիշուած հին Աշր քաղաքն է, որոսորք գիրքը Միջագետաց մէջ կը դնէ, և թերևս նալ

բառէն կոչուած է Ռերնայ, հին ասուն մէջը կրակ պաշտելուն համար: Բայց Յոյն և Հռովմայեցի մնատենագիրները կ'ըսեն թէ Եղեոսիա քաղաքը Ասորաց մեծն Սելևկոս թագաւորը շինեց է, զոր մեր Արգար թագաւորը Հռովմայեցւոցմէ՝ ապստամբելու մտքով հիմնովին նորոգեց և մէջը զօրաւոր բերդ շինեց, ու ամուր պարիսպներով ամրացուց, և իր անունը Մծբինէն հոս փոխադրեց, բոլոր մեհենական գիրքերը ու դիւաններն ալ մէկտեղ, և մէջը շինեց փառաւոր թէաարոն մը Հռովմայեցւոց թաարոններուն նման և ուրիշ շատ զեղեցիկ շէնքեր, և սուրբ Աստուածածնի եկեղեցի մը, որոյ համար կ'ըսեն թէ եօթը քարաշէն զմբէթ ունի եղեր, որոց վեցը Անանուն Արգարու որդին կործանել տուեր է և միայն մէկը մնացեր է ինչուան հիմա: — Երուանդ Բ որ Սանատրուկին յաջորդեց, խնդրեց Հռովմայեցւոցմէ երթալ Այրարատ նահանգին մէջ թագաւորել, որ վերին Հայք կ'ըսուէր, խոստանալով Հռովմայեցւոց թողուլ բոլոր Միջագետքի մէջ եղած Հայոց երկիրները. և իր խնդիրքին հասնելով անթող փոխեց Արմաւիր քաղաքը, անկէց ալ Երուանդաշատ: Ասով անկէց ետքը Միջագետքի մէջ եղած Հայոց երկիրները ելաւ իրենց ձեռքէն, ու Հռովմայեցիք Եղեոսիա քաղաքը աւելի ամրացնելով, հոն իրենց պանծարան շինեցին Միջագետքէն, Ասորաց երկրէն, Հայաստանէն տուրքերը

ժողովելու համար, ու Պոնտոսի Սինոպ քաղաքին մեհենական զիւրքերն ալ հոս բերին :

Եղևսիա քաղաքը շատ անգամ թշնամիներէն հարուածներ կրեց, բայց ամենէն սոսկալին ու վերջինը եղաւ Մկկին, որ ատեն Զանդի Բերիոյ ամիրայն ամիսի մը շափքաղաքը պաշարելէն ետև, առաւ լատինացոց ձեռքէն, ուր շատ հայեր ալ կային, և ահագին կոտորած քնելով քաղաքը արիւնլուայ քրաւ : Այս սոսկալի կոտորածը զեղեցիկ կը ստորագրէ Ներսէս Շնորհալին Եղևսիոյ տրբիւ մէջ :

259. Հայոց Միջագետաց մէջ յիշուած ուրիշ քաղաքները:— Խառան երեւելի քաղաքը, որ կը կարծուի թէ Քանանացիք շինած են, ուր պանդխտեցաւ Աբրահամ նահապետը, քանի որ այս քաղաքս Քանանացոց ձեռքն էր. բայց ետքէն Հայոց ձեռքը անցաւ, ուր խաւրեց Սանատրուկ թագաւորը Սքզարու քարեպաշտ Հեղինէ կինը իրմէ տեսած բարիքներուն փոխարէն, Միջագետաց զշխոյս թիւնը իրեն յանձնելով :

1 Այս հեղինէ թագուհին է որ չուզելով կռապաշանելու մէջ բնակիլ. կը գէտայ կայսեր ատենը գնաց Երուսաղէմ, ու հոն սովին ժամանակ բոլոր իր գանձը ծախելով Եգիպտոսէն ցորեն գնեց ու բաժնեց աղքատներուն : Անոր համար էրբոր մեռաւ, մեծ հանգիսով թաղեցին քաղաքին դրան տալև, իբրև հրէից ազգին բարերարը, ու վրան ալ փառաւոր գերեզման շինեցին, ինչպէս կ'ըսէ Եւսեբիոս, որ ինչուան Խորենացոյն ատեն կեցած էր :

Այս քաղաքս հիմա տւերակ է, որոյ մօտե-  
րը կը ցուցնեն Յոր նահապետին զերեզ-  
մանը : Եւ նաքան ասց զգարաց արիւմբ :

Բիրդս, պարսպարարս քաղաք է, որ հի-  
մա կ'ըսուի Պիր կամ Պիրիճիր. Հայոց թա-  
գաւորները շինեցին Եփրատ գետոյն քով,  
որ շատ վաճառաշահ քաղաք էր հին ա-  
տեն. ունի ամուր բերդ մը զոր Ներսէս  
Շնորհալոյն Ապրիլարիս և Լիկոն հօրեզ-  
բօրորդիքը շինեցին, քաղաքը Պարսից ձեռ-  
քէն ազատելէն ետև 1 :

Մերտին բերդաքաղաք, որ ընրան վրայ  
շինած ամուր քաղաք է, հաստ պարիսպ-  
ներով պատած, և կ'իյնայ Եղեւսիա ու Մըծ-  
բին քաղաքաց մէջ : Եւ զանոցայ զի զո զո զո :

Զարդա Գզիրա քաղաք, որ հիմա Ճեզիրե  
կ'ըսուի որ ըսել է կղզի, և կ'իյնայ Տիգրի-  
սին արևմտեան կողմը, ուսկից թերակղզի  
մը պէս չորս կողմէն պատած է : Ունի ամ-  
ուր բերդ ահագին պարսպով պատած :

Նիկեփարիոն քաղաք, որ հիմա կ'ըսուի  
Ռարքս և կ'իյնայ Բիղլիքա գետակին Ե-  
փրատայ հետ խառնուելու տեղը, զոր շի-  
նեց մեծն Աղեքսանդր իրեն դիրքին հաւնե-  
լով, և հին ատեն շատ անուանի էր. ետքէն  
կոստանդին կայսրը նորոգեց, բայց հիմա  
մեծ մասը աւերակ է :

1 Այս Պիր քաղաքին հին անունը ոմանք, Բի-  
րս կ'ըսեն, և ոմանք Բիբիս, և ուրիշները Բիբի-  
սն կամ Պիր-դօսն : Բայց այս վերջինը անստույգ  
կ'երևի :

Եւ ճարտի մնտա

Հայոց Միջագետաց մէջ կ'իյնան նաև Արգարշատ աւանը զոր Արգար թագաւորը շինեց . Չերսուկ և Սրոսձ քաղաքները , Սինգարա ամուր քաղաքը համանուն լերան ոտքը շինած , որ հիմա կ'ըսուի Սինձար : — Սևաւերակ կամ Սևերակ ամուր բերդաւանը . Թիրախրաւ ամուր և անուանի բերդը Սևաւերակին մօտ , Առիճարիչ և Թիկոշրակ աւանները . կրակոյրջ քաղաքը որ հիմա կ'ըսուի կայսնոս գեղ , և քովերը կան շատ հին աւերակներ : Նշեմիկ բերդաքաղաք որ կ'ըսուի նաև Ինճեղի : Վաղի ժամանակաւ զգ

Հայոց Միջագետաց մէջ կ'իյնայ Բուզկան գաւառը , որ Արգար թագաւորին ատեն Միջագետաց մէջ Հայոց զօրանիստ տեղն էր : մմաա մմաա մ , յարմա մգոծն բխդաթ զգ

**ԳԼՈՒԽ ԻԲ .**

**Արարատական .**

240 . Արարատական աշխարհին սահմանը : — Արարատական աշխարհը կ'իյնայ մեծին Հայոց արեւելեան կողմը , կասօլից ծովուն քով , Մարաց երկրին հիւսիսային դին , Արկիրը տեղ տեղ խիստ բարիբեր է , մանաւանդ Գաղբիժու կողմերը , ուր դրեթէ ամէն տեսակ բերք առաջ կուգայ , և ունի ճերմակ մարմարիոնի նման քարահանք , երկաթ , սղինձ , հանքային ջուրեր , առատ աղահանքեր և նախ :

241. Պատմական գիտելիք Ատրպատահան աշխարհին վրայ : — Այս աշխարհին անունը Ատրպատ նախարարին անունովը Ատրպատական ըսուած է կ'ըսեն Յոյնք , որ կ'իյնայ Գարեհ Զ Պարսից թագաւորին ատենը : Աւելի հաւանական է թէ ատր քառէն ելած է , որ սլարակերէն կրակ ըսել է , և ասկէց կը հետեցընեն թէ կրակապատութիւնը նախ հոս հնարուած է :

Ատրպատական աշխարհը մեծն Արշակ Պարթև իր վաղարշակ եղբօրը տուաւ , զինքը Հայաստանի վրայ թագաւոր դնելով : Եւ վաղարշակէն ինչուան Ա. Արտաւազդայ ատեն կ'երևի թէ Հայերը կ'իջխէին նաև այս ընդարձակ աշխարհին վրայ , և անկէց ետքը Պարսից ձեռքն անցաւ , և ատեն ատեն ինքնազուխ եղաւ , Փայտակարան նահանգին նաև Պարսկահայոց մէկ մասին հետ :

242. Ատրպատականի զլխաւոր քաղաքը : — Ատրպատականի զլխաւոր քաղաքն է Գալրեժ , որ կ'ըսուի նաև մեր մատենագիրներուն մէջ Գաւճակ շահաւատն . շինեց մեր մեծն Խոսրով թագաւորը Պարսից Սասանեան Արտաշիւր թագաւորին հետ պարողմէլէն ու զինքը ինչուան Հնդկաստան վտարցընելէն ետև , Քրիստոսի 250 թուականին ատենները , և անունն ալ դրաւ Գալրեժ իբր դալի վրեժ . Արտաշիւրէն Արտասանայ մահուանը վրէժը տոնելոյն համար :

Այս քաղաքս կը կոչեն ոմանք Երկրորդ Եկրատան , Մարտի Եկրատան քաղքին պէս

ևօթը ահաւոր պարխաղներով պատած ըլլալուն համար, զոր 521ին առաւ Պարսից ձեռքէն Տրդատ թագաւորը և աւելի ամրացուց ու նորոգեց : Ատեն անցնելէն ետև (1260) Հուլաու թաթարաց խանը նորէն նորոգեց, և անուանեց Հոշրաու քախա : Այս քաղաքը հին ատեն խիստ բազմամարդ էր, ինչուան 500,000 բնակչով, և շատ ծաղկած էր վաճառականութեամբ, անոր համար շահաւատակ բառով մէկտեղ կը գործածուի, որ ըսել է վաճառաշահ քաղաք կամ շահնու տեղ. որոյ վաճառականութիւնը ինչուան հիմա մնացած է, թէպէտ և առաջինէն շատ պակասած : Այս քաղքին քով լերան վրայ կար հին ատեն հայու վանք մը, զոր հիմա Տաճկըները մզկիթ ըրած են. բերդի նման շէնք մ'ալ, որոյ համար կ'ըսեն Հայերը թէ մեծին Խոսրովայ բնակարանն ըլլայ :

Գաւրէժ քաղաքը շատ անգամ Տաճկըներն ու Արաբացիք առին կողոպտեցին ու արշարկեցին : Բաց ասկէց այլևայլ անգամներ գեանաշարժէ շատ մնասներ եղած է քաղքին մէջ :

243. Ատրպատականի ուրիշ երևելի քաղաքները : — Արտաշիլ քաղաք որ դաշտի մէջ շինուած վաճառաշահ քաղաք է, և ունի ամուր բերդ, որ հիմա փլած է : Այս քաղքին մէջն է Պարսից թագաւորներուն շատին գերեզմանները :

Մարաղա քաղաք, Արմենայ ծովակին մօտ :

Քաղքէն դուրս բլրոյ վրայ կար դիտարան մը , որ հիմա բոլորովին աւերակ է :

Ինչու աւան , զոր շինեց Պարսից Պերոզ թագաւորը : — Էրնագ աւան , զոր շինեց Պերոզին կաւատ որդին : — Խալիսայ գիւղաքաղաք , Արտաւիլին մօտ , և այլն :

244. Դառին գաւառին վրայ գիտելիք : — Դառին գաւառը կամ Դարանդաշտը՝ ուրոյ մէջն է Մուղան ըսուած ընդարձակ ու տափարակ դաշտը , տեղ տեղ շատ պտղաբեր և տեղ տեղ անպտղաբեր , Ատրպատականի ու Փայտակարանի մէջ կ'իյնայ : Մուղան դաշտին մէջն էր շինկիղխանին ցեղէն եղած Թաթարաց խաներուն ձմեռոցները , և Դառինի կամ Դարանդաշտին մէջ ամարանոցները , ուր 1260ին Հուլատուն խանը քաղաք մը ու թագաւորական փառաւոր պալատ մը շինեց :

ԳԼՈՒԽ ԻԳ.

ՎԻՒՔ ԿՍՄ ՎԼԱՍՏԷՆ

Ա. Պատմական գիտելիք<sup>1</sup>.

245. Վրաց ազգին սկզբնաւորութիւնը : — Վրաց ազգը ծագած է Հայկին Քարթլաւս կամ Քարթլոս եզրօրմէն, որ Հայկէն բաժնուելով զնաց հիւսիսային կողմերը, Արմազ լեւը որ կ'իյնայ Գուգարք նահանգին մէջ կուր զեաին քով, և հոն բերդաքաղաք մը շինեց, որ թէ իր անունովն կոչուեցաւ և թէ լերան անուամբն : Իսկ իր մեծ որդին Մծխիթաւ գետոյն անդիի կողմը քաղաք մը շինեց, և իր անունովը Մըծխիթաւ կամ Մցխիթաւ անուանեց :

246. Վրաց ազգին Հայոց հպատակութիւնը : — Կ'երևի թէ մեծն Տիգրան Երուանդեանէն առաջ, այսինքն մեծին Արամայ առենէն, Վիրք հարկատու էին Հայե-

1 Ուղեցիկնք Վրաստանի վրայ քիչ մը ընդարձակ պատմական տեղեկութիւն առլ, վասն զի Հայոց գրակից ազգ ըլլալով, գրեթէ հետերնին միացած էր. իրեն պատմութիւնն ալ մեր ազգային պատմութեան հետ շատ վերաբերութիւն ունի :

րուն . Վասն զի մեծն Տիգրան տիրաբար Վրաց ու նաև Աղուանից ազգէն զօրք կը ժողովէր իրեն թշնամիներուն դէմ պատե-  
րազմելու համար : Բայց այս յայտնի է որ Վիրք ատեն ատեն դուխ քաշելով ինքնա-  
դուխ կ'ըլլային : Ուստի շատ հաւանական կ'երևի թէ ինչուան Տրդատայ ատեն Վիրք կը հպատակէին շատ անգամ Հայոց ու հարկ կու տային . բայց վերջերք զօրանալով չէ թէ միայն բոլորովին զատուեցան 'ի Հայոց , հապա նաև տիրեցին մեծին Հայոց Գու-  
ղարք նահանգին , որ Խորենացոյն ատեն անոնց ձեռքն էր , տիրեցին նաև Տայոց նա-  
հանգին մէկ մասին :

Իրենց տիրած Հայաստանի մասը Սօմ-  
խեր կ'անուանէին , զոր օտարազգիք կը կարծեն թէ 'ի սկզբանէ հետէ Վրաց ըլլար . նոյնպէս կը սեպեն ոմանք Մեկուկ ու Խ-  
մարէր ըսուած երկիրներն ալ , որ հին ատեն Եգերացոց աշխարհին մասն էին , բայց ետքը Վրաց ձեռքը անցեր էր , ինչ-  
պէս նաև Աղուանից երկրին կամ Շիրուա-  
նին մէկ մասն ալ :

247 . Վրաց պաշտամունքը : — Վրաց առջինահապետները աստուածապաշտ կ'ե-  
րևան . բայց երբոր անոնք մեռան , Վիրք սկսան արևն ու լուսինը ու եօթը աստղնե-  
րը պաշտել : Մեծին Աղեքսանդրի մահուը-  
նէն ետև որ տիրեր էր Վրաստանին , ու հոն Ազոնը կուսակալ թողուցեր էր , մտաւ Վրաց մէջ նաև կուսապաշտութիւն Ազոնին

ձեռքովը որ Գացիս ու Գացիս անունով երկու արծրթէ կուսք շինեց, և սկսաւ պաշտել: Ախրք այս կուսքերը ինչուան իրենց քրիստոնէութեան ասան կը պաշտէին, որոնք սուրբն Նունէ վրաց արարելու հին հրաշքով աներևոյթ ըրաւ: Ախրք կը պաշտէին նաև Գիտար, որուն Հայերը կ'ըսեն Սրահնոզի, ուսկեց վխրք ասնելով ըսին Սրահնոզ: Ասան ասան մտաւ վրաց մէջ նաև կրակնայաշտութիւն ձորոցոցայ, ձողի ցոյ

248) Արաց ի քրիստոնէութիւն գաւնալը: — Նունէ կամ Նունի սրբոց Հոխի սիմեանց ընկերներէն մէկը որ վախեր գայեր էր վրաց Մծխիթա քաղաքը, ու հոն ճգնութեամբ կ'ապրէր, ու հրաշներով հիւանդները կ'առողջացընէր, անգամ մը առողջացուց նաև վրաց Միհրան թագաւորին կինն ու որդին, որով անունը ալ աւելի հռչակեցաւ: Յր մը երբոր Միհրան թագաւորը որսի ելեր էր, յանկարծ շորս դին սաստիկ մութ սրտեց, ու երբոր սկսաւ վախնալ ու դիմել Նունէի աստուծոյն, փարատեցաւ խաւարը, ու ինքը այս մեծ հրաշքը տեսնելով, Նունէին քարոզութեամբը բոլոր ժողովրդով դարձաւ քրիստոնէայ եղաւ: Քրիստոսի 518 թուականին և Անտիոքաց պատրիարկէն ձեռնադրուած առաջնորդ մը առին որ կաթողիկոս ըսուեցաւ, և յաջորդութիւնը շարունակեց, երբևմե ի Հայոց և երբեմն իրենց եպիսկոպոսներէն ասնելով ձեռնադրութիւնը:

Քայց եկեղեցական բաներու մէջ միշտ միաբան էին Հայոց, ծէսերնին գրեթէ նոյն ինչուան ժամերգութիւննին, և պատարապ նին ալ տեղ տեղ հայերէն էր: Քայց երբոր Վրաց կիւրիոն կաթողիկոսը ընդունեցաւ իր ազգին հետ մէկտեղ Քաղկեդոնի սուրբ ժողովը, բաժնուեցան ՚ի Հայոց:

249. Վրաց լեզուն վրայ գիտելիք: — Ինչպէս որ Վախտանկ Վրաց պատմիչը որոշ կ'ըսէ, Նաբուքոդոնոսարայ ըրած Հրէից գերութենէն՝ որ եղաւ Քրիստոսէ 600 տարի առաջ, Հրեաներէն ամանք ազատելով եկան Վրաստան, ու Մցխիթայ տանուտէրներէն իրենց բնակութեան երկիր ուղելով, բնակեցան հոն. ինչուան այն ատեն Վրաց լեզուն հայերէն էր, անկէց ետքը Վրաստանի մէջ բնակող այլևայլ ազգերուն լեզերուն հետ խառնուելով, հիմակուան վրացերէն լեզուն ձևացաւ: Ուրիշ տեղ մ'ալ կը գրուցէ Պարսից Վրստաշէս Թազարին ատենին համար, որ առաւ Քարելիներ ու տիրեց Ստրեմտանի ու Վրաստանի, ուր նոյն ատենը Վրաստան վեց լեզու կը գործածուէր, այսինքն հայերէն, խաղրաց լեզուն, ասոցրի, երրայեցի, յոյն, ու անոնցմէ խառնուելով շինուած վրաց լեզուն: Վիրք կ'ըսեն թէ իրենց Փառնատաղ թագաւորը հնարած ըլլայ իրենց հին գիրերը՝ Արշակունեաց տէրութենէն առաջ. բայց ստոյգ է որ Ս. Մկարտկոյ հնարած է իրենց եկեղեցական գիրը, հայերէնին պէս:

250 . Վրաց կառավարութիւնը :— Վերջ առաջ Հայոց պէս սահմանափակ իշխանութեամբ կը կառավարէին իրենց տէրութիւնը անոնց թագաւորի և նախարարի և գլխաւոր իշխանը որ տսւնուտէր կ'ըսուէր, կը նստէր Քարթլին մէջ Մցխիթա քաղաքը, Պարսից կամ Ասորկաստանեայց տէրութեան հզօտակելով :

Այս իշխանութիւնը անեց ինչուան մեծին Աղեքսանդրի ատեն, որ Վրաստանի տիրելով, Ադոն անունով մէկը կուզակալ թողուց : Երբոր մեծն Աղեքսանդր մեռաւ, Փառնաւազ անունով մէկը գլխի քաշեց Ադոնէն, սպաննեց զինքը, ու եղաւ Վրաց առաջին թագաւորը Քարթլասին ցեղէն և տէրութիւնը շատ քնդարձակելով, և Եդերացւոց ալ տիրելով : Աթը կողմնակալ և ըսպարապետ հաստատեց այլեայլ կողմերուն, և բոլոր երկրին հրաման ստեալ որ Վրաց լեզուն խօսին :<sup>1</sup>

251 . Փառնաւազէն ետե իրեք թագաւոր նստան իր ցեղէն, Սյսիւնքն Սայուրմակ կամ Սուրմակ, Մրսեան և անոր որդին Փառնաջում, որ Պարսից մոկերը պատուելուն ու կրակատուններ շինելուն համար ատելի եղաւ իր ազգին : և Վերջ խնդրեցին Հայոց<sup>1</sup> թագաւորէն որ իրեն որդին իրենց

<sup>1</sup> Այս թագաւորին անունը Վերջ կ'անուանեն Վաղարշակ որ մեր Տիգրան Երկրորդը պակի ըլլայ, որ շատ երկիրներու տիրեց, ինչպէս որ

վրայ թագաւոր դնէ, այն ալ ուրախու-  
թեամբ կատարեց Վրաց ազգին խնդիրը իր  
Արքակ որդին անոնց վրայ թագաւոր դնե-  
լով, ու սրատերազմի մէջ Փառնաջումը  
սպաննելով: Ասով Վրաց թագաւորական  
ցեղը Հայոց Արշակունի ցեղին անցաւ, որ  
տեւեց 300 տարիի չափ, ու Քրիստոսի 265  
թուականին հատաւ, որոյ վերջին թագա-  
ւորը եղաւ Ասպակուր:

252. Վրաց Սասանեան թագաւորները:  
— Երբոր Հայոց թագաւորն մեծն խոսրով  
Անակ Պարթևին նենգութեամբը մեռաւ,  
Արտաշիր Սասանեան Պարսից թագաւորը  
եկաւ տիրեց Հայաստանի ու Վրաստանի,  
և Վրաստանի մէջ իր որդին Միհրանը թա-  
գաւոր դրաւ, որ առաջ մէկ քանի յաղ-  
թութիւններ բրաւ Հայոց ու Յունաց դէմ,  
բայց ետքէն մեծն Կոստանդիանոսէն չա-  
բաչար յաղթուելով, հաշտութիւն խօսեցաւ  
Յունաց ու Հայոց հետ, իր Բաճքար որդին  
Կոստանդիանոսին սրատանգ տալով ու մեր  
Տրդատ թագաւորին Սողոմէ աղջիկը կնաւ  
թեան առնելով: Այս Միհրանն է որ ետքը  
սրբոյն Նունէի քարոզութեամբը քրիստո-  
նեայ եղաւ: Իրեն յաջորդեց իր Բաճքար  
որդին, թէպէտ և Հայք կուղէին որ Սողո-  
մէ թագաւորիէն ծնած որդին յաջորդէ. Մի-

թուականն ալ յայանի կը ցուցնէ, վասն զի ոչ  
իրմէ առաջ և ոչ իրմէ ետև Վարբակ անունով  
թագաւոր ունեցած էնք: Բնագիրն է ասաց զայս 193

հրանայ ցեղէն 500 տարիի չափ թագաւորք նստան Վրաց, որոց մէջ Վախտանկ խիստ անուանի եղաւ իրեն քաջութիւններուն համար, ու իրեն Միհրանդուխտ քոյրը Պարսից Խոսրով թագաւորին կնութեան տըւաւ, և Յունաց կայսեր Հեղինէ աղջիկը իրեն կին առաւ: Վերջի թագաւորները Յուհան և Ճուանչէր՝ անժառանգ մեռնելով, թագաւորութեան ցեղը Բաղրատունեաց ցեղին անցաւ:

253. Վրաց Բաղրատունի թագաւորները: — Միհրանեան ցեղը վերջանալէն ետև ը դարուն ետքերը, Վիրք Յունաց կայսրէն գրուած կուրապաղատներով կը կառավարուէր, ինչուան որ 899ին մեր Սմբատ Ա Բաղրատունեաց թագաւորը՝ Դաւթի որդին Ստրնբրսեհը Բաղրատունեաց ցեղէն որ Վրաց կուրապաղատ էր և իրեն ազգական՝ թագաւոր ըրաւ. և այս Բաղրատունեաց ցեղը քչեց գրեթէ ինչուան 1800 Քրիստոսի թուականը: Այս ցեղին տիրելու ատենը Վրաստան երբեմն ազատ կ'ըլլար ու երբեմն մերձակայ օտար ազգերուն կը ծառայէր: Այս ցեղին ատեն շատ յարձակ մունք, աւեր ու կոտորած եղաւ Վրաստանի մէջ, Արաքացոց, Պարսից և Յունաց, ձինկիդիսանէն, Լանկթամուրէն: Այս Բաղրատունեաց ցեղէն Աղեքսանդր Ա 1424ին իր տէրութիւնը իրեք դաւիղներուն մէջ բաժնեց, Իմէրէթը առջինին, Քարթլը՝ որ բուն Վրաստանն է՝ երկրորդին, ու Կախեթը և

Շիրուանը Երրորդ որդւոյն տալով, որով տէրութիւնը իրեք բաժնուելով խիստ տկարացաւ և Տաճկըներէն ու Պարսիկներէն նեղութիւն քաշելով 1783ին Հերակլ վերջին թագաւորը միաբանեցաւ Ռուսաց հետ, և իր տէրութիւնը անոնց յանձնեց, որով վերջացաւ Վրաց թագաւորութիւնը և հիմա Ռուսաց տակն է:

Բ. Աշխարհագրական գիտելիք.

254. Վրաց աշխարհին սահմանը, և բաժանմունքը: — Վրաստանը Հայաստանի հիւսիսային կողմը կ'իյնայ, և սահմանն է արևելքէն Ադուանք, հիւսիսէն Ալանք ու Կովկասու լեռները, արևմուտքէն Եգեր կամ Կոզքիս, հարաւէն մեծին Հայոց Քուզարք և Տայք նահանգները:

Երեք մաս կը բաժնուի. Փարքլի, Կախւրի՝ որ կոչեցաւ Փարթլաւսին Կախոս որդւոյն անունովը, կամ Հերերի Հերոս եղբորը անունովը, և Իմերեք: Փարթլ է բուն Վրաստան, որոյ երկիրը տեղ տեղ շատ բարեբեր ու զուարճալի է, բայց քիչ մշակած. ունի շատ զեաւեր, որոց մէջ գլխաւորն է Կուր զեաւը: Օղը բարեխառն. զըլխաւոր բերքերն են գինի, բամբակ, սև սաթ, ու պղնձի, երկրթի հանքեր և այլն:

255. Վրաստանի զլխաւոր քաղաքները: — Մծխիթա, զոր շինեց Փարթլաւսին Մծխիթոս որդին, Կուր և Արագուի զեաւե-

րուն մէջ տեղը , որ հին ատեն Վրաց մայրաքաղաք էր , և ինչուան Քրիստոսի 470 թուականը Վրաց թագաւորանիստ քաղաքը այս էր , անկէ ետքը պատրիարքական աթոռ եղաւ : Ահնկթիմուր կործանեց այս քաղաքս , և հիմա մեծ մասը աներակ է : Ասկէ ետքը մայրաքաղաք եղաւ

Տփլիս , որուն հիմա կ'ըսեն թիֆլիզ , և Վրացիք թպիլիս քարաքի , որ ըսել է իրենց լեզուովը Չերմուկներու քաղաք , վասն զի քաղաքէն դուրս շատ առողջարար ջերմուկներ կան : Այս քաղաքը շինեց Աախտանկ Վրաց թագաւորը , կուր զետոյն քով , որ քաղաքին մէջէն կ'անցնի : Տփլիս քաղաքը իններորդ դարէն սկսեալ Վրաց թագաւորանիստ մայրաքաղաքը եղաւ , և անկէց 'ի վեր ինչուան հիմա վաճառականութեամբ ծաղկած է . ունի ամուր բերդ մը բլրոյ վրայ , զոր 1576ին Տաճկըները շինեցին :

Կորի քաղաք , կուր զետոյն քով , և կ'երևի թէ զետոյն անունը այս քաղաքիս անունէն ելած է :

Թեղաւ քաղաք , որ ատեն մը հռչակաւոր էր և Վրաց Հերակլ վերջին թագաւորին աթոռանիստ քաղաքը :

256 . Վրաստանի ուրիշ քաղաքները : — Օտարազգիք Վրաստանի մէջ կը գնեն նաև Հայաստանի հիւօխային կողմի քաղաքները , որք թէպէտ և բուն Հայոց մասին մէջ կ'իյնան , բայց 'ի սկզբան ու ետքերը երկայն ատենէ 'ի վեր Վրաց ձեռքը

ըլլալուն համար, բոլորովին անոնց երկրին  
հետ խառնուած կը սեպուէին, ինչպէս են  
այս քաղաքներս Շամշուդէ կամ Շամշուդէ,  
Ախլախ, Ախալքալէք, Թուշարս, Արաս-  
հակ և այլն, որոց վրայ մենք Հայոց մասին  
մէջ խօսեցանք <sup>1</sup> :

### Գ Լ Ո Ւ Խ Ի Գ .

### Ա Ղ Ո Ւ Ա Ն Ք

Ա. Պարոմակուս գիտելիք.

257. Աղուանից ազգին սկզբնաւորու-  
թիւնը : — Աղուանից ազգը ծագած է մեր  
Հայկազն Սիսակ նահապետէն, որ իր հօրը  
Գեղամին երկիրները ժառանգելէն, և իր  
անունովը այն աշխարհը Սիսակուս կամ Սիս-  
ակի կոչելէն ետեւ, ընդարձակեց իր երկիրը

1 Կ'երևի թէ Գուգարք նահանգին մեծ մասը  
ի սկզբան Վրաց ձեռքն էր, վասն զի կը տեսնենք  
որ Գուգարք նահանգին քաղաքները իրենք շի-  
նած են հին ատենէն, և իրենց անունովը կոչած ինչ-  
պէս Օբէէի կամ Շամշուդէ և Խուսան քաղաքները  
շինեց Քարթլուս : Զաւախոս Մցխիթոսին որ-  
դին շինեց Արփահան քաղաքը, և իր անունովը կո-  
չեցաւ Զասախ գաւառը, և այլն :

ինչուան Հունարակերտ քաղաքը՝ որ Կուր գետոյն արևելեան կողմը կ'իյնայ, ու իր քաղցր բնութեանը համար երկիրն ալ Ադրասեր ըսուեցաւ, վասն զի իրեն Ադու կը կանչէին: Բայց ինչպէս որ կ'երևի, իր սերունդները տիրեցին ինչուան Կասպից ծովը, և երկիրը կոչեցին նոյնպէս Ադրասեր, որ ըսուեցաւ նաև Շիրուան իր համանուն մայրաքաղաքին անունովը: Ուստի Ադուանից բուն երկիրը Կուր գետոյն անդիի կողմը կ'իյնայ ինչուան Կասպից ծովը, իսկ ասդիի կողմը եղած երկիրները կ'ըսուին Ուտի և Արցախ: Երբոր վաղարշակ տիրեց Հայոց՝ Առան անունով քաջ ու խելացի մարդ մը կողմնակալ զրաւ բիրաւոր զօրքով Ադուանից երկրին վրայ, Հայաստանի արևելեան հիւսիսային կողմն իրեն յանձնելով: Այս Առանին զաւակէն ելած են Ուտէացոց, Փարզմանացոց, Ծովգէացոց և Փարզարացոց ցեղերը, և բոլոր երկիրն ալ Առան կամ Բան ըսուեցաւ<sup>1</sup>:

258. Հայերուն տիրապետութիւնը Ադուանից վրայ: — Այս բանիս վրայ թէպէտ և որոշ յիշատակութիւն մը չկայ, բայց կ'երևի որ հայկազուն Արամ նահապետին ատենէն ինչուան Արշակունի Տրդատ Թա-

<sup>1</sup> Շատերը կարծած են թէ Ադուանից ազգէն ելած են հիմակուան Աֆղանք, Պարսկաստանի սահմանակից զօրաւոր ազգը, բայց հիմայ քննելով ճանչցուած են ասոնք զատ ու հին ազգ մը:

դուրրին ժամանակները շատ անգամ Հայոց ձեռքին տակ եղած են ու անոնց հարկատու : Թէպէտ և ատեն ատեն անոնցմէ ապրատամբած ու բաժնուած ալ ըլլան : Իսկ երբոր մեռաւ Տրդատ քաջ թագաւորը , Աղուանք ալ զլուխ քաշեցին ու ինքնազուխ եղան : Էւ ետքերը երբոր մեր Արշակունեաց տէրութիւնը տկարացաւ , Աղուանք որ զատ թագաւորութիւն ունէին , զօրանալով , տիրեցին Հայոց Ուտի և Արցախ նահանգներուն , ինչպէս որ Խորենացին իր աշխարհազրութեանը մէջ կը դնէ : Ուտի և Մովսէս Կաղանկատուացիին Աղուանից պատմութիւնը ուրիշ բան չէ , բայց եթէ Ուտի և Արցախ նահանգներուն մէջ հանդիպած դիպուածներուն պատմութիւնը , որ այն ատեն Աղուանից երկիր կ'ըսուէր : Այս պատճառաւ է որ այն երկու նահանգներուն մէջ եղած քաղքրներուն անունները շատ անգամ Աղուանից երկրին անունովը կը յիշուին մեր մատենագիրներուն մէջ :

259. Աղուանից գիրը և լեզուն :— Սուրբն Մեսրոպ հինգերորդ դարուն մէջ Հայոց և Վրաց գրերը գտնելէն ետեւ , անցաւ Աղուանից երկիրը անոնց Արսվաղէն կամ Եսվաղէն թագաւորին ու Երեմիա եպիսկոպոսապետին քով , որոց հաւանութեամբը հնարեց նաև անոնց ալխազուր ու կոտորտած լեզուին գիրերը . որոց լեզուն նոյն էր Վարդարացոց և Ուտէացոց լեզուին հետ : Այս լեզուն թէպէտ և հայերէն լեզուէն ե-

լած է, բայց բոլորովին փոխուած ու խորթացած ըլլալուն, սուրբն Մեսրոպ Հարկեցաւ նոր զիր հնարել. նոյնպէս նաև ազգն ալ Ալանաց ու Լեկաց հետ խառնուած ըլլալով շատ փոխուեր էր: Ուստի երբոր սուրբն Մեսրոպ իրենց զիրը գտաւ, մէկէն անոնց Երեմիա եպիսկոպոսապետը սկսաւ աստուածաշունչ զիրքը իրենց լեզուովը թարգմանել:

260. Աղուանից բարքն ու կրօնքը: — Աղուանք, ինչպէս որ կը ստորագրէ Կորիւն, բնութեամբ վայրենամիտ, գատարկասուն ու անասնաբարոյ մարդիկ էին ու խիստ տգէտ:

Հին ատեն Հայոց պէս երկնային լուսաւորները կը պաշտէին, արևը և մանաւանդ լուսինը, նաև ծառեր, որոնց մարդագոհ ալ կ'ընէին. կը պաշտէին նաև Արամազդը: Իսկ քրիստոնէութիւնը մտաւ Աղուանից աշխարհին մէջ Նղիշէի ձեռքով, որ թագէոս առաքելոյն աշկերտներէն մէկն էր, ու թագէոսի մահուրնէն ետև Երուսաղէմի մէջ Յակոբ առաքեալէն եպիսկոպոս ձեռնադրուելով, եկաւ Աղուանից աշխարհը (որ այն ատեն ինչուան Ուտի նահանգին մէջ կը ձգուէր), և հոն Քիս գեղին մէջ սկսաւ քարոզել քրիստոնէութիւնը, և առջի եկեղեցին շինեց: Անկէց անցաւ զնաց Զարդունի դաշտը, ուր կուռքերու շատ զոհարաններ կային, և հոն կռապաշտներէն նահատակեցաւ, ու մարմինն ալ մահա-

պարտներուն գուրը ձգուեցաւ, ուսկից շատ  
ատենէն ետքը հրաշքով գտնուեցաւ :

Բայց Աղուանից երկրին բուն լուսաւո-  
րութիւնը եղաւ անոնց Ունայր բարեսպաշտ  
ու յաղթող թագաւորին ատեն, որ լսելով  
Գրիգոր Լուսաւորչի ձեռքով Հայաստանի  
մէջ եղած մեծամեծ հրաշները, ու Տրդատ  
թագաւորին հետ մէկտեղ բոլոր Հայոց դար-  
ձը, շատ իշխաններով ու զօրքերով եկաւ  
Հայաստան, ու հոն իր հետը բերած մար-  
դիկներովը մէկտեղ մկրտեցաւ Գրիգոր  
Լուսաւորչէն, և դառնալով իր աշխարհը  
լուսաւորեց զամէնքը: Ետքը Աղուանք ի-  
րենց կամբովը Լուսաւորչի թոռը սուրբն  
Գրիգորիսը իրենց կաթողիկոս ուզեցին, և  
ետքերը սկսան նաև հնազանդիլ Հայոց ե-  
կեղեցական բաներու մէջ, ինչուան իրենց  
կաթողիկոսին ձեռնադրութիւնն ալ քանի  
մը անգամ Հայոց կաթողիկոսէն եղաւ :

Բ. Աշխարհագրական գիտելիք.

261. Աղուանից երկրին սահմանը: —  
Աղուանից բուն աշխարհը կ'իյնայ Կուր գե-  
տէն սկսեալ ինչուան Գարբանդ եղած մի-  
ջոցը. որոյ հիւսիսէն սահմանն է Լեկաց ու  
Վրաց երկիրը ու Կովկասու լեռները, ա-  
րևելքէն Կասպից ծովը, հարաւէն և արև-  
մուտքէն մեծին Հայոց Փայտակարան և  
Ուտի նահանգները: Աղուանից աշխարհը  
երբեմն աւելի ընդարձակ կը ձգուի մեր մա-

տենագիրներուն մէջ, Ռատի և Արցախ նահանգներն ալ մէկտեղ առնելով: Երկիրը թէպէտ և լեռնոտ է, բայց խիստ բարեբեր և գլխաւոր բերքն է բամբակ և ազնիւ ճերմակ նաթ՝ որ շատ առատ կ'ելլէ այն կողմերը, աղ, ապրիչում, ազնիւ գինի, ձիթենի, երկաթ, սղինձ, կենդանիներէն առիւծ, ինձ, յովազ, վայրի էշ, և այլն:

262. Աղուանից գլխաւոր քաղաքները: — Աղուանից երկրին մէջ կը սեպուէր Գարբանդ ամուր և անատիկ բերդաքաղաքը Ասպից ծովուն մօտ, ոսկից կը ձգուի Ճորայ ըստած պահակը կամ պարխապը, լայնութիւնն վեց ոտնաչափ, և երկայնութիւնը միջոններով, ահագին աշտարակներով ամրացուցած: Արևելեայք կ'ըսեն թէ մեծն Աղեքսանդր Մակեդոնացին բոլոր տկար, կարճահասակ, կաղ, կոյր, վնասակար, գող մարդերը ժողվելով բնակեցուց այս տեղս ու պարսպով ամրացուց, ու վրան շինեց երկաթի ամուր դուռը: Բայց վիրք կ'աւանդեն թէ անկէ շատ առաջ, այսինքն Քրիստոսէ 1500 տարիէն աւելի առաջ Արրիտոն Ներբովթայ ազգէն զօրանալով ու տիրելով Արատտանի, շինեց Ասպից ծովուն քով այս Գարբանդ քաղաքը, որ պարսկերէն Տէյայէնտ կ'ըսուի և կը նշանակէ կապ և Գուռն: Այս քաղաքս շինուած է հիւսիսային սզգաց յարձակմունքը արդիւլելու համար Աովկասային լեռներու կրճին բերանը, և կ'ըսուէր Գուռն Գարբանդայ կամ

Երկարի դառն, և ասելի հին ատեն կ'ըսուէր  
Գառն կամ Պահակ Ճորայ: Բայ ասոնցմէ  
տեղ տեղ այս դուռը կը կոչուի նաև Գառն  
Հոնաց:

Շառախի բերդաքաղաք, որ վեցերորդ  
դարուն Խաղրաց ազգէն Շաթ անունով մէ-  
կը շինեց, Կովկաս լեռանց ստորոտքը .  
Պարսից Նատիր շահը անցեալ դարուն մէջ  
կործանեց, բայց ետքէն անոր քովը նորէն  
շինուեցաւ. և հիմա Աղուանից երկրին գըլ-  
խաւոր քաղաքն է. ունի բերդ, և չորս դին  
պարսպով պատած է:

Շիրառան, որ հին ատեն Աղուանից մայ-  
րաքաղաքն էր, և հիմա աներակ է, որոյ  
հին բերդը միայն մնացած է: Այս քաղ-  
քին անունովն է որ հիմա Շիրառան կ'ըսուի  
բոլոր Աղուանից աշխարհը: — Այս քա-  
ղաքս ալ շինեց Շաթ:

Ուրիշ տեղ առիթ չունենալով խօսելու  
Լեկաց և Ալանաց ազգերուն վրայ, հոս հա-  
մառօտ տեղէ կուժիւն մը տանք, որովհետև  
մեր պատմութիւններուն մէջ շատ տեղ կը  
յիշուին: — Ալանք ինչպէս նաև Լեկք, Բա-  
սիկք, Խազիրք, Ասխազք, Սարմատացւոց  
այլևայլ ազգերն էին: Ալանաց ազգին ա-  
նունը ելած է Սարմատիայի Ալանոս գօտիա-  
ւոր լեռներուն անունէն, ինչպէս որ հին  
մատենագիրները կ'ըսեն. բնակիչները տան  
մէջ չէին բնակեր, հապա սայլաբնակ էին, ո-  
րով ուզած ատեննին բնակութիւննին ալ  
տեղէ տեղ կրնային փոխել. ձիոյ վրայ հեծ-

նալու խիստ վարպետ էին, ու պատերազմի մէջ մեռնիլը իրենց փառք կը սեպէին, և բնութեամբ քաջ ու պատերազմասէր ըլլալով, ատեն ատեն յարձրկեցան Եւրոպայի մէջ ու այլեայլ կողմերուն տիրեցին: — Իրենց երկրին և վրաստանին միջոց Կովկաս լեռներուն մէջն է Ալանաց Դուռն ըսուած նեղ անցքը:

Ալանք մեր Արտաշէս Բ<sup>ն</sup> ատեն ուրիշ լեռնային ազգերուն հիստ միաբանելով յարձրկեցան Հայաստան, ու Արտաշէս Բ<sup>ն</sup> յազթուելով և իրենց թագաւորին որդին գերի ինալով, Ալանաց թագաւորը հաշտութիւն սեղեց Արտաշէսէն, ու ամէն բան խոստացաւ միայն թէ իր որդին ետ դարձընէ: Արտաշէս առջի բերան յանձն չառաւ, բայց ետքը Սաթինկայ աղաչանքով՝ որ Ալանաց թագաւորին աղջիկն էր, խաղաղութիւն ըրաւ, Սաթինիկը իրեն կին առնլով, ուսկից ծնաւ Արտաւազդը որ ետքը իրեն յաջորդեց:

Ալանաց ազգէն էր Հայաստանի մէջ եղած Առեղէան ցեղը որ Արտաշէս Բ<sup>ն</sup> ատեն նախարարութեանց կարգը անցաւ. այս ցեղին մարդիկը Սաթինիկ թագուհիին աղագականներէն էին, որոնք իրեն հետ մեկտեղ Հայաստան եկան:

Իսկ Լեկաց ազգը Հայկայ Լեկ կամ Լեկէս եղբորմէն ելած է, անոր համար կ'ըսուի հիմա Լէւի, որոց երկիրը Աղուանից երկրին ետին Կասպից ծովուն մօտ է, որուն հիմա Տաւրուս կ'ըսեն:

Լեկաց թագաւորներուն մէջ կը յիշուի Շէրգիլը անունով ահաւոր ու քաջ մարդ մը որ ուրացեալ Սեհրուժանին հետ միացած

Պատժագաւորին դէմ կը պատերազմէր, որ  
Յունաց զօրքով Հայաստան եկեր էր, զոր ըս-  
տաննէց մեր Սպանդարաւս Կամարականը  
(Քրիստոսի 380 թուականին) Ձիրաւ գաշ-  
տին մէջ եղած պատերազմին մէջ, և իրեն  
գունդը յիրուցան ըրաւ :

## ԳԼՈՒԽ ԻԵ .

### Խաղտիք և Եգերք .

265 . Խաղտիք և Եգերք աշխարհաց սահ-  
մանը : — Խաղտիք Կողքիսին կամ Եգե-  
րացւոց աշխարհին չորս գաւառներէն մէկն  
էր, ու ամենէն մեծը, անոր համար ատեն  
մը գատ աշխարհք ալ սեպուեցաւ . կ'իյնայ  
Տրապիզոնին և Կարնոյ մէջ : Իսկ Եգերա-  
ցւոց աշխարհը<sup>1</sup> կ'իյնայ Սև ծովուն արևե-  
լեան կողմը մեծին Հայոց, վրաց ու Սար-  
մատացւոց սահմանակից, որ ետքերը իրեն

1 Սխալմամբ շատերը կը կարծեն թէ հիմա-  
կուան Չէրէզ ըսուած երկիրը հին Կողքիսն է,  
որ Սև ծովուն արևելեան հարաւային կողմերն է .  
անոր համար Պրոկոպիոս, Սուրբաս և ուրիշները  
Լազիկիան Կողքիս կ'անուանեն :

Իսկ հիմակուան Չէրքէզներուն երկիրը Կով-  
կաս լեւներուն վրայ Սև ծովուն ու վրաստանի  
հիւսիսային կողմը կ'իյնայ : Բայց այս ալ գիտնա-  
լու է որ հիմակուան Մնկուէլ, Իմերէթ ու Կու-  
րիէլ ըսուած երկիրները հին ատեն մասամբ Կող-  
քիսի մէջ կը բովանդակէին :

Ղազիւ կամ Ղազիկայ դաւառին անունովը, որուն Յոյնք Լագիկիս կ'ըսեն, բոլոր աշխարհն ալ Լագիկիս կոչեցաւ, որ հիմա կ'ըսուի Լագիարան, Լագ ազգին անունովը որ հին Կողքիսացոց կամ Եգերացոց ազգէն ելած է:

264. Եգերացոց ազգին սկզբնաւորութիւնը: — Եգերացիք որ բնութեամբ պատերազմասէր մարդիկ են, ելած են մեր Հայկ նահապետին Եզրէս կամ Կորոս եղբորմէն որ գնաց այն կողմերը բնակեցաւ, եւ իր անունով ազգն ալ Եգերացի ըսուեցաւ ու հոն Եգրեա անունով քաղաք մը շինեց որ ետքը Բեղես ըսուեցաւ: Եգերացիք կամ Կողքիսացիք հին ատեն դատ թագաւորութիւն ունէին, բայց մրանին շատ գիւտելիք չկայ. Մեծն Միհրդատ տիրեց Կողքիսին, բայց ետքէն Տրայիանոս կայսեր ատեն, որ Քրիստոսէ հարիւր տարիի չափ ետե կ'իյնայ, Կողքիսացոց աշխարհը բոլորովին Հռոմայեցոց իշխանութեան տակ մտաւ:

Այս աշխարհը չորս դաւառ կը բաժնուէր, որ են Միւռնիսս կամ Միւռնիցի որ է Մնկուէլ, Եգրեշիկս որ է Աճարա, Ղազիք որ է Լագք, եւ Ճանիշ որ կ'ըսուի նաև Խաղտիք, եւ հիմա Ճանիկս:

1 Պէտք է շփոթել հիմակուան Լէշի ըսուած ազգը Լագերուն հետ, լատն զի Լեզկիները Տաղըսաանի մէջ Կասպից ծովուն քով կը բնակին, որ հին ատենուան Սարմատացոց Լէիք ըսուած ազգն է, ինչպէս որ քիչ մը առաջ ըսինք:

Հոս մենք կ'ուզենք համառօտ մը խօսիլ խաղտեաց վրայ, որ երկայն ատեն Հայոց ձեռքին տակ եղան :

265. Խաղտեաց աշխարհին վրայ պատմական գիտելիք : — Երբոր Վաղարշակ Թագաւոր եղաւ ու յաղթեց Մորիսիւղիկէսին, տիրեց նաև Կապադովկացոց, Պոնտացոց, Լազիկացոց, Եգերացոց ու Խաղտեաց և զամէնքն ալ իրեն հարկատու ըրաւ, որոնք Մորիսիւղիկէսին հետ միացած իրեն դէմ ելեր էին : Այն ատենէն սկսան Հայք տիրել Խաղտեաց վրայ, բայց թէ որչափ ատեն, յայտնի չէ : Խաղտեաց երկրին մէջ հին ատեն շատ հայ գտնուելուն համար, Յոյները շատ անգամ Արմենոգայիք կ'ըսէին որ Հայաստադիրք ըսել է : Խաղտիք գաւառը նաև բոլոր Կողքիացոց երկիրը վերջերը Յունաց ձեռքն անցեր էր, և 830ին Յունաց Թէոփիլոս կայսրը երբոր Հաղարացոց դէմ պատերազմի կ'երթար, Խաղտեաց երկրէն անցնելով, մէջը եղած Հայ բնակիչներուն մեծ մասը անով տեղով իրեն երկիրը տարաւ :

266. Խաղտեաց երեւի գետերը : — Խաղտեաց մէջէն կ'անցնի Ծորոխ կամ Ծորոխ գետը, որ զրախտին չորս գետերէն մէկն է, ու Հայաստանի լեռներէն կը բխի Եփրատ գետոյն բխած տեղոյն մօտ :

Խաղտիք գաւառին հիւսիսային կողմը կ'իյնայ Տիտե կամ Ծաւ կամ Ծաւ ըսուած մեծ գետը, որ Կովկասու լեռներէն կը բխի, զոր ոմանք Փիսոն գետոյն հետ կը շփոթեն :

267. Խաղաեաց գլխաւոր քաղաքները :  
— Տաւրոսի քաղաք , զոր եօթներորդ դարուն Համամ անունով վրացի իշխան մը նորոգելով , իր անունովը Համամաշէն կոչեց , որ հիմա կ'ըսուի Համշէն . ունի ամուր բերդ : Այս քաղաքիս ու անոր շրջակայ սահմաններուն բնակիչները որ հին ատեն հայ էին , եւթնետասներորդ դարուն դարձան տաճիկ եղան , սատաիկ հարկապահանջութեան չկրնալով համբերել . բայց ինչուան հիմա դեռ կը գտուին իրենց խօսակցութեան մէջ հայու բառեր :

Համամաշէնի մօտ են Եղլոյիտ , Խեակ գեղերը . որոց բնակիչները որ առաջուց բոլոր հայ էին՝ կամաց կամաց դարձան տաճիկ եղան : Համամաշէնի մօտերը կ'իյնան նաև Բալոյիտ , Տափ գեղերը և այլն :

Պարոզմ , ծովեզերեայ քաղաք է Ճորոխ գետոյն բերանը , և ունի ապահով նաւահանգիստ :

Խօփա կամ Խոշիկ քաղաք Պաթումին հարաւային կողմը , որ շատ բանուկ նաւահանգիստ ունի :

Օֆ քաղաք , Ան ծովուն մօտիկ որ հիմա աւերակ է , սակայն իր անունովը շրջակայ երկիրները հիմա Օֆ կ'ըսուին , որ խիստ լեռնոտ և ապառաժուտ է <sup>1</sup> :

1 Այս քաղաքներուն ամէնքն ալ որոշ չգիտցուիլ թէ հին Խաղաեաց մէջ կ'իյնային չէ՞նէ ու մանք նաև Լազիկիային մէջ :

268. Կողքիսին զլիսաւոր քաղաքները :  
— Դիտակորիսս քաղաք , Սև ծովուն մօտ  
անոր արևելեան հիւսիսային կողմը , որ հի-  
մա Կուրիէլին մէջ կ'իյնայ , և հին անունն  
է Այիս կամ Էս որ Ֆաս կամ Րիոն գե-  
տոյն բերանը շինուած է , և թերակղզւոյ մը  
պէս երկու գետակներէ պատած : Ոմանք  
կ'ըսեն թէ այս քաղաքս շիներ են Կաստոր  
և Պողոկեաիս , որ կ'ըսուին Դիտակուրեանք  
այսինքն Արամազդայ կամ Դիտսի որդիք ,  
և իրենց անունով կոչեր են Դիտակորիսս ,  
ուսկից որ նախ Արգոնաւորդք ցամաքը ե-  
լան . ոմանք ալ ուրիշի կուտան քաղքիս  
շինութիւնը : Այս քաղաքս հին ատեն մեծ  
վաճառաշահ էր , Սև ծովուն վրայ , որ ետ-  
քերը Սևաստոպոլիս ըսուեցաւ , և հիմա Իս-  
քուրիս կ'ըսուի :

Արքեպոլիս , բլրոյ վրայ շինած երևելի  
քաղաք էր Լազիկա գաւառին մէջ :

Պետրե Լազիկիայի մէջ ամուր բերդա-  
քաղաք , զոր Յուստինիանոս կայսրը շի-  
նեց , ու զօրանիստ և վաճառաշահ քաղաք  
եղաւ :

## ՊԼՈՒԽ ԻԶ .

### Պոնտու .

269 . Պոնտոսի սահմանը և բաժանմունքը : — Պոնտոսը Սև ծովուն հարավային կողմը կ'իյնայ, փոքուն Ասիոյ, Կապադովկիայի, Մեծին Հայոց ու Խաղտեաց մէջ : Իր անունովը Սև ծովն ալ կ'ըսուի Պոնտոսի ծով և Երբսիևեան Պոնտոս :

Պոնտոսը երեք մաս կը բաժնուէր . մէյմը Լիևուպոնտոս, որ կ'ըսուի նաև Պոնտոս հատասիայ, որ Պատիզադոնիային արևելեան կողմը, Կապադովկիային հիւսիսային դին կ'իյնայ . որոյ մէջէն Իրիս գետը Սև ծովը կը թափի : Երկրորդ, Պոնտոս Պոպեմոնական, Լինուպոնտոսին արևելեան կողմը, և մէջէն կ'անցնի Թերմոզոն գետը : Երրորդ Պոնտոս Կապադովկիոյ՝ Պողեմոնական Պոնտոսին արևելեան կողմը և կը ձգուի ինչուան Մոսքիկեան լեռները, և այս լեռներով մեծ Հայքէն կը զատուի :

270 . Պոնտոսի տէրութեան վրայ պատմական գիտելիք : — Պոնտոսը կ'երևի թէ հին ատեն Կապադովկիայի մասն էր, բայց հարէն Քրիստոսէ 520 տարիի չափ առաջ անկէ բոլորովին զատուեցաւ ու զատ թագաորութիւն եղաւ :

Երրորդ մեծն Վաղարշակ Մորփիւղիկէսի

յաղթեց, տիրեց Պոնտոսի վրայ ալ. անկէց  
ետքը ինչուան Տիգրան երկրորդին ատեն  
կիշխէին Հայք Պոնտոսի տէրութեանը . և  
Տիգրանայ ատեն անուանի եղաւ իր քե-  
ռայրը <sup>1</sup> Միհրդատ Զ Եւպատոր, որ Պոն-  
տացւոց թագաւորներուն մէջ ամենէն ե-  
րևելին եղաւ, և շատ քաջութիւններուն հա-  
մար որով Հռոմայեցոց տէրութիւնը դողա-  
ցուց, մեծն Միհրդատ ըսուեցաւ : — Մի-  
հրդատայ մահուրնէն ետև երբոր Պոնտո-  
սի տէրութիւնը Հռոմայեցւոց ձեռքն ան-  
ցաւ, Հայերը ամենեկին իշխանութիւն մը չու-  
նեցան Պոնտոսի վրայ :

271. Պոնտոսի տէրութեան գլխաւոր  
քաղաքը : — Պոնտոսի գլխաւոր քաղաքն  
է Տրապիզոն, որ Յունաց Գռափեզա բառէն  
ելած է որ բնել է սեղանի աախտակ, և ձեր  
քառակուսի ըլլալուն համար այսպէս կո-  
չուած է : Այս քաղաքս խիստ հին է, և  
կ'երևի թէ Տրոյիոյ պատերազմին ատենն  
ալ կար, որ Սև ծովուն քով շինուած երևե-  
լի վաճառաչաճ քաղաք է Կողքիսի մօտ,  
ամուր պարիսպներով պատած, և ունի ա-  
մուր և անառիկ բերդ : Այս քաղքիս հայ  
բնակիչքը Համամաչէն քաղքէն եկած են :

<sup>1</sup> Պլուտարքոս և Յուստինոս Միհրդատը Տիգ-  
րանայ քեռայր չեն համարիր հապա աները,  
վասն զի կ'ըսեն թէ Միհրդատ Տիգրանայ հետ  
գրած գաշինքը հաստատ պահելու համար իր  
Կղէոպատրա աղջիկը Տիգրանայ կնութիւն տուաւ :

Տրապիզոն քաղաքին մօտերն է Ամենափրկիչ ըսուած վանքը, զոր 873ին մեծ Հայքէն եկած Հայերը շինեցին բլրոյ մը վրայ:

Միջին դարու ատեն Յունաց կայսերութեան մէկ ճիւղը Տրապիզոն քաղաքը փոխադրուեր էր, զոր վերցուց սուլդան Մէհէմէտ Բ. երբոր տիրեց քաղաքին:

Տրապիզոն քաղաքին մօտ անոր արևելեան հարաւային կողմը կ'իյնայ հիմակուան կիւմիշյասնէ ըսուած տեղը, ուսկից առաջուց շատ առատութեամբ ոսկիի, արծրթի հանք կ'ելլէր, բայց հիմա երեսէ թողած ըլլալուն համար այնչափ առատ չէ: Կայ հոս կիւմիշյասնէ անունով քաղաք մը որ բարձր լեւան մը ոտքը շինած է:

272. Պոնտոսի ուրիշ երևելի քաղաքները: — Պոլեոնիսն, ծովեզերեայ քաղաք է, զոր Պողեմոն Ա. Պոնտոսի թագաւորը նորոգեց և ընդարձակեց, ու իր անունովը կոչեց և իրեն թագաւորանիստ քաղաք ըրաւ, որոյ անունովը Պոնտոսի մէկ մասը Պոնտոս Պոլեոնիսիսն ըսուեցաւ: Այս քաղաքս կը կարծուի թէ հիմակուան Գարսա ըսուած քաղաքն է, որոյ հին աւերակները ինչուան հիմա կ'երևին:

Ամասիա քաղաք, իրիս գետոյն վրայ շինուած, զոր մեծն Միհրդատ Եւպատոր ընդարձակ պարսպով պատեց, ու բոլոր տէրութեան մայրաքաղաքը ըրաւ:

Թեոհասկիշրա քաղաք, որ հիմա կ'ըսուի

Թերակե, Թերմոզոն գետոյն Սև ծովը թափելու անդոյն մօտ շինած :

Նեոկեսարիա, որ հիմա կ'ըսուի Նիքար, իրիս գետոյն վրայ շինած, որ չորրորդ դարուն մէջ Պողեմոնական Պոնտոսին մայրաքաղաքն էր : Այս քաղքիս մէջ ծնաստորքն Պրիզոր Աքանչելագործ :

Սևաստոպոլիս քաղաք, որ հիմա կ'ըսուի Թերրհաւա, շինուած է ապառաժ լեռին մը ըստորոտը, որոյ ծայրը ամուր բերդ մը ունի :

Կերասոն կամ Կերասոս քաղաք, որ ամուր բերդ ունէր, բայց հիմա աւերակ է : Լուկուլլոս Հռովմայեցոց զօրավարը երբոր Հռոմ կը դառնար, այս քաղքէս տաքաւ հետը կեռաս սլտուղը, որ ինչուան այն ատեն անձանօթ էր Եւրոպայի մէջ :

Սինոպ քաղաք, որ ամուր բերդ ունի և երկու նաւահանգիստ : Այս քաղաքը բուն Պափղագոնիայի մէջ կ'իյնայ, բայց երբեմն Պափղագոնիան Պոնտոսի հետ միացած ըլլալուն համար, շատ անգամ Սինոպ քաղաքը Պոնտոսի մէջ կը դրուի :

Սմիաս կամ Սմիաս քաղաք, հին ատեն Սև ծովուն վրայ երևելի քաղաք էր, զոր Միլետացոց և Աթենացոց զաղթականները շինեցին, և մեծն Միհրդատ Եւպատոր Պոնտոսի թագաւորը մեծցուց և զեղեցիկ շէնքերով զարդարեց և իրեն համար ալ մէջը փառաւոր պալատ մը շինեց : Առաւ Լուկուլլոս այս քաղաքը և մէջի անբաւ հարստութիւնները կողոսկտելէն ետև, քաղ-

քին մէկ մասին ալ կրակ տուաւ, զոր ետքէն Պոմպէոս նորոգեց: Այս քաղաքս հիմա կ'ըսուի Մամառն:

Պոնտոսի մէջ կ'իյնան նաև Տրապոնիս քաղաք. թիզիոն կամ թիզէ ծովեզերեայ քաղաք որ ամուր բերդ և նաւահանդիստ ունի. Բրադանա ասանը, և այլն:

### ԳԼՈՒԽ ԻԷ.

#### Եփրատացիք.

273. Եփրատացւոց սահմանը:—Եփրատացւոց երկիրը Եփրատ գետոյն արևմտեան կողմը կ'իյնայ, որոյ սահմանն է հիսիսէն Երրորդ Հայք, հարաւէն Ասորւոց երկիրը, արևելքէն Եփրատ գետը, արևմուտքէն Կիլիկիա:

Հին ատեն կ'ըսուէր Կոնագեն կամ Կոմագ. բայց երբոր Հռովմայեցւոց ձեռքը անցաւ, անունն ալ փոխեցին ու Եփրատացիք զրին, Եփրատ գետոյն քովը ըլլալուն համար, և իրենց ձեռքը եղած ատենը կը բովանդակէր նաև Երրորդ Հայոց մէկ մասը, զրեթէ ինչուան Մեղաս գետը, և Սամոստիան մայրաքաղաք կը սեպուէր:

274. Եփրատացւոց երկրին զլիաւոր քաղաքները:— Եփրատացւոց մէջ անուանի է Գերմանիկ քաղաքը, որ ետքերը Մարաշ

ըսուեցաւ, լեռներու մէջ շինած, և ունի բերդ մը բլրոյ վրայ:

Այս քաղաքս ԺՍ. դարուն Անտիոքայ ու Եղեսիոյ յոյն կուսակալին ձեռքն էր, ետքը Գող վասլին ձեռքն անցաւ, և ետքերը կիլիկեցւոց թագաւորներուն: Մարաշու մօտ է Յևառեանց սեւապատ ըստած վանքը որ 1114ին գետնաշարժէ կործանեցաւ:

Եփրատացւոց երկրին մէջ անուանի է նաև Անրափ կամ Այնրափ ընդարձակ պարսպապատ բերդաքաղաքը, որ հին ատեն կ'ըսուէր Անտիոք առ Տօրոսիւ, մէկալ Անտիոք քաղաքներէն գատելու համար:

Կարկառ ամուր բերդաքաղաք, լերին վըրայ շինած Եփրատ գետոյն արեւմտեան կողմը, որ երկայն ատեն Հայոց ձեռքն եղաւ:

Կոչրիւ ամուր քաղաք, լեռներու մէջ շինած, որոյ մօտ էր Արևընդակ ամրոցը:

Թրպաշար քաղաք որ ըսել է Արաբացւոց լեզուովը Բյուշ աշտուսաց, անոր համար հայերէն այս քաղքին թիլ աշտուսաց ալ կ'ըսուի, և կ'իյնայ Հոռմկլայի մօտ, որ խաչակրաց ատեն Եղեսիոյ լատին կոմսին ձեռքն էր:

Եփրատացւոց մէջ կ'իյնան նաև Պևար բերդը և Չեզգևա քաղաքը Եփրատ գետոյն քով, զոր Սելեկոս Ա. Ասորւոց թագաւորը շիներ էր, և հին ատեն Ասորւոց մեծ վաճառաշահ քաղաքներէն մէկն էր:

275. Հոռմկլայի վրայ գիտելիք: — Հրառմկլայ որ ըսել է հոռոմոց բերդ, Եփրատ գե-

տոյն քով շինած հին ու անառիկ բերդ է ,  
և թերակողովի մը պէս Եփրատ գետէն պա-  
տած է : Այս բերդը ատեն մը Պող Վաս-  
լին ձեռքն էր , ետքը 1116ին Լատինացոց  
անցաւ , ուր զնաց 1147ին Պրիգոր կաթո-  
ղիկոս , թողլով Չորրորդ Հայոց Յովք կըղ-  
ղւոյն մէջ եղած կաթողիկոսարանը , և ի-  
րեք տարիէն ետե գնեց այս բերդը լատին  
ճոսլին կոմսին զաւկէն , որ բերդին տէրն  
էր , և անկէ ետքը այն եղաւ Հայոց կաթո-  
ղիկոսարանը , ուր Պրիգոր կաթողիկոս  
փառաւոր եկեղեցի մը շինեց , և 1165 իր  
եղբայրը Ներսէս Ենորհալին կաթողիկոս  
ձեռնադրեց , որ հոն վախճանեցաւ 75 տա-  
րուան , և գերեզմանն ալ ինչուան հիմա  
կեցած է :

Մէլէք Աշրաֆ Եգիպտոսի սուլդանը  
1293ին յարձրկեցաւ այս անառիկ բերդին  
վրայ , ու երկայն ատեն աշխատելէն ետե  
փրուց պարխապներուն մէկ մասը , մտաւ  
ներս ու բնակիչներէն շատը թրէ անցուց ,  
այրեց եկեղեցիները ու կաթողիկոսարանը ,  
գերեց մնացած բնակիչները , նաև Ստե-  
փանոս Գ կաթողիկոսն ալ իր եպիսկոպոս-  
ներովը մէկտեղ , ու Պրիգոր Լուսաւորչի  
սուրբ աջը՝ զոր Աշրաֆին յաջորդը նորէն  
դարձուց : 140 տարիէն աւելի կաթողիկո-  
սարանը Հռոմկայ եղաւ , ուր 10 կաթողի-  
կոս նստան , և քաղքին առնուելէն ետքը  
կաթողիկոսարանը Կիլիկիայի Սիս քաղա-  
քը փոխադրեցաւ :

## ՔԼՈՒԽ ԻԸ.

### Կ Ի Լ Ի Կ Ի Ա

Ա. Պատմական գիտելիք.

276. Կիլիկիայի վրայ պատմական գիտելիք: — Կիլիկիայի երկիրը Հայաստանի սահմանէն դուրս կ'իյնայ, և հին ատեն առանձին թագաւորներ ունէր, որ երբեմն Պարսից և Յունաց իշխանութեան տակն ընկան, վերջը Հռովմայեցւոց, և ետքը Քիւզանդացւոց կայսերաց. ասոնց ատեն 1080ին Ռուբէն իշխանը Բագրատունեաց Պապիկ վերջի թագաւորին ազգականներէն մէկը, անոր մահը լսելով, զնաց Կիլիկիոյ կողմերը՝ ուր շատ Հայ կային, և զանոնք միաբանելով առաւ Յունաց ձեռքէն Բարձրբերդ ու Կոստառ ամրոցները, ետքը զնաց ամրացաւ Տօրոս լեռին վրայ, ուր շատ Հայեր ժողովուած էին թշնամեաց ձեռքէն ազատելու համար, ու բնակեցաւ Կոստանդուզ գեղին մէջ, և զ Թարիի չափ տիրելով իր ազգին վրայ: Ասով Կիլիկիայի մէջ նորէն սկսաւ Հայոց տէրութիւնը, և Ռուբէնին անունովը Ռաշինեանց կամ Կիլիկեցոց տէրութիւն ըսուեցաւ:

Ռուբէնի յաջորդները հարիւր տարիէ աւելի արեւելին Արլիկիոյ մէկ մասին Պարոն անուանելով, վերջը Անոն Բ որ թէ առաքինութեամբը ու քաջութեամբ անուանի էր, ու խաչակրաց բրած այլեայլ օգնութեամբքը արեւմտեան թագաւորաց հաճոյ, 1198ին Արլիկիոյ Տարսոն քաղքին սրբոյն Սոփիա եկեղեցւոյն մէջ փառաւոր հանդէսով Հայոց թագաւոր օծուեցաւ, և տէրութեան նշանն ալ եղաւ առիւծ, զոր Հենրիկոս Գերմանացւոց կայսրը խաւրեր էր իրեն անուանը համար, որով արծուոյն տեղոր Արշակունեաց նշանն էր, անկէ ետքը Հայոց տէրութեան նշանը եղաւ առիւծ : Թէպէտ և այս նոր թագաւորութեամբ Հայք ուրախացան և սկսան ծաղկիլ քաղաքակաւնութեամբ, բայց շատ նեղութիւն քաշեցին իրենց մերձաւոր այլազգի իշխանաց բռնութենէն, ինչուան որ Արլիկեցւոց տէրութիւնն ալ 295 տարի տեւելէն ետև 1575ին կործանեցաւ Եգիպտոսի սուլթանին ձեռքովը :

Աշխարհագրական գիտելիք .

277 . Արլիկիայի սահմանը : — Արլիկիան կ'իյնայ Միջերկրական ծովուն եզերքը անոր արևելեան հիւսիսային զին . և արևելքէն սահմանն է Եփրատացւոց երկիրը, արևմուտքէն Արկայոնիա և Սաւրիա, հիւսիսէն Կապադոքիական կամ Գամիրք :

277 . Արիւիկիոյ բարեբերութիւնը և զլխաւոր գեաւերը : — Երկիրը խիստ բարեբեր է , ու ամէն տեսակ բերք կը բուսցընէ , և հիւսիսային կողմէն Տօրոս լեռներուն գօտուովը պատած է : Օղը ամառը տաք է և անառողջ : Վլխաւոր գեաւերն են Կիւղնու , Սշուու , Սարու որ և Սեյնան , Պիշաւնու կամ Բիշաւնու որ է ձիհան :

Վլխաւոր բերքերն են տեսակ տեսակ արմտիք ու պտուղներ , ինչպէս են խնձոր , տանձ , սերկեկի , նուռ , սալոր , ծիրան , արմաւ , թուրինջ , նարինջ , լեմոն , ձիթապտուղ , ձմերուկ , և այլն : Աննդանիներէն ոչխար , այծեամն , գոմէշ , արջ , ինձ , և այլն . թռչուններէն սիրամարդ , կաքաւ , արագիլ , և այլն . հանքերէն երկաթ , աղ , սև ու ճերմակ ձիւթ , ծծումբ , արջասպ , և զանազան ջերմուկներ . ունի նաև ազնիւ և առատ բամբակ և ապրիչում :

278 . Արիւիկիոյ զլխաւոր քաղաքները : — Տարսն , որ հին ու անուանի քաղաք է Միջերկրական ծովուն մօտ Աիւղնոս գետոյն քով շինած : Այս քաղաքս հաւանական կ'երևի թէ սուրբ զրքին մէջ յիշուած թարսու կամ թարշիշ քաղաքն է , որ խիստ ծաղկած էր վաճառականութեամբ , և ամէն տեղ հռչակուած . Ռուբէն Բ առաւ Յունաց ձեռքէն այս քաղաքս (1182) , և հոն հաստատեց իր իշխանութեան ակթոսը , ուր մնաց ինչուան 1200 :

Փնտուխտարեզրիպտոսի ամիրայն 1274ին

յարձակելով Ալլիկիոյ վրայ, Լեոն Գին աւան, առաւ Տարսոն քաղաքը, ուր էր թագաւորին դանձը, և արքունական պալատը և սրբոյն Սոխիայ եկեղեցին այրել ապուով, թալլեց քաղաքը, ու շատ հոգի ալ դերի տարաւ: Այս քաղաքս՝ որոյ մէջը ծնած է Պօղոս առաքեալ, հիմա աւերակ է, և կերևի թէ զեսնաչարժէ եղած է, ու անոր քով շինուած է հիմակօսան թարսառս քաղաքը:

Տարսոն քաղքին մօտ էր Հերոսուշեև աւանը, Ակներ կամ Ակներս վանքը զոր Լեոն Բ թագաւորը շինեց (1200):

Անարգարս կամ Անաւարգս, որ քարածայտի վրայ շինած ու ամուր և անմատչելի պարիսպներով ամրացուցած անառիկ քաղաք էր Պիռամոս գետոյն մօտ: Յունաց Պերփեռուժէն կայսրը Լեոն առաջնոյն առնն տիրեց այս քաղքին, ամիսէն աւելի պաշարելէն ու զօրքերուն շատը կորսընցընելէն ետև: Այս անուանի բերդաքաղաքը հիմա բոլոր աւերակ է, և մէջը կը տեսնուին շատ եկեղեցիներ, պալատներ, բաղնիքներ, տուներ բոլոր քարէ շինած, որ օձերու բնակարան եղած են:

Անարգարս քաղքին մօտերը կ'իյնայ Դրագարկ հռչակաւոր վանքը, զոր Թորոս Ա հիմնովին նորոգեց (1100), և երբոր մեռաւ հոս թաղուեցաւ, ուր թաղուեցան նաև Ալլիկեցոյ ուրիշ թագաւորներն:

279. Սիւ մայրաքաղաքը և ուրիշ քա-

գաբներ : — Սիւ քաղաքը , շինուած է Տօ-  
րոս լեռին ստորոտը պղտի գետոյ մը վրայ  
որ Պիւսամաս գետոյն հետ կը միանայ : Այս  
քաղաքս 1 ևսն Բ. 1186ին հիմնովին նորէն  
շինեց , և գեղեցիկ շինուածներով զարդա-  
րեց և ահաւոր պարիսպներով ամրցուց , ու  
աթոսն ալ Տարսոնէն հոս փոխադրեց , և  
անկէ ետքը տէրութեան մայրաքաղաք ե-  
ղաւ : Հեթում թագաւորին ատեն ( 1266 )  
առին Եղիպտացիք այս քաղաքս , ու թալ-  
լելով իրեն ամէն հարստութիւնները , շատ  
հոգի ալ գերի տարին : 1374ին նորէն ար-  
րեցին Եղիպտացիք այս քաղքին , ու կոր-  
ժանեցին անոր մեծ մասը , որոյ աւերակ-  
ներուն մէջ կը տեսնուի դեռ թագաւորա-  
կան պալատին մէկ մասը , զանճատունը ,  
սրբոյն Սոփիայ փառաւոր եկեղեցին զոր  
Հեթում Ս. շինել տուած էր : Այս քաղքին  
մէջ Ալիլիկեցոյ ատեն եօթը անգամ ազ-  
գային ժողովք եղաւ այլևայլ խնդիրներու  
վրայ , և 1294ին կաթողիկոսարանը Հռոմ-  
կլայէն հոս փոխադրեցաւ , և ինչուան հի-  
մա կաթողիկոս մը կը նստի Էջմիածնի կա-  
թողիկոսէն զատ , և է որբոյն Ներսէսի  
Շնորհաւոյն յաջորդութիւնը :

Հին ատեն այս քաղքին բովերն էր Ար-  
քայկաղի և ըսուած վանքը , չորս կողմը կազ-  
նի ծառերով պատած ըլլալուն այսպէս կո-  
չուած :

Իստու քաղաք , որուն մօտ վերջերը շի-  
նուեցան Այսա և Փայսա կամ Էգիսս , Մի-

ջերկրական ծովուն ծոցին քով, որ հին ատեն Խաւեան ծոց կ'ըսուէր, Ռուբինեանց ատեն Հայոց ծոց, և հիմա ալ կ'ըսուի Փայասայ կամ Այասայ ծոց, մեծ ու հարուստ քաղաք էր, և երևելի եղաւ Մեծին Աղերսանդրի Գարեհ Պարսից Թաղաւորին հետ ըրած պատերազմին համար Քրիստոսէ 353 տարի առաջ: Այս քաղաքս Ռուբինեանց ատեն Հայոց ձեռքն անցաւ, բայց անձանօթ է մեր մատենագիրներուն մէջ Խասոս հին անունը, հապա երկրորդական անունները կը գործածուին: Ունի աղահանք և ծովնզերեայ ամուր բերդ մը որ կ'ըսուէր Միևայի բերդ: Անոն չորրորդի ատեն (1320) Հազարացիք տիրեցին այս քաղքին, ու շատ հոգի ջարդելէն ետև կործանեցին անոր բերդը, Թալեցին քաղաքը, ու բնակիչներուն մեծ մասը զերի տարին: Նոյն պէս այլևայլ անգամներ ալ առին Հազարացիք այս քաղաքը Հայոց ձեռքէն:

Ստանա քաղաք, Սարոս զեաոյն քով շինած, և ինչպէս հին ատեն նոյնպէս հիմա ալ Աիլիկիայի մեծ ու անուանի քաղաքներէն մէկն է: Դիրքը ցած ըլլալուն համար ամառը օդը խիստ զէշ և անառողջ:

Մոպրտռեստիս կամ Մաւեստիս, որ հիմա կ'ըսուի Մսիս, Պիռամոս զեաոյն վրայ շինուած է: Այս քաղքիս մէջ Ագրիանոս կայսրը շատ շինութիւններ ըրաւ, և առաջ Յունաց ձեռքն էր, բայց ետքը Անոն Ա առաւ անոնցմէ, որուն տիրեց ետքը (1350) Եգիպտացւոց սուլդանը:

Մլուև բերդաքաղաք , Ատանայի մօտ , զոր 1525ին առին այլազգիք , ու մեծ մասը այրեցին : Մլուևի մօտիկ է թագաւորաշէն աւանը :

Հարգանք քաղաք , որ հիմա կ'ըսուի Հաթին կամ Հեթին :

Կոտումազդ գեղ , Տօրոս լեռներուն վրայ , ուր եղաւ Ռուբինեանց տէրութեան սկըզբնաւորութիւնը Ռուբէն առաջնոյն ձեռքովը :

281 . Կիլիկիոյ երեսլի բերդերը : — Վանկայ ամուր և անառիկ բերդը , որ Կիլիկիայի Կիլիկիոյի հիւսիսային զին Տօրոս լեռներուն մօտ : Այս բերդա Ռուբէն առաջնոյն որդին Կոստանդին առաւ Յունաց ձեռքէն (1095) , ու իր իշխանութեան ամբողջ հոս հաստատեց , ուր մնաց 100 տարիէն աւելի : Յունաց Պերսիեռուժէն կայսրը (1137) բոլոր Կիլիկիան նուաճելէն ետև , տիրեց նաև այս բերդին . բայց ետքէն թօրոս Լևոնի որդին նորէն իր հօրը երկիրները ձեռք ձգելով , վաճկայ բերդն ալ ազատեց Յունաց ձեռքէն :

Այս բերդին մօտ է Կաստաղոն վանքը , ուր թաղեցաւ Ռուբէն Ա. Կիլիկեցւոց տէրութեան սկզբնաւորողը :

Լամբրոն բերդ , Կիլիկիայ Տարսոնի կողմերը և առաջ Ապլիսարիայ անունով Հայ իշխանի մը ձեռք էր , զոր ետքը (1072) Օշին Հայ իշխանին տուաւ , որ Արցախ նահանգին կողմէն եկած էր , և ամրցուց այս բեր-

ղը , ու հոն օրդուց օրդի իշխեսց գրեթէ 300 տարիի չափ , Կիլիկեցուց թագաւորներուն հպատակելով : Հոս ծնաւ Ս . Ներսէս Լամբրոնացի (4153) Օշին իշխանին օրդին :

Լամբրոնի մօտ է Սկևռայ վանքը , ուր տեղ մեծցաւ և առաջնորդ եղաւ Ներսէս Լամբրոնացին , ու ետքը Գրիգոր Տղայէն 23 տարուան արքեպիսկոպոս ձեռնադրեցաւ Տարսոն քաղքին , Լամբրոն բերդին և աւսոր շրջակայ սահմաններուն , ու 43 տարուան մեռաւ և թաղեցաւ Սկևռայ վանքին մէջ :

Կապան բերդ , որ Կիլիկիայի ամուր բերդերէն մէկն էր , կ'իյնայ Տօրոս լեռներուն քով : Հոս գնաց ամրացաւ Լևոն Զ Ռուբինեանց վերջի թագաւորը իր ընտանեօք մէկտեղ , և ինք ամիս թշնամիներէն պաշարուելէն ետեւ , սովէն անձնատուր եղաւ թշնամեաց ձեռքը , որոնք բռնեցին ու չրդթայով կապած Եգիպտոս տարին :

Անուանի են Կիլիկիայի մէջ նաև Սմմիադա բերդաքաղաք Տարսոնի մօտերը , Կռռիկոս բերդ Միջերկրական ծովուն եզերքը , որոյ անունով քովի պղտի հրուանդանն ալ Կռռիկոս կ'ըսուէր : — Սմռտ բերդ , Սռիշժ բերդ , Կոպխտառ , Կօսխտառ , Կխտառաւոն բերդերը , թի) կամ թի) Համտոնյ ըսուած բերդը՝ որ բլրոյ վրայ շինուած է , և Սրաբացուց լեզուիւր կ'ըսուի թի) Համտուն , որ կ'ընչանակէ բրուր Համտոնյ : — Պապկոռն բերդ , զոր Սպլխարիպ անունով Հայ իշ

խանը ամրացուց (1072), ու հոն բնակեցաւ, և մէջը փառաւոր եկեղեցի մ' ալ շինեց:

282. Ախլիկիայի երևելի վանքերը: — Ախլիկիայի մէջ բաց 'ի վերը յիշած վանքերէն, երևելի էին նաև Մեծքար կամ Մեծքարոյ ըսուած հռչակաւոր վանքը, զոր Լևոն Գ. նորոգեց ու մէջը դպրոց հաստատեց:

Մաշկևոր վանքը, զոր շինեց Թորոս Ս. (1100ին առեւնները):

Խորին վանք, Արտակեան ու Միակեցեր ըսուած վանքերը, զորոնք Ասատանդին՝ Հեթում Ս. Թագաւորին բարեպաշտ հայրը շինեց:

Սեաւ լեւոն ալ որ Տորոսի մէկ մասն է ու Երրորդ Հայոց ու Ախլիկիայի մէջ կ'իյնայ, խիստ ծաղկած էր կրօնաւորաց վանքերով. որոց մէջ երևելի էր Շախիբիս վանքը, ուսկից էր Իգնատիոս վարդապետ՝ Վուկասու աւետարանչին մեկնիչ:

Քարաշիրաւ վանքը, ուսկից էր Սարգիս վարդապետը Իգնատիոսին աշակերտակիցը, կաթողիկեայց մեկնիչը:


Ռաւնանայի վանք, Մաշխաւ վանք, Արեղի վանք, և այլն:

Սեաւ լերին վրայ բաց 'ի Հայոց վանքերէն կային Յունաց և Ասորոց վանքեր ալ:

283. Ախլիկեցոց առեն Հայոց ձևօքը և զած ուրիշ տեղուանքը: — Ռուրինեանք զօրացած առեւնին տիրեցին Ախլիկիայէն դուրս Եփրատացոց ու Երրորդ Հայոց մեծ մասին վրայ. ինչպէս Մարաշու, Հոռմկլայի,

Ջահուն գաւառին, Պեհեսնի քաղքին, և այլն: Իսկ այն կողմերու մնացած քաղաքներէն շատերը այլևայլ Հայ իշխաններու ձեռքն էին կայսեր հպատակ և կամ ինքնազուիս ըլլալով, ինչպէս էր ԳողՎասիլը որ Երրորդ Հայոց շատ քաղաքներուն վրայ տիրած էր:

Ռուբինեանց տէրութեան ատեն տիրեցին Հայք նաև բոլոր Իսաւրիային՝ որ Ալիլիկիային արևմտեան կողմը կ'իյնայ, և մէջը կը յիշուին Արատառ գաւառը և Պաղրասայ բերդը. դարձեալ տիրեցին նաև Կապադովկիոյ ու Ասորոց երկրին այլևայլ քաղքերներուն:



Պարտաւորութիւններու շարքին , զորոցմէն շատերն  
 ինչպէս ի վերոյնս արդարեաւ յայտնուած է , ինչպէս  
 ի վերոյնս արդարեաւ յայտնուած է , ինչպէս ի վերոյնս  
 արդարեաւ յայտնուած է , ինչպէս ի վերոյնս արդարեաւ  
 յայտնուած է , ինչպէս ի վերոյնս արդարեաւ յայտնուած է :

Ստորագրողներու անուններն ի վերոյնս արդարեաւ  
 յայտնուած է , ինչպէս ի վերոյնս արդարեաւ յայտնուած է ,  
 ինչպէս ի վերոյնս արդարեաւ յայտնուած է , ինչպէս ի  
 վերոյնս արդարեաւ յայտնուած է , ինչպէս ի վերոյնս  
 արդարեաւ յայտնուած է , ինչպէս ի վերոյնս արդարեաւ  
 յայտնուած է :

**Ն Ո Ր Հ Ա Յ Ա Ս Տ Ա Ն**

Ստորագրողներու անուններն ի վերոյնս արդարեաւ  
 յայտնուած է , ինչպէս ի վերոյնս արդարեաւ յայտնուած է ,  
 ինչպէս ի վերոյնս արդարեաւ յայտնուած է , ինչպէս ի  
 վերոյնս արդարեաւ յայտնուած է , ինչպէս ի վերոյնս  
 արդարեաւ յայտնուած է , ինչպէս ի վերոյնս արդարեաւ  
 յայտնուած է :

Յ Ա Յ Ս Ա Յ Ա Ն Գ Ո Յ

ԳՂԼԿՏԻՔ ԶՆՄԱՆՏԱՔ

Սի մարտարար, որմ ձ մի՞ ըստ **Ն** . 1  
յակա՛ն ի՛նչ նարան զքա ըստ՛ն — , զինձ  
ձ , մի՛նով կանխա՛յ , կանխող զարդ  
մինչև՛ն , մի՛նչմը նարմարամ՛ն զմն  
ձ յակա՛ն . մոձ մի՛նանմանա՛յ ըստա՛յ լին  
չ զմարտար՛ն զո զմի՛նիտն զմի՛նչ զի  
մո՛ն մի՛նչառ 0000 Լինչը բնմա , մարմնա  
մի՛նչմն լառա՛յ զառ 28 մարմնա՛յ մի՛նչ  
սի՛ն մասկի՛նչմն զն սի՛ն մասառա՛յ ձ , առ  
զո մարտն , առմն զգուն՛ն ըստա՛յ մի՛նչ  
զա՛մ ի՛նչ լառա՛յ զառ 28 մարմնա՛յ  
լառի՛ն ըստ՛ն զգառմն ի՛նչառա՛յ զի՛ն  
ըանմնի՛նչ լառա՛յ ձ , առ զո՛ն զառ  
սի՛ն մարտն , զո՛ն զառ 28 մարմնա՛յ  
մի՛նչ զո , զմի՛նչմն ի՛նչառա՛յ զառ  
ժառն ձ լառա՛յ զառ զառա՛յ զառ  
ըանմն զա՛ն մո՛ն ի՛նչ մո՛ն , մարտա՛յ ի՛նչ  
զառա՛յ զառա՛յ զառա՛յ զառա՛յ . զի՛ն զառա՛յ զո  
ըստ՛ն լառա՛յ զառա՛յ զառա՛յ զառա՛յ

# Ն Ո Ր Հ Ա Յ Ա Ս Տ Ա Ն

## Պ Ա Տ Մ Ա Կ Ա Ն Գ Ի Տ Ե Լ Ի Ք

1. Հայոց հին և նոր քաղաքական վիճակը: — Հայոց ազգը ծագած է ՚ի Հայկայ՝ որդւոյ Թորգոմայ, Յարեթայ թոռնէն, և անոր հնազանդած ցեղերէն, Բարեկոնի մէջ ազգաց բաժանմանէն ետև. Հայկայ և իր ցեղին տէրութիւնը որ Հայկազունքը քսուեցան, տևեց գրեթէ 2000 տարիէն աւելի, և Քրիստոսէ 528 տարի առաջ վերջացաւ, և Հայաստան կէս մը ինքնիշխան կէս մը Սելևկացւոց ձեռքը անցաւ, ինչուան որ Քրիստոսէ 149 տարի առաջ Արշակ Պարթև իր Վաղարշակ եղբայրը Հայոց վրայ թագաւոր գրաւ, և սկսաւ Արշակունեաց թագաւորութիւնը, որ տևեց ինչուան Քրիստոսի 428 տարին: Ետքը սկսաւ մարդպանաց և ոստիկանաց իշխանութիւնը, որ էին Պարսից և Հազարացւոց կողմնակալները ՚ի Հայաստան, որուն մէկ մասն ալ Յունաց իշխանութեան տակ ընկած էր. ինչուան որ երրորդ անգամ նորէն հաստատեցաւ Հայոց

Թագաւորութիւնը Ֆադրատունեաց ձեռքովը 885ին և տեեց ինչուան 1045 : Իսկ Հայոց չորրորդ Թագաւորութիւնը, որ կ'ըսուի Ռուբինեանց տէրութիւն, և սկսաւ 1080ին և տեեց ինչուան 1375, Հայաստանի սահմանէն դուրս Կիլիկիայի մէջ. երբ բուն Հայաստանի կը տիրէին մասամբ Յոյնք, Թուրքք, Վիրք, Հազարացիք և քանի մը ազատ Հայ իշխանք և Թագաւորք. ինչուան որ նորէն Թաթարք, Պարսք և Օսմանեան Թուրքք բոլոր Հայաստանին ալ տիրեցին, որոնցմէ մեծ մաս մը առին Ռուսք այս դարուս մէջ : Հիմայ այս երեք ազգաց իշխանութեան տակն է Հայաստան, տեղ տեղ ալ ինքնիշխան Քրդաց բունութեան տակ. որով շատ արուած և անչէն եղած է : Բայց տէրութեանց հիմակուան ջանքովը և Հայոց ազգին անխոնջ համբերութեամբը և ճարտարութեամբն շէննայու վրայ է :

2. Հայոց հիմակուան գիտութեան փճակը և վաճառականութիւնը : — Թէպէտև բուն մեր հայրենական երկրին մէջ որ է Հայաստան, շատ տեղ դեռ տղիտութիւն պատած է, բայց այլևայլ քաղաքներու մէջ ինչպէս են Կոստանդնուպոլիս, Չմիւռնիս, Մոսքուա, Թիֆլիս, Էջմիածին, Կալկաթա, և այլն, ըստ բաւականին ծաղկած են գիտութիւնք, և բուն Հայաստանի մէջ ալ գլխաւոր քաղաքներու և վանքերու մէջ դպրոցներ և ուսումնական ընկերութիւններ կը շատնան. այսպէս ալ դրոց տալա-

րանք և օրագիրք : — Իսկ վաճառականութեան կողմանէ՛ Հայոց ազգը միշտ ճարպիկ և յաջող եղած է . և հիմայ ալ ուր որ բաղմաթիւ են՝ մէջերնին մեծ վաճառականներ ալ կան , այսպէս օտար երկիրներու մէջ ալ կը գտուին :

3. Հայոց կրօնքը : — Հայերը հին ատեն հեթանոսութեան ժամանակ , արև լուսին կրակ ու զանազան կուռքեր կը պաշտէին . բայց քրիստոնէութիւնը մտնելէն ետև , միշտ քրիստոնէութեան մէջ հաստատուն կեցած , ու իրենց ազգային արարողութիւններն ու ծէսերը պաշտպանած ու սրահած են : Իսկ հիմա ազգը երկու գլխաւոր դաս կը բաժնուի , մէկ մասը Հռովմայ քահանայապետը իրենց գլուխ չեն ճանչնար , այլ Եւմիաճնի կաթողիկոսը , ուստի այս մասը կրնանք անուանել Հայ-էւմիաճնական կամ Հայ-արևելեան , իբր արևելեան եկեղեցւոյ վարդապետութեանը հետևող : Իսկ մէկալ մասը , որ թուով քիչ է , Հռովմայ հայրապետը՝ տիեզերական կամ ընդհանուր եկեղեցւոյ գլուխ կը ճանչնայ , ու անոր հաւատոյ դաւանանքը ունի , անոր համար ալ կ'ըսուի Հայ-հռովմական կամ Հայ-արևելքական . իբր արևմտեան եկեղեցւոյ միաբան :

Աշխարհագրական գիտելիք . միջոց  
: մյուս մ . թիս

4. Հայաստանի սահմանը և տարածութիւնը : — Հայաստանի սահմանն է արևելքէն Ատրպատականը կամ Ատրպէճանը , կասպից ծովը և Ադուանից երկիրը կամ Շիրուանը . հիւսիսէն Վրաստանն ու կուրդեստը և ձանիկը՝ որ հին Խաղտիքն է . արևմուտքէն Փոքր Ասիա . հարաւէն Միջագետքն ու Ատրևստանը :

Հայոց երկիրը Փոքր Հայքն ալ մէկտեղ առնելով արևելքէն դէպ ՚ի արևմուտք կը ձըգուի , և տարածութիւնն է իբրև 140,000 աշխարհագրական մղոն :

5. Հայոց ազգին և Հայաստանի բնակչաց թիւը : — Հայոց ազգը աշխարհիս չորս կողմը ցրուած ըլլալուն՝ որոշ չղիացուիր ժողովրդեան թիւը . բայց սովորաբար երկուք ու կէս կամ շատ շատ երեք միլիոն կը սեպուի . այսինքն

- 500,000 ՚ի Ռուսաստան ,
- 100,000 Պարսկաստանի մէջ ,
- 18,000 յԱւստրիա ,
- 10,000 յԱփրիկէ և ՚ի Հնդկիս ,
- 1,000 Եւրոպայի այլևայլ կողմերը .
- 400,000 Եւրոպայի Տաճկաստան .

Իսկ մնացածները Մեծ և Փոքր Հայոց մէջ : Սակայն Հայաստանի մէջ ասկէց աւելի բնակիչ կայ , այլևայլ ազգերէ . ինչպէս են

քիւրտ որ ամենէն աւելի բաղմաթիւ կը սե-  
պուին , տաճիկ , թիւրքմէն , վրացի , սլաւ-  
սիկ , և այլն :

Քիւրտերը՝ որոց անունը կ'երևի թէ մեր  
կորգուք գաւառին անունէն ելած է , հին  
Մարաց և Հայոց ազգէն ձևացած են . հա-  
ւատքնին մահմէտական : Ասոնց մէկ մասը  
գեղերու մէջ կը բնակի ու երկրագործ է .  
խոյ մէկալ մասը վրանաբնակ է , ու տարւոյն  
այլ՝ այլ եղանակներուն համեմատ իրեն բնա-  
կութեան տեղը կը փոխէ : Այս վրանաբնակ-  
ները առջիններէն շատ են , ու մեծ մասը  
Տաճկի հարկատու ու պատերազմի ատեն օգ-  
նական . բայց կան ալ որ ինքնագլուխ են ու  
զատ զատ պէյերով կը կառավարուին : Ա-  
սոնց արհեստն է հովուութիւն ու կենդա-  
նիներ պահել , բայց ասիէ աւելի սովորական  
է իրենց մէջ աւազակութիւն ու մարդ թալ-  
լելը : Այլևայլ ցեղեր կը բաժնուին , որք մէկ-  
մէկու հետ շատ անգամ կը կռուին : Բնու-  
թեամբ շատ քաջ են ու զօրաւոր , երբեմն  
կանայք ալ կը պատերազմին . գէնքերնին է  
սուր և երկայն նիզակ , իսկ գիւղաբնակնե-  
րուն հրացան : Ձի հեծնալու խիստ վարպետ  
են : Քիւրտերուն այլևայլ ցեղերուն մէջ  
կը յիշուին նաև Ռուբոտ\* , Սևիշադի\* , Մա-  
նգոտ\* , Մեն\* և Էլ\* , որք մեր հին հայկազուն  
ցեղերէ ելած են , որ են Ռշտունիք , Սըկու-  
նիք , Մամիկոնեանք , Մանգակունիք , և այլն :

6. Հիմայ Հայաստան անուանած երկիրը :  
— Հայք կամ Հայաստան անունը , որ ելած է  
մեր Հայկ նահապետին անունէն , հիմա

քիչ տեղ կը բովանդակէ : Այս անունը օտար ազգերուն մէջ անձանօթ ըլլալուն , մեր երկիրը Արամ նահապետին անունովը երոստացիք Էրվե՛նիս կը կոչեն , տաճիկները Էրվե՛նիտան : Երոստացւոց աշխարհագիրները բաց ՚ի այս անունէն երբեմն թուրքօմանիս կամ թիւրքե՛նիտան ալ կ'ըսեն մեր երկրին , մէջի թիւրքմէն բնակիչներուն համար , որ մեծասաներորդ դարուն թուրքաստանէն հատուած դալով Հայաստանի մէջ բնակեցան : Հայաստանի մեծ մասը մանաւանդ հարաւային կողմերը կ'ըսուի ֆիւրտիտան , Պարսից մասը Ատրպե՛ճան , Հայաստանի հիւսիսային կողմը Կիւրճիտան , Փոքր Հայքը Անատօլի : Աւստի հիմա Էրվե՛նիտան անունը բուն Էրզրոտմի կողմերուն ու անոր շրջակայ սահմաններուն կը արուի հասարակ գործածութեան մէջ :

7. Հայաստանի գլխաւոր լեռները : — Գլխաւոր լեռներն են Արարատեան լեռները , որոնց ամենէն բարձրն է Մասիսը որ մեր Սմասիս նահապետին անունովը կոչուած է . տաճիկները կ'ըսեն Աղլր տաղ կամ Ախրա տաղ՝ թերևս Ակոռի գեղին անունէն առնելով : Արան մեծ հրաբուխ կայ , որ 1840ին նորէն բռնկեցաւ և ծածկեց Ակոռի գեղը , որ լերին ոտքը շինած էր : Մասեաց վրայ իջաւ Նոյի տապալանը :

Տաշրու կամ Տօրու լեռներ , որ ըսել է Տուր , Հայաստանի արևմտեան հարաւային կողմը :

Կորդուաց լեռներ, որ Կորդուք գաւառին անունովը կոչուած են, արեւելեան հարաւային կողմը :

Մուսիկեան, Պարխար և Կղարք լեռներ, և այլն, արեւմտեան հիւսիսային կողմերը :

8. Հայաստանի զլխաւոր գետերը : — Գլխաւոր գետերն են Եփրատ, տաճկերէն Մուրատ կամ Միւրատ չայր, որ երկու զըլխաւոր ճիւղ բաժնուած է : Մէկը կը բխի Կարնոյ լեռներէն, և տաճկերէն կըսուի Գարս սոշ, մէկալը Ծաղկաց լեռներէն, որ կըսուի Արածանի գետ, և այս է բուն Մուրատ սոշոշ : Այս երկու ճիւղերը իրարու հետ միանալէն ետև կ'անցնի Եփրատացիք և Միջագետք աշխարհքներէն յԱսորեստան, և Պաղտատէն վար Խուռնա քաղքին քով Շաղ կամ Տիգրիս գետոյն հետ միանալով կըսուի Շաղ-իւղ-արապ, և անոր հետ մէկտեղ Պասրա քաղքին քով այլևայլ բերնով Պարսից ծոցը կը թափի :

Տիգրիս կամ Գիդար, տաճկերէն Շար, որ նոյնպէս երկու մեծամեծ ճիւղերէ կը բաղկանայ. և Եփրատայ հետ միանալով կը թափի Պարսից ծոցը : Այս երկու գետերուն մէջ ալ շատ ձկներ կան, և մէջը նաւարկութիւն ալ կըլլայ :

Երաւս կամ Արաս որ կը բխի Կարնոյ լեռներէն, և մէջը շատ վտակներ առնելով ու միանալով Կուր գետոյն հետ Կասպից ծովը կը թափի : Խիստ սաստիկ և սրագ է Կրասխայ վաղուածքը, ջուրը ազնիւ և ա-

սողջարար . մէջը մեծ ձկներ կան , ու վը-  
րան մեծամեծ կամուրջներ շինուած են ,  
որոց մէկն է Չոպան քեօխրիշուի :

Ծորոխ կամ Ծորոխ գետ , ածկ . Չորոզ  
տաշու , Բարերդի մօտ Սպերու լեռներէն կը  
բխի , և կը թափի Սե ծովը :

Կաշր գետ , ածկ . Գիշր , որոյ մէկ ճիւղը  
կը բխի Կարնոյ և Տայոց միջի լեռներէն ,  
մէկաւր Փանաւան լճէն Սխալքէլէքին մօտ  
և միանալով Երասխայ հետ Կասպից ծովը  
կը թափի :

Հայաստանի գլխաւոր լճերը : — Վա-  
նայ ծով , որոյ մէջէն շատ տառեխ ձուկ կ'ել-  
լէ : — Սեանայ ծով , որոյ մէջն է Սեան կըղ-  
զին : — Ռաւնայ ծովակ , որ հին ատեն կ'ը-  
սուէր Կասպուսե ծով : — Փաշաշան ծովակ  
Չրրար , սրուն հին ատեն Հիւսիսային ծով  
կ'ըսէին , կեօղձիկ որ է Ծովը վիճը կամ  
Խարբերդու ծովը :

11 . Հայաստանի կլիմայն : — Հայաս-  
տանի օդը շատ սոսոցջարար է , ու բարե-  
խառն գօտւոյն տակ իյնալուն համար ա-  
մառը դուարձալի : Բայց երկիրը ծովուն ե-  
րեսէն բարձր և լեռնոտ ըլլալուն , ձմեռը  
սասաիկ ցուրտ կ'ընէ , և շատ ձիւն կուգայ .  
Հայաստանի օդոյն պատճառաւ է որ մէջի  
բնակիչները դօրաւոր կազմուած կ'ունենան  
և ուժով կ'ըլլան , վասն զի ծովէն հեռու ըլ-  
լալուն համար օդոյ շատ փոփոխութիւններ  
չըլլար , և տաքութիւնը ցրտութիւնը միա-  
կերպ է , որով շատ տեսակ հիւանդութիւն-  
ներէ ալ ազատ է :

12. Հայաստանի պտղաբերութիւնը: — Հայաստանի երկրին ցրտութեանը ու չորութեանը և շատ տեղ լեռնոտ բլլալուն պատճառաւ ամէն կողմ պտղաբերութիւնը հաւասար չէ. բայց բարեբեր դաշտեր ու հովիտներ շատ ունի, և երկրին մեծ մասը կրնանք ըսել թէ բարեբեր և պարարտ է: Պլխաւոր բերքն է արմտիք, որոց մէջ ցորենը առատ է, ունի նաև հաճար, գարի, սիսեռն, ոլոռն, բակլայ, բրինձ, և այլն: Պտուղներուն մէջ խաղողը ազնիւ է, և շատ տեսակներ ունի: Անուանի է նաև ծիրանը, որոյ նման ուրիշ տեղ չգրանուիր: ունի նաև դեղձ, սալոր, տանձ, խընձոր, սերկելիլ, թուփ, ընկոյզ, շաղանակ, կաղին, նուռ, թուզ, ձմերուկ, սելս, վարունգ, և այլն: Անուանի է Հայաստանի մեղրն ալ, ունի նաև գաղպէ, խաշնդեղ (ռափկետ) որոյ բոյսը կ'ըսուի խաշրժիլ, վուշ, կանեփ, բամբակ, բուրդ, ազնիւ բանջարեղէններ, ու տեսակ տեսակ ազնիւ և գոյնգոյն ծաղիկներ: Ար բուսնի Հայաստանի մէջ յառակ ըսուած բոյս մը, որոյ արմատը մարդոյ կը նմանի, և զեղերու մէջ կը գործածուի:

13. Հայաստանի մէջ դոնուած կենդանիները: — Ընտանի կենդանիներուն մէջ անուանի է արջառ, այծ, ոչխար՝ որոյ դմակը երբեմն ինչուան 12 կամ 15 քաշ կը կշռէ. այս կենդանիներուն պարարտութեանը պատճառաւ կաթնեղէններն ալ աղ-

նիւ են : Անուանի է Հայաստանի ձին , որոյ մէկ տեսակն է նժոյզը որ շատ վազուկ ու գեղեցիկ է . ունի նաև ջորի , էշ , դայլ , աղուէս , ճագար , կուղ (տամսար) , մազոտ կատու Վանայ , և այլն . ունի տեսակ տեսակ թռչուններ , հաւ , սագ , բաղ , կռունկն , արաղիլ , և այլն : Անուանի է Հայաստանի որդան կարմիր ըսուած որդը , ուսկից ազնիւ ծիրանի գոյն կ'ելլէ :

14 . Հայաստանի հանքերը : — Եփրատ գետոյն քով կապան մատէնի մէջ կայ ոսկիի և արծաթի հանք , Արղնայ մէջ պղնձի հանք Տիգրիս գետոյն քով , երկաթի հանք Պարխար լեռներուն վրայ , պղնձի հանք Գուդարաց մէջ , և տեսակ տեսակ հանքեր Գանձակայ կողմերը . աղի հանք դանազան տեղեր , նաւթ , ծծումբ , պաղլիղ , և այլն : Ասոնցմէ դատ կան Հայաստանի մէջ շատ անգործ մնացած հանքեր ալ :

15 . Հայաստանի վաճառները : — Հայաստանի վաճառքն իրեն երկրին մէջ բուսած բերքերն են , գորոնք կ'առնու Պարսկաստան , Տաճկաստան և Ռուսաստան , և են ցորեն , դարի , սիսեռն , չորցած ծիրան , դինի , մեղր , պանիր , ապխտած ձուկ , դղթոր , արջառ , ոչխար , ձի , և այլն : Ասկէ դատ մեծ վաճառականութեան ճամբայ ալ է արևելեան և արևմտեան վաճառուց . և զլխաւոր շահաստաններն են Էրզրում և Գավրէժ :

16 . Հայաստանի բաժանումը : — Հայաստ



**ՏԱՃԿԻ ՀԱՅԱՍՏԱՆ**

17. Տաճկի Հայաստանին վրայ գիտելիք : — Տաճկի Հայաստանը՝ որոյ մէջ կ'իյնան հին Հայոց Բարձր Հայք, Չորրորդ Հայք, Աղձնիք, Կորդուք, Մոկք, Տուրուբերան նահանգները, և վասպուրականի ու Այրարատայ արեւմտեան կողմը, Գաղարք և Տայք նահանգներուն մէկ մասը, հիմա վեց նահանգ կամ փաշայութիւն կը բաժնուի, որ են Էրզրում, Չըլտըր, Կարս, Պայեղիտ, Վան, Տիարուքիք :

**ՆԱՀԱՆԳ. Ա.**

*Էրզրում*

18. Էրզրումի նահանգին վրայ գիտելիք : — Էրզրումի նահանգին զիրքը խիստ բարձր և լեռնոտ է. ցուրտը աստիկ, բայց օդը առողջարար : Գլխաւոր լեռներն են Պիկնիկօղ լեռները որ ջուրերուն առատութենէն ու աղբիւրներուն շատութենէն՝ այսպէս բնուեցան, որ խիստ զուարճալի են,

ու ամառ ատեն տեսակ տեսակ զեղեցիկ ծաղիկներով կը դարդարուին և կ'արդարացընեն Երկրաւոր դրախտը այս կողմերս կարծելը : Այս լեռներէն կը բխին Երասխ և ուրիշ գետեր . Էրզրուումայ մօտ է Տոռլու լեռն , ուսկից կը բղխէ Եփրատ . ուրիշ լեռներէն ալ կը բղխեն Ճորտիս , Թորքունայ գետը , և այլն : Գլխաւոր բերքն է ցորեն , գարի , ծիրան , աղ , շոգգամ , վայրի այծ , ջրային բազ ու սագ , ջրշուն , կուզ , և այլն : Երկրին սաստիկ ցրտութեանը պատճառաւ շատ տեղ այգի չըլլար , և ստղատու ծառեր ալ ինչպէս են խնձոր , տանձ , և այլն , քիչ են :

19 . Էրզրուում նահանգին գլխաւոր քաղաքը : — Գլխաւոր քաղաքն է Էրզրուում որ կը նշանակէ Հռոմնոց կամ Յունաց երկիր , և հին ատեն կ'ըսուէր Կարևոյ քաղաք և Թեոդոսուպոլիս՝ փոքր Թէոդոս կայսեր անունովը , որ այս քաղաքը շինել տուաւ : Գիրքը բլրոյ մը վրայ է ընդարձակ դաշտի մը մէջ , ու երկու ամուր պարիսպներով պատած , որոց վրայ 72 աշտարակ շինուած են , ունի նաև ամուր միջնաբերդ 12 աշտարակով : Շէնքերուն մէջ անուանի են բաղնիքները , վաճառանոցները , մզկիթները , որոց շատը հին ատեն եկեղեցի էին : Անուանի է Ռւլու ճամիին կամ մզկիթին քով շինուած Չիֆտէ մինարէն , որ կարմիր և կապոյտ աղիւսներով շինած է . անուանի է նաև սուրբ Աստուածածնի Հայոց եկեղե-

ցին : Էրզրուում քաղաքը հիմա Ասիոյ  
Տաճկաստանին վաճառաչահ քաղաքնե-  
րէն մէկն է . անուանի է մետաքսը , բամ-  
բակը , պղնձեղէնները , և այլն : Բնակիչնե-  
րը 80,000 կը համրուին . մեծ մասը տաճիկ,  
եւրը հայ :

Էրզրուումի մօտ է Մուտուրկուզ կամ Լու-  
սասուրչի վանքը , Խաչկայ վանքը , Հնձոց  
վանքը Հինձք գեղին մէջ որ կ'ըսուի նաև  
կարսիք վանք , իր գմբեթատր սուրբ Աս-  
տուածածնի եկեղեցին կարմիր քարէ շի-  
նած ըլլալուն համար , որ կը կարծուի թէ  
մեծն Ներսէս շինած ըլլայ , որոյ մօտ կայ  
Հռիփսիմեանց աղբիւր մը տխտատեղի :

Էրզրուումի մօտերը կ'իյնան նաև այս գե-  
ղերը .

Արծարի գեղ , որոյ բնակիչներուն մեծ  
մասը հայ են . և մէջը տաք ջրոյ ջերմուկ  
կայ , նոյնպէս նաև իրեն մօտ Աղտաղտ գե-  
տին մէջ :

Կան գեղ , որոյ բնակիչները Անի քաղ-  
քէն գաղթական եկած կը կարծուին :

Իշիճա կամ Ըլլճա գեղ , ուր տաք ջրոյ  
ջերմուկներ կան :

Տօրուք գեղ , ուր պաղ ջրոյ առողջարար  
աղբիւր կայ :

Քարուռ գեղ , ուր քարի մէջ փորուած  
այրեր , խուցեր կան :

20 . Էրզրուումի նահանգին ուրիշ գլխա-  
ւոր քաղաքները : — Խնուս կամ Խընըս բեր-  
դաքաղաք , ձորի մէջ շինուած լեռնակի մը

ուտքը , որ պարսալի տեղ քաղքին գրեթէ չորս կողմը կը սլատէ . ունի ամուր բերդ մը : Խիստ անուանի են Խնուտի ձիերը :

Թորքում գիւղաքաղաք , ձորի մէջ շինուած , ունի պղտի բերդ մը . և իր վիճակին մէջ գրեթէ 70ի չափ զեղեր կան , որոց բնակիչները տաճիկ և հայ են : Երկիրը զբարձալի և բարեբեր է , և բայ ՚ի ձիթենիէն , ամէն տեսակ պտուղ կը բուսցընէ . ունի նաև աղահանք Ռապար զեղին մէջ : Անուանի են Թորթումի մօտ Էօշք և Խախուզ զեղերը , իրենց մէջի վանքին և փառաւոր եկեղեցւոյն համար , որ հիմա մզկիթ եղած են :

Սպեր կամ Խափիր բերդաքաղաք , Ճորոխ զետոյն վրայ , բնակիչներուն մեծ մասը տաճիկ են : Այս քաղքին չորս գին այգևտաններ ու պարտէզներ կան , և իր վիճակին մէջ ունի շատ զեղեր , երկիրը բարեբեր է և շատ մեղրամում ունի , նաև հանքեր ալ :

Բարերդ կամ Պաշարչր , գաշտի մէջ շինուած բերդաքաղաք է ու երկու կողմէն լեռներով սլատած է , և գիմացը քարածայռի վրայ ունի ամուր բերդ կէս մը փլփլկած : Քաղքին մէջէն կանցնի Ճորոխ զետը , որոյ վրայ չորս կամուրջ շինուած է : Բնակիչներուն մեծ մասը տաճիկ են :— Բարբերդայ սահմանին մէջ է Վարզուհան , որ առաջ ընդարձակ գիւղաքաղաք էր . բայց Ղազերուն յարձակմունքէն հիմա աւերակ և մեծ մասը զետինը թաղուած է . սակայն

դեռ մէկ քանի քարաշէն եկեղեցիներ կե-  
ցած են, կէս մը քայքայած: Բաբերդի վի-  
ճակին մէջ կան շատ աւաններ ու գեղեր,  
ինչպէս Բալախառ, Օճուկ, Վանշէն որ հին  
ատեն կ'ըսուէր Վահանաշէն, և այլն: Բա-  
բերդի վիճակին օգը ցուրտ է ու երկիրը լեռ-  
նոտ, բայց բարեբեր. բնակիչները հայ, տա-  
ճիկ և հոռոմ:

Երզնկա կամ Երզնկա և տաճկերէն Էր-  
զինձևան քաղաք, Գայլ գետոյն քով շինած  
ու պարսպով պատած: Թէպէտ և քաղաքը  
շատ ընդարձակ է, բայց բնակիչները հա-  
մեմատութեամբ քիչ են, վասն զի ստէպ  
երկրաշարժ կ'ըլլայ Երզնկային կողմերը:  
Քաղքին մօտ է Սեպուն կամ Գոհանաւ լե-  
ռը, որոյ վրայ սուրբ Գրիգոր Լուսաւորիչ  
Մանեայ այրին մէջ երկայն ատեն ճղնե-  
ցաւ: Քաղքին չորս կողմը շատ վանքեր  
կան, որոցմէ ոմանք Գրիգոր Լուսաւորիչը  
շինած է, և ոմանք ալ հին մեհեաններէ  
յարմարացուցած: Ասոնց մէջ անուանի է  
Ներսէս հայրապետ ըստած վանքը, զոր մեր  
Տիրան Արշակունի Թաղաւորը շինած է կ'ը-  
սեն, անոր համար Տիրանաշէն կ'ըսուի և  
դեր առաջուց. բայց երբոր մեծին Ներսէ-  
սի մարմինը Թիլ աւանէն հոս փոխադրեր  
են, անոր անունովը Ներսէս հայրապետ կո-  
չուեր է: — Երզնկա քաղքին տաճմաննե-  
րը շատ գեղեր կան. երկիրը բարեբեր է և  
ամէն տեսակ պտուղ կը բուսցընէ. ջուրը  
առատ է, օգը առողջարար, ու հողն ալ

սաստիկ բորակային, անոր համար երկրա-  
շարժ ալ շատ կ'ըլլայ: — Երգնկա քաղաքին  
ու Էրզրուումի մէջ կայ քարաշէն մեծ իջևան  
մը կարաւաններուն համար որ կ'ըսուի Մա-  
ւնախարուն, զոր փաշայի մը Խաթունը շի-  
նած է, ու անոր համար իր անունովը կո-  
չուած է:

Կամախ կամ ֆեմահ, անուանի բերդա-  
քաղաք է, որ հին ատեն կ'ըսուէր նաև Ա-  
նի: Իրեն մօտերն է Թորդան գեղը, Առագ  
վանքը Թաղէոս արարելոյն անունովը շի-  
նուած է: — Բազառիձ կամ Բեգեռիձ, որ եր-  
կու գեղեր են իրարու մօտ, ու կոսալաշ-  
տութեան ատեն շատ անուանի էին մեհեան-  
ներով: — Կամախին շրջակայ սահմաննե-  
րը ազնիւ աղի հանք կայ, անոր համար հին  
ատեն այս կողմերս Գարանտղի գաւառ կ'ը-  
սուէր:

Կեղի գիւղաքաղաք, բնակիչներուն շատը  
հայ են, և մօտ է իրեն Սուրբ Կարապետ  
վանքը, որոյ քովէն կ'անցնի Օրոր գետա-  
կը, վրան քարաշէն կամուրջ շինած, որոյ  
վրայ նահատակուած է կ'ըսեն Խաղ եպիս-  
կոսոսը, անոր համար ալ կ'ըսուի ֆեշիշ  
քեօփրիսի:

21. Բասեն գաւառին վրայ գիտելիք: —  
Բասեն գաւառը Երասխ գետոյն երկու կողմն  
ալ կը ձգուի, ու երկու մաս կը բաժնուի,  
որ կ'ըսուին վերին Բասեն և վարի Բասեն,  
երկրորդը առջինին արևելեան կողմը կ'իյ-  
նայ և անլի ընդարձակ է: Երկիրը բարե-

բեր է արմտեաց կողմանէ , բայց պաղատու ծառեր չբուսցընէր : Հիմա Բասեն դաւառը աւելի ընդարձակ կը ձգուի քան թէ հին ատեն , և Էրզրումի փաշային իշխանութեան տակն է :

22. Վերին Բասենոյ գլխաւոր տեղուանքը : — Հասանդարա կամ Հասանգաշէ քաղաքուան , 5000 բնակչօք . վերին Բասենոյ մէջ խոտաւէտ լեռին մը ոտքը շինած որ հին ատեն Միրանի լեռ կ'ըսուէր : Այս լեռին մէկ կողմը շինուած է ամուր բերդ մը , որ շինողին անունովը Հասանդարա ըսուեցաւ , ուսկից զիւղաքաղաքն ալ նոյն անունը առաւ որ հին ատեն Յուստինիանոսպոլիս կ'ըսուէր : Բերդն ու քաղաքը կրկին սարքսպով պատած է , և սարսալին չորս կողմն ալ խրամ բացած , ուր սլատերագմի ատեն քովի Հասանդարայոս չորս ըսուած գետէն որ հին ատեն Մոռոց կ'ըսուէր , մէջը ջուր կ'արձըկեն : Գիւղաքաղաքին մօտերը երկու տաք ջրոյ ջերմուկներ կան , որոց վրայ քարաշէն բաղնիք շինուած են , փոքր թէոզոս կայսեր Անատոլիս զօրավարին ատենէն : — Հասանդարայոս քովն է Բասենոյ կամ Հասանդարայոս կամ Ատոռաւաձնի ըսուած վանքը , զոր Գրիգոր Մագիստրոս շինած է , և անոր եկեղեցոյն մէջ թաղուած իր մարմինը : — Հասանդարայոս մօտ է Չօպան քեօյրիշի ըսուած մեծ ու քարաշէն կամուրջը եօթը կամարով Արասիս գետոյն վրայ , հովուի մը ձեռքով շինուած :

Հասանդալա զիւղարաղաքին մօտերը կ'իյնան Ախա, Ակուշի, Գումնօր, Պատիձփան գեղերը, որոց բնակիչները գրեթէ բոլոր հայ են:

Աշրևկայ բերդ, որուն տաճկընները կ'ըսեն Ճիվան գալեսի, հին ամուր և անառիկ բերդ է քարաժայռի մը վրայ շինած, ուր սլառերազմի ատեն կ'ապաւինին մօտիկ գեղերուն բնակիչները: — Անիկ բերդին մօտ է Խուրայերան գեղը, որ գեղեցիկ ու ծաղկով զարդարուն հովտի մը մէջ շինուած է: Այս գեղին մօտ է Բոցիկ ըսուած բարձր լեռը, բոլոր սև ու սպառած քար:

Փոքր Տու և Մեծ Տու որ իրարու մօտիկ երկու գեղեր են, և հին ատեն կ'ըսուէին Որդորու և Դու:

Ֆեօիրիշ քեօյի որ Չոպան քէօիրիսիւնին քով շինուած է, և կ'երեւի թէ հին վաղարշաւան քաղքին տեղն է:

Իշխու գեղ, որ առաջուց Իշխան կը կոչուէր, ձորի մէջ շինուած է, և քովերը շատ աւերակներ կան:

25. Ստորին կամ վարի Բասենոյ զըլխաւոր տեղուանքը: — Խորատան զիւղարաղաք, որոյ բնակիչները կէս մը հայ կէս մը թուրք են:

Մժնկերտ զիւղարաղաք, որ բերդ ունի և քովերը տաք ջրոյ ջերմուկ: Մժնկերտի մօտ է աշրբ Խաչ լեռը, որոյ վրայ սուրբ Խաչ անունով փառաւոր եկեղեցի մը կայ. բաց ասկէց վեց եօթը հատ ուրիշ քարաշէն ե.

կեղեցիներ , և գտնէթաւոր կտոր մատուռ մը միակտուր քարէ փորուած :

Բաց ասոնցմէ կան Ստորին Բասենոյ մէջ ուրիշ շատ գեղեր ալ մեծ ու պզտիկ , ինչպէս Չիրահանք , Պաշգեղ , Արմուտոյու , Չիւրիկ , և այլն :

24 . Տուժիկ դաւառին վրայ դիտելիք : — Այս դաւառը Բիւրտերուն ձեռքն է , և էր-գիւումի փաշայէն կախմունք չունի : Երկիրը ընդարձակ , ամուր և շատ բարեբեր է , որ գրեթէ ամէն տեսակ պտուղ կը բուսցընէ : Բնակիչները բոլոր քիւրտ են և աւազակութեան հետ կը լլան , և շատ անգամ կարաւանները կը թալլեն , զորոնք անկարելի եղած է նուաճելը իրենց երկրին ամբուսեանը համար :

Այս դաւառին մօտ է Տերսիս լեռը , որոյ ծայրը մեծ եկեղեցի մը կայ 40 խորանով , զոր սուրբն Արիստակէս շինած է կ'ըսեն , բայց հիմա պանրի ամբարանոց եղած է , և թող չեն տար Բիւրտերը որ քրիստոնեայք ներս մտնեն :

ՆԱՀԱՆԳՐ

ՉԵՒՐՐ

25. ՉԵՒՐՐ նահանգին վրայ գիտելիք :  
— Այս նահանգը որ առաջ Ախուրխա ալ  
կ'ըսուէր, Երզնուումայ և Կարապէ հիւսի-  
սային կողմը կ'իյնայ. 1828էն վերջը մեծ  
մասը Ռուսի ձեռքն անցաւ Ախուրխա քաղ-  
քով մէկտեղ : Երկիրը ընդհանրապէս բա-  
րեբեր. մէջէն կ'անցնի Ճորոխ գետը, և ա-  
նոր Աճարա վտակը :

26. ՉԵՒՐՐ նահանգին զխաւոր քաղաք-  
ները : — Արտակոշ պարսպապատ քաղաք  
որ ամուր բերդ ունի : — Արդուին քաղաք,  
որոյ չըջակայ սահմանը շատ բարեբեր է, և  
իրեն հարաւային կողմը իշխան գիւղաքա-  
ղաքը, որոյ մէջ փառաւոր եկեղեցի մը կայ  
հնուց մնացած : — Արտական բերդաքա-  
ղաք, Սարիշ աւան, Օլրի սրբապատ  
քաղաք որ հին ատեն կ'ըսուէր Ռիստիք,  
Նառիսան որ հին ատեն կ'ըսուէր Մաւ-  
րուան, Բերդագրակ գիւղաքաղաք, որոյ  
սահմանակից գեղերուն բնակիչները բոլոր  
հայ էին, բայց ետքէն շատը տաճկացան :  
Բերդագրակին մօտ է Խտարքչուշ ըսուած  
երկիրը, որոյ հարաւային կողմէն Ճորոխ  
գետը կ'անցնի. երկիրը լեռնոտ և ողբ ցուրտ,  
բնակիչները բոլոր հռովմէական հայ են :

## ՆԱՀԱՆԳ Գ .

### Կարս .

27 . Կարս կամ Գարս նահանգին սահմանը : — Կարս նահանգը կ'իյնայ Չըլտըր, Էրզրում և Պայէզլիս նահանգներուն մէջ : Երկիրը բարեբեր է . ունի ցորեն, գարի և տեսակ տեսակ սրտուղներ : Գլխաւոր գետն է Արփա չայր, որ համանուն լճակէն կ'ելլայ, հին ատեն կ'ըսուէր Ախաշեան գետ :

Այս գետով կը բաժնուի հիմա արևելեան կողմէն Տաճկի սահմանը Ռոսի սահմանէն : Ունի լճեր ալ, որոնց գլխաւորն է Չըլտըր, հին ատեն Ծախակ հիւսիսայ կամ Պաղակացիս ըսուած :

28 . Կարս նահանգին գլխաւոր քաղաքները : — Գարս կամ Դարս փաշայանիստ ամուր բերդաքաղաք, որ պարսպով պատած է : Բնակիչները քաղքին մեծութեանը համեմատ քիչ են, որ հիմա 12,000 կը համրուին, որոցմէ շատը քիւրտ ու հայ են : Անուանի է հոս Աբաս Թաղաւորին շինած փառաւոր եկեղեցին 950ին, որ ինչուան հիմա կեցած է : Կարսին շրջակայ սահմանները 200ի չափ մանր գեղեր կան, որոց մէջ անուանի է Զարիշատ գեղը, որ հին ատեն երևելի քաղաք էր : Այս քաղաքս վերջի պատերազմին ատեն (1855) Ռոս-

ները առին և բերդերը արելով նորէն թողուցին Սամանեանց :

Կաղզուան կամ Գաղզման զիւղաքաղաք՝ լերին ոտքը շինած, որոյ Հայ բնակիչներուն շատը Ռուսաստան դաղթուեցան : Գինւոյ ու ստղոց շատ առատութիւն ունի իւրեն շրջակայ սահմանները : Ասոր մօտերն է Վարդիներ վանքը, որ հին ատեն կ'ըսուէր Վարդիկ հայր :

29. Եօրէկէլ գաւառին վրայ գիտելիք : — Եօրէկէլ գաւառը հին Շիրակ գաւառն է, և անունը ելած է հին Շիրակաւան քաղաքէն : Կրկիւրը շատ բարեբեր է, բայց մշակութիւնը քիչ . մէջը շատ գեղեր կան, բայց ամենէն անուանին է Անի քաղքին աւերակները . դեռ կեցած է պարսպին մեծ մասը աշտարակներովը, և տասնի չափ և կեղեցիներով, որոց երեքը չորսը կէս մը կործանած են, մէկաշնոնք դեռ ամբողջ կեցած, նոյնպէս նաև թագաւորական ընդարձակ ու զարգարուն պալատը կէս մը կործանած : Անւոյ հարաւային կողմը կ'իյնան Մրևե ու Բագարան քաղաքներուն աւերակները, որ հիմա կ'ըսուին Ղարապաղ ու Բագրան : Անւոյ մօտ է Խօշալանք ըսուած մեծագործ վանքը, Ախուրեան գետոյն քով, որ են Բագրատունի թագաւորներուն ումանց գերեզմանները, որորոցի ձևով կարմիր քարէ շինուած : Ասոր մօտերը կ'իյնան Շիրակաւան ու Արգիևա երևելի զիւղաքաղաքաց աւերակները :

... 30. Պայէզիտ նահանգին սահմանը : —  
Պայէզիտի նահանգը կ'իյնայ Բատեն, Կարս,  
Երևան ու Վյան դաւառներուն մէջ տեղը :  
Բնակիչներուն շատը հայ ու քիւրա են :  
Երկիրը բարեբեր է, և վայրի կենդանիներ  
շատ ունի : Այս դաւառին մէջ կը բոլիտ Ե-  
փրատայ արեւելեան ճիւղը, որ Մոսքաւ կ'ը-  
տուի, և հին ատեն Արածանի : Գրգ Գրգ

31. Պայէզիտի նահանգին զլխաւոր քա-  
ղաքները : — Այս նահանգին մէջ անուա-  
նի է Պայէզիտ ամուր բերդաքաղաքը լերին  
վրայ շինած : Կ'երեւի թէ հին ատեն այս քա-  
ղաքը կ'ըսուէր Դարոյնք, որոյ բնակիչները  
10,000 կը համրուին. շատը քիւրա են ու  
վաճառականութիւնը բաւական ծաղկած է :  
Այս քաղաքն ալ առին Ռուսք 1854ին, ու  
ամրութիւնները արելով թողուցին :

Տիատին քաղաքաւան, ունի ամուր միջ-  
նաբերդ մը : Այս քաղքին մօտ է Այա տա-  
ղը, որ հին ատեն կ'ըսուէր Ծաղկաց լեռ,  
ուսկից կը բխի Եփրատ գետոյն մեծ ճիւղը .  
և շատ ջրաբերի ու պարարտ լեռ ըլլալուն  
համար, գարնան տեսակ տեսակ ծաղիկ-  
ներով կը զարգարուի : Տիատինէն երեք ժամ  
հեռու է Իւշ քիլիսէ ըսուած վանքը, հին

...



ՆԱՀԱՆՔ Ե.

Վան.

33. Վան նահանգին վրայ գիտելիք : — Վան նահանգը կ'իյնայ Պայէզիտին, Ատրրպատականին, ու Տիարպէքիրին մէջ : Բնակիչներուն շատը քիւրտ, հայ և տաճիկ են . բերքերուն մէջ ցորենը, դինին, մեղրը աղնիս են : Գլխաւոր լեռներն են Ներքուրայ լեռ, Գրգուռ լեռ, Սիփան լեռ, Վարագ՝ որոյ վրայ տասուերկու եկեղեցի կայ շինած և Աւագ սուրբ նշանի վանքը : Կապուտակոյ լեռ որ հին սառն կ'ըսուէր Բնաքիսար : Գետերուն մէջ անուանի են Տիգրիս, և Վանայ ծով Թափուող դետակները, ինչպէս Անգղ, Մարմեա կամ Խօշապ, և այլն : Այս ծովակին մէջէն շատ տառելի ձուկ կ'ելլէ, ջուրը աղի, և շատ խորունկ է . և մէջը չորս կղզի ունի, որ են Աղթամար, Առաւել, Կըտուց, Լիւս : Երայեանց անկէ մասնն իտա

34. Վանայ ծովուն կղզիներուն վրայ գիտելիք : — Աղրաւարը որ Լիւս ու Կտուց կղզիներէն պզտիկ է, կ'իյնայ Վանայ ծովուն արևելեան հարաւային կողմը, ուր տասներորդ դարէն ՚ի վեր Հայոց կաթողիկոսութեան մէկ ճիւղը կը նստի : Անուանի է մէջը առքը Խաչի փառաւոր վանքը ու անոր եկեղեցին, զոր շինեց Գաղիկ արծրունեայ Թաղաւորը :

Ստակեր կղզին Նարեկայ գեղին դիմացը կ'իյնայ և հիմա անբնակ է :

Կտուցը կ'իյնայ Աղթամարին արևելեան հիւսիսային կողմը, մէջն է սուրբ Կարապետի վանքը :

Լիւմը որ ամենէն մեծ կղզին է, Կտուցայ մօտ է, մէջն է սուրբ Գեորգայ վանքը :

Այս վերջի երկու կղզիներուն մէջ խըստակրօն ճգնաւորներ կան :

ՃԾ. Վան նահանգին զլիաւոր քաղաքը և ծովեզերեայ տեղուանքը : — Այս նահանգին զլիաւոր քաղաքն է Վան որ հին ատեն կ'ըսուէր նաև Շամիրսակերտ : Երկու ամուր պարիսպներով պատած է, և դիմացը քարածայռին վրայ ունի անառիկ բերդ մը, զոր Ասորեստանեայց Շամիրամ թագուհին շինած է : Այս քաղքին բնակիչներուն շատը Տաճիկ են . Հայեր ալ շատ կան, և ութը քարաշէն եկեղեցի ունին : 1648ին երկրաշարժէ քաղքին մէջ շատ տեղեր կործանեցան, ու շատ հողի ալ փլատակներու տակ մեռան : Հիմա բնակչաց թիւն է 25 կամ 30,000 ու առուտուրը բաւական ծաղկած է :

Վան քաղքին չրջակայ սահմաններուն մէջ կան շատ գեղեր ու վանքեր . որոց մէջ անուանի են Արտամեա աւանը, որ ազնիւ խնձոր, տանձ և խաղող ունի : Այս աւանը շատ շինութեամբ և պարտէզներով զարդարեր էր մեր Բ. Արտաշէսն : Այլանց գեղ, որ Վանայ ծովուն վրայ բանուկ նաւահան,

գիտա է, անոր համար Տաճկերէն իսրէյի  
քեօյիւ կըբաւի: — Եարեկ գեղ, վ անայ ծո-  
վուն հարաւային կողմը, ուր է Եարեկայ  
հռչակաւոր վանքը, որոյ մէջն են Գրիգորի  
Եարեկացոյն և սրբոյն Սանդխտոյ գերեզ-  
մանները: — Համուշ կամ Սմուշ բերդա-  
ւան, արեւելեան կողմը, որ հին առին շատ  
անուանի էր, ուր Գաղիկ Արծրունեաց թա-  
գաւորը շատ շինութիւններ բրեր էր: —  
Բատականց գեղ, վ անայ ծովուն քով որ  
Բատ անունով իշխան մը շինած է: Սոր  
մօտ է իշի կամ Ռշուէ վանքը որ լերին վրայ  
շինուած փառաւոր քարաշէն եկեղեցի մը  
ունի, որ կըբաւի նաև Գառաուն խորան, քա-  
ռասուն խօբան ունենալուն համար, և շի-  
նած է Գաղիկ Արծրունեաց թագաւորը: —  
Կարսրակայ վանք, Սուտէր կղզոյն գիմա-  
ցը, որ քարաշէն եկեղեցի ունի Գաղիկ Արծ-  
րունիէն շինած: — Թումայ առարեոյն վան-  
քը որ ծովահայեաց գեղեցիկ գիրք ունի:

36. Վ անայ նահանգին ուրիշ գլխաւոր  
քաղաքները: — Խօջանք բերդաքաղաք, հա-  
մանուն գետոյն քով շինած, ունի քարա-  
ժայռի վրայ ամուր բերդ: — Խօջապին  
մօտերն է Սպազա ամուր բերդաքաղաքը  
որ երեք բերդ ունի, և Հոգոց վանքը, ուր է  
սուրբ Աստուածածնի հրաշագործ պատկե-  
րը զոր Բարթեղիսէոս առարեակը Հայաս-  
տան բերաւ:

Ստաս քաղաք, վ անայ ծովուն հարա-  
ւային կողմը, ունի բերդ, բայց անբակ է:

բնակիչները քիւրտ են : — Ռատանի մօտ է Գարադաշտ , գեղը որ հին ատեն կ'ըսուէր Մանակերտ և Վարդշատ գեղը՝ ուր է սրբբոյն Եղիշէի Թարգմանչին վանքը և դերեգմանը :

Բերկրի քաղաք , ունի բերդ , և զինացը սրբոյն Ստեփանոսի վանք մը լերան վրայ շինուած :

Այժեշ քաղաք , որոյ մօտ է Մեծոփայ վանքը :

Արծկե բերդաքաղաք , Վանայ ծովուն մօտ , որոյ սահմանները ազնիւ ցորեն և գարի կ'ելլէ :

Խրար քաղաք , ծովուն արևմտեան հիւսիսային կողմը , բնակիչները քիւրտ են , և իր չրջակայ սահմանները ազնիւ ծիրան , խնձոր և ցորեն կ'ելլէ : — Այս քաղաքստանուօք շատ ծաղկած էր և մէջը այլազգի թաղասորներ կը նստէին , որոնց քարաշէն ձեռակերտները և դերեգմանները կեցած են : Գատուան գեղը ծովուն արևմտեան կողմը ապահով նաւահանգիստ ունի :

Բաղէշ կամ Պիրլիս , երևելի և ընդարձակ բերդաքաղաք է , որոյ իշխանութիւնը քիւրտներուն ձեռքն է , և առատ ջրեր ու պարտէզներ ունի : Բնակիչներուն մեծ մասը քիւրտ են : Բաղէշի սահմանները շատ զիւղեր կան որոց մէջ անուանի է Գազակոր գեղը , ուր առողջարար աղբիւր մը կը բխի լերան մը ոտքը , որ ամառը շատ սրտ է և ձմեռը տաք գոլորշիք կ'արձըկէ : Բաղէշի

մօտ են Գրգռո լեռները, որոյ մէկ մասը որ Խլաթի կողմերը կ'իյնայ կ'ըսուի Ներքով-բայ լեռ, Ներքովթայ անունովը, որ մեր Հայկ նահապետին հետ պատերազմելով մեռաւ. ինկած տեղը Հայկ նահապետ կոչեց Գերեզմանք, որոյ մօտ է Հայոց օրդաւառը, որ հիմա կ'ըսուի Հափռ օրդ:

37. Ճուլամերկ գաւառին երեւելի տեղերը: — Այս գաւառին մէջ, որ Վանայ հարաւային կողմը կ'իյնայ, երեւելի են ճաւանքի բերդաքաղաքը, որոյ բնակիչներուն շատը քիւրտ են, և իշխանութիւնն ալ անոնց ձեռքն է:

Մոկս բերդաքաղաք համանուն միճակին մէջ, որ խիստ լեռնոտ է, և հին ատեն կ'ըսուէր Մոկք: Բնակիչներն են քիւրտ և հայ:

Ապարանք գեղ, ուր է Ապարանից քարաշէն վանքը:

38. Սասուն գաւառին վրայ զխտելիք: — Սասուն գաւառը կ'իյնայ Մուշին հարաւային կողմը. օղը առողջարար է, երկիրը սաստիկ լեռնոտ՝ բայց պտղաբեր, և մեծ մեծ հատերով խաղող ունի: Բնակիչները որ են քիւրտ և հայ, գօրաւոր և քաջասիրտ մարդիկ են: Անուանի է մէջը Սասուն բերդը լեռան վրայ շինուած, և Աշմուշատ գեղը:

39. Մշոյ գաւառին վրայ զխտելիք: — Մշոյ գաւառը որ հին ատեն ըստ մասին Տարօնոյ մէջ կ'իյնար, բնգարձակ դաշտ է, օղը առողջարար, երկիրը բարեբեր. ունի

ազնիւ ցորեն , ծխախոտ , երկըթի հանք , ու տեսակ տեսակ կենդանիներ և թռչուններ : Բնակիչներուն շատը հայ ու քիւրտ են , և առանձին պէյով կամ հրամանատարով կը կառավարուի : Գլխաւոր քաղաքն է Մուշ , որ դիմացը բլրոյ վրայ բերդ ունի հին ատենէն շինուած : Իրեն մօտ են Աստղըքերդ կամ Աստղաքերդ ամրոցին աւերակները , Ծակքար ըսուած քարաժայռը Մշոյ և Բաղէշի մէջ , որոյ տակէն ճամբայ բացուած է , և մէջէն կ'անցնին ճամբորդները :

Մուշ քաղքին մօտերը կ'իյնան Առաքելոց կամ Ղազարոս վանքը , որոյ եկեղեցւոյն բակը Թարգմանչաց շատին գերեզմանները կան , այս ինքն Գաւթի անյաղթին , Մամբրէի , Ստեփանոսի , և այլն : — Մատրաւանք կամ Մատնեփանք , ուր է Յովհաննու կարապետին ճկոյթ մատը : — Մուշք Յովհաննեա կամ Եղբորուտի վանքը , որոյ քարաշէն եկեղեցին Թաղէոս առաքեալը շինած է կ'ըսեն : — Մուշք կարապետի հոշակաւոր վանքը , որ անուանի ուխտատեղի է , և հին ատեն կ'ըսուէր Ինեակեակ կամ Գրակայ վանք , ուր ամէն տարի վարդավառին օրը շատ ուխտաւոր կ'երթան : — Մուշին մօտ է նաև Մուշք Մանակ ըսուած գեղը , որ հին ատեն կ'ըսուէր Աշտիշատ , ուր թաղուած է սուրբն Սահակ Պարթև :

Մշոյ գաւառին արևելեան հիւսիսային կողմը կ'իյնայ Պաշլանրգ վիճակը , որուն մէջն է Մերագկերտ քաղաքը , որ հին ատեն կ'ըսուէր Մանագկերտ , և ամուր քաղաք էր :

ՆԱՀԱՆՂ 2.

Տիարպէքիր:

40. Տիարպէքիրի նահանգին սահմանը :  
— Տիարպէքիրի նահանգը կ'իյնայ Միջագետաց, Եփրատ գետոյն, Էրզրումի նահանգին ու Սասունին մէջ : Բնակիչներուն մեծ մասը քիւրտ են ու ինքնազուխ . քիւտանի ալ կը զանուի մէջը , որ են հին քաղաքացիներէն առաջ եկած : Երկիրը շատ բարեբեր է և ամէն տեսակ արմաթիւ կը բուսցընէ , մանաւանդ ցորեն , դարի , բամբակ և այլն . բայց ամենէն անուանի բերքն է սելսը որ ինչուան երեսուն քառսուն քաշ կը կշուէ , և կը բուսնի Տիգրիս գետոյն քովերը :

41. Տիարպէքիրի նահանգին զլխաւոր քաղաքը : — Գլխաւոր քաղաքն է Սմիրկամ Տիարպէքիր որ հին ատեն կ'ըսուէր Տիգրանակերտ , մեծին Տիգրանայ շինած ըլլալուն համար : Բոլոր քաղաքը ամուր ու լայն պարսպով պատած է , որոյ վրայ երկու կառք քովէքով կրնան քալել , վրան ալ 72 աշտարակ շինուած են , ու պարսպին չորս դին խրամ կայ , բայց հիմա երեսէ թողած : Ունի ամուր բերդ , որոյ մէջն է վաշային պալատը : Բնակչաց թիւը շատ էր , բայց 1757ին մարախէն ու երաշտէն ետև

սաստիկ սով մը եղաւ, որով 80,000 հոգի մեռան : Նոյնպէս 1771ին ժանտախտէն երեք ամսուան մէջ 82,000 հոգի մեռան, որով քաղքին բնակչաց թիւն ալ շատ սղակսեցաւ, հիմա 40,000 կը դնեն, և մեծ մասը Տաճիկ են : Գլխաւոր վաճառքն է բամբակ, մետաքս, սեկ ու պղնձեղէն ամաններ :

42. Տիարպէքիւրինահանդին ուրիշ պլսաւոր քաղաքները : — Միւֆարդիկն որ հին ատեն կըսուէր Նիքիկըտ կամ Մարտիրոսաց քաղաք, հիմա ըստ մեծի մասին աւերակ է :

Սկի գիւղաքաղաք, ուր Հայերը պզտի եկեղեցի մը ունին միակտուր քարէ փորուած :

Բարու բերդաքաղաք, ուր որ Ս. Մեսրոպալ մեր գրերը հնարեց : Ասոր մօտ է Ճապղչուր ըսուած երկիրը :

Խարբերդ կամ Գարսիուք պարսպապատ մեծ քաղաք է Եփրատ գետոյն մօտ, ունի լերան վրայ բերդ մը : — Խարբերդէն օր մը հեռու անուանի է Կապան անունը Եփրատ գետոյն արևելեան կողմը, որոյ մօտերը բանուկ արծաթի հանք կայ, անոր համար ալ տաճիկերէն կըսեն Կապան մատեն : Նոյնպէս Խարբերդին մօտերը կ'իյնայ Արդևի կամ Արդանա գիւղաքաղաքը, որ ազնիւ խաղող ունի, և իր մօտերն ալ առատ հանքեր :

Անուանի են նաև Մեծկերտ կամ Մագկերտ որ հին ատեն կըսուէր Մանկերտ, Պաղիկ, Խզու կամ Հզու բերդաքաղաքը :

## ՌՌՒՍԻ ՀԱՅԱՍՏԱՆ

43. Ռուսի Հայաստանին վրայ գիտելիք :  
— Ռուսի Հայաստանը կ'իյնայ մեծին Հայոց հիւսիսային արևելեան կողմը՝ որոյ մեծ մասը Հայոց տէրութեան վերջերը Վրաց ձեռքը անցեր էր , անոր համար օտարազգիք այս մասը բոլորովին Վրաստանի մաս կը համարին : Կը պարունակէ իր մէջը հին ատենուան Սիւնիք , Արցախ , Ուտի , Փայտակարան նահանգները , Այրարատ և Գուդարք նահանգներուն մէկ մասը : Տաճկէն և Պարսկէն նոր առած երկիրները 1840ին երկու նահանգ բաժնուեցան , որ են Երևան և Նախջևան . իսկ առջի առածները , Թիֆլիզի , Կէնճէի և Գարապաղ նահանգներուն մասն են :

44. Թիֆլիզու նահանգին մէջ սեպուած Հայաստանի գլխաւոր քաղաքներ : — Ռուսի Հայաստանին մէջ են Ախալցխա որ Վրաց հնչումով կ'ըսուի Ախալցխա և ըսել է Նոր քերդ , որ կ'իյնայ Կուր գետոյն մօտ : Այս քաղաքս 1829էն առաջ Տաճկին ձեռքն էր . վաճառականութիւնը բաւական ծաղկած է , և բնակչաց թիւն է 12,000 :

Ախալքալէք կամ Վրաց հնչումով Ախալ-

քաղաքի, որ ըսել է Նոր քաղաք, որոյ հիւսիսային կողմը կ'իյնայ Փառաւան լիճը, ուսկից կը բխի Կուր գետոյն մէկ ճիւղը:

Գանախն գիւղաքաղաք, որոյ մօտ է Հաղբատ ու Սանահին գեղերը Սօխեք գաւառին մէջ. որոց մէջ անուանի են համանուն հռչակաւոր վանքերը. երկուքին մէջ ալ թագաւորագուններու և երեւելի վարդապետներու գերեզմաններ կան:

Լոռի հին և անուանի գիւղաքաղաք է՝ աւերակ, անոր մօտ է Շաւշոյրոտ բերդաւանն նոյնպէս աւերակ:

45. Գանձակ և Գարապաղ նահանգաց մէջ գլխաւոր տեղուանքն: — Գանձակ կամ Կենձեք բերդաքաղաք որ կ'ըսուինակ Եղիսարեքոռարոյիս, Կուր գետոյն մօտ. մեծ և անուանի քաղաք է, 20,000 բնակչով. Գարապաղու մէջ է Գանձասար վանքը լեռնակի վրայ շինած, որ հին ատեն Աղուանից կաթողիկոսներուն աթոռն էր: — Ասոր մօտ է Շոշի քաղաքը, որ հիմայ Գարապաղու մայրաքաղաքն է, ամուր բերդով. հոս փոխադրուած է Գանձասարայ աթոռը. Գարապաղու երկիրը հին Սիւնեաց, Արցախու և Ուտեաց մասն է. այս ետքինիս մէջն էր Պարտաւ կամ Պերտեք քաղաքը երբեմն մայրաքաղաք Աղուանից, հիմայ աւերակ է: Ասոր մօտ է Շաւքոր աւանը Կուր գետոյն քով, որոյ մէջ 180 ոտնաչափ բարձր աշտարակ մը կար կարմիր աղիւսով շինած, և երկրաշարժէ կործանեցաւ: — Գա-

րապաղու Սիւնեաց երկրին մասը հիմայ  
Ղափան կ'ըսուի, մէջը անսամի են կիւրխա  
աւանը, Տարևա մեծ և հին վանքը, որ Ս.  
Եւստասթէոս անունով առաքելոց աշակեր  
տի մը անուամբ շինուած, և Սիւնեաց ե  
պիսկոպոսարան եղած էր: — Տիրուե գեղը  
և Բաղաբերդ ամար բերդը, և այլն:

46. Երևան նահանգին զլիաւոր քաղաք  
ները: — Երևան բերդաքաղաք որն որ Հրազ  
դան կամ Չենկի գետոյն վրայ է, տափակ  
դաշտի մէջ շինած ու չորս կողմը լեռնե  
րով պատած: Բերդը քաղքէն բիշ մը հե  
ռու է: Ս.յս քաղաքը առաջ Պարսից ձեռքն  
էր, բայց 1827ին Ռուսները տիրեցին. բը  
նակիչներուն թիւն է 20,000. բամբակի,  
նաւթի ու աղի մեծ առուտուր ունի: — Ե  
րևան քաղքին մօտ է Աւանիս առաքելոյն  
վանքը և Խոր Վիրապը որ հին Ս.յոսաշատ  
քաղքին տեղն է, Խոր Վիրապին վրայ քա  
րաշէն գմբեթաւոր եկեղեցի շինած է Գրի  
գոր Լուսաւորչի անունով, և տարին երկու  
երեք անգամ պատարագ կ'ըլլուի այս Խոր  
Վիրապին մէջ, որոյ հիմակուան խորու  
թիւնն է 5 գրկաչափ, և մէջը խորան շի  
նած է:

Երևանայ սահմանին մէջ կ'իյնան Բջնի  
ղեղը Չանկու վտակին քով որ Գրիգորի  
Մագիսարոսի կալուածն էր, և երբեմն արք  
եպիսկոպոսի աթոռ: — Կիւմրի քաղաք  
որ կ'ըսուի հիմա նաև Սղեքսանդրոսպոլիս  
Ռուսաց Աղեքսանդր կայսեր անունովը:

Այս քաղաքը կ'իյնայ Ախուրեան պետոյն արևելեան եզերքը, որ օրէ օր ծաղկելով բնականաբար ու փանտաշահ քաղաք կ'ըլլայ : — Սարտարապատ ամրոց, զոր շինեց Հիւսէին Ղուլի Երևանայ սարտարը 1819ին, կ'իյնայ հին Արմաիր քաղքին աւերակներուն քով, որոյ շինութեանը համար զոր ծածեց նոյն Արմաիր քաղքին մնացած աւերակներուն քարերը, և անուանեց Սարտարապատ, և պատած է կրկին պարսպով, և հին ատեն կ'ըսուէր տեղւոյն անունը Գեաշակեարիս : Համանուն ղետակին անունովը որ Երասխայ հետ կը միանայ : — Գառնի գեղ որ կ'ըսուի նաև Թաղտ Տրդատայ, հոն Տրդատ Թաղաւորը իր քրոջը Խոսրովի դիտոյն համար փառաւոր ու Թաղաւորական պալատ մը շինելուն համար, որուն զարմանալի աւերակները կեցած են : Գառնիին մօտ է Սևանայ ծովը որ հին ատեն Գեղաւնայ ծով կ'ըսուէր, և մէջն է Սևան կըղզին ուր հռչակաւոր փանք մը կայ ճգնաւորաց :

47. Էջմիածնի վրայ գիտելիք : — Երևան քաղքին արևմտակողմն է Էջմիածինը որուն տաճրիկները իշխիլիսէ կ'ըսեն, մէջի երեք Եկեղեցիներուն համար որ են Եողակաթ Աստուածածնի, Հռիփսիմեայ ու Գայիսնեայ, տեղը Վաղարշապատ քաղքին քովն է, չորս կողմը պարսպով պատած է, և է մեծ փանք և Հայոց գլխաւոր կաթողիկոսին աթոռը : Հռիփսիմեայ ու Գայիսնեայ փան

քերը իրենց նահատակութեան տեղը չինուած են . Էջմիածնայ Շողակաթի եկեղեցին ալ Սուրբ Գրիգոր Լուսաորիչ և Տրդատ Թաղաւորն հիմնարկեցին , այն տեղը՝ ուր որ Լուսաորիչ տեսեան մէջ տեսաւ զՔրիստոս երկնքէն իջած , անոր համար ըսուեցաւ Էջմիածին : Ա՛յ երջի կաթողիկոսները շատ նորոգութիւն ըրած են այս վանքիս մէջ :

Էջմիածնի մօտ են Օշական գեղը , ուր է սրբոյն Մեսրոպայ գերեզմանը . կարբի կամ Գարբի աւանը , Եղիվարդ , Փարպի և Ուշի գեղերը , Սաղմոսավանք , և Յովհաննավանք , Լազրեվանք վանքերը , և այլն :

148 . Նախջուան նահանգին զլիաւոր տեղուանքը : — Նախջուան պարսպապատ քաղաքը Երասխայ ձախ կամ արևելեան դին , Նոյ նահապետին առաջին բնակութեան տեղը կը կարծուի , և հոս է կ'ըսեն իրեն գերեզմանը : Հին ատեն անուանի ուրազմամարդ քաղաք էր , բայց հիմա մեծ մասը աւերակ է : Բնակիչներն են 12,000 : — Նախջուանայ սահմանին մէջ կ'իյնան Չահուշկ աւանը , Խոշկաշէն որ հին ատեն կ'ըսուէր Խոշակուշէր . Ապրակուշէ գեղ որոյ մօտ սուրբ կարապետի վանք մը կայ . Ապարներ կամ Ապարաներ գեղ , աս ալ վանք մը ունէր Ունիթոռաց : — Ատոսպատ աւան Երասխայ հիւսիսային կողմը , տուները քարաշէն և ըստ մեծի մասին փառաւոր : Երրևջակ որ կ'ըսուի հիմա Ալինձա գալեսի , լե

րին վրայ շինուած ամուր բերդ է : Զուշա  
կամ հիւ ջուշա , հին ատեն վաճառաչահ  
քաղաք էր , բայց հիմա մեծ մասը ատերակ  
է , որոյ մօտ է Շօտր կիսաւեր ատանը :  
Տարաշաւք կամ Շաւք գեղ , որ հին ատեն  
կ'ըսուէր Խրաւ քաղաք , որոյ մօտ կայ Ստե-  
փանոսի նախամկայի վանք մը : Ագաշիա  
գեղ , որոյ մօտ է վանական գեղը որ ազնիւ  
ծիրան ունի : — Որդոշատ կամ Ոչրտապատ  
քաղաք Արասխայ քով . հին ատեն գեղ  
մ' էր :

դոյո , դմննիղից դուառաի մ , զմն ոյն  
ճաճ Կարսից Զայաստանի ԶԱՅԱՍՏԱՆ  
այ զմաց քննմից և միջոյնարածի ԶԱՅ  
: ցղմննիղից մողծմրղը

դոնա ոսն միջնարտն յանդ յայտաՄ  
Մի . 000,00 ցղմննիցամց . Է գարագարղն  
անրնղն միջնար մողայր Է Է մնառոմա ց?

49 . Պարսից Զայաստանին յիրայ գիտե  
լիք : — Պարսից Զայաստանը սոաջ արևլի  
բնդարձակ էր , բայց հիմա մէկ մասը Ռու  
սաց ձեռքը անցնելուն համար պղտիկցած  
է , և Ստրպատականին կամ Ստրպէճա  
նին մասն կը համարուի , և է մեծին Զայոց  
Սյրարատ , Վանպտերական , Փայտակա  
րան և Պարսկահայք նահանգներուն մա  
սերը : Երկիրը շատ բարեբեր ու զուարճա  
լի է , և ամէն տեսակ պտուղ կը բուսցընէ :

50 . Պարսից Զայաստանին զլսաւոր  
քաղաքները : — Դավրեժ կամ Թեյրիզ քա  
ղաք , զոր շինեց մեծն Խոսրով Զայոց Թա  
զաւորը . և ինչպէս որ հին ատեն շատ ծաղ  
կած էր , նոյնպէս հիմա ալ ծաղկած է , և  
մէն տուն պարտէզ ունի , անոր համար  
բնդարձակ է քաղքին շրջապատն ալ : Մէ  
ջը շատ հնութիւնք ու երևելի շէնքեր կան :  
Շատ անգամ գետնաշարժէ քաղքին մեծ  
մասը կործանած է , ինչպէս նաև 1854ին  
ալ : Բնակչաց թիւը 70-80,000 է :

Արտաշի կամ Էրտեպիկ կասպից ծովին  
մօտ , որ վաճառականութեամբ շատ ծաղ  
կած է , և մէջը անուանի մղկիթներ ու շէն

քեր ունի, և փառաւոր շիրիմներ, որոց մէջ ամենէն հռչակաւորն է Պարսից Շահ Սէֆի թագաւորին և իրեն մէկ քանի յաջորդներուն շիրիմները :

Մարաղա Արմեայ ծովակին մօտ ամուր բերդաքաղաք է. բնակիչները 10,000 . մէջը անուանի է Հուլաւուն խանին գերեզմանը և իրեն շինած դիտարանը :

Ռրսիա կամ Ռումի քաղաք Արմեայ ծովակին արևմտեան կողմը, որոյ անունով ծովակն ալ այսպէս կոչուած է, որ կ'ըսուին ան հապրիժու ծով : Չուրը սասաիկ աղի է, մէջը անբնակ մանր կղզիներ կան :

Մարմաա կամ Մարմաա քաղաք, որ հին ատեն կ'ըսուէր Մարմաա, և կ'իյնայ Արմեայ ծովակին արևմտեան հիւսիսային կողմը . արմաիք շատ ունի, գինին ալ աղնիւ : հիմայ աւերակ է . իրեն մօտ է Տիւման գիւղաքաղաքը, Խոսրուի գեղը, Թէսոյ աւանը, և ուրիշ շատ գեղեր :

Խոյ քաղաք որ է հին Հեր քաղաքը, Արմեայ ծովակին հիւսիսային գին ընդարձակ դաշտի մը մէջ չինած . պարտէզներ շատ ունի, չրձակայ սահմաններն ալ բարերեր են . բնակիչքն 25,000 :

Մարակո կամ Մերեկո քաղաք, 10,000 բնակիչ ունի, Սնէր և Սիրատ քաղաքներ, և այլն : Մակու քաղաքաւանը Այրարատայ կողմը, ամուր քարափոր բերդ ունի . ասոր քովերն է Արտաղու դաշտը, ուր որ նահատակեցան Ս . Վարդանանք : Հոն է



**Յ Ա Ի Ե Լ Ո Ի Ա Մ**

**Ա. Փոքր Հայր**

Յ2. Փոքր Հայոց երկիրը: — Փոքր Հայր կ'իյնայ Եփրատ գետոյն արևմտեան կողմը, մեծին Հայոց սահմանակից: Երկիրը ընդհանրապէս բարեբեր է, թէպէտ և լեռնոտ, Անտիտարսս լեռանց թևերով. գլխաւոր գետերն են Գրգըլ ըրևագ, որ հին ատեն կ'ըսուէր Ալիս, կը թափի Սև ծովը: — Եւջի ըրևագ, որ կ'ըսուի նաև թոգար սոչոռ, Ամասիա սոչոռ, երկու մեծամեծ վտակններէ միացած, որոց մէկը հին ատեն կ'ըսուէր Լիգոս կամ Գայլ գետ, մէկալը Իրիս: — Գարս սոռ, որ հին ատեն կ'ըսուէր Մեղոս կամ Մեղաս, կեսարիոյ կողմերէն կը բխի, և կը թափի Եփրատայ մէջ:

Յ3. Փոքր Հայոց բաժանմունքը: — Փոքր Հայր հին ատեն երեք մաս կը բաժնուէր Առասիև, Երկրորդ և Երրորդ Հայր. իսկ հիմա կէս մը Գարամանիա ու կէս մ' ալ Սըվաղ նահանգին մէջ կ'իյնայ: Ինչուան հիմա այս կողմերս շատ Հայ կը գտնուին. և պատճառը այս է որ Բաղրատունեաց տէրութեան վերջերը երբոր Հայաստան թըշնամիններէն ոտնակոխ կ'ըլլար՝ շատ Հայեր թողլով իրենց երկիրը եկան փոքր Հայոց

մէջ բնակեցան, որ Յունաց ձեռքն էր :  
Ինչպէս Ռ. դարձնելէսին վասպուրական  
աշխարհին թագաւորը բողոք իր ժողովըր  
դովը Սերաստիա քաղքին կողմերը եկաւ  
բնակեցաւ, իր աշխարհը Յունաց կայսեր  
թողով, նոյնպէս Արարի թագաւորն ալ,  
նաև ուրիշ նախարարներ և մեծամեծներ :

ՅԿ. Սըվազ նահանգին ղլխաւոր քաղաք  
ները : — Սըվազ նահանգին երկիրը շատ  
պտղաբեր է, օդը առողջարար և ցարտ .  
ունի աղնիւ մեղր, մետաքս, սղնձէ հանր,  
և այլն : Մէջի ղլխաւոր քաղաքն է Սրխազ  
կամ Սևաւա, որ հին ատեն կըսուէր Սե-  
րաստիա, Եէշիլ ըրմաղին մօտ, որոյ մէկ  
վտակը քաղքին մէջէն կ'անցնի : Քաղաքը  
անպարիսպ է և ունի երկու բերդ, և շրջա-  
կայ սահմանները բաւական բարեբեր են և  
աղէկ արմախք կը բերեն : Բնակչաց թիւն է  
16,000 : Սըվազի մօտ է Բառաւան մակրանք  
ըսուած տեղը, ուր հին ատեն Բառասուն  
մանկանց վանք կար, բայց հիմա արուած  
է : Ասոր մօտ է սևազոյն ու լեղի ջրով օլըզ-  
ախլճակը, որ նահատակեցան Ամանկոսիք,  
որ և ուխտատեղի է : — Սըվազի մօտ կան  
Բազնիկ և Չաւա գեղերը և ուրիշ շատ գեղեր,  
և սուրբ Նշանի վանքը երեք եկեղեցիով :  
Այս քաղքիս մէջ ծնաւ 1676ին Մխիթար  
արքանայր : առի քոյալ ճմ Ս մ յառադի :  
955. Սըվազէն դատ ուրիշ ղլխաւորք քա-  
ղաքները : — Թոզար քաղաք, որ հին ատեն  
անն կըսուէր Եշրիկիա, Եէշիլ ըրմաղին մօտ,

վաճառականութիւնը բաւական ծաղկած է,  
և մտքը Ասիոյ վաճառականութեան կե-  
դրոնը կը համարուի: Ունի հին բերդ մը ա-  
պագածի վրայ կէս մը կործանած: Քաղ-  
քին պղնձագործները շատ երկեկի են Ա-  
սիոյ մէջ. Հայերը եօթը եկեղեցի ունին:  
Այն քաղաքս 1825ին երկրաշարժէ շատ  
մնասներ քաշեց. բնակիչներն են 25,000:  
Թագաթիւն մօտ են կոմանա քաղքին աւե-  
րակները: Ղաղափրոսա ցրօ, ը դժգարույս  
Չիլէ քաղաք, որոյ բնակիչներուն շատը  
գորատը սրտոտ գլ ատկաութի ետէ եզոզ  
մարդիկ են: Մնաս միջ զո, աստմի նայ  
Նիկոսար որ հին ատեն կ'ըսուէր Նեոկե-  
սարիա, բերդաքաղաք է, և քովերը ամէն  
տնակ պոզոյ ստատութիւն ունի, մանա-  
ւանդ կեռասի: մայրաքաղ զոմման շատ լայ  
Չարաճիսար քաղաք, որ տրիչ Գարա-  
հիսար քաղքրներէն որոշելու համար կ'ը-  
սուի սովորաբար Շնայիև Գարաճիսար, և  
հին ատեն կ'ըսուէր Նիկոպոլիս, ունի պզտի  
ամուր բերդ մը սև քարածայուի վրայ շինած:  
Քաղքին մօտերը աստաւ պաղլեղի հանք  
կայ: — Գարահիսարին մօտերն է Սիջար  
օջա բարբեր գաշտը, որոյ մէջն են Սիսաբ  
և Սիծպակ գեղերը: զոմայի վմայճ գրեսս մ  
ՅԵ. Եփրատ գետոյն մօտ քաղաքներ: —  
Եփրատայ և Մեծ Հայոց մօտ քաղաքներն  
են, Տիֆլիսի կամ Տիֆլիսի գլուղաքաղաք,  
ունի բերդ բարձր անդ շինած, և մօտերը  
սուրբ Լուսաւորի վանք մը: Բնակիչքն են

16,000: Տիփրիկին մօտ է Տերրևտե քաղաք՝ որ բերդ մը ունի քարածայռ բլրոյ վրայ շինած և մօտը Աշոտի գեղը, ուր Ս. Յակոբ վանքը, որ Հայոց առաջնորդարան է. կառն գեղը, որոյ քովերը կան երկաթի և մագնիսի հանք:

Կիւրիւն քաղաք, լեռներու մէջ, 1000 տունէն աւելի Հայ բնակիչ ունի, որ առուտուր կ'ընեն: Ասոր մօտ է Ս. Թորոս վանքը Մանգրլիս գեղին մէջ, ուր է Հայոց առաջնորդարանը:

Արաբկեր գիւղաքաղաք, որոյ շրջակայ սահմանները շատ բարեբեր են, և մօտերը արծրթի հանք կայ: Արաբկերին մօտ է Ոսկիգետակ վտակը որ Եփրատայ հետ կը խառնուի, և մէջէն շատ կարմրախայտ ձուկ կ'ելլէ:

Այն կամ Էկին գիւղաքաղաք, Եփրատ գետոյն քով, որոյ վրայ կամուրջ ձգուած է քաղքին գիմացը: Այս քաղքիս շրջակայ սահմանները շատ լեռնոտ են, անոր համար ցորեն դարի և ուրիշ արմտիք չեն բուսցըներ: Բնակիչներուն մեծ մասը հայ են, բնութեամբ ճարտար և աշխոյժ. կը զըտնուին նաև հայհոռումներ<sup>1</sup> ու տաճիկ: —

<sup>1</sup> Հայհոռումք կըտուին անոնք որ աղքատ հայ են, լեզունին ու ժամերգութիւննին հայերէն, բայց դաւանանքնին և ծէսերնին յունական: Վասն զի ԺԱ և ԺԲ դարերուն մէջ Յունաց կայսերքը ստիպելով Վասպուրականէն Սենեքերիմ

Ահնայ գիւղաքաղաքին մօտ է Սաւրբ երեւոյնն  
կամ սաւրբ Երեւան ըսուած վանքը, որ բարձր  
տեղ շինուած է, և Արակայ գեղը՝ որոյ բնա-  
կիչները բոլոր տաճիկ են. գեղէն դուրս կայ  
Գրիգոր Նարեկացոյն գերեզմանը պատով  
պատած, որ ուխտատեղի է, ու տաճկը-  
ներն ալ կը պատուեն, և հին ատեն գերեզ-  
մանին վրայ եկեղեցի ու վանք կար Նարեկ  
անունով, ուսկից գեղն ալ Նարեկայ գեղ  
ըսուած էր, և հիմա արուելով Արակայ գեղ  
ըսուեր է:

Պիր կամ Պիրիձիկ քաղաք, ունէր ա-  
մուր բերդ, հիմա թէ պարիսպները և թէ  
բերդը բոլոր քայքայած են. հին ատեն ա-  
նուանի էր նաև վաճառականութեամբ: Պիր  
քաղքին մօտ է Համկլա կամ Ռոշմգալե  
Նփրատ գետոյն քով քարաժայռի վրայ շի-  
նած ամուր բերդ: Մէջը երեք հին քարա-  
շէն եկեղեցիներ կան, որոց մէկն է սաւրբ  
Ներսէս Շնորհալի, ուր կայ իր գերեզմանը,  
և եկեղեցոյն քովն է հին կաթողիկոսա-  
րանը, հիմա մեծ մասը աւերակ է:

Մալաթիա որ հին ատեն կ'ըսուէր Մելի-  
տիէն և Նրրորդ Հայոց մայրաքաղաքն էր.  
կռապաշտութեան ատեն ալ, քրիստո-  
նէութեան ատեն ալ անուանի եղած է,  
բայց շատ պատերազմներէ արուած. հի-

թագաւորին հետ մէկտեղ եկող Հայերը՝ շատերը  
հոռամյուցին. և ասոնց մնացորդներն են որ ին-  
չուան հիմա դեռ կը գանուին այն կողմերը:

մակեան բնակիչներն են 14,000 : Քաղ-  
քէն գուրս կայ Գրիգոր Լուսաւորչի վանք  
մը, ուր կը նստի Մալաթիա քաղքին Հայոց  
առաջնորդը : Երկիրը շատ պտղաբեր է :

Մալաթիա դաւառին մէջ անուանի են  
նաև Մամիսատ կամ Մամաատ քաղաքը որ  
հին ատեն կ'ըսուէր Մամուտիա Եփրատայ  
մօտ : Հրակիւնաւոր քաղաք կամ Ապիւս-  
մակ Մամուտին մօտ : — Պեկեակի քաղաք-  
աւան, որոյ խաղողը և տախտակը ազնիւ է :  
Բնակիչքը 10,000 . որոնցմէ 300 տուն հայ :

57. Գոյսէրիէ գաւառին վրայ գիտեցիր :  
— Գոյսէրիէ կամ Ղայսէրի գաւառը հին  
ատեն կ'ըսուէր կապադոկիսա և Սաային  
Հայր, հիմա Գարամանիայի կամ Ղոնիայի  
նահանգին մասն է : Երկիրը բարեբեր, օղը  
ցուրտ . բնակիչները ճարտար ու յաջող  
մարդիկ : Գլխաւոր քաղաքն է Գոյսէրիէ  
որ հին ատեն կ'ըսուէր Մամաք և կեւարիսա,  
և շինուած է դաշտի մը մէջ Երճիէլ (Ա.Ր-  
դէոս) լեռին հիւսիսային կողմը : Ունի պրզ-  
տի բերդ մը, և քաղքին մէկ կողմը պարբա-  
պով պատած է : Շէնքերուն մէջ անուանի  
է Ուրու ձամի կամ մղկիթը կապարով ծած-  
կած, և մեծ մինարէ մը ունի : Կ'ըսեն թէ  
այս մղկիթը հին ատեն եկեղեցի էր, և մէ-  
ջը թաղուած էր սուրբն Բարսեղ : Այս քաղ-  
քիս բնակիչները որ հիմա 65,000 կը համ-  
րուին, տաճկերներէն և տե հոսումներէն ա-  
ւելի Հայերն են : Անուանի է քաղքիս ա-  
պուխար ու սեկը :

Կեսարիա քաղաքին մօտերը կ'իյնան Սուրբ  
Կարապետի վանքը ուր կը նստի Հայոց ա-  
ռաջնորդը : — Թոշաւ դեզ , Կարմիր կամ  
Կերմիր դեզ , Նիրգէ կամ Նիզիէ դեզ որ հին  
ատեն կ'ըսուէր Նիւսա , ուսկից էր Գրիգոր  
Նիւսացին . Միևսակ դեզ որ հին ատեն կ'ը-  
սուէր Կազմանգ քաղաք կամ Գիսկեարիա  
ուսկից էր Գրիգոր Սասունաճաբան : —  
Տերեվանք կամ Տերեվէնք դեզ , որոյ մօտ  
պզտի վանք մը կայ սրբոյն Սարգսի անու-  
նով , որոյ եկեղեցին ու բոլոր խուցերը ամ-  
բողջ քարի մէջ փորած է աբեղայի մը ձեռ-  
քով :

### Բ. Միջագետք .

58. Հայոց Միջագետաց պիտաւոր քա-  
ղաքները : — Ուրփա կամ Ուրփա քաղաք որ  
40,000 բնակիչ ունի , և հին ատեն կ'ըսուէր  
Եղեսիա , բերգաւոր անուանի քաղաք է ,  
չորս կողմը պարսպով պատած , ու պարու-  
պին չորս դին խրամ բացած : Բերդը ա-  
պատածի վրայ շինած է , և մէջը կայ քա-  
րաշէն փառաւոր մզկիթ մը , որ հին ատեն  
սրբոյն Սարգսի եկեղեցի էր , որոյ երկու  
քարաշէն բարձր դանգակատունները կան  
մինչև հիմա : Քաղաքին մէջ կան երեւելի փա-  
ճառանոցներ , բազմիքներ ու մզկիթներ՝  
որոցմէ շատը հին ատեն եկեղեցի էին : Ա-  
սոնց մէջ անուանի է Քառասուն մանկանց

դմբեթաւոր ու դարդարուն եկեղեցին բոլոր  
քարէ շինած, որ հիմա մզկիթ է: Հայերը մէկ  
եկեղեցի միայն ունին որ է սուրբ Աստուա-  
ծածնի եկեղեցին, Սբգար թագաւորէն շի-  
նուած: Ուրհայի մօտ կայ Հայոց տարբ Յա-  
կոբ ըսուած քարաշէն ու փառաւոր վան-  
քը, ուր բնակած է կ'ըսեն սուրբն Յակոբ  
Մծբնայ հայրապետը: Եւ տարբ Սարգիս  
վանքը, որոյ եկեղեցւոյն մէջ քարէ մեծ  
տապան մը կայ ուր թաղուած է կ'ըսեն  
սուրբն Եփրեմ ասորի: Սրբոյն Սարգսի  
վանքին մօտ կայ Սբգարու անուամբ եկե-  
ղեցի մը բոլոր ապառաժ քարի մէջ փո-  
րուած շատ աշխատութեամբ ու ծախքով,  
որոյ քովերը այլևայլ աւերակներ կան, որ  
Սբգար թագաւորին ամարանոցներն էին  
կ'ըսեն: Կայ նաև մութ քարանձառ մը ուր  
երկու գերեզման կան, մէկը Սբգար թա-  
գաւորին է կ'ըսեն, մէկայլը իր Սբգիու իշ-  
խանին:

Ռաքրա կամ Ռակկա որ հին ատեն երևե-  
լի քաղաք էր, բայց հիմա մեծ մասը աւե-  
րակ է: Ստոր հիւսիսային կողմը կ'իյնան  
Խառան քաղքին աւերակները:

Մէրտին ամաւր բերդաքաղաք է, բարձր  
ապառաժ լերին վրայ շինած ու պարբա-  
պով պատած, ունի շատ մզկիթներ և բազ-  
նիքներ. հսովէական Հայերն ալ եպիսկո-  
պոսանիստ եկեղեցի մը ունին: Մէրտինին  
չրջուկայ սահմանը բարեբեր է, և հարա-  
ւային արևելեան կողմը կ'իյնայ Մծբին կամ

Նյախային քաղքին աւերակները, ուր կան  
ամբողջ մնացած սրբոյն Յակոբայ Մծբնայ  
և կեղեցին և ուրիշ մէկ քանի շէնքեր:

Ճեգիրէ բերդաքաղաք, կ'իյնայ Տիգրիս  
կամ Շաղ գետոյն արեւմտեան կողմը, որ  
եբբոր բարձրանայ ամռուան մէջ, քաղ-  
քին չորս գին կղզւոյ պէս կը պատէ, անոր  
համար ճէգիրէ ըսուած է, որ արաբացոց  
լեզուով կղզի ըսել է, հայերէն ալ Գղիրա ը-  
սուեր է: Այս քաղքին իշխանութիւնը իր  
չրջակայ սահմանովը մէկտեղ քիւրտերուն  
ձեռքն է, և ասոր անունովը հիմա բոլոր  
Միջագետք էլ ճէգիրէ կ'ըսուի: — Այս կող-  
մերս, և Ալեքսիէ քաղքին ու Սիւնար քաղ-  
քին և լեռանց կողմերը կը բնակին շատ Ե-  
գիտի աղանդաւորք, որոնք կէս հեթանոս  
կէս մահմէտական են, քրիստոնէական  
աւանդութիւններ ալ ունին:

### Գ. Կիլիկիա.

59. Կիլիկիոյ վրայ դիտելիք: — Կիլի-  
կիան որ հիմա կ'ըսուի Առանա, կ'իյնայ Մի-  
ջերկրական ծովուն քով Գարամանիային  
հարաւային գին: Օղը ամռուան մէջ շատ  
տաք ու նեղացուցիչ, և զլխաւոր քաղաք-  
ները գրեթէ բոլոր ցած ու տաք տեղ չի-  
նուած ըլլալուն համար՝ ամառը մէջի բնա-  
կիչները բոլոր գեղերու մէջ կը ցրուին: Եր-  
կիրը լեւնտտ, բայց շատ բարեբեր է. մա-

նաւանդ բամբակը խիստ առատ է : Գլխաւոր գետերն են Ճիւղան և Սէյնուն, կան ուրիշ մանր գետեր ալ : Բնակիչներուն մեծ մասը տաճիկ , քիւրտ և հայ են :

60. Կիլիկիոյ գլխաւոր քաղաքները — Սաանա բերդաքաղաք Սէյնունի քով որ հին աստեն կ'ըսուէր Պարսու , որոյ վրայ քաղքին դիմացը քարաշէն մեծ կամարջ շինած է : Կաճառակահնութիւնը բանուկ է , և ամառը օդը զէշ և վնասակար , անոր համար բնակիչները կը ցրուին գեղերու և ամառանոցներու մէջ : Բնակչաց թիւն է 20,000 :

Սիւ բերդաքաղաք , որոյ շորս կողմը ամուր պարսագով արածած է , բայց տեղ տեղ փրկիկած : Քաղքին հարաւային կողմն է կաթողիկոսարանը , որ Հայոց առանձին կաթողիկոս կը նստի , որ կ'իջևէ Կիլիկիոյ և փոքր Հայոց մէջ եղած հայերուն վրայ : Հին շէքերէն մնացած են հիմա դանձաւտունը , բանար , սրբոյն Սոխիայ եկեղեցին , որոյ մօտ է Ռուբինեանց թաղաւորական պալատը կամ դարպասը , բայց ամէնքն ալ երեսէ թողած ու կէս մը աւերակ : Սոյ հիւսիսային կողմը կ'իյնայ Պէրսպէր բերդը լեռներու վրայ շինած , որ հին աստեն կ'ըսուէր Բարձր քերդ :

Սեւրգաբա բերդաքաղաք , ճիւղան կամ հին Պիւռատոս գետոյն քով շինած ու կըրկին պարսագով արածած , որ հիմա բոլորովին անբնակ է , և մէջը կ'երեւին շատ եկեղեցիներ , տուներ , պարտաներ , և այլն :

Մոյսա քաղաք որ հին ատեն կըսուէր  
Մոպրաշեաթիա կամ Մառնաթիա : մէջէն  
կ'անցնի ճիհան դեար , և ունի բերդ մը :

Թարսուս կամ Թերսիս քաղաք որ հին  
ատեն կըսուէր Տարսոն , շինուած է Մի-  
ջերկրական ծովուն մօտ Ախադնոս կամ Գա-  
րասու գետոյն Միջերկրական ծովը թափե-  
լու տեղոյն մօտ : Հին Տարսոն քաղքին  
ընդարձակ աւերակները ասոր բոլը կ'ըլ-  
նան , որ առաջ շատ ծաղկած էր վաճա-  
ռականութեամբ : Հիմա նաւահանդիսան է  
Մերսին դեզը , քաղքէն հինգ ժամ հեռու .  
բնակչաց թիւն է 5,000 : Տարսոնի մօտ է  
Նեմլուտ-գալէ , որ է Լամբրոն բերդը :

Սյաս կամ Փոյսա քաղաք Միջերկրա-  
կան ծոցոյն քով . սնի ծովեզերեայ ամուր  
բերդ և նաւահանդիսատ : Պէյրսե կամ Պե-  
լեկէ լերանց մէջ քաղաքաւան մըն է , իբր  
1000 տունով , կէսը հայ :

61 . Մարաշու դաւաթին վրայ դիտելիք :  
— Մարաշու դաւաթը կ'ըլնայ Ատանային  
ու Գարամանիային արևելեան կողմը Ե-  
փրատ գետոյն քով , որ հին ատեն կըսուէր  
Կոմագենե կամ Կոմագ , և այրէն ըսուեցաւ  
Եփրատացոց աշխարհ , և հիմա կըսուի Մա-  
րաշ համանուն զլիսաւոր քաղքին անունո-  
վը : Սակացն հիմակուան Մարաշու նահան-  
դը հին Եփրատացոց երկրէն շատ աւելի  
ընդարձակ է , և կը հասնի ինչուան Մալա-  
թիա կամ Մելիթինէ , հին ատենուան Եր-  
րորդ Հայոց մէկ մասը մէջը բաւանդակե-

լով Մելիտինէ ու Սամոստիա քաղաքներուն հետ մէկտեղ : Երկիրը բարեբեր է, զլիսաւոր բերքն է բրինձ, ցորեն, բամբակ, և այլն : Ունի երկրթի հանք Մարաշ քաղքին ու Զէյթունի սահմանները :

62. Մարաշու երկրին զլիսաւոր քաղաքները : — Գլխաւոր քաղաքն է Մարաշ որ հին ատեն Գերմանիկ կ'ըսուէր, և ունի բերդ բարձր բլրոյ վրայ շինած : Մէջը շատ բազմիքներ, մզկիթներ կան . բնակիչներն են 20,000, որոնցմէ 600 տուն Հայ . զլիսաւոր արուեստնին է ներկարարութիւն ու ստայնանկութիւն :

Այնրաի կամ Անրաի բերդաքաղաք, որոյ բնակիչներն են 40-50,000 . որոնցմէ 10,000ի չափ Հայք են : Օգը առողջարար, բայց ստէպ երկրաշարժներ կ'ըլլան :

Զէյրուէի կամ Զէյրուէ քաղաք, բնակիչները բոլոր Հայ են կտրիճ և ինքնազուլս մարդիկ, 1000 տունէն աւելի . քաղքին երկու կողմէն ջուր կ'անցնի : Մէջը եօթն եկեղեցի կայ և քովը Աստուածածնայ վանքը, ուր կը նստի եպիսկոպոսը . քովերն ալ երկրթի հանք, որ տեղացիք կը բանին :

Ուլնի գեղ որ Զէյթունէն վեց ժամ հեռու է, ասոր մէջն է սրբոյն Սանփանոսի ունեցւոյն վանքը, և մասաուս մը որոյ մէջն է իր գերեզմանը, և մեծ ուխտատեղի է : Ուլնիի մօտ է Ֆրաւուզ անանք, 600 տուն Հայ բնակչօք . ունի վանք մը Ս . Կարապետ անունով, ուր եպիսկոպոս կը նստի :

## Յ Ա Ն Կ

### Հ Ի Ն Հ Ա Յ Ա Ս Տ Ա Ն

#### ԳԼ . Ա . Հայաստանի անուանը վրայ .

- 1 Հայք կամ Հայաստան անուան ծագումը :
- 2 Օտար ազգերը մեր երկրին ինչ անուն կուտան :
- 3 Պօշար աշխարհագրին և Վալմէի կարծիքը Արմէնի անուան վրայ :
- 4 Սուրբ գրոց մէջ Հայաստանի տրուած անունները :
- 5 Մեր մատենագիրներուն մէջ ինչ մտքով գործածուած է Արարատ անունը :
- 6 Օտարազգիք մեր Արամ նահապետէն աւաջ ինչ անուն կու տային Հայաստանի :
- 7 Հայաստանի որ գաւառներն են որ օտարազգի ու մեր մատենագիրներէն ոմանք ուրիշ ազգաց անունով կը կոչեն :

#### ԳԼ . Բ . Հայաստանի թեմական եկարացիրը .

- 8 Հին Հայաստանի սահմանը :
- 9 Հայաստանի սարածուածիւնը :
- 10 Հայաստանի օղը :

ՅՕԴ. Ա. Հայաստանի լեռներն .

- 11 Հայաստանի երկրին կերպարանքը :
- 12 Մասիս : — Մասիս լեռան անուանը վրայ գիտե՛լք :
- 13 Ազգային և օտար մատենագիրներէն Մասիս լեռան տուած այլևայլ անուաները :
- 14 Մասիս լեռան սրբ մակերը տրուելուն պատճառը :
- 15 Մասիս լեռան դիրքը :
- 16 Մասիս լեռը գօտևո՞ր է թէ անգօտի :
- 17 } Տօրոս : — Տօրոս լեռան անուանը վրայ գի-
- 18 } տե՛լք :
- 19 Կովկաս : — Կովկաս լեռան գրիցը և անուանը վրայ գիտե՛լք :
- 20 Կորդուաց լեռինք : — Կորդուաց լեռներուն գրիցը և անուանը վրայ գիտե՛լք :
- 21 Պարխար լեռինք : — Պարխար լեռներուն գիրքը :
- 22 Մոսքիքեան լեռինք : — Մոսքիքեան լեռներուն գիրքը :
- 23 Հայաստանի մէջ յիշուած ուրիշ լեռները կամ լեռնակները :
- 24 Հին ատեն յիշուած Հրաբուխք և Մասանուածիւնք 'ի Հայս :

ՅՕԴ. Բ. Գետերու վրայ .

- 25 Հայաստանի ջրոց առատութիւնը :
- 26 Եփրատ : — Եփրատ գետոյն բխման տեղը :
- 27 Եփրատայ յորդու թեանը վրայ գիտե՛լք :
- 28 Եփրատայ վրայ շինուած կամուրջները :
- 29 Տիգրիս : — Տիգրիս գետոյն աղբիւրը և անուանը :

- 30 Տիգրիսին յորդուծիւնը :  
31 Երասխա : — Երասխա գետոյն անունը և աղ-  
բիւրը :  
32 Երասխա գետոյն ընծայքն ու կամուրջներն :  
33 Երասխայ վրայ շինուած քաղաքները :  
34 Ճորոխ : — Ճորոխ գետոյն անունն ծագումը :  
35 Ճորոխ գետոյն աղբիւրը :

**Գրասխտիկ չորս գետերէն զան Հայաստանի  
մեկնայ գետերը :**

- 36 Կուր գետոյն վրայ գիտելիք :  
37 Հայաստանի մէջ յիշուած ուրիշ մանր գե-  
տերը :

**ՅՕԴ. Գ. Լձերուց կամ Մոխակներուց վրայ :**

- 38 Լձերուց վրայ ընդհանուր գիտելիք :  
39 Բզնունեաց ծովն գիրքը և անուանը ծա-  
գումը :  
40 Գեղամայ ծով :  
41 Կապուտան ծով :  
42 Հայաստանի մէջ յիշուած ուրիշ ծովերը :  
43 Հայաստանի մէջ յիշուած երևելի ճահիճ-  
ները :

**ՅՕԴ. Դ. Հայաստանի բերքերուն վրայ :**

- 44 Հայաստանի բարեբերութիւնը :  
45 Հայաստանի մէջ յիշուած բերքեր :  
46 Հայաստանի մէջ յիշուած ընտանի կենդա-  
նիները :  
47 Հայաստանի մէջ յիշուած գազաններն ու  
թռչունները :

- 48 Հայաստանի մէջ յիշուած հանքերը :  
49 Հայաստանի մէջ գտնուած գոհարեղէն քարերը :

**ԳԼ . Գ . Հայաստանի յազմամարտորոշրեանք  
և սակաւաւարտորոշրեանք վրայ .**

- 50 Հայաստանի բազմամարդութեան վրայ գիտելիք :  
51 Հայաստան եկած գաղթականները :  
52 Այս գաղթականներէն զատ Հայաստանի մէջ բնակող օտար ազգերը :  
53 Հայաստանի բազմամարդ քաղաքները :

**ՅՕԴ . Ա . Հայաստանի քնակչաց քիչնաւոր  
պատճառները .**

- 54 Հայաստանէն ելած գաղթականութիւնները :  
55 Յունաց երկիրը գնացած գաղթականները :  
56 Անի քաղքէն ելած գաղթականները :  
57 Ռուբինեանց աէրութիւնը վերցուելէն ետե Հայաստանէն ելած գաղթականները :  
58 Հայաստանի բնակչաց քիչնաւոր պատճառները :

**ԳԼ . Դ . Հայաստանի աշխարհագրական  
բաժանումը .**

- 59 Արամ հասապեաին և Մօրիկ կայսեր ըրած բաժանումները :  
60 Մեծ Հայոց այլևայլ հասանգները :  
61 Մեր մտտեհագրաց Հայաստանի այլևայլ մասերուն սովորական անունէն զատ արուած անունները :

ԳԼ . Ե . Բարձր Հայր .

- 62 Բարձր Հայոց գիրքն ու սահմանը :  
63 Բարձր Հայոց լեռներն ու գետերը և բեր-  
քերը :  
64 Բարձր Հայոց գաւառները :  
65 Դարանաղի գաւառին վրայ գիտելիք :  
66 Սեպուհ լեռան վրայ գիտելիք :  
67 Դարանաղեաց գաւառին գլխաւոր տեղերը :  
68 Անի բերդին վրայ գիտելիք :  
69 Եկեղեցաց գաւառին վրայ գիտելիք :  
70 } Եկեղեցաց գաւառին մէջ յիշուած երևելի  
71 } տեղերը :  
72 Մանանաղի գաւառին գիրքը և նշանաւոր  
տեղուանքը :  
73 Դերջան գաւառին մէջ յիշուած երևելի տե-  
ղերը :  
74 Սպեր գաւառին մէջ յիշուած երևելի տե-  
ղերը :  
75 Կարնոյ գաւառին վրայ գիտելիք :  
76 Կարնոյ գաւառին մայրաքաղաքը :  
77 Կարնոյ գաւառին ուրիշ երևելի տեղերը :

ԳԼ . Զ . Զորրորդ Հայր .

- 78 Զորրորդ Հայոց վրայ գիտելիք :  
79 Զորրորդ Հայոց գաւառներն :  
80 Խորձեան գաւառին վրայ գիտելիք :  
81 Հաշտեանք գաւառին վրայ գիտելիք :  
82 Պաղնատուն գաւառին գլխաւոր տեղերը :  
83 Բաղահոզիտ գաւառին վրայ գիտելիք :  
84 Ծովաց գաւառին վրայ գիտելիք :  
85 Ծովք Շահունեաց գաւառին մայրաքաղաքը :

86 Ծովիք Հահանեաց գաւառին մէջ յիշուած  
ուրիշ քաղաքները :

87 Հանձիթ գաւառին մէջ յիշուած տեղերը :

ԳԼ Է Սղօնիք :

88 Աղձնիք նահանգին վրայ աշխարհագրական  
գիտելիք :

89 Աղձնեաց վրայ պատմական գիտելիք :

90 Աղձնեաց գաւառներն :

91 Արզն և Նփրկերտ գաւառներուն վրայ գի-  
տելիք :

92 Սասուն գաւառին վրայ գիտելիք :

93 Աղձնիք նահանգին մէջ յիշուած ուրիշ տե-  
ղերը :

ԳԼ Ը Տուրուբերան :

94 Տուրուբերան նահանգին վրայ գիտելիք :

95 Տուրուբերան նահանգը քանի գաւառ կը  
բաժնուի :

96 Խոյթ գաւառին անուանը վրայ գիտելիք :

97 Տարօն գաւառին անուանը ծագումը :

98 Տարօնոյ վրայ պատմական գիտելիք :

99 Տարօնոյ երկրին բարեբերութիւնը :

100 Աշտիշատ քաղաքին վրայ գիտելիք :

101 Տարօնոյ գլխաւոր տեղերը :

102 Գլակայ վանքին վրայ գիտելիք :

103 Գլակայ վանքին կալուածները :

104 Արջուց երկրին վրայ գիտելիք :

105 Աշմունիք գաւառին գիւղը և մէջն գլխաւոր  
քաղաքները :

106 Հաբք գաւառին անուանը ծագումը :

107 Հաբք գաւառին գլխաւոր քաղաքները :

108 Բզնունիք գաւառին անուանը ծագումը :

- 109 Բզնունեաց գլխաւոր քաղաքները :  
110 Ազիովիտ գաւառին վրայ գիտելիք :  
111 Ազիովիտ գաւառին գլխաւոր քաղաքները :  
112 Ապահունեաց գաւառին վրայ գիտելիք :  
113 Խորխոռունիք գաւառին վրայ գիտելիք :

ԳԼ . Թ . Մոկք .

- 114 Մոկք նահանգին վրայ գիտելիք :  
115 Մոկաց նահանգին գաւառները :  
116 Մոկք նահանգին մէջ յիշուած անդերը :

ԳԼ . Ժ . Կորձայք .

- 117 Կորձայք նահանգին վրայ գիտելիք :  
118 Կորձայք նահանգը քանի՞ գաւառ կը բաժնուի :  
119 Կորդուք գաւառին վրայ գիտելիք :  
120 Արաքին պատմչաց Կորդուաց երկրին ու բնակիչներուն համար ըսածը :  
121 Կորդրիք գաւառին վրայ գիտելիք :  
122 Կորձայք նահանգին մէջ յիշուած ուրիշ գլխաւոր քաղաքները :

ԳԼ . ԺԱ . Պարսկահայք .

- 123 Պարսկահայք նահանգին վրայ գիտելիք :  
124 Պարսկահայք նահանգին գաւառները :  
125 Զարուանդ և Հեր գաւառացի վրայ գիտելիք :

ԳԼ . ԺԲ . Վասպուրական .

- 126 Վասպուրական նահանգին վրայ պատմական  
գիտելիք :  
127 Վասպուրական նահանգին գաւառներն :  
128 Ռշտունիք գաւառին վրայ գիտելիք :  
129 Ռշտունեաց գլխաւոր քաղաքները :  
130 Աղթամար կղզւոյն վրայ գիտելիք :  
131 Վան քաղքին վրայ գիտելիք :  
132 Տոսք գաւառին ուրիշ քաղաքները :  
133 Վարագ լերին վրայ գիտելիք :  
134 Ասքերանի գաւառին վրայ գիտելիք :  
135 Առնոյտն գաւառին վրայ գիտելիք :  
136 Անձկացիք գաւառին վրայ գիտելիք :  
137 Անձկացեաց երկրին մէջ յիշուած տեղերը :  
138 Երուանդունիք գաւառին մէջ յիշուած տե-  
ղերը :  
139 Արտազ գաւառին վրայ գիտելիք :  
140 Աղբակ գաւառին գլխաւոր քաղաքները :  
141 Թոռնաւան և Ճուաշոտ գաւառներուն  
մէջ յիշուած տեղերը :  
142 Գողթն գաւառին վրայ գիտելիք :  
143 Գողթն գաւառին մէջ յիշուած տեղերը :  
144 Նախճաւան գաւառին վրայ գիտելիք :  
145 Հացիւնեաց խաչին վրայ գիտելիք :  
146 Մարանգ գաւառին մէջ յիշուած տեղերը :

ԳԼ . ԺԳ . Սիւնիք կամ Սիւսական .

- 147 Սիւնեաց նահանգին անուանը ծագումը :  
148 Սիւնեաց աշխարհին վրայ պատմական գի-  
տելիք :  
149 Սիւնեաց մէջ քրիստոնէութեան մտնելը :  
150 Սիւնեաց նահանգին գաւառներն :

- 151 Երնջակ գաւառին անունը և գլխաւոր տեղուանքը :
- 152 Վայոյ ձոր գաւառին անունը և գլխաւոր տեղուանքը :
- 153 Վայոյ ձոր գաւառին երևելի վանքերը :
- 154 Գեղարքունի գաւառին գլխաւոր տեղուանքը :
- 155 Գեղարքունի գաւառին երևելի վանքերը :
- 159 Սոթք և Աղահէճք գաւառներուն մէջ յիշուած տեղերը :
- 157 Ծղուկք գաւառին վրայ գիտելիք :
- 158 Ծղուկք գաւառին մէջ յիշուած երևելի տեղերը :
- 158 Տաթևու վանքին վրայ գիտելիք :
- 160 Բաղք գաւառին վրայ գիտելիք :
- 161 Բաղք գաւառին մէջ յիշուած երևելի տեղերը :
- 162 Ձորք գաւառին վրայ գիտելիք :
- 163 Արևիք գաւառին մէջ յիշուած տեղերը :
- 164 Կուսական գաւառին վրայ գիտելիք :
- 165 Սիւնեաց աշխարհին մէջ յիշուած ուրիշ տեղերը :

ԳԼ . ԺԴ . Արցախ .

- 166 Արցախ նահանգին վրայ գիտելիք :
- 167 Արցախու գաւառները :
- 168 Միւս Հաբանդին մէջ յիշուած տեղերը :
- 169 Վայկունիք գաւառին վրայ գիտելիք :
- 170 Արցախու մէջ յիշուած ուրիշ տեղերը :

ԳԼ . ԺԵ . Փայտակարան .

- 171 Փայտակարան նահանգին վրայ գիտելիք :
- 172 Փայտակարան նահանգին գաւառները :
- 173 Փայտակարանի մէջ յիշուած քաղաքները :

ԳԼ . ԺԶ . Ուտի .

- 174 Ուտի նահանգին վրայ գիտելիք :  
175 Ուտի նահանգին գաւառները :  
176 Գարգման գաւառին վրայ գիտելիք :  
177 Շահաշէն գաւառին վրայ գիտելիք :  
178 Շահաշէն գաւառին մէջ յիշուած տեղերը :  
179 Ուտի առանձնակին երևելի տեղերը :  
180 Ուտի նահանգին մէջ յիշուած ուրիշ տեղերը :

ԳԼ . ԺԷ . Գոշգարք .

- 181 Գոշգարք նահանգին վրայ գիտելիք :  
182 Գոշգարք նահանգին բաժանումը :  
183 Չորոփոր գաւառին մէջ յիշուած տեղերը :  
184 Հաղբատ և Սանահին վանքերուն վրայ գիտելիք :  
185 Տաշիր գաւառին մէջ յիշուած տեղերը :  
186 Արտահան և Զաւախք գաւառներուն վրայ գիտելիք :  
187 Գոշգարք նահանգին մէջ յիշուած ուրիշ տեղերը :

ԳԼ . ԺԸ . Տայք .

- 188 Տայք նահանգին վրայ գիտելիք :  
189 Տայք նահանգին գաւառներն :  
190 Տայք նահանգին մէջ յիշուած տեղերը :

ԳԼ . ԺԹ . Այրարատ .

- 191 Այրարատ նահանգին անունը :
- 192 Այրարատայ բարեբերութիւնը ,
- 193 Այրարատ նահանգին վրայ պատմական գիտելիք :
- 194 Այրարատայ նահանգը քանի՛ գաւառ կը բաժնուի :
- 195 Բասեան գաւառին վրայ գիտելիք :
- 196 Բասեան գաւառին մէջ յիշուած տեղերը :
- 197 Գաբեղեանք և Աբեղեանք գաւառները :
- 198 Արշարունիք գաւառը :
- 199 Արշարունեաց մէջ յիշուած երևելի քաղաքները :
- 200 Արշարունեաց մէջ յիշուած երևելի վանքերը :
- 201 Բագրևանդ գաւառ :
- 202 Բագրևանդ գաւառին երևելի քաղաքները :
- 203 Ծաղկոտն գաւառ :
- 204 Շիրակ գաւառին վրայ գիտելիք :
- 205 Շիրակ գաւառին երևելի քաղաքները :
- 206 Շիրակայ երևելի վանքերը :
- 207 Վանանդ գաւառին վրայ գիտելիք :
- 208 Վանանդ գաւառին երևելի քաղաքները :
- 209 Արագածոտն գաւառը և մէջի երևելի քաղաքներուն վրայ գիտելիք :
- 210 Արագածոտն գաւառին երևելի վանքերը :
- 211 Ճակատք գաւառին մէջ յիշուած տեղերը :
- 212 Մասեացոտն գաւառ :
- 213 Կոգովիտ կամ Կոգայովիտ գաւառ :
- 214 Կոգովիտ գաւառին երևելի տեղերը :
- 215 Նիդ գաւառին մէջ յիշուած տեղերը :
- 216 Կոտայք գաւառին մէջ յիշուած տեղերը :
- 217 Վարաժնունիք գաւառին վրայ գիտելիք :

- 218 Գըւնայ գաւառին մէջ յիշուած տեղերը :  
219 } Այրարատ նահանգին մէջ յիշուած ուրիշ  
221 } քաղաքները : — Արտաշատ, Արմաւիր,  
Երազմոյն, Վաղարշապատ, և այլն :  
222 Հաիփսիմեանց և Գայիանեանց վկայարաններուն վրայ գիտելք :

### ԳԼ . Ի . Փոքր Հայք .

- 223 } Փոքր Հայոց վրայ գիտելք :  
224 }  
225 Փոքր Հայոց առաջին տիրապետողը, և անոր վրայ ըրած բաժանմունքը :  
226 Փոքր Հայոց գլխաւոր լեռները :  
227 Փոքր Հայոց գլխաւոր գետերը :

### ԱՌՍՁԻՆ ՀԱՅԲ

- 228 Առաջին Հայոց սահմանը :  
229 Առաջին Հայոց գլխաւոր քաղաքները :  
230 Առաջին Հայոց կամ Կասպագովհիայի մէջ յիշուած ուրիշ քաղաքները :

### ԵՐԿՐՈՐԴ ՀԱՅԲ

- 231 Երկրորդ Հայոց սահմանը և գլխաւոր քաղաքը :  
232 Երկրորդ Հայոց ուրիշ գլխաւոր քաղաքները :

### ԵՐՐՈՐԴ ՀԱՅԲ

- 233 Երրորդ Հայոց սահմանը և գլխաւոր քաղաքը :  
234 Երրորդ Հայոց մայրաքաղաքը և ուրիշ գլխաւոր քաղաքները :  
235 Զահան գաւառին վրայ գիտելք :

ԳԼ . ԻԱ . Միջագետք Հայոց .

- 236 Հայոց Միջագետքին վրայ գիտելիք :  
237 } Հայոց Միջագետքին երևելի քաղաքները :  
239 } — Մծբին , Եդեսիա , և այլն :

ԳԼ . ԻԲ . Առաքառական .

- 240 Առաքառական աշխարհին սահմանը :  
241 Առաքառական աշխարհին վրայ պատմական  
գիտելիք :  
242 } Առաքառականի գլխաւոր քաղաքը : — Դա  
244 } վրէժ , Արտաւիլ , և այլն :

ԳԼ . ԻԳ . Վիրք կամ վերիս .

- 245 Վրաց ազգին սկզբնաւորութիւնը :  
246 Վրաց ազգին Հայոց հպատակութիւնը :  
247 Վրաց պաշտամունքը :  
248 Վրաց ՚ի քրիստոնէութիւն դառնալը :  
249 Վրաց լեզուին վրայ գիտնալիք :  
250 } Վրաց կառավարութիւնը :  
253 }  
254 Վրաց աշխարհին սահմանը և բաժանմունքը :  
255 } Վրաստանի գլխաւոր քաղաքները : —  
256 } Մցխիթա , Տփիսիս , Կորի , և այլն :

ԳԼ . ԻԴ . Արուսեք .

- 257 Արուանից ազգին սկզբնաւորութիւնը :  
258 Հայերուն տիրապետութիւնը Արուանից վը  
րայ :  
259 Արուանից գիրը և լեզուն :  
260 Արուանից բարձն ու կրօնքը :

Այսարհագրական գիտելիք .

- 261 Ազուլանից երկրին սահմանը :  
262 Ազուլանից գլխաւոր քաղաքները :

ԳԼ . ԻԵ . Խաղտիք .

- 263 Խաղտիք և Եգեքք աշխարհաց սահմանը :  
264 Եգեքրացւոց ազգին սկզբնաւորութիւնը :  
265 Խաղտեաց վրայ պատմական գիտելիք :  
266 Խաղտեաց երևելի գետերը :  
267 Խաղտեաց գլխաւոր քաղաքները :  
268 Կողքիսին գլխաւոր քաղաքները :

ԳԼ . ԻԶ . Պոնտոս .

- 269 Պոնտոսի սահմանը :  
270 Պոնտոսի տէրութեան վրայ պատմական գիտելիք :  
271 } Պոնտոսի տէրութեան գլխաւոր քաղաք-  
272 } ները :

ԳԼ . ԻԷ . Եփրատացիք .

- 273 Եփրատացւոց սահմանը :  
274 Եփրատացւոց երկրին գլխաւոր քաղաքները :  
275 Հռոմկայի վրայ գիտելիք :

ԳԼ . ԻԸ . Կիլիկիա .

- 276 Կիլիկիայի վրայ պատմական գիտելիք :  
277 Կիլիկեցւոց թագաւորութեան սկզբնաւորութիւնը :  
278 Կիլիկիոյ թագաւորութեան տւողութիւնը :

- 279 Կիլիկիոյ սահմանը :  
280 Կիլիկիոյ բարեբերութիւնը և գլխաւոր գե-  
տերը :  
281 Կիլիկիոյ գլխաւոր քաղաքները : — Տարսոն,  
Անարզաբա, Սիս, Ատանա, և այլն :  
282 Կիլիկիոյ երևելի բերդերը :  
283 Կիլիկիոյ երևելի վանքերը :  
284 Սեաւ լէրին երևելի վանքերը :  
285 Կիլիկեցւոց ատեն հայերուն օտար երկիրնե-  
րու վրայ տիրապետութիւնը :

## Ն Ո Ր Հ Ա Յ Ա Ս Տ Ա Ն

### Պատուական գիտելիք .

- 1 Հայոց հին և նոր քաղաքական վիճակը :
- 2 Հայոց հիմնական գիտութեան վիճակը և վաճառականութիւնը :
- 3 Հայոց կրօնքը :

### Աշխարհագրական գիտելիք .

- 4 Հայաստանի սահմանը և տարածութիւնը :
- 5 Հայոց ազգին և Հայաստանի բնակչաց թիւը :
- 6 Հիմա Հայաստան անուանած երկիրը :
- 7 Հայաստանի գլխաւոր լեռները :
- 8 }  
9 } Հայաստանի գլխաւոր գետերը և լճերը :
- 10 }  
11 Հայաստանի կլիմայն :
- 12 Հայաստանի պտղաբերութիւնը :
- 13 Հայաստանի մէջ գտնուած կենդանիները :
- 14 Հայաստանի հանքերը :
- 15 Հայաստանի վաճառները :
- 16 Հայաստանի բաժանումը :

Տաճկի Հայաստան .

- 17 Տաճկի Հայաստանին վրայ գիտելիք :
- 18 Էրզրուումի նահանգին վրայ գիտելիք :
- 19 } Էրզրուումի նահանգին գլխաւոր քաղաք .
- 20 } ները :
- 21 Բասեան գաւառին վրայ գիտելիք :
- 22 Վերին Բասենոյ գլխաւոր քաղաքները :
- 23 Ստորին կամ Վարի Բասենոյ գլխաւոր քա-  
ղաքները :
- 24 Տուժիկ գաւառին վրայ գիտելիք :
- 25 Չըլաըր նահանգին վրայ գիտելիք :
- 26 Չըլաըր նահանգին գլխաւոր քաղաքները :
- 27 Կարս կամ Գարս նահանգին սահմանը :
- 28 Կարս նահանգին գլխաւոր քաղաքները :
- 29 Շօրէկէլ գաւառին վրայ գիտելիք :
- 30 Պայէզիտ նահանգին սահմանը :
- 31 Պայէզիտի նահանգին գլխաւոր քաղաքները :
- 32 Ալաշկերտ գաւառին վրայ գիտելիք :
- 33 Վան նահանգին վրայ գիտելիք :
- 34 Վանայ ծովուն կղզիներուն վրայ գիտելիք :
- 35 Վան նահանգին գլխաւոր քաղաքը և ծովե-  
ղերեայ տեղուանքը :
- 36 Վանայ նահանգին ուրիշ գլխաւոր քաղաք-  
ները :
- 37 Ճուլամերկ գաւառին երևելի տեղերը :
- 38 Սասուն գաւառին վրայ գիտելիք :
- 39 Մշոյ գաւառին վրայ գիտելիք :
- 40 Տիարպէքիրի նահանգին սահմանը :
- 41 Տիարպէքիրի նահանգին գլխաւոր քաղաքը :
- 42 Տիարպէքիրի նահանգին ուրիշ քաղաքները :

Ռուսի Հայաստան .

- 43 Ռուսի Հայաստանին վրայ գիտելիք :  
44 Թիֆլիզու նահանգին մէջ սեպուած Հայաստանի գլխաւոր քաղաքները :  
45 Գանձակ և Գարապաղ նահանգաց մէջ գլխաւոր տեղուանքն :  
46 Երևան նահանգին գլխաւոր քաղաքները :  
47 Էջմիածնի վրայ գիտելիք :  
48 Նախջուան նահանգին գլխաւոր տեղուանքը :

Պարսից Հայաստան .

- 49 Պարսից Հայաստանին վրայ գիտելիք :  
50 Պարսից Հայաստանին գլխաւոր քաղաքները :  
51 Մուղան կամ Մուկան գաշտին վրայ գիտելիք :

Փոքր Հայք .

- 52 Փոքր Հայոց երկիրը :  
53 Փոքր Հայոց բաժանմունքը :  
54 Սըվազ նահանգին գլխաւոր քաղաքները :  
55 Սըվազէն զատ ուրիշ գլխաւոր քաղաքներ :  
56 Եփրատ գետոյն մօտ քաղաքներ :  
57 Գայսերիէ քաղաքին վրայ գիտելիք :  
58 Հայոց Միջգետաց գլխաւոր քաղաքները :  
59 Կիլիկիոյ վրայ գիտելիք :  
60 Կիլիկիոյ գլխաւոր քաղաքները :  
61 Մարաշու գաւառին վրայ գիտելիք :  
62 Մարաշու երկրին գլխաւոր քաղաքները :

